


ԿԻԼԻԿՅԱՆ ՆԱՅԱՍՏԱՆԸ
ՍԱՆՏԱՆԱԿԻՅ
ՊԵՏԱԿԱՆ ՄԻՊՎՈՐՆԵՐԻ
ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐՈՒՄ

Տպագրվում է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի
N 13-6388 գիտական ծրագրի շրջանակներում
տրամադրած ֆինանսավորմամբ



NATIONAL ACADEMY OF SCIENCES OF RA
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

**CILICIAN ARMENIA IN THE PERCEPTIONS OF
ADJACENT POLITICAL ENTITIES
(HISTORICAL-PHILOLOGICAL ESSAYS)**

BY

A. BOZOYAN (EDITOR)

V. A. TER-GHEVONDIAN, R. M. SHUKUROV,
G. G. DANIELYAN

YEREVAN 2016

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

**КИЛИКИЙСКАЯ АРМЕНИЯ В ПРЕДСТАВЛЕНИЯХ
ПРИГРАНИЧНЫХ ГОСУДАРСТВЕННЫХ ЕДИНИЦ
(ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЕ ОЧЕРКИ)**

А. А. БОЗОЯН (РЕДАКТОР)

В. А. ТЕР-ГЕВОНДЯН, Р. М. ШУКУРОВ,
Г. Г. ДАНИЕЛЯН

ЕРЕВАН 2016

1134937

944.925


ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ
ՍԱՀՄԱՆԱԿԻՑ ՊԵՏԱԿԱՆ
ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐՈՒՄ
(ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ)**

101368

ՀԵՂԻՆԱԿՆԵՐ՝
ԱԶԱՏ ԱՐՏԱՇԻ ԲՈՂՈՅԱՆ (ԽՄԲԱԳԻՐ)
ՈՒՒՍՏԱՄ ՄՈՒՀԱՄՄԱԴԻ ՇՈՒՔՈՒՐՈՎ
ՎԱՀԱՆ ԱՐԱՄԻ ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ
ԳԱԳԻԿ ԳԱՌՆԻԻ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
2016



ՀՏԴ 93/99

ԳՄԴ 63.3

Կ 477

Տպագրվում է
**« ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտական
խորհրդի որոշմամբ**

Կ 477 Կիլիկյան Հայաստանը սահմանակից պետական միավորների ընկալումներում (պատմաբանասիրական ակնարկներ) // Ա. Բոզոյան (խմբագիր), Ռ. Շուքրուով, Վ. Տեր-Ղևոնդյան, Գ. Դանիելյան, Եր., 2016, 309 էջ:

Գիրքը ներկայացնում է չորս հեղինակների հետազոտություններ՝ նվիրված Կիլիկիայի Հայոց պետության, նրա աշխարհիկ և հոգևոր բարձրագույն իշխանությունների հանդեպ հարակից քաղաքական միավորների (ի մասնավորի՝ Բյուզանդական կայսրության, Իկոնիայի Սեջուկյան, Այյուբյան և Մամուլքյան սուլթանությունների) ունեցած պատկերացումների և ընկալումների վերականգնմանը: Ներկայացված ուսումնասիրությունների սկզբնաղբյուրային հիմքն են կազմում ԺԲ-ԺԳ դդ. բյուզանդական պատմագրական երկերը և վավերագրերը, ինչպես նաև ԺԲ-ԺԶ դարերի մուսուլմանական հարուստ պատմագրության արաբալեզու և պարսկալեզու հուշարձանները:

Հասցեագրված է հայագետներին, բյուզանդագետներին, արաբագետներին, պարսկագետներին, ինչպես նաև Կիլիկյան Հայաստանի պատմությամբ հետաքրքրվող ընթերցողներին:

ՀՏԴ 93/99

ԳՄԴ 63.3

ISBN 978-5-8080-1195-3

© « ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, 2016

© Ա. Բոզոյան, Ռ. Շուքրուով, Վ. Տեր-Ղևոնդյան, Գ. Դանիելյան, 2016

ԱՌԱՋԱԲԱՆ

Կիլիկյան Հայաստանի պատմության բազմակողմանի հետազոտությունը հայագիտության կարևորագույն ձեռքբերումներից է, որն ավելի քան երկդարյա ճանապարհ է անցել: Միքայել Չամչյանի (1786), Էդուարդ Դյուլորիեի (1861), Վիկտոր Լանգլուայի (1863), Ղևոնդ Ալիշանի (1885), Գրիգոր Միքայելյանի (1952), Սարգիս Բոռնազյանի (1973) և այլոց ջանքերով բացահայտվել են հայկական Կիլիկիայի պատմության հիմնական սկզբնաղբյուրները, քննարկման առարկա դարձել այդ պետության ներքին և արտաքին քաղաքականության շրջադարձային իրադարձությունները: Ի դարի 80-ական թվականներին հետաքրքրությունը Կիլիկիայի Հայոց պետության պատմության ուսումնասիրության նկատմամբ նոր թափ ստացավ: Հետազոտողներն այդ պետության պաշտոնական պատմագրության հաղորդումները սկսեցին ավելի լայնորեն զուգադրել բյուզանդական, լատինական, ասորական, արաբական, պարսկական սկզբնաղբյուրների վկայությունների հետ: Կիլիկյան Հայաստանի պատմությունն ավելի ու ավելի հաճախադեպ սկսեց հետազոտվել համաշխարհային պատմության հոլովույթում՝ շարժելով բյուզանդագետ Ֆ. Շալանդոնի, խաչակրաց արշավանքների մասնագետներ Ռ. Գրուսսեի, Ժ. Պրավեի, Հ. Մեյերի, Ժ. Ռիշարի, Պ. Էդբյուրի, միջնադարագետ-արաբագետներ Կ. Կահենի, Ն. Ելիսենի, Պ. Հոլտի, Ռ. Ամիտայի, Ա. Ստյուարտի, ասորագետներ Պ. Կավեռաուի, Ա. Լյուդերսի, մոնղոլագետներ Զ. Լեյնի, Դ. Բայարսայխանի և այլոց հետաքրքրությունը: Զուգահեռաբար աշխատանքները շարունակվել են Կիլիկիայի հայկական պետության տոպոնիմիկայի (Ֆ. Հիլդ, Հ. Հելենկեմպեր), ճարտարապետության (Ռ. Էդվարդս), դրամագիտության (Զ. Պտուկյան), կնիքագիտության (Ժ.-Կ. Շենե, Վ. Զայբտ, Վ. Շանդրովսկայա) և հետազոտության այլ բնագավառներում: Այս ամենը վկայում է ակնարկված հետազոտությունների արդիականության և համաշխարհային պատմագրության լարված հետաքրքրվածության մասին: Ժ. Դեդեյանի (2003), Լ. Տեր-Պետրոսյանի (2007) և Կ. Մուֆաֆյանի (2012) համապարփակ հանրագիտարանային աշխատությունների հրապարակումից հետո

կարծես ամբողջացավ Կիլիկիայի Հայոց պետության հետազոտության ևս մեկ փուլ:

Այսօր հետազոտողների առջև կանգնել են իրենց լուծմանը սպասող նորանոր խնդիրներ: Կիլիկիայի Հայոց պետությունը ծնունդ առնելով Արևմուտքի ու Արևելքի բանուկ խաչմերուկներից մեկում, կամա, թե ակամա դարձել է իսլամ-քրիստոնեություն քաղաքակրթական երկխոսության ամենակնճոռոտ մարտահրավերներից մեկի՝ խաչակրաց շարժման, մոնղոլական ռազմարշավների և տարածաշրջանի քրիստոնեական ու մուսուլմանական պետական կազմավորումների բազմաբարդ փոխհարաբերությունների ակտիվ մասնակից, որոնք էլ կանխորոշիչ են եղել նրա պատմական ճակատագրի համար: Կիլիկյան Հայաստանի պատմության բազմակողմանի ուսումնասիրությունը կարևոր հանգրվան է մեր երկրի բազմադարյան պատմության որոշ կարևորագույն բաղադրիչների ճանաչման ասպարեզում, ինչպիսին են, օրինակ, Արևելք – Արևմուտք պատմամշակութային փոխհարաբերությունները:

Ներկա գրքում ամփոփված են 2013-2015 թթ. ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի կողմից ֆինանսավորված «Կիլիկյան Հայաստանը սահմանակից պետական միավորների ընկալումներում (ԺԲ-ԺԳ դդ.)» ծրագրի (ծածկագիր՝ 13-6A388) շրջանակներում կատարված գիտական հետազոտությունների արդյունքները: Ծրագրի ղեկավար Ազատ Բոզոյանը, խորհրդատու Ռուստամ Շուքրովը և աշխատակիցներ Վահան Տեր-Ղևոնդյանն ու Գագիկ Դանիելյանը անցած երկու տարիների ընթացքում հասցրել են դառնալ մի կուռ խումբ: Նրանցից յուրաքանչյուրն իր առջև նպատակ էր դրել հիշատակված թեմայի շրջանակում ներկայացնել սեփական դիտարկումները: Թեմայի շուրջ առկա և իրենց հասանելի մասնագիտական գրականության և սկզբնաղբյուրների հրատարակությունների համատեղ օգտագործման համար ծրագրի անդամները ձեռնամուխ են եղել մի բավական հարուստ էլեկտրոնային շտեմարանի ստեղծմանը: Այն թվայնացված գրականությանը համալրելու գործում կարևոր դեր են խաղացել Գագիկ Դանիելյանի և խմբի մյուս անդամների, գիտելիքներն ու ունակությունները:

ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի աջակցությամբ 2015 թ. մայիսին ծրագրի անդամները համատեղ գիտաժողով հրավիրեցին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում «Եկեղեցի և պետություն Կիլիկյան Հայաստանում. հայացք ներսից և դրսից» խորագրով¹: Այդ միջազգային գիտաժողովում խմբի անդամները կարողացան քննարկման առարկա դարձնել նաև իրենց հետաքրքրող խնդիրները:

Ծրագրի մասնակիցներից յուրաքանչյուրը գրքում ունի սեփական բաժինը: Իհարկե, անհնար էր հիշյալ կարճ ժամանակահատվածում պատասխան տալ խմբի անդամ հետազոտողների առջև կանգնած բոլոր հարցերին: Այնուամենայնիվ, մասնակիցներից յուրաքանչյուրն իր հետաքրքրության շրջանակներում փորձել է բացահայտել ժամանակի որևէ հարևան երկրի աչքերով իրեն հարազատ Կիլիկիայի պատկերը: Ա. Բոզոյանը փորձել է վերականգնել Կիլիկիայի պատկերն ըստ ԺԲ դարի պատմագրական երկերի և Նիկիական կայսրության ու Պալեոլոգների դարաշրջանի վավերագրերի: Ռուստամ Շուքրովն ի մի է բերել Փոքր Ասիայի սելջուկյան պետությունների տարածքում ձևավորված հարևան Կիլիկիայի հայկական պետության պատկերի որոշ մանրամասներ: Վահան Տեր-Ղևոնդյանի ուշադրության կենտրոնում են եղել Կիլիկիայի հայկական պետության Ռուբինյան հարստության ծագման և պատկանելության խնդիրները Մերձավոր Արևելքի մուսուլմանական (մահմեդական) և քրիստոնյա պատմագրության մեջ: Ծրագրի կայացման գործում նշանակալի դեր է ունեցել ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի ասպիրանտ Գագիկ Դանիելյանի հետազոտությունը, ուր նա փորձել է երևակել հայոց պետության և եկեղեցու պատկերը ԺԲ-ԺՂ դարերի մուսուլմանական պատմագրության հիմքի վրա: Հեղինակը հասցրել է այս ծրագրի կատարման ընթացքում պաշտպանել թեկնածուական ատենախոսություն՝ «Ալ-Մակրիզիի Kitāb al-sulūk երկը Կիլիկյան Հայաստանի 1250-1310 թթ. պատմության սկզբնաղբյուր» թեմայով: Ներկա հատորում ընդ-

¹ Այս գիտաժողովի մասին տե՛ս Ս. Շահե վրդ. Անանյան, Եկեղեցի և պետություն Կիլիկյան Հայաստանում. հայացք ներսից և դրսից (Միջազգային գիտաժողով Մայր Աթոռ Ս. Էջմիածնում), Էջմիածին, 2015, Ե, էջ 98-101:

գրկված են երիտասարդ գիտնականի երկու հետազոտությունները նվիրված «թագավոր» և «Ամենայն Հայոց կաթողիկոս» ինստիտուտներին և դրանց ընկալմանը մուսուլմանական՝ հատկապես մամլուքյան պատմագրության մեջ:

Հատկանշական է, որ երկու տարվա աշխատանքից հետո հեղինակները կարողացել են վերականգնել հայկական պետության միայն որոշակի պատկերացումներ, և թեմայի մշակումները, անտարակույս, շարունակություն պիտի ունենան: Մասնագետ հետազոտողը կնկատի, որ խմբի անդամները շրջանցել են այնպիսի կարևոր հարևանների պատկերացումները Կիլիկյան Հայաստանի նկատմամբ, ինչպիսիք էին Խաչակրաց Արևելքի պետությունները և Մոնղոլական կայսրությունը, աշխատանքի մեջ հնարավոր չի եղել ներառել Բյուզանդական մատենագրության և այլուքյան, մամլուքյան և սելջուկյան պատմագրության ողջ նյութը, ուստի և քննարկման նյութ են դարձել մի շարք կոնկրետ խնդիրներ: Ծրագրի մասնակիցները նախընտրել են իրենց հետազոտությունների հիմնական արդյունքները հրապարակել ներկա գրքի էջերում: Գրքի վերջում հեղինակները կցում են առկա անձնանունների և տեղանունների ցանկեր, որոնք կազմել է Գ. Դանիելյանը:

Գիրքը բաղկացած է երեք մասից: Առաջին մասը նվիրված է բյուզանդական սկզբնաղբյուրների վերլուծությանը (Ա. Բոզոյան), երկրորդ մասում Ռ. Շուբուրովը փորձել է ի մի ժողովել Իկոնիայի սուլթանության և Կիլիկիայի հայկական պետության առնչություններին վերաբերող մուսուլմանական սկզբնաղբյուրների տեղեկությունները: Իսկ Վ. Տեր-Ղևոնդյանն ու Գ. Դանիելյանն անդրադարձել են Կիլիկիայի հայկական միապետության կառավարող տան և պետության բարձրագույն իշխանության ընկալումների յուրահատկություններին Մերձավոր Արևելքի մատենագրական հուշարձաններում: Աշխատանքի երրորդ գլխում Գ. Դանիելյանը ներկայացրել է Հռոմկլայի հայոց կաթողիկոսարանի պատմության խնդիրները ԺԲ-ԺՁ դարերի արաբամուսուլմանական պատմագրության լույսի ներքո:

Ա. Բոզոյան

ԳԼՈՒԽ Ա
ԲՅՈՒՋԱՆԴԱԿԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ
ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
Ա. Ա. ԲՈՋՈՅԱՆ

1. ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԲՅՈՒՉԱՆԴԱԿԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐՈՒՄ (ԵՐԿՈՒ ՄՈՏԵՑՈՒՄ)

Բյուզանդագիտական հետազոտություններ. Վերջին տարիների բյուզանդագիտական հետազոտությունները հիմնական շեշտադրումները կատարել են Բյուզանդիայի փոքրասիական տարածքների և կայսրության արևելյան քաղաքականության, Կիլիկիայի հայկական պետության հետ այդ երկրի քաղաքական պատմության ուսումնասիրության բնագավառներում: ԺԱ դարի ընթացքում նկատելի է ասորական և հայկական բնակչության նոր տեղաշարժ Հյուսիսային Ասորիքից և Հայաստանից դեպի Բյուզանդական կայսրության տարածքներ: Այդ տեղաշարժերի ուսումնասիրության բնագավառում առաջնեկներին մեկը բյուզանդագետ Պ. Խարանիսն էր, որն իր աշխատանքներում կարողացավ ցույց տալ Զ-ԺԲ դարերի ընթացքում հայկական ազգաբնակչության մեծածավալ հոսքը դեպի Բյուզանդական կայսրություն և հատկապես նրա փոքրասիական տարածքներ² շարունակելով Ն. Ադոնցի հետազոտություններն այդ բնագավառում: Այս տեսանկյունը նկատի ունենալով՝ Զ. Դագրոնը շեշտադրումը տեղափոխեց դեպի կայսրության արևելյան մարզեր՝ ընդգծելով ասորիների տեղաշարժերը³: Բյուզանդական արևելքում կատարվող տեղաշարժերի հետազոտության հաջորդ փորձը պատկանում է գերմանացի բյուզանդագետ Հ. Դիտտենին, որն ի մի է բերել է Զ-ԺԱ դարերի կայսրության մեջ տեղաշարժերի ողջ ներկայանակը⁴: Հիշատակված

² Charanis P., *The Armenians in the Byzantine Empire*, Lisboa, 1963.

³ Dagron G., *Minorités ethniques et religieuses dans l'Orient byzantine à la fin du X^e et au XI^e siècle: l'immigration syrienne.* – TM 6, 1976, p. 177-216, Նույնի՝ *Le temps des changements.* – in: A. Vauchez dir., *Histoire du Christianisme*, t. IV, Evêques, moines et empereurs (610-1199), Paris, 1993, p. 297-348.

⁴ Ditten H., *Ethnische verschibungen zwischen der Balkanhalinsel und Kleinasien vom Ende des 6. Bis zur zweiten Hälfte des 9. Jahrhunderts*, Akademie Verlag, Berlin, 1993 (Berliner Byzantinische Arbeiten, Bd. 59), S. 72-82, տե՛ս նաև

հետազոտություններն առաջին հերթին կարևորվում են նրանով, որ դրանց հեղինակները, հետևելով հիմնականում բյուզանդական սկզբնաղբյուրներին, քննարկման նյութ են դարձնում Բյուզանդիայի արևելյան շրջաններում հայկական ազգաբնակչության և զորամիավորումների տեղաշարժերը, դրանց խաղացած դերը կայսրության կառավարման գործում: Կիլիկիայում, Կապադովկիայում և Հյուսիսային Ասորիքում հայկական ազգաբնակչության և զինվորական ջոկատների կուտակման, ինչպես նաև այդ հիմքի վրա Կիլիկիայի հայկական իշխանապետության պատմության հետազոտության տեսանկյունից հրապարակված հետազոտությունները և բազմալեզու սկզբնաղբյուրները փորձել է ի մի բերել Մոնպելիե-3 համալսարանի պրոֆ. Ժ. Դեդեյանը⁵: Բյուզանդական կայսրության և Կիլիկիայի հայկական պետության փոխհարաբերությունների պատմության ուսումնասիրության տեսանկյունից հսկայական քայլ է կատարել Ֆ. Շալանդոնը, որն Ի դարի սկզբին իր հետազոտություններով ի մի է բերել Կոմնենոսների դարաշրջանի Բյուզանդիայի պատմության սկզբնաղբյուրները, այդ հիմքի վրա շարադրել է երկրի քաղաքական պատմությունը: Իր աշխատանքում նա հաճախ է անդրադառնում Բյուզանդական կայսրության պատմության մեջ հայկական գործոնին և հատկապես Կիլիկիայի հայկական իշխանության ու Բյուզանդական կայսրության ԺԲ դարի քաղաքական փոխհարաբերություններին⁶: ԺԲ դարի բյուզանդական կայսրության և Կիլիկիայի հայկական իշխանապետության եկեղեցաքա-

Դիետտեն Հ., Հայերի տեղաշարժերը բյուզանդական կայսրության մեջ Հուստինիանոս Ա-ից մինչև Թ դար (թարգմանությունը՝ Ա. Բոզոյանի) – ՊԲՀ, 1988, 1, էջ 23-36:

⁵ Dédéyan G., Les Arméniens entre Grecs, Musulmans et Croises: Etudes sur les pouvoirs Arméniens dans le Proche-Orient Méditerranéen (1068-1150). Vol. 1: Aus origins de l'état Cilicien: Philarete et les premières Roubeniens; Vol. 2: De l'Euphrate au Nil: Le reseau diasporique, Lisbonne, 2003: Գրքի վերաբերյալ մանրամասն գրախոսություն տե՛ս Բոզոյան Ա., ՊԲՀ, 2005, 2, էջ 296-302:

⁶ Ընդհանուր պատկերի ձևավորման գործում չափազանց կարևոր է հատկապես հետազոտության Չ զլովյը, տե՛ս Chalandon F., Les Comnènes. Études sur l'Empire Byzantin au XI et au XII siècles: Jean II Comnène (1118-1143) et Manuel I Comnène (1143-1180), Paris, 1912, p. 93-118:

դաքական փոխհարաբերությունները ժամանակին քննարկման նյութ են դարձել նաև իմ աշխատություններում⁷: Ավելի ուշ շրջանի հայ-բյուզանդական առնչությունների մասին պատմում են հիմնականում պահպանված եկեղեցական բանակցությունների վավերագրերը, որոնք շրջանառության մեջ դնելու գործում կարևոր դեր են կատարել վավերագիտության ուսումնասիրության բնագավառում իրենց վաստակն ունեցող այնպիսի բյուզանդագետներ, ինչպիսիք են Ա. Հայսենբերգը⁸, Ֆր. Դյուլգերը, Վ. Լորանը, Ժ. Դարուցեզը⁹, Հ. Հունգերը և Օ. Կրեստենը¹⁰:

Հայագիտության անդաստանում պետք է առանձնակի հիշատակել ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ. Հրաչ Բարթիկյանի վաստակը Կիլիկիայի Հայոց թագավորության պատմության բյուզանդական սկզբնաղբյուրների վերհանման և պատմաբանասիրական հմտալի հետազոտություններով քննարկման գործում: Բարեբախտաբար, գիտնականի ժառանգությունը հրապարակվեց նրա կենդանության օրոք, և ընթերցողը կարող է դրանց հետ ծանոթանալ ի մի հավաքված ուսումնասիրություն-

⁷ Տե՛ս **Բոզոյան Ա. Ա.**, Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը և Կիլիկյան Հայաստանը ԺԲ դարի 30-70-ական թվականներին, Երևան 1988 և **նույնի՛** Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների վավերագրերը (1165-1178 թթ.), Երևան, 1995:

⁸ **Heisenberg A.**, Zu den armenisch-byzantinischen Beziehungen am Anfang des 13. Jahrhunderts. – Sitzungsberichte der Bayerischen Akademie der Wissenschaften, Philosophisch-Philologische und historische Klasse, année 1929, 6, S. 3-20:

⁹ Ֆր. Դյուլգերը Կայսերական նոտարատնից դուրս եկած վավերագրերի նկարագրության մեջ տվել է դրանցից մի քանիսի գիտական նկարագրությունը: Վ. Լորանն ու Ժ. Դարուցեզը նկարագրել են հայոց եկեղեցուն Կ. Պոլսի պատրիարքների նոտարատնից ուղարկած վավերագրերը:

¹⁰ Das Register des Patriarchats von Konstantinopel. 1. Teil: Edition und Übersetzungen aus den Jahren 1315-1331 / Herausgegeben von **Herrbert Hunger** und **Otto Kresten** unter mitarbeit von Carolina Cupane, Walter Fink, Wolfram Hörandner, Ewald Kislinger, Peter E. Pieler, Gerhard Thür, Reinhard Willvonseder, Herbert Wurm, Wien, 1981, S. 590-604 [Corpus Fontius Historiae Byzantinae. Vol. XIX/1] (այսուհետև՝ CFHB, v. XIX/1):

ների եռահատորյակում¹¹: Մեզ հետաքրքրող խնդիրներին վերաբերող Հրաչ Բարթիկյանի առաջին հետազոտությունը հրապարակվել է դեռևս բյուզանդագետի գիտական գործունեության արշավույսին՝ 1958 թ.: Առաջին հրապարակումը նվիրված էր Իսահակ Անգելոսի նամակին, որն 1884 թ. հրապարակվել էր հույն գիտնական Պապադուպոլո Կերամևսի կողմից, սակայն դեռևս չէր արժանացել հայագիտության ուշադրությանը¹²: Այս նույն հոդվածում հեղինակը Կիլիկիայի պատմության մասնագետների ուշադրությունն է սևեռում նաև ԺԴ դարի բյուզանդական եկեղեցու պատրիարք Եսայասի (1323-1334) երկու նամակներին, որոնք ուղղված են Հայոց կաթողիկոս Հակոբ Բ Անավարզեցուն և Հայոց թագավոր Լևոն Դ-ին, գրված են 1330 թ. ապրիլ - 1331 թ. ապրիլ միջոցին¹³: 1960 թ. իր հրապարակումներից մեկում արդյունաշատ բյուզանդագետը հայագետների ուշադրությունը հրավիրեց Լևոն Ա թագավորի իշխանության տարիներին բյուզանդական նիկիական կայսրության հետ 1213 թ. բանակցություններին վերաբերող մի չափազանց կարևոր վավերագրի վրա¹⁴, որը կես դար առաջ հրապարակվել էր կայսերական Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի «Византийский временник» հանդեսում բյուզանդագետ Ա. Պավլո-

¹¹ Տե՛ս Մ. Բարթիկյան Հր., Հայ-բյուզանդական հետազոտություններ, հտ. Ա-Բ, Երևան, 2002 [Աճեմյան մատենաշար, Գ/1-2], հտ. Գ, Երևան, 2006 [Մեսրոպ արք. Աշճեան մատենաշար, 19]:

¹² Բարթիկյան Հր., Նոր Նյութեր Կիլիկիայի հայկական պետության և Բյուզանդիայի փոխհարաբերությունների մասին. - Բանբեր Մատենադարանի, 4, Երևան, 1958, էջ 285-290, հմմտ. Աճեմյան մատենաշար, Գ/1, էջ 29-39:

¹³ Նույն տեղում, էջ 290-295: Այդ նամակների քննադրերը այն ժամանակ Հր. Բարթիկյանը թարգմանել էր Մինեի Patrologia Graeca-ի 153-րդ հատորից: Բյուզանդական պատրիարք Եսայասի նամակները 1981 թ. նորովի վավերագիտական քննությամբ և գերմաներեն թարգմանությամբ հրապարակել է ավստրիացի բյուզանդագետների խումբը Հ. Հունգերի և Օ. Կրեստենի ղեկավարությամբ (տե՛ս CFHB, v. XIX/1, S. 590-604):

¹⁴ Բարթիկյան Հ.Մ., Հայ-բյուզանդական նոթեր. - ՀԱՀ ԳԱԱ «Տեղեկագիր», 1960, 7-8, էջ 133-138, հմմտ. Աճեմյան մատենաշար, Գ/1, էջ 47-138:

վր¹⁵: Երկու տասնամյակ անց, անդրադարձ կատարելով ԺԲ դարի 60-70-ական թթ. հայ-բյուզանդական եկեղեցական միության բանակցություններին, Հր. Բարթիկյանը հրապարակեց հայ-բյուզանդական եկեղեցական բանակցություններում կայսեր և Կ. Պոլսի պատրիարքի լիազորված ներկայացուցիչ Թեոդիանոսի դեսպանախմբի անդամ Հովհաննես Աթմանի ինքնությանը նվիրված մի չափազանց ուշագրավ հետազոտություն¹⁶: Այստեղ նա անդրադարձել է ԺԲ դարի հայ-բյուզանդական բանակցություններում քաղկեդոնական հայ հոգևորականների խաղացած դերին: Թեպետ նրա դիտարկումների նշանակալի մասը հիմնված է ենթադրությունների վրա, քանի որ հրապարակի վրա եղած հետազոտությունները գտնվում էին սկզբնաղբյուրների հավաքման փուլում, այնուամենայնիվ այդ աշխատանքները կարևոր քայլ էին հայագիտության և բյուզանդագիտության մեջ խնդիրների քննարկման ասպարեզում:

Նոր սկզբնաղբյուրների բացահայտման համար առիթ հանդիսացան նաև բյուզանդագետի հետագա աշխատությունները, որոնք նվիրված էին ԺԳ-ԺԴ դարի հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների քաղաքական ծալքերին¹⁷

¹⁵ Տե՛ս **Павлов А.С.**, Синодальная грамота 1213 года о браке греческого императора с дочерью армянского князя. – Византийский Временник (հետախյու՛մ՝ ВВ), т. IV, вып. 1-2, с. 160-166:

¹⁶ **Бартукян Р. М.**, Роль игумена Филиппопольского армянского монастыря Иоанна Атмана в армяно-византийских церковных переговорах при католикосе Нерсесе IV Благодатном. – «Լրաբեր» ՀԱՀ ԳԱ հասարակական գիտությունների, 1984, 6, էջ 78-88, հմմտ. Աճեմյան մատենաշար, Գ/2, էջ 341-351: Հայերեն թարգմանությունը տե՛ս **Բարթիկյան Հր.**, Փիլիպոպոլսի հայկական վանքի վանահայր Հովհաննես Ատմանի դերը հայ-բյուզանդական եկեղեցական բանակցություններում Ներսես Շնորհալի կաթողիկոսի օրոք. – Էջմիածին, 1985, է, էջ 25-32, հմմտ. Աճեմյան մատենաշար, Գ/1, էջ 541-548:

¹⁷ **Բարթիկյան Հր.**, Կիլիկյան Հայաստանի և Բյուզանդական կայսրության եկեղեցական փոխհարաբերությունները և դրանց քաղաքական ծալքերը. – «Աշտանակ» տարեգիրք, հտ. Ա, երևան 1995, էջ 112-126, հմմտ. Աճեմյան մատենաշար, Գ/1, էջ 639-653: Այս հոդվածի ֆրանսերեն տարբերակը տե՛ս **Bartikian H. M.**, Les relations des églises de l'Arménie Cilicien et de l'Empire byzantine et leurs implications politiques. – Actes du Colloque "Les Lusignans et l'Outre

մասնագետների ուշադրությունը հրավիրելով ԺԳ-ԺԴ դդ. պահպանված հունարեն վավերագրերի բառապաշարի առանձնահատկությունների վրա: Շուտով հեղինակն ավելի մանրամասնորեն անդրադարձավ Կոստանդնուպոլսի Գերմանոս Բ (1222-1244) և Մանուել Բ (1244-1255) պատրիարքների թղթակցությանը Կոստանդին Ա Բարձրաբերդցի (1221-1267) կաթողիկոսի գահակալման ժամանակներում¹⁸: ԺԴ դարի Բյուզանդական սկզբնաղբյուրները խոսեցնելու հետաքրքիր օրինակ է, անկասկած, նշանավոր բյուզանդագետի հողվածը՝ նվիրված Գվիդոն Լուսինյանի կյանքի բյուզանդական ժամանակահատվածին¹⁹:

Վերջին տարիներին գրած իր հողվածներից մեկում Հրաչ Բարթիկյանն անդրադարձավ ԺԱ-ԺԴ դարերում բյուզանդական կայսրության տարածքում Հայոց ներկայության խնդիրներին²⁰: Այս հողվածում հեղինակը փորձեց ի մի բերել հրապարակված ուշ շրջանի բյուզանդական վավերագրերում²¹ կայսրության տարածքներում հայերի ներկայությանը վերաբերող վկայությունները: Մեծ է Հրաչ Բարթիկյանի վաստակը Կիլիկիայի Հայոց թագավորության նկատմամբ Բյուզանդական կայսրության դիր-

Mer" (Poitiers-Lusignan 20-24 octobre 1993), Poitier 1993, p. 47-53, հմմտ. Աճեմյան մատենաշար, Գ/2, էջ 895-901:

¹⁸ **Բարթիկեան Հր.**, Հայ-բիւզանդական եկեղեցական յարաբերութիւնները փաստաթղթերում. Կոստանդնուպոլսի պատրիարքներ Գերմանոս Բ-ի (1222-1244) և Մանուէլ Բ-ի (1244-1255) թղթերը Հեթում Ա թագաւորին և Կոստանդին Ա Բարձրաբերդցի կաթողիկոսին. – «Գանձասար» աստուածաբանական հանդէս, հտ. 7, Երևան, 2002, էջ 50-86, հմմտ. Մեսրոպ արք. Աշեան մատենաշար, 19, էջ 27-63:

¹⁹ **Բարթիկեան Հր.**, Գվիդոն Լուսինյանը Բյուզանդիայում և Կիլիկյան Հայաստանում. – «Աշտանակ» տարեգիրք հտ. Բ, Երևան, 1998, էջ 135-143, հմմտ. Աշեան մատենաշար, Գ/1, էջ 683-692:

²⁰ **Բարթիկեան Հր.**, Հունական միջնադարյան արխիվային փաստաթղթեր Բյուզանդական կայսրության տարածքում հայոց ներկայության մասին (XI-XIV դդ.). – Պատմա-բանասիրական հանդէս, 2003, 3, էջ 87-130, հմմտ. Մեսրոպ արք. Աշեան մատենաշար, 19, էջ 127-170:

²¹ Հր. Բարթիկեանը հետազոտութեան թիրախ է դարձրել Acta et Diplomata graeca Medii aevi Sacra et Profana / Collecta ediderunt Franciscus Miklosich et Iosephus Müller-ի կազմած վավերագրերի վեցհատոր ժողովածուն, որը հրատարակվել է 1860-1890 թթ. Վիեննայում:

քորոշման և պատկերացումների վերականգնման գործում: Ներկա աշխատանքի վերջին մասում փորձ է կատարված հետազոտելու ԺԳ-ԺԴ դարերի բյուզանդական կայսերական և պատրիարքական նոտարատներից դուրս եկած վավերագրերը, նրանց բանաձևային համակարգերը, ուր կարելի է ուղղակի վկայություններ գտնել կայսրության և Կիլիկիայի Հայոց թագավորության դիվանագիտական փոխհարաբերությունների մակարդակի մասին: Աշխատանքում հնարավորության սահմաններում օգտագործված են այդ վավերագրերի նոր գիտական հրատարակությունները և սեղանի վրա եղած գրականությունը:


Հետևելով Հրաչ Բարթիկյանի հետազոտություններին և ԺԲ դարի ընթացքում Արևելահռոմեական կայսրության պաշտոնական դիվանատներից դուրս եկած փաստաթղթերում Կիլիկիայի հայկական պետության նկատմամբ ձևավորված պատկերացումներին՝ հրապարակում ենք նաև մեր կազմած ԺԲ վերջից մինչև ԺԴ դարի 30-ական թթ. ընթացքում Բյուզանդական կայսերական և պատրիարքական նոտարատներից դուրս եկած և մեզ հասած հատուկենտ վավերագրերի նկարագրական ցանկերը: Ներկայացված աշխատանքը կազմված է գրեթե նույն եղանակով, որով մենք ժամանակին հետազոտել ենք ԺԲ դարի 30-70-ական թթ. հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների վավերագրերը:

Խնդրի դրվածքը. Հայտնի է, որ Կիլիկիայի հայկական պետությունը ձևավորվել է Բյուզանդական տարածքների վրա, երբ կայսրությունը ԺԱ դ. երկրորդ կեսին, սելջուկյան ռազմարշավների ընթացքում, հետգիտե հետ մղվեց արևելյան Փոքր Ասիայի սեփական տիրույթներից: Այս տեսանկյունից առանձնանում է Բյուզանդական կայսրության դիրքորոշման հետազոտությունը, նրա պետական կառույցների արձագանքը Կիլիկիայի հայկական իշխանության վարած քաղաքականության, նրա կառուցվածքի, եկեղեցական նվիրապետական կառույցների նկատմամբ: Այստեղ պիտի հաշվի առնել, որ մինչև ԺԱ դարի 70-ական թվականները Կիլիկիա երկրամասը երբեմն որպես սահմանային գոտի հարում էր Բյուզանդիայի տարածքներին, սակայն ավելի հաճախ ամբողջությամբ ենթարկվում էր կայսրու-

101368

թյանը: Մինչև ԺԳ դարը Կիլիկիան համարվում էր Հռոմեական կայսրությունից Բյուզանդիային անցած, նրանից անբաժանելի տարածքային ժառանգություն: Ըստ Բյուզանդական պաշտոնական պատմագրության՝ է դարում այդ երկրամասը Արաբական խալիֆայության և Բյուզանդական կայսրության բանակների միջև քաղաքական բախումների ռազմական թատերաբեմ էր դարձել: Առաջին անգամ 703 թ. Բյուզանդական կայսրությունը կորցրեց Կիլիկիան իբրև առանձին երկրամաս, իսկ Ժ դարի 60-ական թթ.՝ Նիկեփոր Բ Փոկաս կայսեր իշխանության տարիներին, տարածաշրջանը կրկին վերագրավվեց բյուզանդական բանակների կողմից: Արաբական տիրապետության շրջանում Կիլիկիա երկրամասը Բյուզանդական կայսրության և Արաբական խալիֆայության միջև ձեռք էր բերել սահմանային գոտու (սուղուր) կարգավիճակ: Մակեդոնական կայսրերի իշխանության շրջանում՝ երկրամասի վերանվաճումից հետո, Կիլիկիա, Իսավրիա և Հյուսիսային Ասորիք աշխարհագրական տարածքում ստեղծվեցին բյուզանդական մի շարք բանակաթեմեր՝ Սեփակիա, Լիկանդոն, Տլուք և Եղեսիա կենտրոններով:

Դեռևս Մանազկերտի ճակատամարտից առաջ Բյուզանդական կայսրությունը բռնության և դիվանագիտական համոզման ճանապարհով տեղահան էր անում Մեծ Հայքի ազնվականական ընտանիքներին և իրենց կենսունակ ռազմական ջոկատներով բնակեցնում էր Կապադովկիայում ու Հյուսիսային Ասորիքում: Հայկական զինական ուժերը Բյուզանդիայի ետ քաշվելուց հետո փորձում էին հաստատվել Կապադովկիայի, Կիլիկիայի և Հյուսիսային Ասորիքի տարածաշրջանում, ձեռք էին բերում ավատներ: Նրանք հիմնականում կամ կայսրության ստորականներն էին կամ էլ ճանաչում էին Բյուզանդիայի գերակայությունը: Դրանց մեջ հիշատակելի էին Փիլարտոս Վարաժնունին և Անտիոքի դուքս Խաչատուրը, հետագայում՝ Մելիտենեի, Եղեսիայի, Տլուքի տերերը և Գող Վասիլը: 1071 թ. Մանազկերտի ճակատամարտում Բյուզանդական կայսրության ռազմական ուժերը ջախջախվեցին Սելջուկյան Մեծ սուլթանության բանակների կողմից: Փոքրասիական այլ տարածքների հետ միասին կրկին վերացվեց Բյուզանդական կայսրության վե-



րահսկողությունը Կիլիկիայի երկրամասի վրայից, թեպետ տարածաշրջանի կառավարիչներ Փիլարտոս Վարաժնունին, Անտիոքի տեր Խաչատուրը, Եդեսիայի տեր Թորոսը, պահպանելով սեփական իշխանությունը, շարունակում էին ճանաչել Բյուզանդական կայսրության իշխանությունը տարածաշրջանում: Այդ մասին են վկայում հիշատակված գործիչների՝ սկզբնաղբյուրներում պահպանված բյուզանդական տիտղոսները: Կայսրությունը երկար ժամանակ չէր համակերպվում ոչ միայն Կիլիկիայի, այլ նաև փոքրասիական բազմաթիվ այլ տարածքների կորստյան հետ, չէր ճանաչում տարածաշրջանում հաստատված հայկական իշխանությունների փաստացի (de facto) անկախությունը՝ դիտելով նրանց կայսրության հպատակներ:

Մանազկերտի ճակատամարտից հետո բյուզանդական, հայկական և արևելյան սկզբնաղբյուրները հիշատակում են մի շարք նոր իշխանական տներ, որոնցից երկուսը՝ Օշինյաններն ու Ռուբինյանները, ԺԱ դարի վերջից սկսեցին պայքարել Կիլիկիայի լեռնային շրջաններում հաստատվելու և դաշտային շրջաններում իրենց իշխանությունը տարածելու համար²²: Երկու իշխանական ընտանիքներն էլ իրենց տիրապետությունը Կիլիկիայում ամրապնդելու համար ճանաչում էին Բյուզանդական կայսրության գերագահությունը, կրում էին նրանից ստացած սեբաստոսի և պրոտոսեբաստոսի տիտղոսները՝ դրանք ժառանգելով իրենց հետնորդներին: Նկատելի է, որ տարածաշրջանում քաղաքական իշխանությունը պահպանելու համար կարևորվում էր Բյուզանդական կայսրության հովանավորությունը: Այդ գիտակցությունն էլ հաճախ ուղեկցում էր Կիլիկիայում իշխանություն ձեռք բերած հայկական իշխանական տներին, որոնց ներկայացուցիչներից շատերն ամեն գնով փորձում էին ձեռք բերել բյուզանդական տիտղոսներ:

Մինչև ԺԲ դարի երկրորդ կեսը՝ կապված առաջին, երկրորդ և երրորդ խաչակրաց ռազմարշավների որոշակի հաջողու-

²² ԺԱ-ԺԲ դդ. Կիլիկիայում հաստատված բոլոր իշխանական տների պատմությունն ամենայն հետևողականությամբ քննված է Dédéyan G., Les Arméniens..., v. 1-2 մենագրության մեջ:

թյունների հետ, Բյուզանդական կայսրությունը Փոքր Ասիայի և Հյուսիսային Ասորիքի տարածաշրջանում վարում էր չափազանց ակտիվ արտաքին քաղաքականություն, նշանակում էր զորահրամանատար-կառավարիչներ, որոնք, նշված տարածքներում համագործակցելով տեղական հայկական իշխանական տների հետ, ունեին անսահմանափակ ռազմական իշխանություն: Այդ տարածքների հպատակեցման գործում Բյուզանդական կայսրության համար էական խոչընդոտներ էր ստեղծում Անտիոքի նորմանական իշխանապետությունը: Օգտագործելով սեփական հնարավորությունները, ինչպես նաև կոալիցիաներ ստեղծելով խաչակրաց պետությունների և Փոքր Ասիայի մուսուլմանական քաղաքական կազմավորումների հետ՝ հակառակ Բյուզանդիայի եռանդուն տիեզերակալական քաղաքականության, Ռուբինյան հայկական իշխանությանը հաջողվեց միավորել Կիլիկիայի գրեթե բոլոր շրջանները, դուրս գալ Բյուզանդական կայսրության ստորակայի կարգավիճակից և ԺԲ դարի երկրորդ կեսին կատարեց իր առաջին հաջող և նպատակաուղղված դիվանագիտական քայլերը միջազգային փոխհարաբերությունների ասպարեզում, որն արդեն դարավերջին երկրին բերեց լիակատար՝ և՛ փաստական, և՛ իրավական անկախություն: 1198/1199 թ.²³ Կիլիկիայի Ռուբինյան հայկական իշխանությունը թագավորություն հռչակվեց Հռոմեական սրբազան կայսրության և Հռոմի պապության կողմից: Կիլիկիայի հայկական պետության առաջին ճանաչողներից մեկը դարձավ նաև Բյուզանդական կայսրությունը, որը ստիպված էր թագ ուղարկել Լևոն Բ Ռուբինյան իշխանին: Բյուզանդական պաշտոնական պատմագրությունը և մատենագրությունը թշնամական խանդով էր արձանագրում Կիլիկիայում հաստատված հայկական իշխանությունների հաջողությունները՝ մանավանդ անկախություն ձեռք բերելու նրանց ձգտումները: Բացի այդ դարաշրջանի բյուզանդական սկզբնաղբյուրները հայտնում են տեղեկություններ և մանրամասներ, որոնք բացա-

²³ Թեպետ, ինչպես երևում է Ներսես Լամբրոնացու «առ Լևոն» թղթից, երկրի ներսում Լևոն Բ իշխանը դիտվում էր իբրև ինքնանկախ իշխող (տե՛ս *Recueil des Historiens Croisades, Documents Arméniens*, t. I, p. 578):

կայում են տարածաշրջանի մասին խոսող այլ սկզբնաղբյուրներում: Այս տեսակետից էական լրացումներ են պարունակում նաև Մերձավոր Արևելքի մուսուլմանական սկզբնաղբյուրները, որոնք ներկայացված են ներկա գրքի հաջորդ գլուխներում:

Մինչև Միրիոկեֆալոնի ճակատամարտը (1176 թ.) հայկական այն իշխանությունները, որոնք ինքնուրույնաբար շարունակում էին իրենց գոյությունը Կիլիկիայի տարածքի վրա, քաղաքական և տնտեսական սերտ կապերով էին կապված Բյուզանդական կայսրությանն ու ճանաչում էին նրա գերակայությունը: Կայսրությունը Փոքր Ասիայի այս տարածաշրջանում ժամանակ առ ժամանակ պահում էր բավական մեծաթիվ բանակ, որն համալրվում էր նաև հիշյալ տարածքներում ավատներ ունեցող իր ստորականների զինված ջոկատներով: Այդ մասին հիմնականում տեղեկություններ են հաղորդում բյուզանդական պատմիչներ Աննա Կոմնենեն, Հովհաննես Կիննամոսը և Նիկետաս Խոնիատեսը: Սկսած ԺԲ դարի 40-ական թվականներից, Բյուզանդական կայսրությունը Կիլիկիա էր ուղարկում կառավարիչ-գորահրամանատարներ, որոնք տեղական ստորակա իշխանությունների հետ փորձում էին Կիլիկիայում ամրապնդել Կոմենենոսների իշխանությունը, ծրագրում էին Ատալիա, Իսավրիա, Կիլիկիա, Անտիոք և Կիպրոս երկրամասերի տարածքների վրա ստեղծել ստեղծել միասնական ռազմավարչական միավոր²⁴: Բյուզանդական կայսրությունը մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում փորձում էր վերականգնել սեփական իշխանությունը Փոքր Ասիայում: Հովհաննես Բ և Մանուել Ա Կոմենենոսների արևելյան քաղաքականության հիմնական խնդիրն էր ելակետային դիրքեր գրավել Սև և Միջերկրական ծովերի ափամերձ շրջաններում, թույլ չտալ մյուս պետություններին ազատ ելք ունենալ Միջերկրական ծովի ավազան, օգտագործելով դինաստիական ամուսնությունները՝ կայսրությանը ենթարկել Մերձավոր Արևելքի խաչակրաց իշխանությունները, բարձրացնել կայսրության միջազգային հեղինակությունը: Այդ քաղաքականությունը իրագործելու հիմնական պայմաններից մեկը Կապադովկիայում, Կիլիկիայում

²⁴ Բոզոյան Ա., Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը..., էջ 194-195:

և Հյուսիսային Ասորիքում հաստատված հայկական բնակչության և հատկապես զինական ուժերի հպատակեցումն էր Բյուզանդական կայսրության արտաքին քաղաքական շահերին: Այդ նպատակին հասնելու համար կայսրությունը կազմակերպում էր հեռավոր ռազմարշավներ դեպի Հյուսիսային Ասորիք (1136-1138, 1143, 1148/1149, 1158 և այլն), բյուզանդամետ ուժերի օգնությամբ երկպառակտչական պատերազմներ էր հրահրում Կիլիկիայում, ստիպում էր Հռոմկլայում հաստատված Հայոց կաթողիկոսարանին ընդունել բյուզանդական եկեղեցու դավանաբանական-ծիսական պայմանները և ճանաչել Կոստանդնուպոլսի պատրիարքության գերագահությունը: Քաղաքական այս մոտեցումներն էլ իրենց ազդեցությունն են թողել դարաշրջանի բյուզանդական պատմագրական մտքի վրա: Այստեղ կարելի է ընդգծել երկու հակադեմ գործընթաց: Եթե Բյուզանդական կայսրությունը ԺԲ դարի երկրորդ կեսի ընթացքում ավելի ու ավելի էր հեռանում իր առջև դրված նպատակներից և իրար հաջորդող պարտություններով (մանավանդ Միրիոկեֆալոնի ճակատամարտում) հետզհետե դուրս էր մղվում Կիլիկիայում և Հյուսիսային Ասորիքում ծավալված քաղաքական պայքարից, ապա Կիլիկիայի Ռուփինյան իշխանապետությունը հետևողական քաղաքական ձեռքբերումների շնորհիվ հաստատում էր իր դիրքերը տարածաշրջանում և ստանում էր անկախ քաղաքական միավորի կարգավիճակ: Վերջիվերջո, Բյուզանդական կայսրությունը 1198 թ. ճանաչեց Կիլիկիայի հայկական պետության անկախությունը:

Կիլիկիա և Հյուսիսային Ասորիք տարածաշրջանների ԺԲ դարի պատմությունը խորապես հասկանալու համար չափազանց կարևոր են ԺԱ դարի երկրորդ կեսի բյուզանդական հեղինակներ Միքայել Ատալիատեսի և Միքայել Պսեյլոսի պատմագեղարվեստական երկերը: Այս հեղինակները, շարունակելով բյուզանդական մատենագրության բազմադարյան ավանդները, ուշագրավ վկայություններ են հաղորդում Բյուզանդիայի վարած պատերազմներում տարածաշրջանի հայկական բնակչության և զինվորական ուժերի ներգրավվածության մասին, պատմում են բյուզանդական կայսրերի ոչ միայն Կիլիկիայի, այլ նաև Իկոնիա-

յի սուլթանության և Դանիշմանյան ամիրության դեմ ուղղված ռազմարշավների մասին: Այս պետությունները դարձել էին կայսրության անմիջական հարևանները՝ սեպ խրելով Բյուզանդիայի և նրա նախկին տարածքների՝ Սելևկիայի, Կիլիկիայի և Հյուսիսային Ասորիքի միջև: Այս տեսանկյունից՝ բյուզանդական սկզբնաղբյուրները, քաղաքական շահեր ունենալով, տարածաշրջանում իրերի վիճակը ներկայացնում են նեղ, կայսերական դիտանկյունից:

ԺԲ դար վերջում՝ Կոմնենոսների կառավարման վերջին տարիներին, Բյուզանդական կայսրության ներսում սկսված քաղաքական ճգնաժամը հիմնական պատճառներից մեկը դարձավ 1204 թ. լատինների կողմից Կ. Պոլսի առման և երկրի մասնատման համար: Նիկիայում հաստատված կայսրերի կողմից Բյուզանդիայի քաղաքական, ռազմական և տնտեսական ուժերի նոր համախմբումը, որն ավարտվեց 1260 թ. կայսրության մայրաքաղաքի վերագրավումով, այլևս հնարավորություն չտվեց իշխանության գլուխ անցած Պալեոլոգոս կայսրերին մտածել Կիլիկիայի տարածքում սեփական իշխանության տարածման մասին: Կայսրության գերխնդիրն էր պահպանել Բալկաններում և Փոքր Ասիայի արևմուտքում դեռևս գոյատևող բյուզանդական տարածքների վրա օրեցօր նվազող Բյուզանդիայի իշխանությունը:

ԺԳ-ԺԴ դդ. պահպանված հատուկենտ պաշտոնական վավերագրերը վկայում են, որ Բյուզանդական կայսրությանը Կիլիկիայի հայկական պետությունը հետաքրքրում էր իբրև քրիստոնյա երկիր, որի հետ դաշնակցելը բխում էր երկու երկրների քաղաքական շահերից: Այդ իսկ պատճառով նկատելի է կայսերական և պատրիարքական նոտարատներից դուրս եկած և մեզ հասած վավերագրերում Կիլիկիայի հայկական պետության քաղաքական և հոգևոր իշխանությունների նկատմամբ Բյուզանդական կայսրության այս շրջանի գործիչների հարգանքը, որն համեմատորեն աճում է Բյուզանդական կայսրության թուլացման միտումների հետ միասին: Պահպանված վավերագրերը վկայում են, որ Նիկիայի և Կոստանդնուպոլսի կայսրերը և պատրիարքները, ձգտելով դաշնակցային հարաբերություններ

ստեղծել Կիլիկիայի հայկական թագավորության հետ, միաժամանակ ամեն անգամ հիշեցնում են երկու ժողովուրդների դավանական տարբերությունների մասին: Այս հանգամանքն ավելի մտահոգիչ էր Բյուզանդական պետության համար, քանի որ նրա մայրաքաղաքում, բալկանյան և փոքրասիական տարածքներում հին ժամանակներից ի վեր բնակվում էր բյուզանդական պաշտոնական դավանաբանությունը մերժող, Հայոց առաքելական եկեղեցուն հետևորդ ազգաբնակչություն: Բյուզանդական պետությունը ժամանակ առ ժամանակ կտրուկ միջոցառումների էր դիմում այդ ազգաբնակչության դեմ՝ բռնի դավանափոխ անելով նրա ներկայացուցիչներին: Այդ է պատճառը, որ պահպանված վավերագրերում հաճախ շոշափվում է երկու կողմերի համար էլ ցավոտ այդ խնդիրը: Այս տեսանկյունից բյուզանդական մատենագրության զանազան երկերում հայկական ազգաբնակչությունը հաճախ բնութագրվում է իբրև «հերձվածող»: Պետական այս դիրքորոշումը, որն ուղեկցվում էր եկեղեցական քաղաքականությամբ, ավելի հաճախ ուղղված էր կայսրության տարածքներում հաստատված հայ ազգաբնակչության դեմ, քանի որ սկզբից ի վեր Բյուզանդական կայսրության հիմնական խնդիրներից մեկն էր դարձել դավանական տարածայնությունների վերացումը Բյուզանդիայի իշխանության տակ գտնվող տարածքներում: Բյուզանդական կողմը հասկանում էր, որ սեփական տարածքներում բնակվող հայազգի բնակչության բռնի դարձի բերելու ճանապարհը դատապարտված է ձախողման: Դարեր շարունակ բյուզանդական «ուղղափառության» բռնի տարածման ճանապարհով կայսրությունն ամենևին չէր կարողանում արմատախիլ անել այդ երևույթի գաղափարական հիմքերը: Այս բնագավառում կայսերական իշխանություններն ու Կ. Պոլսի պատրիարքությունը փորձում էին օգտագործել Կիլիկիայի հայկական պետության և եկեղեցու հեղինակությունը: Այդ էր հիմնական պատճառը, որ ժամանակ առ ժամանակ Հայոց կաթողիկոսարանի հետ սկսվում էին պաշտոնական բանակցություններ եկեղեցական միություն հաստատելու մտադրությամբ: Այդ բանակցություններում Հայոց կաթողիկոսարանը և Կիլիկիայի հայկական իշխանությունները հետապնդում էին երկու նպատակ:

Առաջինը հավասար հիմունքների վրա եկեղեցիների միության հաստատումն էր, երկրորդը՝ բյուզանդական տարածքների վրա բնակվող հայկական ազգաբնակչության հետ կապերի ամրապնդումը: Ներկա աշխատանքում ներկայացված եկեղեցաքաղաքական վավերագրերից հայտնի է դառնում, որ եկեղեցական բանակցությունների նախաշեմին բյուզանդական կողմը հաճախ փորձում է արդարանալ Հայոց հոգևոր և աշխարհիկ իշխանությունների առջև՝ մերժելով սեփական տարածքում բռնի դավանափոխության փորձ կատարելու հայկական կողմի ներկայացրած փաստարկները:

Կոմենենոսների դարաշրջանի պաշտոնական պատմագրությունը. Ներկա աշխատանքի սույն հատվածում կարևոր ենք համարել Կոմենենոսների դարաշրջանի պատմությունը լուսաբանող հիմնական բյուզանդական սկզբնաղբյուրները ներկայացնել մեզ հետաքրքրող հարցերի շրջանակում: Ողջ ԺԲ դ. և ԺԳ դ. սկզբի բյուզանդական պատմագրական երկերում ավելի ամբողջական է ներկայացված Կիլիկիայի հայկական իշխանապետության նկատմամբ կայսրության վերաբերմունքը, քանի որ կայսերական արևելյան քաղաքականությունը Կոմենենոսների դարաշրջանում հաճախակի էր բախվում Կիլիկիայի և նրան հարակից տարածաշրջանների մուսուլմանական պետությունների հետ: Բյուզանդական պատմագիրների մեջ մեծ կարևորություն են ստանում Աննա Կոմենենի, Հովհաննես Կիննամոսի և Նիկետաս Խոնիատեսի պատմական աշխատությունները, որոնք բյուզանդական պաշտոնական պատմագրության արձագանքներն են դարաշրջանի իրադարձությունների վերաբերյալ. նրանց հիմնական խնդիրը բյուզանդական Կոմենենոս կայսրերի խաղաղացած դերի հնարավորինս բազմակողմանի վերհանումն է: Հիշատակված հեղինակները շարունակում են բյուզանդական պատմագրության ավանդույթները՝ դրանց լույսի ներքո քննելով Կոմենենոսների գործունեության հիմնական ուղղությունները: Այդ պատմիչները հիմնականում ստեղծագործել են Կիլիկիայի իշխանապետության ժամանակաշրջանում:

Աննա Կոմենենեն (1081-1153) ԺԲ դարի բյուզանդական պատմագրական դպրոցի լավագույն ներկայացուցիչներից է:

ԺԲ դարի 30-40-ական թթ. շարունակելով իր վաղամեդիկ ամուսնու՝ Նիկեփոր Վրիենոսի անավարտ աշխատությունը՝ նա շարադրել է իր հոր՝ կայսր Ալեքս Ա Կոմնենոսի (1081-1118) դարաշրջանի Բյուզանդական կայսրության պատմությունը²⁵: Աննա Կոմնենեի պատմությունը նվիրված է իր հոր՝ Ալեքս Կոմնենոսի իշխանության դարաշրջանին, թեպետ աշխատանքը գրվել է Մանուել Ա Կոմնենոսի գահակալության սկզբում: Բյուզանդական պատմագրության հետազոտողների կողմից նկատվել է, որ Աննան, նկարագրելով Ալեքս Ա-ի բարենորոգչական քայլերը, անուղղակիորեն հակադրում է դրանք իր եղբոր՝ Հովհաննես Բ-ի և վերջինիս որդի՝ Մանուել Ա-ի պատմագրուիու կարծիքով ապաշնորհ քաղաքական գործունեության հետ: Պատմագրուհին փառաբանում է Ալեքս Ա-ի պետական առաքելությունը, այդ իսկ պատճառով պատմագրության մեջ այս աշխատանքը դարեր ի վեր դիպուկ բնութագրությամբ անվանվում է «Ալեքսիադա»: Աննա Կոմնենեի համար իր հոր գահակալման շրջանը բյուզանդական կայսրության պատմության ամենալուսավոր դարաշրջաններից է: Նրա երկում իրար են խառնված արքունիքի ծիրանի սենյակում ծնված արքայադստեր մանկական հիշողություններն ու տպավորությունները, արքունիքում անցկացրած տարիներին լսած զանազան խոսակցությունները: Ընթերցասեր կնոջ ճաշակի արդյունք են նրա երկի տարբեր հատվածները, ուր հեղինակը անտիկ դարաշրջանի հույն հեղինակների և

²⁵ Այս աշխատության հունարեն բնագրի վերջին հրատարակությունը զուգադիր ֆրանսերեն թարգմանությամբ տե՛ս **Anna Comnena**. Alexide (règne de l'empereure Alexis I Comnène 1081-1118) / Texte établi et traduit par **B. Leib**, t. I-III, Paris, 1945-1947: Ձեռքի տակ ենք ունեցել այս երկի Դյուկանժի կազմած բնագրի և լատիներեն թարգմանության արտատպությունը Միսեի (PG, t. 131, p. 59-1307) և Լ. Շոպենուսի (CSHB, Bonnae MDCCCXXXIX) կողմից: Նորագույն անգլերեն թարգմանությունը տե՛ս **Anna Comnena**, The Alexiad / translated by **Elisabeth A. S. Dawes**, In parentheses Publications Byzantine Series, Cambridge, Ontario, 2000: Ավելի հաճախ օգտագործել ենք բնագրի ռուսերեն թարգմանությունը (**Анна Комнина**, Алексиада / Вступительная статья, перевод, комментарий **Я.Н. Любарского**, Москва, 1965):

նրանց ստեղծած հերոսների ազդեցության տակ է²⁶, ինչն էլ հուշում է նրա գիտելիքների և դարաշրջանի բյուզանդական կրթության առանձնահատկությունների մասին²⁷: Առանց այս երկը հաշվի առնելու անհնար է անդրադառնալ Հովհաննես Բ և Մանուել Ա Կոմնենոսների ժամանակաշրջանի Բյուզանդական կայսրության արևելյան քաղաքականության խնդիրներին ու կայսրերի հեռագնաց զավթողական ռազմարշավների ուսումնասիրությանը: Վերոհիշյալ կայսրերը որոշ շտկումներով շարունակում էին Ալեքս Ա Կոմնենոսի իշխանության տարիներին սկսված Փոքր Ասիայի և Հյուսիսային Ասորիքի տարածքների վերագրավման քաղաքականությունը: «Ալեքսիադա»-ում նկարագրվում են Ալեքս Ա-ի արևելյան ռազմարշավները, բացահայտվում են Կոմնենոսների դարաշրջանի բյուզանդական դիվանագիտության որոշ սկզբունքային մոտեցումներ: Արքայադատեր պատմությունը չափազանց կարևոր սկզբնաղբյուր է ԺԱ-ԺԲ դդ. Բալկանյան թերակղզում բնակվող հայկական ազգաբնակչության, նրանց դավանական պատկանելության և դարաշրջանի բյուզանդական, երբեմն էլ հայկական ծագման պետական և զինվորական գործիչների գործունեության հետազոտման տեսանկյունից: Նա օգտագործում է պաշտոնական փաստաթղթեր. ինչպիսին է, օրինակ, Բոհեմունդ Անտիոքացու հետ 1108 թ. Ալեքս Ա-ի կնքած հաշտության Դեաբոյան պայմանագիրը: Հիշատակված փաստաթուղթը թույլ է տալիս մերօրյա հետազոտողին թափանցել Բյուզանդական կայսրության արևելյան քաղաքականության տիեզերակալական էության խորքերը Հովհաննես Բ Կոմնենոսի դեպի Կիլիկիա և Հյուսիսային Ասորիք ծրագրված ռազմարշավի (1136-1138) նախօրյակին, քանի որ ԺԲ դարի Կոմնենոս կայսրերի նվաճողական արտաքին քաղաքականությունը արևելքում արդարացնելու համար պատմագիր-

²⁶ Իրավացի է Հ. Հունգերը, անվանելով Աննա Կոմնենեի աշխատությունը «Բյուզանդական մեծ արձակ-վեպ Ալեքս Ա կայսեր մասին» (Տե՛ս **Hunger H.**, Die hochsprachliche Profane Literatur der Byzantinischer, Bd. 1, München, 1978, S. 404):

²⁷ Այս մտածողության լավագույն արտացոլումը Միքայել Իտալիկոսի «Ներքողյան»-ն է, որին կանդադառնանք հետագա շարադրաքում:

ները դեռևս երկար ժամանակ վկայակոչում են Դեաբոյան հաշտության պայմանագիրը²⁸: Այդ պայմանագիրը բյուզանդական իրավական առաջին փաստաթուղթն էր, ուր հստակեցվում էր Կիլիկիայի Ռուբինյան իշխաններ Թորոսի և Լևոնի քաղաքական կարգավիճակը: Աննա Կոմնենեն ապրել է մինչև Մանուել Կոմնենոսի իշխանության երկրորդ տասնամյակի կեսերը: Կ. Պոլսի արքայադստեր պատմական երկում բազմիցս հիշատակվում են հայերը, որոնք ներկայացված են բյուզանդական բազմազգ և բազմաշերտ հասարակության սոցիալական գրեթե բոլոր խավերում: Այս երկում հիշատակվում են Բյուզանդական կայսրության բարձրագույն պետական ծառայության մեջ ընդգրկված հայազգի գործիչներ, որոնք պատկանում են նշանավոր ազնվականական տների (օրինակ՝ Արշակունիներ, Բակուրիաններ, Ռուբինյաններ և այլն)²⁹: Ըստ Աննա Կոմնենեի աշխատության՝ հայ բնակչության հոծ խմբեր են բնակվում մայրաքաղաք Կոստանդնուպոլսում³⁰ և Թրակիայի Փիլիպոպոլիս (ներկայիս Պլովդիվ)³¹ քաղաքում, անուն առ անուն հիշատակվում են մի շարք հայկական ծագում ունեցող աղանդավորներ: Նրա պատ-

²⁸ Այդ մասին է վկայում ԺԲ դարի վերջի պատմիչ Միքայել Ասորին. «Երբ նա (Հովհաննես Բ Կոմնենոսը –Ա.Բ.) չկարողացավ գրավել այն (Անտիոքը –Ա.Բ.), Ջուլիսը (Եղեսիայի տերը- Ա.Բ.) եկավ նրան փնտրելու, և նրանք հաշտություն կնքեցին պայմանով, որ երբ կայսրը տիրանա Ասորիքի տարածաշրջանին, այսինքն՝ Հալեպին և մնացածին, նա դրանք կտա ֆրանկներին, իսկ ֆրանկները իրեն կհանձնեն Անտիոքը, իսկայես նրանք խոստացել էին նրա հայր Ալեքսին» (Chronique de Michel le Syrien patriarche jacobite d'Antioche (1166-1199) / Editer pour la première fois et traduite en français par J.-B. Chabot, t. III, Paris 1905, p. 245; հմմտ. Նորագույն անգլերեն թարգմանության հետ՝ The Syriac Chronicle of Michael Rabo (The Great), A Universal History from the Creation / Translation and Introduction by Matti Moosa, New York 2014, p. 656).

²⁹ Анна Комнина, XIV, 8, с. 321-322, 369-370; Ասպիետների ընտանիքի մասին տե՛ս **Каждан А.П.**, Армяне в составе господствующего класса византийской империи в XI-XII вв., Ереван, 1975, с. 43-46; **Dédéyan G.**, Les Arméniens entre Grecs Musulmans et Croisés. Etude sur les pouvoirs Arméniens dans le Proche-Orient méditerranéen (1068-1150), volume 2: de l'Euphrate au Nil: Le Réseau diasporique, Lisabonne, 2003, p. 695-704.

³⁰ Анна Комнина, X, 1, с. 265:

³¹ Анна Комнина, XIV, 8:

մության մեջ հայերը հիշատակվում են նաև իբրև առաջին խաչակրաց ռազմարշավի դեմ Ֆաթիմյան Եգիպտոսի բանակում կռվող զինվորներ³²: Ըստ բյուզանդական պատմագրուհու՝ Ալեքս Կոմնենոս կայսեր կողմից Բալկաններում գերվում և ստրուկների են վերածվում պավլիկյան և մանիքեական աղանդավորները, որոնց մի մասի հայկական ծագումը կարելի է ենթադրել³³: Ըստ Աննա Կոմնենեի պատկերացումների, որոնք հիմնված էին Բյուզանդական կայսրության բազմահարյուրամյա փորձի վրա, հայերը կարող են լինել բյուզանդական եկեղեցու հետևորդներ³⁴ կամ ազգային՝ հակաքաղկեդոնական ինքնուրույն եկեղեցու ներկայացուցիչներ³⁵, որոնք ապրում են թե՛ Բյուզանդական կայսրության տարածքներում և թե՛ նրա սահմաններից դուրս: Կոստանդնուպոլիսը և Փիլիպպոլիսը ունեին հակաքաղկեդոնական դավանանքի հայազգի բավական հոծ բնակչություն, որոնց մի մասն ամենայն հավանականությամբ Հայոց պաշտոնական՝ հակաքաղկեդոնական եկեղեցու ներկայացուցիչներ էին: Հատկապես մանիքեական և պավլիկյան աղանդավորներով հարուստ էր Փիլիպպոլիս քաղաքը, ուր հիշատակված աղանդավորների հետ, ըստ պատմագրուհու, բնակվում էր նաև Հակոբի հերձվածին հետևող, հակաքաղկեդոնական հայ ազգաբնակչություն³⁶: Պիտի շեշտել, որ թեպետ պատմագրուհին մանրամասն անդրադառնում է Անտիոքի խաչակրաց պետության պատմության մի շարք կարևոր դրվագների, այնուամենայնիվ քիչ է տեղեկացված Կիլիկիայում և շրջակա տարածքներում հաստատված հայկական իշխանությունների գործունեությանը:

Ալեքս Ա-ին հաջորդած երկու բյուզանդական կայսրերի իշխանության դարաշրջանի պատմությունը շարադրում է Հովհաննես Բ և Մանուել Ա Կոմնենոսների դարաշրջանի արքունա-

³² Анна Комнина, IX, 7, с. 307.

³³ Анна Комнина, XIV, 8, с. 39 “καὶ μετὰ μάχη” ἠμιδραποδίσσато”.

³⁴ Հիշատակված խմբի ներկայացուցիչներ պետք է համարել Գրիգոր Բակուրիանին, Արշակունի Սապիետին և այլն., տե՛ս Анна Комнина, II, 4, с. 97:

³⁵ Анна Комнина, X, 1, с. 265.

³⁶ Анна Комнина, XIV, 8, с. 395-396.

կան դպիր (ὁ βασιλικὸς γραμματικὸς) Հովհաննես Կիննամոսը³⁷: Թեև պատմագրության մեջ նրա աշխատանքը երբեմն անվանվում է «Համառոտ (ἐπιτομή) պատմություն»³⁸, այնուամենայնիվ, այն ավելի հաճախ անվանում են «Պատմություն»³⁹: Այդ երկը պահպանվել է ԺԳ դարի եզակի մի ձեռագրում, որից կատարվել են հետագա բոլոր ընդօրինակությունները: «Պատմության» մեզ հասած բնագիրը ընդհատվում է 1176 թ. դեպքերի նկարագրության մասում, ուր պատմիչի միտքը մնում է անավարտ⁴⁰: Հովհաննես Կիննամոսը ընդհանուր գծերով ներկայացնում է Հովհաննես Բ Կոմնենոսի կառավարման ժամանակաշրջանը՝ ավելի հանգամանորեն անդրադառնալով Մանուել Ա-ի իշխանության տարիներին⁴¹: Հովհաննես Կիննամոսը մանրամասն տեղեկություններ է հաղորդում Բյուզանդական կայսրության արևելյան քաղաքականության որոշակի խնդիրների վերաբերյալ, նկարագրում է Հովհաննես Բ-ի և Մանուել Ա-ի Կիլիկիա-Հյուսիսասորիքյան ռազմարշավները, հիշատակում է Կիլիկիայում կառավարած բյուզանդական պաշտոնյաներին, անդրադառնում է կայսրության դիվանագիտական կարևորագույն ձեռնարկումներին: ԺԲ դարի երկրորդ կեսի բյուզանդական պատ-

³⁷ The Oxford Dictionary of Byzantium, Kazhdan A. (edit.), v. 2, Oxford, 1991, p. 1130.

³⁸ Ioannis Cinnami, Epitome rerum ab Ioanne et Alexio (sic) Comnenis gestarum / Ad fidem codicis Vaticani recensuit Augustus Meineke, Bonnae, 1836: Հունարեն բնագրի հետ միասին մեքց հավասարապես օգտագործել ենք նաև Հովհաննես Կիննամոսի երկի ողուերեն թարգմանությունը (տե՛ս Краткое обозрение царствования Иоанна и Мануила Комнинов (1118-1180). Труд Иоанна Комнина / Перевод под редакцией профессора В. Н. Карпова, Санкт-Петербург, 1859):

³⁹ St' u Wirth P., Zur Frage nach dem authentischen Titel von Johannes Cinnamos' Geschichtswerk. – Byzantion, t. 41, 1971. S. 375-377.

⁴⁰ Фрейденберг М.М., Труд Иоанна Киннама как исторический источник. – ВВ, т. XVI (1959), с. 30.

⁴¹ Այս հանգամանքը նկատի ունի Հ. Հունգերը, երբ այս երկի վերնագրի մասին գրում է. «...պաճուճագարդ վերնագիրը ցույց է տալիս, որ ἐπιτομή-ն վերաբերում է միայն Հովհաննես Բ-ի կառավարմանը, այդ իսկ պատճառով աշխատության իսկական վերնագիրը պետք է համարել ἀφήγησις-ը» (Hunger H., նշվ. աշխ., Bd. I, S. 410):

միջ Հովհաննես Կիննամոսը, լռելով ժԲ դարի 20-30-ական թթ. տեղի ունեցած մի շարք իրադարձությունների մասին, որոնց պատճառով թշնամանք էր առաջացել Կիլիկիայի հայկական իշխանության և կայսրության փոխհարաբերություններում, բավական մանրամասն պատմում է 1136-1138 թթ. Հովհաննես Կոմնենոսի ձեռնարկած Կիլիկյան ռազմարշավի ընթացքի մասին: Այս տեղեկություններից իմանում ենք, որ Դեաբոլի պայմանագրին հաջորդած երեք տասնամյակների ընթացքում Կիլիկիայի հայկական իշխանությունը ընդարձակվել է, իսկ Լևոն Ա Ռուբինյան իշխանի ղեկավարությամբ ժամանակի ընթացքում զավթել է Դաշտային Կիլիկիայի ողջ տարածքը և պաշարել է անգամ Իսավրիայի մայրաքաղաք Սելևկիան: Բյուզանդական պատմիչներ Հովհաննես Կիննամոսը և Նիկետաս Խոնիատեսը հիշատակված իրադարձության մասին խոսելիս ամենայն հավանականությամբ իրենց ձեռքի տակ ունեցել են Հովհաննես Կոմնենոս կայսեր Կիլիկիայից և Հյուսիսային Ասորիքից բյուզանդական արքունիք ուղարկած պաշտոնական զեկուցագրերը, ականատեսների վկայությունները, մատենագրական գործիչների արձագանքները, որոնց հիման վրա էլ կայսրության մեջ ձևավորվում էր հասարակական կարծիքը: Այդ վավերագրերի արձագանքներն ամենուր են հիշատակված բյուզանդական գանազան սկզբնաղբյուրներում՝ հատկապես կայսրերի արշավանքների մասին պատմող, նույն դարաշրջանում գրված ներբողյաններում: Այնուամենայնիվ Կիլիկիային, նրա ազգաբնակչությանը և իշխողներին վերաբերող վկայությունները Հովհաննես Կիննամոսի մոտ բավական սուղ են, քանի որ այդ տարածքի բյուզանդական պատկանելությունը պատմիչի համար անառարկելի փաստ է: Այդ մասին են խոսել նրա ձեռքի տակ եղած պաշտոնական վավերագրերը, որոնք վկայել են Հովհաննես Բ և Մանուել Ա Կոմնենոս կայսրերի ռազմարշավների և տարածաշրջանում պաշտոնավարած բյուզանդական կառավարիչերի մասին:

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի պատմական գործիչների, դեպքերի ու իրադարձությունների մասին հանգամանակից պատմում է նաև ժԲ դարի վերջին և ժԳ դարի սկզբին

ապրած, Հովհաննես Կիննամոսի կրտսեր ժամանակակից, բյուզանդական նշանավոր քաղաքական գործիչ, բազմաբեղուն մատենագիր Նիկետաս Խոնիատեսը: Վերջին երեք Կոմնենոս կայսրերի (Մանուել, Ալեքս Բ և Անդրոնիկոս Ա) կառավարման տարիներին Նիկետաս Խոնիատեսը Բյուզանդական վարչական ապարատում զբաղեցրել է տարբեր բարձր պաշտոններ, այնուհետև ծառայության է անցել Իսահակ Բ Անգելոսի (1185-1195) մոտ, նշանակվել է Փիլիպուպոլիս քաղաքի կառավարիչ: Այդ պաշտոնին նա եղել է Գ խաչակրաց ռազմարշավի ժամանակ և ականատեսի վրդովմունքով է արձանագրել, որ քաղաքի հայ բնակչությունը ի հակադրություն բյուզանդական իշխանությունների՝ Փիլիպուպոլիս քաղաքի դռները բացել է գերմանական կայսր Ֆրիդրիխ Բարբարոսայի բանակների առջև⁴²: Փիլիպուպոլիսում նա շփվում է քաղաքի հայկական բազմաշերտ ազգաբնակչության հետ, որոնց նկատմամբ վերաբերմունքը արտահայտված է և՛ նրա պատմության և՛ անձնական նամակների և՛ ճառերի մեջ⁴³: Հայկական «աղանդի» մասին նրա պատկերացումների վրա ամենայն հավանականությամբ խորը հետք է թողել վերոհիշյալ իրադարձությունը, որի ազդեցությամբ էլ իր «Πανοπλία δογματική»-ում շարադրել է Հայոց առաքելական եկեղեցուն հավատարիմ և աղանդավորության մեջ մեղադրվող հայազգի բնակչության ծիսադավանական պատկերացումների նկատմամբ բյուզանդական մոտեցումները⁴⁴: Ըստ բյուզանդական պատմիչի տեղեկության. «[Ֆրիդրիխ Բարբարոսան] մտնելով Փիլիպուպոլիս՝ գտավ այն գրեթե ամբողջովին դատարկ, քանի որ քիչ թե շատ օրինավոր բնակիչները փախել էին այնտեղից, իսկ եթե որևէ մեկն էլ մնացել էր, ապա կամ ինչ որ աղքատ էր, որի ունեցվածքը միայն իր հագուստն էր, կամ էլ հայ

⁴² St' u Nicetae Choniatae Historia / Recensuit Ioannes Aloysius van Dieten, Pars I, Berolini et Novi Eboraci, 1975, p. 403. 71-81 [Corpus fontum Historiae Byzantinae - CFHB], vol. XI/1].

⁴³ Nicetae Choniatae Orationes et Epistulae / Recensuit Ioannes Aloysius van Dieten, Apud Walter de Gruyter et Socios, Berolini et Novi Eboraci, 1972 [CFHB, vol. III], The Oxford Dictionary of Byzantium..., v. 1, p. 428.

⁴⁴ St' u Patrologia Graeca, t. 139, p. 1101 – 140, p. 292.

էր: Իրականում միայն հայերն էին գերմանացիների գալուստը համարում ոչ թե ազգերի ներխուժում, այլ բարեկամների այց, քանի որ նրանք գերմանացիների հետ վարում են առևտրական գործեր և փոխադարձաբար համաձայն են նրանց հետ բազմաթիվ հերետիկոսական ուսմունքներում: Այսպես, հայերի և գերմանացիների կողմից հավասարապես մերժվում է սուրբ պատկերների պաշտամունքը. թե՛ մեկը և՛ թե՛ մյուսները սրբազան պատարագի ժամանակ օգտագործում են բաղարջ և շեղվելով ուղիղ ճանապարհից, որպես կանոն, ունեն նաև այլ [սովորություններ], որոնք մերժում են օրթոդոքս⁴⁵ քրիստոնյաները»⁴⁶: Այլ երանգներով է Փիլիպուպոլսի գրավման իրադարձությունը նկարագրում Գ խաչակրության գերմանացի ժամանակագիր Անսբերտը: Նրա երկում հայերն անվանվում են հաղթական կայսր Ֆրիդրիխ Բարբարոսայի հավատարիմ բարեկամներ (*per Armenios fideiiores victoriosimo imperatori*)⁴⁷: Հայկական ազգաբնակչության նկատմամբ ԺԲ դարի վերջի բյուզանդական հասարակության որոշ շերտերի ընդհանրացված կարծիքը Նիկետաս Խոնիատեսը դրել է Անդրոնիկոս Ա Կոմնենոս կայսեր բերանում: Խոսելով այդ կայսեր և Թեոդոսիոս Ա Բորադիոտես պատրիարքի հակամարտության մասին՝ կայսրը վերջինիս համարում է «βαθύς Ἀρμένιος» (թաքնված հայ)⁴⁸, վկա-

⁴⁵ Պատմիչը նկատի ունի բյուզանդական եկեղեցու հավատացյալներին:

⁴⁶ *St' u Nicetae Choniatae Historia ... 1975* [CFHB, vol. XI/1, Series Berolinensis], p. 403. 71-81, Հմմտ. նաև *Никита Хониат, История / Перевод под редакцией проф. Долицкого И., т. II, с. 6.*

⁴⁷ *Quelen zur Geschichte des Kreuzzuges Kaiser Frederichs I. / herausgegeben vonb A.Chroust, Berlin 1964?*, S. 48 [Monumenta Germaniae historica. Scriptores rerum Germanicarum, nova series, tomus V]: Խնդրի ավելի մանրամասն քննարկումը տե՛ս Ա. Բոզոյան, Հայ-բյուզանդական եկեղեցական..., էջ 216-221:

⁴⁸ *Nicitaе Choniatae Historia...*, p. 253: Նույն ձևակերպումը հանդիպում է նաև ԺԲ դարի մատենագիր Եվսաթեսո արքեպիսկոպոս Թեսալոնիկցու «Պատմություն գրավմանն Թեսալոնիկեի» երկում (*Eustathii Archiepiscopi de capta Thessalonica Narratio. – in: Leonis Grammatici, Chronographia, ex recognition Immanuelis Bekkeri, accredit Eustathii de capta Thessalonica Liber, Bonnae 1842, p. 253*):

յակոջելով այն հանգամանքը, որ նա հայկական ծագում է ունեցել: Այլ սկզբնաղբյուրներից գիտենք, որ ԺԲ դար վերջում և դրանից հետո էլ Բալկանների և մայրաքաղաքի հայկական ազգաբնակչության նկատմամբ հաճախ բռնի ուժ էր օգտագործվում՝ հարկադրելով նրանց հեռանալ հայկական եկեղեցուց և ընդունել բյուզանդական դավանանք:

1204 թ. լատինների կողմից Կոստանդնուպոլսի գրավումից հետո Նիկեոսա Խոնիատեսը, որոշ ժամանակ ղեգերելով Բյուզանդիայի տարբեր գավառներում, բնակություն է հաստատում (1206/1207 թ.) Բյուզանդական կայսրության նոր մայրաքաղաք Նիկիայում՝ Լասկարիսների արքունիքում, ուր ապրում է մոտավորապես մինչև 1216 թ.: Իր նոր բնակավայրում էլ Նիկեոսա Խոնիատեսն ավարտում է սեփական պատմական երկը: Նիկեոսա Խոնիատեսը իր նամակներից մեկում հազվագյուտ տեղեկություն է հաղորդում Նիկիայի կայսր Թեոդորոս Լասկարիսի և Կիլիկիայի իշխանադուստր Ֆիլիպինեի 1213 թ. տեղի ունեցած ամուսնության մասին, որի ամրագրման պաշտոնական վավերագիրը եկեղեցական ժողովի մասնակիցների ստորագրություններով հասել է մեզ: Այդ իրադարձությունը ամենայն հավանականությամբ քաջաձանոթ է եղել Նիկեոսա Խոնիատեսին, որի գրչի տակից ելած ԺԱ նամակը ուղղված է Վասիլ Կամատերոսին, որին Թեոդոր Ա Լասկարիսը պատգամավորությամբ 1213 թ. հոկտեմբերին ուղարկել էր Սիս՝ իր հարսնացուին Նիկիայի կայսրության տարածք ուղեկցելու համար⁴⁹: Այս տեղեկությունը մենք քաղում ենք հենց Նիկեոսա Խոնիատեսի հիշյալ նամակի վերնագրից:

Նիկեոսա Խոնիատեսը իր «Պատմություն»-ը սկսում է Ալեքս Ա-ի մահով (1118 թ.) և շարադրանքն հասցնում է մինչև 1206 թվականի իրադարձությունները: Ըստ Ֆ. Շալանդոնի՝ Նիկեոսա Խոնիատեսը Հովհաննես Բ և Մանուել Ա Կոմնենոսների կառավարման ժամանակաշրջանի պատմությունը գրել է 1183-1204 թթ. ընթացքում⁵⁰: Բյուզանդագիտության մեջ երկարատև

⁴⁹ St' u Nicetae Choniatae ..., 1972 [CFHB, t. III], p. 216-217.

⁵⁰ F. Chalandon, Les Comnenes, t. II (1), p. XXIV.

վիճաբանություններից հետո հաստատվել է այն կարծիքը, որ Նիկետաս Խոնիատեսը ծանոթ է եղել Հովհաննես Կիննամոսի պատմությանը և ամենայն հավանականությամբ օգտվել է նրանից⁵¹: Ի դեպ, այս տեսակետը լիովին իրավացի է միայն Հովհաննես Բ Կոմնենոսի ժամանակաշրջանի իրադարձությունների շարադրման մասի վերաբերյալ: Պիտի հաշվի առնել, որ Մանուել Ա Կոմնենոսի իշխանության ժամանակաշրջանի իրադարձությունների նկարագրման մասում հիշյալ երկու բյուզանդական պատմիչները հեռանում են միմյանցից և՛ փաստերի ընտրության և՛ շարադրանքի հաջորդականության և՛ մանավանդ իրադարձությունների գնահատման խնդրում⁵²: Նկատելի է նաև, որ Նիկետաս Խոնիատեսը, լինելով 1204 թ. Կոստանդնուպոլսի առման ականատեսը, այդ տեսանկյունից է դիտում Բյուզանդիայի ողջ ԺԲ դարի պատմությունը: 1204 թ.՝ չորրորդ խաչակրաց արշավանքից հետո, Բյուզանդական կայսրության տրոհման արմատները փնտրելով նախորդ մի քանի կայսրերի անհեռատես քաղաքականության մեջ՝ Խոնիատեսը, ի հակադրություն Կիննամոսի, որը հերոսական գծերով է ներկայացնում Մանուել Ա-ի գործունեությունը, երբեմն խայթող հումորով ծաղրում է նրան, երբեմն էլ՝ նվագեցնում քաղաքական գործերում այս կայսեր դերը⁵³: Նիկետաս Խոնիատեսի մատենագրական ժառանգության մեջ կարևոր տեղ ունեն նրա գրչին պատկանող ճառերը, որոնք մի քանի տասնամյակ առաջ հրապարակեց հունդացի բյուզանդագետ Հովհաննես վան Դիտենը: Հրապարակված ԺԸ ճառը, որ գրված է Նիկետասի Փիլիպուպոլսում քաղաքապետ եղած ժամանակ, հետաքրքիր վկայություններ է հաղորդում քաղաքի «հերձվածող» հայ ազգաբնակչության մա-

⁵¹ Grecu V., Niketae Choniatis a-t-il connu l'histoire de Jean Cinnamos ? – REB, t. VII, f. 2, 1950, p. 194-204; Hunger H., Die hochsprachliche..., Bd. 1, S. 410; Каждан А.П., Еще раз о Киннаме и Никите Хониате. – Byzantino-Slavica, XXIV, 1963, p. 4-31.

⁵² Каждан А.П., Еще раз..., с. 30.

⁵³ Sb'u Гроссу Н., Отношения византийских императоров Иоанна II (1118-1143) и Мануила I (1143-1180) Комнинов к вопросу об унии с западом, Труды Киевской духовной Академии (отдельный оттиск), 1912, с. 15.

սին⁵⁴: Նիկետաս Խոնիատեսն իր երկերով միմյանց է կապում Բյուզանդական կայսրության պատմության երկու տարբեր դարաշրջաններ, որոնց միջև ջրբաժան է համարվում Դ խաչակրության կողմից 1204 թ. Կ. Պոլսի գրավումը և Լատինական կայսրության հիմնադրումը: Նիկետաս Խոնիատեսի երկերը Կիլիկիայի հայկական պետության պատմության հետազոտման առումով հետաքրքիր են նաև նրանով, որ այս հեղինակի գործունեության ընթացքում է տեղի ունեցել Կիլիկիայի հայկական պետության պաշտոնական քաղաքական ճանաչումը կայսրության կողմից, որն անուղղակիորեն արձանագրվել է դեսպանագնացությամբ Կիլիկիա ուղարկված Վասիլ Կամատերոսին գրած նրա նամակում⁵⁵:

Լասկարիսների և Պալեոլոգոսների դարաշրջանի պատմագրությունը. Ժամանակագրական առումով հաջորդ հեղինակը, որի մոտ կարելի է տեղեկություններ գտնել Կիլիկիայի հայկական պետության և Բյուզանդական կայսրության քաղաքական փոխհարաբերությունների մասին, Գեորգ Ակրոպոլիտեսն է: Ի լրումն հայկական սկզբնաղբյուրների՝ նրա պատմության մեջ տեղեկություն է պահպանվել 1214 թ. Բյուզանդիայի թագուհի հռչակված, Թեոդորոս Ա Լասկարիսի կին դարձած Ֆիլիպպեի և նրա սերունդի մասին⁵⁶: Նրա պատմությունը հիշյալ իրադարձության վերաբերյալ լրացնում է Կ. Պոլսի պատրիարքական նոտարատնից դուրս եկած, այդ ամուսնության կազմակերպման խնդիրներին վերաբերող վավերագիրը, որի բովանդակությանը կանդորադանանք հետագա շարադրանքում: Հետաքրքիր է, որ, շարունակելով Նիկետաս Խոնիատեսի երկը՝ Գեորգ Ակրոպոլիտեսն իր պատմությունը հասցնում է մինչև 1261 թվականի իրադարձությունները: Այնուամենայնիվ, նա իր պատմության

⁵⁴ Տե՛ս Nicetae Choniatae Orationes ..., 1972 [CFHB, t. III], p. 192-196.

⁵⁵ Տե՛ս Nicetae Choniatae Orationes..., p. 216.

⁵⁶ Տե՛ս Жаворонков П.И., Из истории никейско-киликийских отношений в первой половине XIII в. – Античные древности и средние века [АДСВ], т. 30, Свердловск, 1999, с. 209-215; հմմտ. П. И. Жаворонков, Никейско-латинские и никейско-сельджукские отношения в 1211-1216 гг. – ВВ, т. 37, М. 197., с. 48-61.

մեջ այլևս չի անդրադառնում Կիլիկյան Հայաստանի հետ Բյուզանդական կայսրության փոխհարաբերություններին⁵⁷, առանց որոնց անհնար է հասկանալ Նիկիայի կայսրության փոքրասիական արտաքին քաղաքականությունը: Իհարկե, նրա պատմության մեջ կան առանձին հայկական ծագում ունեցող անհատների՝ հիմնականում բյուզանդական զորահրամանատարներին վերաբերող առանձին տեղեկություններ⁵⁸: Հատկանշական է, որ ոչ Գեորգ Ակրոպոլիտեսի և ոչ էլ ԺԳ դարի որևէ այլ երկում չեն հիշատակվում հայ-բյուզանդական առնչությունների տեսանկյունից կարևոր նշանակություն ունեցած եկեղեցաքաղաքական դիվանագիտական փոխհարաբերությունները, որոնց մասին տեղեկանում ենք միայն Գերմանոս Բ և Մանուել Բ պատրիարքների հունարենով պահպանված նամակներից և հայ մատենագրության մեջ պահպանված եզակի ակնարկներից:

ԺԴ դարի մատենագիր Նիկեփոր Գրեգորասի մոտ ևս ակնարկներ են պահպանվել Միքայել Թ Պալեոլոգոս կայսեր (1295-1320) կին Մարիայի (հայտնի է նաև Ռիթա-Քսենիա անուններով), հայկական ծագման մասին⁵⁹: Այս ամուսնությունն էլ, ինչպես Թեոդորոս Ա Լասկարիսի 1214 թ. ամուսնությունը Ֆիլիպպեի հետ, ամենայն հավանականությամբ վավերացված պետք է լիներ վավերագրերում, որոնք դեռևս հայտնի չեն գիտությանը: Ամենայն հավանականությամբ կայսրուհի Մարիայի կենդանության օրոք է բյուզանդական պատրիարք Եսայասը (1323-1334) վերստին փորձել եկեղեցիների միության բանակցություններ սկսել Կիլիկիայում գտնվող Հայոց կաթողիկոսարանի և Լևոն Դ թագավորի հետ:

Նիկեփոր Գրեգորասը գիտե նաև Մարիայի մոտ ազգական (սխալմամբ անվանվում է հորաքրոջ որդի) Գվիդոն Լուսին-

⁵⁷ Sb'u Жаворонков П.И., Никейская империя и Восток (Взаимоотношения с Иконийским султанатом, татаро-монголами и Киликийской Арменией в 40-50-е годы XIII в.). – ВВ, т. 39, Москва, 1978, с. 93-101.

⁵⁸ Sb'u Жаворонков П.И., Некоторые аспекты мировоззрения Георгия Акрополита. – ВВ, т. 47, с. 130.

⁵⁹ Sb'u Nicephory Gregorae Byzantina Historia / cura Ludovici Schopeni, Bonnae, 1829, p. 283.

յանին (Գիմ հային), որը գրելով 1342 թ. դեպքերի մասին, տեղեկացնում է, որ նա Հայաստանից Կ. Պոլիս է եկել դրանից 24 տարի առաջ: Բյուզանդական կայսրությունում Գվիդոն Լուսինյանի գործունեության մասին տեղեկացնում է նաև նրա քաղաքական հակառակորդը՝ բյուզանդական պատմիչ Հովհաննես 2 Կանտակուզենոսը: Վերջինս Գվիդոն Լուսինյանին անվանում է Սիրգի դե Լեզիանո (Συργῆ ντέ Λεζιάνο) Կիպրացի, տեղեկացնելով, որ Անդրոնիկոս Գ Պալեոլոգոս կայսրը (1328-1341) նրան՝ իր մորաքրոջ որդուն նշանակել էր «Արևմուտքի զորավար» (τῆς ἐσπέρας στρατηγός)⁶⁰: Նիկեփոր Գրեգորասը ճշտում է նաև կայսեր մորեղբորորդի (sic) Գիմ հային բյուզանդական կայսրությունում պատկանող բնակավայրերի աշխարհագրական դիրքը («Սերրե քաղաքի և մինչև Խրիստոպոլիս ընկած ավանների»)⁶¹: 1341 թ. կայսր հռչակված Հովհաննես Կանտակուզենոսի դեմ պայքարին միանում է նաև Գվիդոն Լուսինյանը, որը գլխավորում էր մակեդոնական բանակը⁶²: Որոշ մասնակի հաջողություններից հետո Հովհաննես Կանտակուզենոսի հակառակորդները պարտություն են կրում: Այդ պարտությունից անմիջապես հետո՝ 1342 թ., Գվիդոն Լուսինյանը Կ. Պոլսի վրայով մեկնում է Հայաստան, քանի որ հայերը, ըստ բյուզանդական պատմիչների, նրան հրավիրել էին իրենց երկրում թագավորելու⁶³: Հենվելով Նիկեփոր Գրեգորասի տեղեկության վրա՝ Հր. Բարթիկյանը փորձում է հիմնավորել, որ Գվիդոն Լուսինյանը դավաճանել է Հայոց եկեղեցու դավանանքը և ոչ թե կաթոլիկություն⁶⁴:

⁶⁰ Sb'u Ioannis Cantacuzeni eximperatoris Historiarum libri IV / cura Ludovici Schopeni, vol. I, p. 476.

⁶¹ Nicephori Gregorae Byzantin Historia, vol. I, p.283: Ի տարբերություն Գրեգորասի, Հովհաննես Կանտակուզենոսը խոսելով 1341 թ. տեղի ունեցած իրադարձությունների մասին, Գվիդոն Լուսինյանին համարում է Ֆերրե քաղաքի իշխան: Ըստ Հր. Բարթիկյանի՝ իրավացին Հովհաննես Կանտակուզենոսն է, թեպետ բացատրություններում կարծես թյուրիմացություն կա:

⁶² Ioannis Cantacuzeni Historiarum libri IV, vol. II, p. 283.

⁶³ Sb'u Ioannis Cantacuzeni, vol. II, p. 292: Հմմտ. Հտ. Ա, էջ 288-289:

⁶⁴ Sb'u Բարթիկյան Հր., Գվիդոն Լուսինյանը Բյուզանդիայում և Կիլիկյան Հայաստանում. – «Աշտանակ» տարեգիրք, հտ. Բ, Երևան, 1988, էջ 140-141: Հիշյալ խնդիրը կարծում եմ արժանի է ավելի մասնավոր քննության:

Պատմագեղարվեստական երկեր. Բյուզանդական չափածո և արծակ ստեղծագործություններում՝ ներբողյաններում, ևս իրենց արծագանքն են գտել ԺԲ դարի պատմական իրադարձությունները, Բյուզանդական կայսրերի դեպի հարևան երկրներ ձեռնարկած ռազմարշավները: Այդ ստեղծագործությունների մեջ առանձնանում են ԺԲ դարի առաջին կեսի բյուզանդական հեղինակներ Թեոդորոս Պրոդրոմոսի և Միքայել Իտալիկոսի գեղարվեստական-հրապարակախոսական երկերը, որոնք գրված են բյուզանդական էլիտար հասարակության համար և հավանաբար հրապարակորեն ընթերցվել են արքունական հավաքներում: Ի դեպ, Թեոդորոս Պրոդրոմոսը իր երկերից մեկում հիշատակում է դեպի Դանիշմանյան ամիրության տարածք կատարած 10 ռազմարշավ, որոնց մեջ մի քանի անգամ հիշատակում է նաև Հովհաննես Կոմնենոսի 1136-1138 թթ. դեպի Կիլիկիա կատարած ռազմարշավը⁶⁵: Նմանատիպ երկերի մեջ հայկական Կիլիկիայի պատմության համար անգնահատելի սկզբնաղբյուր է Միքայել Իտալիկոսի «Ներբողյան»-ը, որը Բոլոնիայի համալսարանի ձեռագրական հավաքածոյի թ. 2412 մատյանում հայտնաբերել է Պ. Լամման⁶⁶, իսկ քնագրի հրատարակությունը իրականացրել է Ֆրանկա Ֆուսկոն⁶⁷: Բնագրի «պատմական հետաքրքրություն ներկայացնող» հատվածները 1984 թ. հայերեն է թարգմանել և ուշագրավ հետազոտությամբ հրապարակել է երջանակահիշատակ Հրաչ Բարթիկյանը՝ հայագետ մասնագետների ուշադրությունը հրավիրելով Միքայել Իտալիկոսի «Ներբողյանի» վրա և ցույց տալով նրա նշանակությունը Կիլի-

⁶⁵ Տե՛ս P.G., t. 133, p. 1362-1370, հմմտ. **Բոզոյան Ա.**, Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը և Կիլիկյան Հայաստանը ԺԲ դարի 30-70-ական թվականներին, Երևան, 1988, էջ 70:

⁶⁶ **P. Lamma**, La spedizione di Giovanni Comneno in Cilicia ed in Syria in un Panegirico inedito di Michele Italo. - Mem. Acc. sc. Bologna. Cl. sc. Mor. s. V, vol. IV, 1952, pp. 5-28 = Oriente e Occidente nell' Alto Medioevo. Padova, 1968, p. 339-367.

⁶⁷ **Franca Fusco**, Il Panegirico di Michele Italo per Giovanni Comneno. - *Επετηρίς "Εταιρείας Βυζαντινῶν Σπουδῶν. τομ. ΑΖ. Ἄθῆναι, 1969-1970, σελ. 146-169.

կիայի հայկական պետության պատմության հետազոտման բնագավառում⁶⁸: Միքայել Իտալիկոսը ԺԲ դարի առաջին կեսի նշանավոր բյուզանդացի հոգևորական է, հռետոր և փիլիսոփա, որը խորապես տիրապետում էր նաև անտիկ հունա-լատինական մատենագրությանը և իր երկերում լայնորեն օրինակներ է բերում քրիստոնեական և հեթանոսական սկզբնաղբյուրներից: Հիշյալ մատենագրական երկում փառաբանվում են կայսր Հովհաննես Բ Կոմնենոսի հաղթանակները 1136-1138 թթ.՝ Կիլիկիա և Ասորիք ձեռնարկած ռազմարշավի ընթացքում: Հիշյալ երկում Կիլիկիայի Հայոց պատմության մասնագետին առաջին հերթին հետաքրքրում են բյուզանդական մատենագրի գնահատականները և որակումները, որոնցով բնութագրվում է Լևոն Ա Ռուբինյան իշխանը և նրա ստեղծած պետությունը: Ցավոք, բյուզանդական մատենագրության մեջ Կիլիկյան Հայաստանի մասին ուղղակիորեն պատմող նմանատիպ հուշարձաններ այլևս հայտնի չեն, թեպետ հայերի և նրանց դավանանքի մասին հիշատակումներ պարունակում են ԺԳ-ԺԴ դդ. բյուզանդական բազմաթիվ մատենագիրներ, ինչպիսիք են Նիկողայոս Մեսարիոսը⁶⁹ և ուրիշներ:

Փորձենք հետագա շարադրանքում ամփոփել բյուզանդական մատենագրության հայտնած տեղեկությունները Կիլիկիայի հայկական պետության և նրա հետ անմիջական շփումների մասին:

⁶⁸ Բարթիկյան Հ.Մ., Միքայել Իտալիկոսի «Ներքողանը» և Կիլիկիայի Հայոց առաջին թագավորի խնդիրը. – ՊԲՀ, 1984, № 4, էջ 216-229:

⁶⁹ Nicolaos Mesarites, Description of the Church of the Holy Apostles at Constantinople / ed. and tr. G. Downey. – Transactions of the American Philosophical Society, held at Philadelphia for promoting useful Knowledge, n.s. 47, part 6 (1957), pp. 855-924: Տե՛ս հատկապես էջ 859 և 904: 1198-1203 թթ. միջակայքում գրված այս երկում, որը նկարագրությունն է Կ. Պոլսի Ս. Առաքելոց եկեղեցու, խոսվում է նաև հայոց եկեղեցու առաջյալ Բարթողիմեոսի մասին:

2. ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԲՅՈՒՋԱՆԴԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐՈՒՄ (ԿՈՄՆԵՆՈՍՆԵՐԻ ԴԱՐԱՇՐՋԱՆ)

Ալեքս Ա Կոմնենոսի (1080-1118) իշխանության գալուց հետո Բյուզանդական կայսրությունը հետզհետե վերականգնում էր իր ուժերը: Օգտագործելով խաչակրաց առաջին ռազմարշավի ժամանակների քաղաքական նպաստավոր մթնոլորտը՝ Բյուզանդիան կրկին վերադարձավ տարածաշրջան և դաշնակցելով (ավելի ճիշտ՝ օգտագործելով) Լեոնային Կիլիկիայում հաստատված Ռուբինյան իշխաններին՝ փորձում էր Անտիոքի լատին իշխանությանը դուրս մղել երկրի դաշտային հատվածից: Դեաբոլի հաշտության պայմանագրում (1108 թ.), առաջին անգամ բյուզանդական մատենագրության մեջ և միջազգային վավերագրերում հիշատակվում են Ռուբինյան երկու եղբայրները, որոնք համարվում են Կիլիկիայի տարածաշրջանի բյուզանդական կայսրության ստորականեր: Դեաբոլի պայմանագրում Թորոսն ու Լեոնը համարվում են Բյուզանդական կայսրության, ավելի բառացի՝ կայսերական իշխանության ստորականեր. «γεγονότων ἀνθρώπων τοῦ κράτους ἡμῶν»⁷⁰: Այդ պայմանագիրը կնքված է Բոհեմունդ Անտիոքացու (կամ Տարենտացի) և բյուզանդական կայսր Ալեքս Ա Կոմնենոսի միջև: Միցիլիայի նորման տիրակալը, որը նաև Անտիոքի խաչակրաց իշխանության ղեկավարն էր, իր անունից ստորակայի երդում է տալիս Ալեքս Ա Կոմնենոսին և նրա որդի՝ գահաժառանգ Հովհաննեսին: Այս բացառիկ վավերագրում հակառակ ավատատիրական եվրոպայի «իմ ստորակայի ստորական իմ ստորական չէ» սկզբունքի՝ Բոհեմունդ Անտիոքացու բոլոր ստորականները պետք է ճանաչեին Բյուզանդական կայսրության գերակայությունը և հավատարմության երդում տալին կայսրին ու գահաժառանգին, իսկ նրանք, ովքեր արևելքում էին՝ Անտիոքի լատինական իշխանության տարածքում, երդում պետք է տալին այնտեղ ուղարկված կայսրության

⁷⁰ St' u Patrologia Graeca, t. 131, p. 1016:

պաշտոնյային: Բոհեմունդ Անտիոքացին Բյուզանդական կայսրությանը տված երդումի և հիշյալ պայմանագրի համաձայն պարտավորվում է ճանաչել Թորոս և Լևոն իշխանների Լեոնային Կիլիկիայում գտնվող տարածքների անձեռնմխելիությունը, որոնք ըստ հիշատակված վավերագրի՝ Բյուզանդական կայսրության ստորականներն են: Վավերագրում օգտագործված *ἀνθρώπος* բյուզանդական տերմինը, որը հաճախ հանդես է գալիս ժամանակի բյուզանդական մատենագրության մեջ *λίξιον-lige-ի* լատինական եզրաբառի ուղեկցությամբ, գրականության մեջ (Լայր, Ֆեոլուգա, Դեդեյան) քննարկվել է իր բոլոր հնարավոր հոմանիշներով⁷¹: Այսօրվա բառապաշարով մասնագետներն այն թարգմանում են վասալ-ստորակա իմաստով: Ըստ այդ միջազգային-քաղաքական պայմանագրի՝ Բոհեմունդ Անտիոքացին պարտավորվում էր Բյուզանդական կայսրությանը հանձնել Կիդնոս և Հերմոն (Պիրամիս) գետերի միջև ընկած ողջ Դաշտային Կիլիկիան. «Τό τε θέμα τὸ Ποδανδὸν καὶ Λογγινίας καὶ πρὸς τούτοις τὸ στρατηγάτον τῆς Ταρσοῦ πόλεως καὶ ἡ Ἄδανα πόλις καὶ αἱ τοῦ Μόψουεστίας ἢ Ἀνάβαρζα καὶ συνελόντα φάσαι, ἧ χῶρα πᾶσα τῆς Κιλικίας, ὅσην ὁ Κύδιος καὶ ὁ Ἐρμων περιορίζουσιν» («Պողանդոնի և Լոնգինիասի թեմը, ինչպես նաև Տարսոն, Ադանա քաղաքների ու Մոպսուեստիայի և Անավարզայի ողջ զինվորական մարզը, մի խոսքով՝ ողջ Կիլիկիայի այն մասը, որը գտնվում է Կիդնոսի և Հերմոնի միջև») ⁷²: Նշանակում է՝ Կիլիկիայի դաշտային հիմնական հատվածը՝ Պողանդոն և Լոնգինիա բանակաթեմերը, Տարսոն, Ադանա, Մոպսուեստիա և Անավարզա քաղաքների հետ միասին, 1108 թ. պետք է անցնեին Բյուզանդական կայսրության իշխանության տակ: Ցավոք, այս ժամանակաշրջանի մասին խոսող բյուզանդական սկզբնաղբյուրները կոնկրետ բնակավայրեր չեն հիշատակում իբրև Թորոսի և Լևոնի ավատ, վկայված չեն նրանց

⁷¹ Sb'ú **Dédéyan G.**, *Les Arméniens ...*, Volume 1: *Aux origines de l'État Cilicien: Philarete et les premiers Roubeniens*, Lisbonne, 2003, p. 478-482.

⁷² Sb'ú **Honigmann E.**, *Die Ostgrenze des byzantinischen Reiches von 369 bis 1071*, Bruxelles, 1935, p. 128:

իշխանությունների ավելի հստակ սահմանները: Մնում է միայն ավելի ուշ շրջանի՝ հիմնականում հայկական սկզբնաղբյուրների հաղորդած վկայությունների հիման վրա վերականգնել Ռուբինյանների կազմավորած սկզբնական ավատի աշխարհագրական դիրքը, որը և փորձել են ճշգրտել իրենց աշխատություններում Կիլիկիայի պատմությամբ հետաքրքրվող մասնագետները: Ըստ հայկական, ասորական, արաբական սկզբնաղբյուրների՝ Կիլիկիայի Ռուբինյան հայկական իշխանությունը մինչև ԺԲ դարի 30-ական թվականները տարածվում էր գերազանցապես Տավրոսյան լեռներից գահավիժող Սարոս գետի ջրային ավազանի լեռնային շրջանների վրա:

Ինչ խոսք, Բյուզանդական կայսրությունը այդ տարածքներն էլ համարում էր կայսրություն անքակտելի մասեր, իսկ նրա իշխաններին՝ կայսրության հավատարիմ ծառաներ կամ ստորականներ: Դրա ապացույցներից է Էրմիտաժում պահպանվող մի արճճե բյուզանդական կնիք, որն ըստ Շանդրովսկայայի՝ պատկանել է Թորոս Ա Ռուբինյան իշխանին: Իբրև վերջինիս տիտղոս վկայված է սեբաստոս բյուզանդական պատվանունը⁷³: Այդ տիտղոսը հանդիպում է նաև Թորոս Ա իշխանի թողած Անավարզայի Ս. Ջորավար եկեղեցու հայկական արձանագրության մեջ, որն հրապարակել է Ղևոնդ Ալիշանը⁷⁴: Մեկ դար հետո գրված հայկական սկզբնաղբյուրներից մեկում նույն իշխանին տրվում է նաև պրոտոսեբաստոս պատվանունը⁷⁵, որը կարծում են ավելի ուշ շրջանի բյուզանդական նոմենկլատուրայի վերհուշ է: Կարծում են՝ կոնկրետ այս վկայության հեղինակը Թորոս Բ-ի տիտղոսը վերագրել է նրա հորեղբորը: ԺԲ դարի 70-

⁷³ Տե՛ս Шандровская В.С., К истории армяно-византийских отношений XII в. (по данным сфрагистики), Вестник Общ. наук., 1974, 4, с. 36-40:

⁷⁴ Տե՛ս Ալիշան Ղ., Սիսուան. համագրութիւն հայկական Կիլիկիոյ եւ Լեւոն Մեծագործ, Վենետիկ, 1885, էջ 239:

⁷⁵ Հմմտ. «Համառոտ պատմութիւն Ռուբինեան իշխանաց» քնագրի հետ, տե՛ս Սամուէլ քահանայի Անեցոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիտի ժամանակաց անցելոց, մինչև ի ներկայիս ծայրաքաղ արարեալ / առաջաբանով, հանեմատութեամբ, յաւելումսներով և ծանօթագրութիւններով Ա. Տեր-Միքէլեանի, Վաղարշապատ, 1893, հավելված Դ, էջ 214:

80-ական թթ. բյուզանդացիները նման պատվանուններ շնորհում էին թե՛ Ռուբինյան և թե՛ Հեթումյան իշխանական ընտանիքների պայազատներին: Հետաքրքիր է, որ Աննա Կոմնենեի պատմության մեջ ընդօրինակված Դեաբոլի պայմանագրի արձագանքը պահպանվել է նաև ժամանակակից և ուշ շրջանի հայկական, արաբական և ասորական սկզբնաղբյուրներում՝ «Թորոսի երկիր» կամ «Լևոնի երկիր» արտահայտությունների մեջ (տե՛ս Մատթեոս Ուոհայեցու, Վահրամ Բաբունու, Ուսամա Իբն Մունկիզի, Միքայել Ասորու, Անանուն Եդեսացու և այլոց երկերը)⁷⁶:

ԺԲ դարի ընթացքում հզորացած Կիլիկյան իշխանները պայքար են սկսում տարածաշրջանում անկախ իշխանապետություն ստեղծելու համար և դարավերջին հասնում են հաջողության: Այդ պայքարում Ռուբինյանները բախվում էին Բյուզանդական կայսրության պետական շահերի հետ: Այդ զարգացումների ազդեցության ներքո էլ ձևավորվում է Կիլիկիայի հայկական պետության և նրա ղեկավարների նկատմամբ Բյուզանդական կայսրության պաշտոնական վերաբերմունքը, որն արտացոլված է Կոմնենոսների դարաշրջանի պատմագրության մեջ և մատենագրական երկերում:

Բյուզանդական մատենագրության գովա-փառաբանական ժանրի երկերից է ԺԲ դարի նշանավոր մատենագիր Միքայել Իտալիկոսի «Ներբողյանը»՝ նվիրված բյուզանդական կայսր Հովհաննես Բ Կոմնենոսի 1136-1138 թթ. կիլիկյան ռազմարշավին: «Ներբողյանը»-ն ըստ մասնագետների գրված է ամենայն հավանականությամբ ոչ ավելի ուշ քան 1139 թ. Կոստանդնուպոլսում՝ հիշատակված իրադարձություններից անմիջապես հետո, թեպետ որոշ հատվածներ կարծես թե անմիջական արձագանքն են այդ արշավանքի ժամանակ տեղի ունեցած որոշակի իրադարձությունների: Հիմնվելով այս սկզբնաղբյուրի վրա՝ Հրաչ Բարթիկյանը հայագիտության մեջ առաջին անգամ փորձել է ցույց տալ, որ Լևոն Ա Ռուբինյան իշխանը (1129-1137) «իրեն

⁷⁶ Այս մասին տե՛ս ներկա ժողովածոյում ընդգրկված Վ. Տեր-Ղևոնդյանի հրապարակումը:

հոչակել էր թագավոր Հայոց, իր երկիրը՝ թագավորություն, վերակենդանացած Արշակունյաց թագավորություն, կապել թագ և հագել թագավորական կարմիր կոշիկներ»⁷⁷: Համենայն դեպս հայագետը կարողացել է այդ երկից բերված տեղեկություններով փաստարկել այն դրույթը, որ ԺԲ դարի 30-ական թթ. Կիլիկիայի Լևոն Ա իշխանը փորձել է իրեն Բյուզանդական կայսրությունից անկախ հոչակել, որն էլ պատճառ է հանդիսացել նրա քաղաքական կարիերայի ավարտի: Հովհաննես Կոմնենոսը և իր դարաշրջանի Բյուզանդական կայսրության վերնախավը կարողացան դեռ խանձարուրում ճնշել հայկական ըմբոստության ալիքը և ժամանակավորապես հետաձգել Հայոց պետականության վերականգնումը Կիլիկիայի տարածքների վրա: Մի տարածաշրջանի, որը Կայսրությունն իրենն էր համարում դարեր ի վեր և պաշտոնապես դրանից հրաժարվեց միայն ԺԲ դարի վերջին, երբ ստիպված էր ճանաչել Լևոն Մեծագործի թագավորական իշխանությունը, որը 1198/1199 թ. Հռոմի պապության և Արևմուտահռոմեական (Գերմանական) կայսրության կողմից պաշտոնական ճանաչում ստացավ:

Այս «Ներբողյան»-ն էլ մեր հիշատակած այն երկերից է, որի հիման վրա Բյուզանդական կայսրության էլիտայի մոտ կարծիք էր ձևավորվում Կիլիկիայի հայկական իշխանության նկատմամբ և բյուզանդական պաշտոնական պատմագրության կողմից օգտագործվում էր իբրև սկզբնաղբյուր: Իհարկե, պետք է ընդգծել, որ անտիկ հռետորական արվեստի բոլոր օրենքներով գրված այս երկը առաջին հերթին Հովհաննես Բ Կոմնենոս կայսեր գործունեության, հատկապես նրա վերջին մեծագործության՝ Հյուսիսային Ասորիքում և Կիլիկայում սանձազերծած պատերազմի գովերգությունն է Միքայել Իտալիկոսի կողմից: Բյուզանդական հեղինակը ճարտասանական տարբեր միջոցներով զուգահեռներ է անցկացնում իր հերոսի (Հովհաննես Բ Կոմնենոս) և պատմական գործիչների (Ալեքսանդր Մակեդո-

⁷⁷ Բարթիկյան Հր., Միքայել Իտալիկոսի «Ներբողյանը» և Կիլիկիայի Հայոց առաջին թագավորի խնդիրը, Պատմա-բանասիրական հանդես, 1984, 4, էջ 219-220:

նացի, Պոմպեոս, Լուկուլլոս), անտիկ աստվածությունների (Աթենաս աստվածուհի, Ջևս) և հերոսների (<Երակլես, Աքիլլես, Պերսևս) հետ, ըստ աստվածաշնչյան պատկերացումների՝ Իսրայելի փրկիչ, փարավոնի կործանող և Աստծո հրեշտակ է անվանում նրան: Ըստ Միքայել Իտալիկոսի. «Աստված կարող է երկրաշարժով երկիրը սասանել, իսկ թագավորը հնարքներով է այն տեղաշարժում...»⁷⁸: «Ներբողյան»-ում վարպետորեն իրար են միաձուլված անտիկ դարաշրջանին և Աստվածաշնչին հատուկ դարձվածքներ, ոճեր և հայտնի պատմական գործիչների անուններ:

Ըստ Միքայել Իտալիկոսի՝ Հյուսիսային Ասորիքում և Կիլիկիայում կայսեր քաջագործությունների մասին լուրերը կայսերական նամակների շնորհիվ հասել են մայրաքաղաք Կոստանդնուպոլիս և առիթ են հանդիսացել բազմամարդ հավաքների, ուր պատմվել են այդ քաջագործությունների մասին՝ ոգևորելով հավաքվածներին⁷⁹: Այս տողերը մեզ թույլ են տալիս ենթադրել, որ կայսերական իշխանությունները ժամանակ առ ժամանակ փորձել են ազդել երկրի քաղաքական վերնախավի աշխարհընկալման վրա՝ ճարտասանության միջոցներով միմյանց հակադրելով բյուզանդական արքունիքի տեսանկյունից խրախուսելի բարին ու առաքինին և մերժման արժանի չարն ու անբարոյականը: Ներկա պարագայում, եթե բարին ու անբարոյականը նրա կողմն է՝ հանձին կայսեր, ապա չարն ու անբարոյականը նրա թշնամիներն են, որոնց դեմ «արդարացի» պատերազմ են սանթշնամիներն են, որոնց դեմ «արդարացի» պատերազմ են սանթազերծում բյուզանդական աստվածահաճո թագավորները: Միքայել Իտալիկոսը բառախաղով և քամահրական արտահայտություններով է ներկայացնում Կիլիկիայում ինքնանկախ իշխանություն ստեղծած Լևոն Ա-ին՝ նրան անվանելով «βασιλίσκος», որը հունարենում երկիմաստ է. նշանակում է թե՛ «փոքրիկ (նվաստ) արքա», թե՛ «արքայիկ օձ» (քարթ): Կայսերն համեմատում է երկնքում սավառնող արծվի հետ, որին թշնամի զեռուները (քարթ, առյուծ և վիշապ) տրորվում են նրա ոտքերի տակ:

⁷⁸ Բարթիկյան Հր., Միքայել Իտալիկոսի «Ներբողյանը», էջ 222:

⁷⁹ Բարթիկյան Հր., Միքայել Իտալիկոսի «Ներբողյանը», էջ 221:

Այստեղ արհեստավարժորեն օգտագործվում է 90-րդ սաղմոսի 13-րդ տունը, որում երկիմաստ կերպով կիրառելով λέων-λέοντα (առյուծ) գոյականը՝ ակնարկում է Ռուբինյան իշխանի անունը: Միաժամանակ, բյուզանդական մատենագիրը Կիլիկիայի իշխանության պահապաններին անվանում է «Արշակունիների տոհմ», որը «հզորագույնն է, ամեն մի ցեղից ավելի անհաշտ, նրանց զորքը՝ մարտական, որ բազմիցս ընդդիմակայեց պարսիկներին և հռոմեացիներին, Պոմպեոսին կատարյալ կործանման դուռը հասցրեց»⁸⁰: Բերված հատվածից կարելի է ենթադրել, որ Միքայել Իտալիկոսը Կիլիկիայի պաշտպաններին համարում է Արշակունյաց տոհմի ներկայացուցիչներ, ինչն էլ Բարթիկյանին իրավացիորեն հանգեցրել է այն մտքին, որ Լևոն Ա-ը իրեն Արշակունի է հայտարարել: Այնուամենայնիվ, ավելի հավանական ենք համարում գիտնականի այն պնդումը, որ «Հռետորը (Միքայել Իտալիկոսը-Ա.Բ.) շատ լավ գիտակցում էր, որ Հովհաննես Կոմնենոսի հզորությունն ու «հերոսությունը» ընդգծելու, իր կուռքը վեհացնելու համար պետք է բարձրացնի և նրա հակառակորդին՝ նրա դեմ կայսեր տարած հաղթանակը է՛լ ավելի մեծացնելու, ընդգծելու համար»⁸¹: Այդ իսկ պատճառով Միքայել Իտալիկոսը բերված նախադասությունից անմիջապես հետո հավելում է. «Բայց հակառակ դրան՝ քո նիզակից նրանք խայտառակ պարտություն կրեցին»⁸²: Այդ իսկ պատճառով Արշակունիների հիշատակությունը Միքայել Իտալիկոսի երկում կարելի է համարել բյուզանդական հռետորի գրական հնարանք, որը սերտորեն կապված է Մակեդոնական հարստության դարաշրջանի բյուզանդական մտածողական համակարգի նորմերի վերակենդանացման հետ, որի լավագույն հիմքը, կարծում են, Բարսեղ Ա Մակեդոնացի կայսեր թագադրման հետ կապված բյուզանդական ավանդության վերակենդանացում էր⁸³:

«Ներբողյանի» հաջորդ դրվագից պարզ երևում է, որ Մի-

⁸⁰ Նույն տեղում, էջ 223:

⁸¹ Բարթիկյան Հր., Միքայել Իտալիկոսի «Ներբողյանը», էջ 219:

⁸² Նույն տեղում, էջ 223:

⁸³ St' u Dagron G., Empereur et prêtre. Etudes sur le "césaropapisme" byzantine, Bibliothèque des Histoires, Gallimard, Paris, 1996.

քայել Իտալիկոսը և Հովհաննես Կիննամոս պատմիչն ունեցել են մի ընդհանուր սկզբնաղբյուր, որը մեզ չի հասել: Այդ մասին է վկայում Կիլիկիայի պաշտպանների կողմից բյուզանդական բաբանները կրակի մատնելու և այդ աղետից հնարամտորեն խուսափելու պատմությունը⁸⁴: Թեպետ Միքայելն աղետից խուսափելու հնարանքը վերագրում է կայսերը, սակայն Հովհաննես Կիննամոս պատմիչը բաբանները հում աղյուսով ծածկելու առաջարկի հեղինակ է համարում Հովհաննես Կոմնենոսի որդի Իսահակին՝ նշելով ևս մեկ մանրամասն. դեպքը տեղի է ունեցել Անավարզայի պաշտպանության ժամանակ⁸⁵: Հավանաբար հռետորական շեշտադրումը ավելի ընդգծելու հետևանք է նաև Լևոն Ռուբինյանին ուղղված հետևյալ արտահայտությունը. «Բայց դու թիկունքդ շրջելով ու՛ր ես փախչում, ապստամբ ու բռնակալ, սուտանուն ինքնակալ (*ψευδώνυμε βασιλεύς*)»⁸⁶: Միքայել Իտալիկոսն այստեղ ականա է օգտագործել «բասիլևս» տերմինը, որով բյուզանդական մատենագրության մեջ պատվվում էին միայն Կ. Պոլսի կայսրերը, իսկ մյուս բոլոր արևմտյան տիրակալների և հետագայում էլ՝ Կիլիկիայի հայոց թագավորների համար բյուզանդական մատենագրության մեջ գրեթե առանց բացառության օգտագործվում է թէ՛ք անվանումը, որն արձանագրված է բազմաթիվ սկզբնաղբյուրներում:

Պարզապես բյուզանդական իրավական պրակտիկայում ծանրագույն հանցագործություններից է տիրոջ դեմ ապստամբելը, նրա թշնամիների հետ համագործակցելը, իսկ ըստ Միքայել Իտալիկոսի՝ նման հանցանշաններ կան Լևոն Ռուբինյանի գործունեության մեջ: Հոգևորական Միքայել Իտալիկոսի⁸⁷ և արքունական վերնախավի համար Կիլիկիայի իշխանությանը հպատակ հայերը և Լևոն Ա իշխանը «բարբարոս» են՝ «Դիոսկորոսի հետևորդ և Սևերոսի ուղեկից»⁸⁸: Բանաձև, որն հակակրանք պիտի ծներ ուղղափառ բյուզանդացու պատկերացումներում այդ

⁸⁴ Բարթիկյան Հր., Միքայել Իտալիկոսի «Ներքողյանը», էջ 223-224:

⁸⁵ Ioannis Cinnami, Epitomae rerum..., Bonnae 1836, p. 17.

⁸⁶ Բարթիկյան Հր., Միքայել Իտալիկոսի «Ներքողյանը», էջ 224:

⁸⁷ Նա 1143 թ. ընտրվել է Փիլիպոպոլիս քաղաքի մետրոպոլիտ:

⁸⁸ Նույն տեղում, էջ 221:

«հերձվածին» հետևող քրիստոնյաների նկատմամբ, թեպետ Հայոց եկեղեցին ի սկզբանէ նզովել էր Դիոսկորոսյան հերձվածը: Այս փաստը լուրջան է մատնվում բյուզանդական մատենագիրների կողմից: ԺԱ դարի վերջի և ԺԲ դարի առաջին կեսի մատենագիրներ Եվթիմիոս Զիգաբենոսի⁸⁹ և Աննա Կոմնենեի մեզ հասած երկերում ևս հեղինակները շեշտադրում են Հայոց հերձվածի վտանգավորությունը՝ կապեր տեսնելով անգամ հրեական սովորությունների հետ: Սակայն ժամանակակիցներին և բյուզանդական արքունիքին ավելի մեծ մտահոգություն էր պատճառում այն փաստը, որ Լևոնն իրեն թագավոր էր հռչակել և համապատասխանաբար թագավորական իշխանության նշաններ (դիադեմա, կարմիր կոշիկներ) սեփականել: Այստեղ խոսքն ամենայն հավանականությամբ գնում է Լևոն Ա իշխանի կողմից Բյուզանդական կայսրության նկատմամբ իր ստորակայական պարտավորությունները չկատարելու, կայսրությանը ընդդիմադիր քաղաքական ուժերին սատարելով՝ Դանիշմանյան ամիրությանը և Անտիոքի լատին իշխանապետությանը դաշնակցելու մասին⁹⁰: Թեպետ Կիլիկիան ժամանակ առ ժամանակ դաշնակցում էր Դանիշմանյան ամիրությանը և Անտիոքի լատին իշխանապետությանը, այնուամենայնիվ դժվարանում ենք պատկերացնել 1129-1136 թթ. այնպիսի մի իրավիճակ, որը թույլ տար Ռուբինյան իշխան Լևոնին պաշտոնապես մերժել Բյուզանդական կայսրության գերակայությունը և թագավոր օծվել: Նման կեցվածքը Միքայել Իտալիկոսը բնութագրում է իբրև «ամբարտավանություն» և «լպիրշություն»: Միքայել Իտալիկոսը, սակայն, լուրջան է մատնում նաև այն սկզբունքային

⁸⁹ Վերջերս քանասիրական աշխատություններում նրա անունը սրբագրում են իբրև Զիգադենոս, տե՛ս **Papavasileou Andreas**, *Εὐθὺμιος Ἱωάννης Ζυγαδηνός - Βίο", Ζυγγραφαί, Λευκοσία, 1970, p. 16-21, հմմտ. նաև դասական քանասիրության բնագավառում պաշտպանված հետևյալ դոկտորական առենախոսության մեջ **Miladinova N.**, *Panolplia Dogmatike – a study on the antiheretical anthology of Euthymios Zygadenos in the Post-Byzantine Period*, Leuven, Budapest, 2010, p. VI.*

⁹⁰ Այս մասին տե՛ս **Բոզոյան Ա.**, Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը..., էջ 99-109:

հանգամանքը, որ Հովհաննես Կոմնենոսի եղբայր Իսահակը ևս մասնակցել է Իկոնիայի սուլթանության, Դանիշմանյան ամիրության և Կիլիկիայի իշխանապետության ստեղծած հակաբյուզանդական դաշինքին⁹¹:

Մեր խորին համոզմամբ, Ռուբինյան իշխանությունն առանց հզոր արտաքին հովանավորության, չէր կարող միայնակ նման որոշում կայացնել: Մնում է ենթադրել, որ Դանիշմանյանների և Անտիոքի իշխանապետության հետ դաշնակցելու փորձերը, որոնք կատարվում էին ի հեճուկս Բյուզանդական կայսրության, վերջինիս այնքան էին մտահոգել, որ նա ամեն գնով փորձում էր վերացնել, տարածաշրջանի քաղաքական քարտեզից ջնջել Կիլիկիայի հայկական իշխանությունը, որն ըստ Բյուզանդական կայսրության քաղաքագետների՝ հիմնական խոչընդոտն էր դարձել Դեաբոլյան խաղաղության պայմանագրի (կամ բյուզանդական արտաքին քաղաքականության) հիմնական դրույթները գործադրության մեջ դնելու համար: Բյուզանդական կայսրությունը պահանջում էր Կիլիկիայի հայկական իշխանապետությունից անվերապահորեն ենթարկվել իրեն: Կայսրությունը հաշվի չէր առնում այն հանգամանքը, որ իր ուժերն անբավարար էին պաշտպանելու համար Կիլիկիայի տարածքը, որին հասնելու համար հարկավոր էր շրջանցել Դանիշմանյան ամիրության և Իկոնիայի սուլթանության հողերը: Բյուզանդական կայսրության թուլությունն ակնհայտ դարձավ Կիլիկիայի տարածքից 1138 թ. բյուզանդական զորքերի հեռանալուց անմիջապես հետո, երբ Իկոնիայի սուլթանությունն ու Դանիշմանյան ամիրությունը ներխուժեցին Կիլիկիայի հայկական իշխանության տարածք: Հովհաննես Կոմնենոսը ստիպված էր 1143 թ. կրկին ռազմարշավ կազմակերպել դեպի Կիլիկիա՝ փրկելու համար Բյուզանդիայի քաղաքական հեղինակությունը տարածաշրջանում: Քիչ անց՝ 1158 թ., նրա որդի Մանուել Ա-ը ստիպված էր վերստին պաշտոնապես ճանաչել Ռուբինյան իշխանապետության վերականգնումը Թորոս Բ-ի գլխավորու-

⁹¹ Michel le Syrien, t. III, p. 230-231: Այդ դաշինքի մասին ավելի մանրամասն տե՛ս Բոզոյան Ա., Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը..., էջ 85-88:

թյամբ: Այս իրադարձությունների մասին պատմողն արդեն բյուզանդական հաջորդ մատենագիր Նիկետաս Խոնիատեսն է:

Հիշյալ իրադարձություններին անդրադառնալուց հետո բյուզանդական պաշտոնական պատմագրությունը կարծես հետզհետե մոռանում է Կիլիկիա երկրամասի գոյության մասին: Բյուզանդական պատմագրության մեջ որևէ ակնարկ չի պահպանվել ԺԲ դարի 60-70-ական թվականների հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների մասին, որոնց հետապնդած նպատակներին բյուզանդական մատենագրության մեջ անդրադառնում է միայն Մանուել Ա Կոմնենոսի կողմից տարածաշրջան առաքված դեսպանագնաց Թեոդիանոս փիլիսոփան⁹²: Հավանաբար Միրիոկեֆալոնի ճակատամարտում պարտությունից հետո, երբ կայսրությունը հասկացավ, որ այլևս անզոր է միջամտել Հյուսիսային Ասորիքի գործերին, հետզհետե մոռացության մատնեց Կիլիկիայի նկատմամբ իր հավակնությունները: Հատկանշական է այն փաստը, որ 1196 թ. Ներսես Լամբրոնացու գլխավորությամբ Կոստանդնուպոլիս ուղարկված դեսպանագնացության մասին պատմում են միայն հայկական սկզբնաղբյուրները⁹³:

Կիլիկիայի ճակատագրի նկատմամբ այս լռությունը ուղեկցում է հետագա շրջանի ողջ բյուզանդական պաշտոնական պատմագրությանը: Այդ լռությունը ժամանակ առ ժամանակ խախտում են միայն կայսերական և պատրիարքական նոտարատներից դուրս եկած մի խումբ վավերագրեր, որոնք ներկայացնում ենք հետագա շարադրանքում:

⁹² Այս երկի մասին տե՛ս **Բոզոյան Ա. Ա.**, Հայ-բյուզանդական եկեղեցական..., էջ 142-161:

⁹³ **Augé Isabel**, Eglise en dialogue: Arméniens et byzantins dans la seconde moitié du XII siècle, Lovanii, 2011, p. 257-267:

3. ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԲՅՈՒՉԱՆԴԻԱՅԻ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԵՎ ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՎԱՎԵՐԱԳՐԵՐՈՒՄ (ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ)

Բյուզանդական կայսերական նոտարատնից դուրս եկած առաջին վավերագիրը, ուր հիշատակվում է Կիլիկիայի հայկական իշխանությունը, 1107 թ. Բյուզանդիայի կայսր Ալեքս Ա-ի (1080-1118) և Բոհեմունդ Անտիոքացու միջև կնքված հաշտության պայմանագիրն է: Պայմանագրի ընդօրինակությունը պահպանվել է Աննա Կոմնենեի «Ալեքսիադա»-ում: Այս վավերագրում կայսրությունն իր ստորականներն է համարում Կիլիկիայի Ռուբինյան իշխաններ Լևոնին և Թեոդորոսին՝ այդ տարածքը վերցնելով իր հովանավորության ներքո⁹⁴: Վավերագրում մեկ առ մեկ թվարկվում են Կայսրության հպատակության տակ անցնող կիլիկյան քաղաքներ Տարսոնը, Ադանան, Մոպսուեստիան և Անավարզան, որոնք գտնվում են Կիդնոս և Հերմոն գետերի ավազանում⁹⁵: Այս պայմանագիրը երկար ժամանակ՝ կարելի է ասել մինչև Միրիոկեֆալոնի ճակատամարտը (1176 թ.), Կիլիկիայի իշխանապետության նկատմամբ բյուզանդական պատկերացումների հիմքում է եղել, թեպետ այդ երկրամասի նկատմամբ ժամանակ առ ժամանակ իրենց հավակնություններն էին ազդարարում թե՛ Կիլիկիայի Ռուբինյան իշխանները և թե՛ Անտիոքի լատին տիրակալները⁹⁶, երբեմն էլ Իկոնիայի սուլթաններն ու Դանիշմանյան ամիրները:

Անցյալ դարի 70-ական թթ. ֆրանսիացի բյուզանդագետ Ժան Դարուցեզը հայտնաբերեց մի վավերագիր, որը վերաբերում էր հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների

⁹⁴ Վավերագիրն, ինչպես ասացինք, պահպանվել է Աննա Կոմնենեի «Ալեքսիադա»-ում, տե՛ս հաջորդ ծանոթագրությունը:

⁹⁵ Հմմտ. *Anna Comnène, Alexiade*, t. III, p. 128, 130, ուսերեն թարգմանությունը տե՛ս *Любарский Я.Н., Фрейденберг М. М., Девольский договор 1108 г. между Алексеем Комнином и Бозмундом*. - ВВ, т. XXI, с. 269: Այս մասին տե՛ս նաև վերևում:

⁹⁶ *Sb'u Mutafian Cl., L'Arménie du Levant (XI^e-XIV^e)*, Paris, 2012, p. 64-90.

հայագիտությանն անհայտ մի շրջանի: Պարզվում է, որ Հովհաննես Կոմնենոսի (1118-1143) իշխանության դարաշրջանում կայսրը նամակագրություն է ունեցել Հայոց կաթողիկոս Գրիգոր Գ Պահլավունու հետ: Բյուզանդագետ Ժան Դարուցեզը հրապարակել է հունարեն թարգմանությամբ պահպանված Հայոց կաթողիկոսի թուղթը, որի թվագրումը դեռևս մասնագետների համար հստակ չէ⁹⁷: Ենթադրելի է, որ այն կարող է Հովհաննես Բ Կոմնենոսին ուղարկված լինել Լևոն Ա Ռուբինյան իշխանի գերեվարումից հետո՝ ամենայն հավանականությամբ լատին եկեղեցու հետ 1141 թ. սկսված եկեղեցական բանակցությունների շրջանում: Գրիգոր Գ Պահլավունու հունարենով պահպանված այս նամակում քննարկվում են միայն դավանաբանական հարցեր: Նկատված է, որ ֆիլիոքվեի (Երրորդության մեջ Ս. Հոգու տեղի որոշումը) աստվածաբանական խնդրում հայոց դավանանքն այս վավերագրում հնարավորինս մոտեցված է բյուզանդական աստվածաբանական պատկերացումներին⁹⁸: Պիտի ընդգծել, որ դեռևս չեն հայտնաբերվել այդ դարաշրջանի բյուզանդական նոտարատներից դուրս եկած վավերագրեր, որոնք կպատմեին ԺԲ դարի 40-ական թվականների հայ-բյուզանդական փոխհարաբերությունների ընթացքի մասին:

Բյուզանդիայի կայսերական և պատրիարքական վավերագրերում արդեն ԺԲ դարի սկզբից հիշատակվում է Կիլիկյան Հայաստանը, իսկ արդեն նույն դարի կեսերից այդ երկրի հոգևոր և աշխարհիկ իշխանություններին են ուղարկվում տարաբնույթ վավերագրեր, որոնց մի մասը հրապարակի վրա են հայերեն և հունարեն լեզուներով պահպանված ընթրօրինակություններով: Այդ փաստաթղթերի վավերագիտական քննությունը

⁹⁷ St'ou Darrouzès J., Trois documents de la controverse Gréco-Arménienne. – Revue des Études byzantines, 48 (1990), p. 89-103, հմմտ. Églises en Dialogue: Arméniens et Byzantins dans la seconde moitié du XIIe siècle / par Isabelle Augé, Lovanii, 2011, p. 10 [CSCO, vol. 633, Subsidia, t. 124].

⁹⁸ St'ou Darrouzès J., Trois documents..., p. 144, հմմտ. նաև Augé I., Byzantins, Arméniens & Francs au temps de la Croisade, Geuthner, Paris, 2007, p. 165: Հնարավոր է, որ նման մոտեցումը թղթի հունարեն թարգմանչի միջամտության արդյունք է:

մնում է բյուզանդական և հայագիտական հետազոտությունների կենտրոնում: Դրանք կողմնորոշում են հաճախ նաև Կիլիկիայի հայոց պետականության և եկեղեցու հետազոտման կարևորագույն խնդիրների ընտրությունը: ԺԲ դարի 60-70-ական թվականներից պահպանվել են վավերագրեր՝ գրված բյուզանդական կայսրերի (Մանուել Ա Կոմնենոս և Ալեքս Բ-ի) և Կ. Պոլսի պատրիարքներից մեկի (Միքայել Գ Անքիալոս) անունից, որոնք վերաբերում են հայ-բյուզանդական եկեղեցական բանակցություններին⁹⁹: Դրանք ուղղված են Հայոց եկեղեցու առաջնորդներ Ներսես Դ և Գրիգոր Դ Տղա կաթողիկոսներին, իսկ Կիլիկիայի հայ իշխանները չեն հիշատակվում այդ վավերագրերում: Դրանք բյուզանդական կայսերական և պատրիարքական իշխանությունների առաջին դրսևորումներն են Կիլիկիայում Հայոց կաթողիկոսների գործունեության վերաբերմամբ:

ԺԲ դարի 60-70-ական թվականներին հայ-բյուզանդական բանակցությունների վավերագրերը նոր ելևէջեր են մատնանշում հայ-բյուզանդական եկեղեցաքաղաքական հետազոտությունների բնագավառում: Հայոց կաթողիկոսարանը Բյուզանդական իշխանությունների կողմից դիտվում է իբրև հայկական քաղաքական որևէ ուժից անկախ հաստատություն: Հռոմկլա ուղարկված փաստաթղթերի բանաձևերում Կոմնենոս կայսրերը և պատրիարքները Հայոց կաթողիկոսներին մեծարում են *τιμιωτάτος* (պատվական), *ἀγαπετέ* (սիրեցեալ), *εὐλαβεστάτος* (իմաստուն) , *ἀνερ ὀσιώτατε* (այր սրբանեալ) տիտղոսներով¹⁰⁰: Այս և հետագա շրջանի բյուզանդական մատենագրության մեջ նկատելի է երկակի վերաբերմունք Հայոց եկեղեցու նվիրապետական աթոռների, դավանաբանության և ծեսերի նկատմամբ: Եթե խոսքը վերաբերում է Բյուզանդական կայսրության տարածքներում բնակվող, Հայոց կաթողիկոսների իշխանությունը ճանաչող հայկական ազգաբնակչությանը, ապա դրանք իբրև

⁹⁹ Տե՛ս հատկապես **Բոզոյան Ա.**, Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների վավերագրերը (1165-1178 թթ.), Երևան, 1995, էջ 106-116, 121-126, **Augé I.**, *Eglises en Dialogue...*, Lovanni, 2011.

¹⁰⁰ **Բոզոյան Ա.**, Հայ-բյուզանդական եկեղեցական..., էջ 111, 124-125:

կանոն բյուզանդական մատենագիրների համար հերձվածողներ են: Այդ մոտեցումն արձանագրված է այնպիսի պաշտոնական մատենագրական երկերում, ինչպիսին ժԱ դ. գրված Եվթիմիոս Ջիզաբենոսի կամ Նիկետաս Խոնիատեսի «Πανοπλία δογματικῆ»-ներն են: Այդ մոտեցումն իրենց աշխատություններում սեփականել են Միքայել Իտալիկոսը, Աննա Կոմնենեն, այն առկա է նաև բյուզանդական մատենագրության այլևայլ երկերում: Ի տարբերություն դրանց՝ բավական հանդուրժողական տոնով են գրված կայսերական և պատրիարքական նամակները, որոնց մեջ շոշափվում է հիմնականում երկու եկեղեցիների միության խնդիրը: Թեպետ այստեղ էլ հաճախ բյուզանդական կողմը պարտադրում է բյուզանդական դավանանքի և ծիսակատարությունների անվերապահ ընդունում: Ի տարբերություն այս պահանջի՝ Հայոց կաթողիկոսարանն առաջարկում էր գնալ հանդիպակած փոխզիջումների ճանապարհով¹⁰¹:

Մանուել Ա Կոմնենոսի մահից հետո (1180 թ.) Բյուզանդական կայսրությունը թևակոխեց նոր ցնցումների մի երկարատև ժամանակաշրջան, դադարեցին հայ-բյուզանդական 15 տարի անընդհատ շարունակված եկեղեցական բանակցությունները: Մանուել Ա-ի մանկահասակ որդին՝ Ալեքս Բ Կոմնենոսը (1180-1183), և նրա խնամակալները, որոնք զբաղված էին իրենց իշխանությունը պահպանելու խնդրով, ժամանակ չունեցան շարունակելու հայ-բյուզանդական եկեղեցական երկխոսությունը: Գահին տիրած Անդրոնիկոս Ա Կոմնենոս կայսրը (1183-1185) չէր թաքցնում իր վերաբերմունքը թե՛ Կիլիկիայի հայկական իշխանապետության և թե՛ բյուզանդիայի հայազգի բնակչության վերաբերմամբ, որտեղ նա ժԲ դարի 60-ական թվականներին Մանուել Կոմնենոս կայսեր կողմից նշանակվել էր Կիլիկիայում տեղակայված բյուզանդական բանակի զորահրամանատար և տարածաշրջանի կառավարիչ¹⁰²: Անդրոնիկոս Ա Կոմնենոսը վերապահ վերաբերմունք ուներ հայերի նկատմամբ: Այդ մասին հա-

¹⁰¹ Բոզոյան Ա., Հայ-բյուզանդական եկեղեցական..., էջ 166:

¹⁰² Բոզոյան Ա., Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը..., էջ 190-200, 210-211:

դորդում է Նիկետաս Խոնիատես պատմիչը՝ կայսեր և Թեոդոսիոս Բորադիոտես պատրիարքի (1179-1183) բախմանն անդրադառնալիս¹⁰³: Այնուամենայնիվ, կարծում եմ՝ այդ բախումը պայմանավորված էր Անդրոնիկոս Ա Կոմնենոսի նախասիրություններով և իր մարդուն պատրիարքական գահին տեսնելու մտահոգությամբ, քան թե Թեոդոսիոս Բորադիոտես պատրիարքի հայկական ծագմամբ: Նիկետասի պատմության շարադրանքից էլ հայտնի է Թեոդոսիոս Բորադիոտես պատրիարքի նվիրվածությունը Մանուել Ա Կոմնենոսի որդի Ալեքսին և հակադրությունը Անդրոնիկոս Ա-ի ձեռնարկներին¹⁰⁴:

Մանուել Ա կայսեր մահից հետո Կիլիկիա առաքված մեզ հայտնի քյուզանդական առաջին վավերագիրը Իսահակ Անգելոսի նամակն է¹⁰⁵: Իսահակ Անգելոսի (1185-1195) իշխանության տարիներին՝ մեր կարծիքով ամենաուշը 1186 թ. գրված այս նամակում¹⁰⁶, որն ուղղված է Հայոց կաթողիկոս Գրիգոր Դ Տղային (1173-1193), խոսվում է կաթողիկոսի գրած և Կ. Պոլիս ուղարկած երկլեզու (հայերեն և արաբերեն)¹⁰⁷ նամակների մասին, ուր կաթողիկոսը հույս է հայտնել, թե կկարողանա դավանական միություն կնքելու համար այցելել կայսրության մայրաքաղաք: Բյուզանդական կողմը, ըստ կայսեր նամակի, ողջունում է կաթո-

¹⁰³ Nicetae Choniatae Historieae, p. 253, տե՛ս նաև վերևում:

¹⁰⁴ Տե՛ս The Oxford Dictionary of Byzantium, p. 2052.

¹⁰⁵ **Բարթիկյան Հ.**, Նոր Նյութեր Կիլիկիայի հայկական պետության և Բյուզանդիայի փոխհարաբերությունների մասին. – Բանբեր Մատենադարանի, 4, Երևան, 1958, էջ 285-290: Այս նամակի նկարագրությունը տե՛ս Regesten der Kaiserurkunden des Oströmischen Reiches / bearbeiten von Franz Dölger, 2. Teil: Regesten von 1025-1204 / zweite, erweiterte und verbesserte Auflage bearbeiten von Peter Wierth, München, 1995, S. 288, № 1567g [1621].

¹⁰⁶ Նամակն ամենայն հավանականությամբ գրված է խաչակրաց Գ ռազմարշավի նախօրյակին:

¹⁰⁷ Այս հանգամանքը կարող է խոսել Հայոց կաթողիկոսական նոտարատան աշխատանքային ձեռագրի մասին, թեպետ տեղեկությունը եզակի է և չի հաստատվում այլ սկզբնաղբյուրներով: Այդ տեղեկությունը կարող է նաև հավաստել այն մասին, որ Հռոմկլայում նստող Հայոց կաթողիկոսը դիտվում էր իբրև Այյուբյան սուլթանության ստորակա: Այդ մասին տե՛ս նաև Բոզոյան Ա., Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը... էջ 219, ծնագր. 3:

դիկոսի նախաձեռնությունը, որով մաղթում է, որ վերանա երկու ժողովուրդների միջև գոյացած վիհը: Նույնիսկ գիտակցում է, որ գործն առաջ չի գնա առանց երկուստեք զիջումների: Թղթում կայսրը հավաստում է. «Ինչքան սովորություններ, որ կան մեզ մոտ և որոնք հայրերի սուրբ ժողովներին կամ սուրբ կանոններին ակնհայտ հակասում են, տեղի ենք տալու, և հնարավոր է, որ նրանք ուղղվեն»¹⁰⁸: Կայսրը փորձում է համոզել, որ Փիլիպուպոլսի շրջանում կայսեր և տեղի եպիսկոպոսի հրամանով հայերին բռնի դավանափոխ անելու մասին կաթողիկոսին հասած տեղեկությունը ճիշտ չէ¹⁰⁹: Իսահակ Կոմնենոսը փորձում է

¹⁰⁸ Տե՛ս **Քարթիկյան Հ.**, Նոր Նյութեր, էջ 289: Նման մոտեցում առկա էր նաև հայ-բյուզանդական 1165-1178 թթ. բանակցությունների ընթացքում: Այն արձանագրված է Մանուել Ա-ի Գրիգոր Դ Տղային ուղղված առաջին նամակում, որի հունարեն բնագիրը, ցավոք, մեզ չի հասել. «Եւ յետ քննութեանն և արդարապէս դատողութեան՝ տեսանելոյ զմիմեանց ուղղութիւն ի բաց բառբարոյ (sic) զգայթակղութիւն ի մտաց մերոց զմիջնորմն ցանկոյն քակել և զքար գլորմանն և գայթակղութեան ի բաց ընկենուլ, և զի վերուստ փորանկեալ պատմութեանն Քրիստոսի, այսինքն՝ զառ նա ուղղափառութեանն խոստովանութիւն՝ ոչ այլ տեսանել պատահեալ, այլ մի հաւատոյ երկոցունցս կողմանց այնուիետև մի լինել կաթողիկէ և առաքելական եկեղեցի առանց ամօթոյ խոստովանութեամբս» (տե՛ս Ընդհանրական թուղթը Արքայն Ներսիսի Շնորհալոյ, Երուսաղէմ, 1871, էջ 173-174):

¹⁰⁹ Նամակում կայսրը փորձում է ժխտել Հռոմկլա հասած այն տեղեկությունը, թե Փիլիպուպոլսի շրջանում «ապրող հայերին իրենց կամքին հակառակ այնտեղի եպիսկոպոսը թագավորությանս հրամանին համաձայն հավատափոխ է անում» (**Քարթիկյան Հ.**, Նոր Նյութեր, էջ 289): Նա փորձում է համոզել Գրիգոր Դ Տղա կաթողիկոսին, որ Փիլիպուպոլսի շրջանում հայերը առանց բռնադատության, իրենց կամքի համաձայն են դավանափոխ լինում: Վարդան Արևելցի պատմագիրը տեղյակ է այս իրադարձություններին և պնդում է, որ հույները բռնի դավանափոխության են ենթարկել երեք եպիսկոպոս և 1600 քահանա ունեցող մի համայնքի, որոնցից քչերն են կարողացել պահպանել իրենց դավանությունը (տե՛ս Հաաքումն Պատմութեան Վարդանայ վարդապետի, Վենետիկ, 1862, էջ 133-134): Այս իրադարձությունների մասին, ըստ Վարդանի, արևելքում գտնվող Հռոմկլայի կաթողիկոսարանին տեղեկացրել էր «տէր Գրիգորը»: Արդյոք հենց նրան չէ, որ Գրիգոր Դ Տղա կաթողիկոսը, ըստ նույն Վարդանի տեղեկության, վտանգին դիմակայելու հույսով ուղարկում է Հռոմի պապի մոտ: Հիշատակված Գրիգորի Փիլիպուպոլսի արքեպիսկոպոս

ամեն դյուրություն ստեղծել կաթողիկոսի՝ կայսրության մայրաքաղաք գալստյան համար: Հայտնում է, որ հոգացել է պամանավորվել Իկոնիայի և Եգիպտոսի հետ, որպեսզի կաթողիկոսի բացակայության ժամանակ նրա երկիրն անվնաս պահպանվի: Կաթողիկոսին Կ. Պոլիս ուղեկցելու համար կայսրը Հռոմկա է ուղարկում վեստարիտես Կոստանդին Ամասիացուն: Նամակի վերնագրում ասվում է, որ վավերագիրը շարադրվել է պրոտոսեկրետ տեր Նիկետաս Վալանիտեսի կողմից Իսահակ Անգելոսի անունից¹⁰: Իսահակ Բ Անգելոսի (1185-1195) թղթում Հայոց կաթողիկոսին է շռայլված միայն *τιμωτάτος* պատվանունը, որը հանդիպում է նաև ավելի վաղ շրջանի վավերագրերում: Իսահակ Անգելոսի նամակից երևում է, որ Կայսրությունը մի կողմից փորձում էր բարիդրացիական փոխհարաբերություններ պահպանել Հայոց եկեղեցու հետ, մյուս կողմից՝ Քաղկեդոնի ժողովի որոշումներն էր պարտադրում Բյուզանդիայի տարածքում բնակվող հակաքաղկեդոնական բնակչությանը: Բյուզանդական քաղաքականության այս երկակիությունը պահպանվում է Կիլիկիայի հայկական թագավորության գոյության ողջ ընթացքում:

Այստեղ կարելի է կարևորել նաև ժամանակի նշանավոր մատենագիր Նիկետաս Խոնիատեսի վերաբերմունքը, որը 1189 թ. լինելով Փիլիպուպոլի քաղաքապետը, ավելի մոտից էր շփվել տեղի հայկական գաղութի հետ: Պատմաբանի համար չափազանց հետաքրքիր է Նիկետաս Խոնիատեսի այն մոտեցումը, որ հայոց դավանանքը նույնանում է լատին խաչակիրների դավանանքի հետ¹¹: Նիկետաս Խոնիատեսի կողմից գրված դավանա-

լինելու փաստն արձանագրված է միայն Լուսիոս Գ-ի հայերեն լեզվով պահպանված թղթում (տե՛ս ՄՄ-1026, թղ. 175թ):

¹⁰ Այս նամակի ամբողջական բնագրի հայերեն թարգմանությունը տե՛ս **Քաթողիկյան Հ.Մ.**, Իսահակ Անգելոս կայսեր պատասխան նամակը Հայոց կաթողիկոս Գրիգոր Տղային. – Էջմիածին, 1967, Դ, էջ 50-55: Վավերագրի հատվածական ողուերեն թարգմանությունը տե՛ս **Бартикан Р.М.**, К истории взаимоотношений между Византией и Киликийским армянским государством в конце XII в. – ВВ, том XVII, 1960, стр. 52-25.

¹¹ Ավելի մանրամասն տե՛ս վերևում:

բանական երկերի մեջ առանձնանում է նրա «Πανοπλία δογματική» աշխատությունը, որի գլուխներից մի քանիսը նվիրված են «հայկական հերձվածի» դավանաբանական և ծիսական մի շարք խնդիրների քննադատությանը¹²: Նիկետաս Խոնիատեսն իր բացահայտ հակակրանքը «հայկական հերձվածի» մասին արտահայտում է իր պատմության մեջ: Նա Ֆրիդրիխ Բարբարոսայի հրամանատարությամբ Փիլիպուպոլիսը գրաված Գխաչակրության դրոշակակիրներին և հայերին համարում է նույն դավանանքի հետևորդներ¹³: Փիլիպուպոլիսում «հայկական հերձվածի» թեմատիկային անդրադարձ կա նաև Նիկետաս Խոնիատես մատենագրի ԺԸ ճառում, որի վերնագիրն ու սկզբնական հատվածը ցավոք չի պահպանվել¹⁴:

Սկզբնաղբյուրների հետազոտությունից պարզ երևում է, որ մինչև ԺԲ դարի վերջը Բյուզանդական պետությունը պաշտոնապես չի ճանաչել Ռուբինյան իշխանության ինքնավարությունը: Համենայն դեպս, մինչև 1213 թ. Կիլիկյան Հայաստանի իշխողներին ուղղված որևէ վավերագիր չի պահպանվել, թեպետ հայբյուզանդական քաղաքական փոխհարաբերությունների մեջ մի նոր էտապ է սկսվում 1198 թ. հետո, երբ Բյուզանդական կայսրությունը ճանաչեց Լևոն Ռուբինյանին իբրև Հայոց թագավոր: Պատմաբանի համար հետաքրքիր է, թե այդ ճանաչումն ունեցել է արդյոք փաստաթղթային հավաստում: Այս թվականից հետո, ամենայն հավանականությամբ, պետք է փոփոխության ենթարկվեին կամ նորովի ստեղծվեին Կիլիկիայի հայկական պետության հետ փոխհարաբերություններում բյուզանդական կայսերական և պատրիարքական նոտարատներում օգտագործվող, նրանց ուղղված վավերագրերի բանաձևային համակարգերը:

ԺԳ դարում ձևավորվում է մի նոր իրավիճակ. հատուկենտ վավերագրերը վկայում են կայսրության արքունական և պատրիարքական նոտարատներում Կիլիկիայի հոգևոր և աշխարհիկ

¹² St' u van Dieten J. L., Zur Überlieferung und Veröffentlichung der Panoplia dogmatike des Niketas Choniates, Amsterdam, 1970:

¹³ Niketae Choniatae Historia..., 1975, p. 218-219:

¹⁴ Nicetae Choniatae orations et epistulae..., 1972, p. 196.1 - 6.

իշխանություններին դիմելու նոր, միասնականացված բանա-
 ձևային համակարգերի մշակման մասին, քանի որ դրանցով
 պետք է արտահայտվեր Բյուզանդիայի պաշտոնական վերա-
 բերմունքը և իր կողմից Կիլիկիայի Հայոց պետության ճանաչ-
 ման փաստը: Պահպանվել է 1213/4 թ. Կ. Պոլսի սինոդի ան-
 դամների և պատրիարք Միքայել Դ Ավտորեանոսի (1208-1214)
 կողմից ստորագրված վավերագիրը (συνοδικὸν γράμμα = ժողո-
 վական թուղթ), որը հասցեագրված է Հայաստանի, Կիլիկիայի և
 Իսավրիայի թագավոր (ῥήξ Ἀρμενίας, Κιλικίας καὶ Ἰσαυρίας)
 Լևոն Ա-ին, որը **թղթառաջքում** մեծարված է ամենագնիվ
 (πανευγενέστατε) գերադրական ածականով¹⁵: Թղթառաջքում
 բացակայում է նամակագրի և հասցեատիրոջ անվանումն՝
 դրանց բնորոշ տիտղոսներով: Հիշատակված ածականի և բյու-
 զանդական ընկալմամբ ῥήξ (թագավոր) տերմինի օգտագոր-
 ծումը Հայոց թագավորի համար նորություն է բյուզանդական
 նոտարատների համար, քանի որ այն շեշտում էր «Հայաստան,
 Կիլիկիա և Իսավրիա» երկրների վրա Լևոն Ա-ի իշխանության
 անկախ կարգավիճակ ունենալու փաստը, որը ճանաչվում էր
 Բյուզանդական կայսրության կողմից: Փաստաթուղթը վկայում
 է, որ Բյուզանդական կայսրության կողմից Լևոն Ա-ը ընդգրկված
 էր աշխարհի տարբեր գավառներում իշխող տիրակալների ըն-
 տանիքում, որը գլխավորում էր Բյուզանդիայի կայսրը (ὁ
 βασιλεύς)¹⁶ բոլոր իշխողների հայրը: Սկսած Թ դարից ῥήξ տեր-
 մինով էին բյուզանդացիները պաշտոնական վավերագրերում
 դիմում այն քրիստոնյա երկրների տիրակալներին, որոնց իշխա-
 նությունը պաշտոնապես ճանաչում էին՝ առանձնացնելով իրենց
 կայսրին մյուս ինքնիշխան միապետներից: Ինչպես երևում է հե-

¹⁵ Պահպանված վավերագրում չի հիշատակված Կիլիկիայի թագավորի անու-
 նը, սակայն բնագրի հրատարակիչ Պավլովի պատմաբանասիրական հետզո-
 տությամբ վերջնականապես պարզված է, որ վավերագրի հասցեատեր կարող
 էր լինել միայն Կիլիկայում Հայոց արքա հռչակված Լևոն Ա-ը (տե՛ս Павлов А.,
 Синадальная грамота 1213 года о браке греческого омператора с дочерью
 армянского князя. – ВВ, т. IV (1897), стр. 161-164):

¹⁶ Տերմինի բացատրությունը և կիրառության ոլորտները տե՛ս Bréhier L., Le
 Monde Byzantin, t. II: Les institutions de l'empire byzantine, Paris, 1970, p. 46-47.

տագայում գրված վավերագրերից, այդ ավանդույթը այլևս փոփոխության չի ենթարկվել: Մեզ հետաքրքրող վավերագիրն ունի բյուզանդական նոտարատներին հատուկ, դասական կառուցվածք: Թղթառաջքին հաջորդող բուն բովանդակությունը կարելի է բաժանել երեք կառուցվածքային մասերի. 1. Մուտք (prooimion), Բուն խնդիր (narratio) և Վերջաբան-ամփոփում (corroboratio): **Մուտքում** նամակի հեղինակներն ի Քրիստոս խաղաղություն են մաղթում Կիլիկիայի թագավորին (սύ), որը սիրո և միաբանության հավաստմամբ (σὺ θεοφιλῶν = դու աստվածասեր) իր դստերն է ամուսնացնում կայսեր (τοῦ φιλευσεβοῦς κραταιοῦ καὶ ἅγιος ἡμῶν βασιλέως = մեր բարեպաշտ, հզոր և սուրբ կայսեր) հետ: Վավերագրի **Բուն խնդրում** հավաստում են, որ կայսրը (ὁ κραταιὸς καὶ ἅγιος ἡμῶν βασιλεύς) հրավիրելով իր սուրբ թագավորության (τῆς ἁγίας αὐτοῦ βασιλείας) սինողը, ի միջի այլոց հայտնել է և այն, որ Կիլիկիայի թագավորը (ἢ λαμπροτάτη εὐγένειά σου = քո պայծառափայլ ազնվությունը) ամուսնությամբ ազգակցական կապեր է հաստատում (συναλλάσσοῦσα εἰς συγγένειαν) կայսեր հետ (μετὰ τῆς βασιλείας)՝ նրան կնության տալով իր հարազատ դստերը (αὐτοῦ γνησίαν¹¹⁷, καὶ εἰς γυναῖκα ταύτη διδοῦσα τὴν θυγατέρα αὐτῆς), պահանջել է նաև ժողովական թղթով պայմանավորվածության հաստատում (μετὰ τῶν ἄλλων καὶ ἀσφάλειαν γενέσθαι αὐτῇ διὰ συνοδικῆς ἐγγράφου πράξεως) ոչ միայն կայսեր (τῇ βασιλείᾳ αὐτοῦ) և իր դստեր (τὴν θυγατέρα τῆς σῆς εὐγενείας = քո ազնվության դստեր) մերժեցմամբ (συναφθῆναι), ոչ միայն շքախմբով և հսկմամբ կանոնական (εἰ μὴ κατὰ κανονικὴν ἀκολουθίαν καὶ παρατήρησιν), կատարյալ սրբախոսությամբ (μετὰ ἱερολογίας τελείας): Սրանց համար, քո պահանջով (καὶ ἐπὶ τούτου, κατὰ τὴν σὴν αἵτησιν), հավաքվեց մեր ժողովը՝ ներկա կանոնական հրամանը պատրաստելու (τὸ τοιοῦτον κανονικὸν διεκελεύετο πρόσταγμα): Մենք էլ նպատակահարմար նկատեցինք (Ἵτι γοῦν καὶ ἡμῖν εὐλογον ἐνομίσθη τὸ γενέσθαι),

¹¹⁷ Այս բառը վերականգնվում է ըստ վավերագրի մակեդոնական ձեռագրի ընթրինակության:

ինչպես քո ազնվությունը պահանջեց (καθώς τε και ἡ εὐγένειά σου ἠτήσατο), կայսրն էլ դրան համաձայնեց (και ὁ βασιλεὺς πρὸς τοῦτο εἰκότως ἐπένευσε)՝ շարադրել սույն նամակը քո ազնվությանը (τὸ παρὸν γράμμα ἰδοὺ πρὸς τὴν σὴν εὐγένειαν ἐγχαράξαι δέον ἐκρίναμεν), որին և հաղորդում ենք այն: Ես՝ պատրիարքս, ես՝ Բուլղարիայի արքեպիսկոպոսս և մենք՝ Կոստանդնուպոլսի մեծագույն պատրիարքական աթոռին այժմ ենթակա քահանայապետերս (οἱ ὑπὸ τὸν πατριαρχικὸν μέγιστον θρόνον τῆς Κωνσταντινουπόλεως τὸ τηρικαῦτα παρευθείντες ἀρχιερεῖς), ինչպես նաև հարցին խորամուխ եղած (και ἐν ἀκροάσει γεγονότες τῆς ὑποθέσεως) եպիսկոպոսներս, հավատում ենք, որ մեր հզոր և սուրբ կայսրը լի է (Աստծո շնորհով) բարեպաշտությամբ (ὡς ὁ κραταῖδς και ἅγιος ἡμῶν βασιλεὺς ὄλος (Θεοῦ χάριτι) τῆς εὐσεβείας ἐστὶ), ելնում է աստվածային և սրբազան կանոններից և որոշումներից և ոչինչ չի ուզում անել արտաքո օրենքի և կանոնի: Այդ խնդրում համոզվեցինք մենք և ծանուցում ենք թագավորիդ (τῇ σῇ εὐγενεία = քո բարեծնությամբ) և դրանում կատարելապես վստահ ենք, որ մեր հզոր և սուրբ կայսրը չի կենսակցի քո հարազատ դստեր հետ (ὡς οὐκ ἂν πρὸς μίξιν τῇ σῇ συναφθῆσεται θυγατρὶ ὁ κραταῖδς και ἅγιος ἡμῶν βασιλεὺς), եթե չկատարվեն բոլոր եկեղեցական և կանոնական ծիսակարգն ու հանդիսակարգը, ըստ մեր ամենասուրբ մեծ եկեղեցու հնամենի սրբազան ավանդությունների, որոնք վերաբերում են այդպիսի պարագաների: Նախօրոք ամեն ինչ կատարվելու է, որին հաջորդելու է ամուսնության ծեսը: Այդ բոլորը մենք մտադիր էինք կատարել, եթե անգամ թագավորիդ (ἡ λαμπροτάτη σου εὐγένεια = քո պայծառափայլ բարեծնությունը) այդ չպահանջեր: Մենք քաջ գիտենք, որ, ինչպես ասացինք, կայսրը (τὸν βασιλέα ἡμῶν τὸν ἅγιον) այդպիսի հարցերում բարեպաշտ է և պահպանում է ու պաշտպանում կանոնական և օրինական ավանդությունները: **Վերջաբան-ամփոփում.** Որպեսզի թագավորիդ (τὴν σὴν ποιούμεν εὐγένειαν) հեռու լինի ամեն մի կասկածից և տարակոյսից, մենք մեր ձեռքով ստորագրեցինք սույն նամակի տակ: **Թղթավարտում** վավերագիրը թվագրված է աշխարհի ստեղծման բյուզանդական 6722

թվականով, երկրորդ ինդիքտիոնի հոկտեմբերով, որն ըստ Գրյունելի ցանկերի ճշգրտորեն համապատասխանում է 1214 թ. հոկտեմբերի հետ¹¹⁸: Այնուետև վավերագիրը ստորագրված է ժողովի մասնակիցների կողմից: Որևէ կասկած չի հարուցում վավերագրի թվականը, թեպետ սկսած Պավլովից, գրականության մեջ փաստաթուղթը թվագրվում է 1213 թվականով: Նման թվագրման փաստարկ է համարվում այն հանգամանքը, որ պատրիարք Միքայել Ավտորիանոսը գահակալել է մինչև 1214 թ. օգոստոսը¹¹⁹:

Ուշագրավ է, որ ըստ վավերագրի 1214 թ. Կիլիկյաի Լևոն Ա թագավորը իր դստերն է ամուսնացնում Նիկիայի բյուզանդական կայսր Թեոդորոս Լասկարիսի հետ: Ընդօրինակությամբ պահպանվել է կողմերի միջև երկարատև բանակցությունների ընթացքում փոխանակված վավերագրերից միայն մեկը՝ բյուզանդական եկեղեցական ժողովի անունից գրված վավերագիրը (συνοδικὸν γράμμα), որը ստորագրել են Կ. Պոլսի պատրիարք Միքայելը (Μηχαήλ ἐλέω Θεοῦ ἀρχιεπίσκοπος Κωνσταντινοῦ πόλεως Νέας Ῥώμης), Բուլղարիայի արքեպիսկոպոս Հովհաննեսը (Ἰωάννης ἐλέω Θεοῦ ἀρχιεπίσκοπος Βουλγαρίας), մետրոպոլիտներ Նիկողայոսը (Եփեսոս) և Նիկիփորոսը (Կիզիկոս), եպիսկոպոսներ Նիկիփորոսը (Սարդիս), Թեոդորոսը (Լաոդիկիա), Նիկողայոսը (Փիլադելփիա), Սերգիոսը (Պրուսայի Թեուպոլիս), Կոստանդինը (Քիոսի արքեպիսկոպոս), Նիկիփորոսը (Լոպադիոնի և Մելիտոպոլիսի), Լևոնը (Մելագենոն):

Եկեղեցական ժողովը դիմում է Հայաստանի, Կիլիկիայի և Իսավրիայի ամենազնիվ թագավորին (δύγας)՝ ի Քրիստոս խաղաղություն մաղթելով: Հիշեցնում է թագավորի ցանկությունը՝ «բարեպաշտ, հզոր և սուրբ» կայսեր հետ ազգակցական սեր և միություն հաստատելու մասին՝ ամուսնացնելով իր դստերը կայսեր հետ: Տեղեկացնում են, որ կայսրը հրավիրել է այս ժողովը՝

¹¹⁸ Տե՛ս Grumel V., La Chronologie, Paris, 1958, p. 258: Հետագա հետազոտողները, հետևելով Պավլովին, վավերագիրը թվագրել են 1213 թ. հոկտեմբերով:

¹¹⁹ Տե՛ս The Oxford Dictionary of Byzantium..., p. 1365.

նրա առջև խնդիր դնելով քննարկել և որոշում ընդունել Հայոց թագավորի դստեր և իր ամուսնության կանոնական արարողության և ամբողջական ծիսակատարության կատարման խնդիրների շուրջ: Ապա ստորագրողների անունից (բարձրագույն պաշտոնյաներին կրկին թվարկելով) հավաստիացնում է, որ կայսրը ոչինչ չի ուզում անել օրինական և կանոնական արարողությունից դուրս: Այդ իսկ պատճառով կտրականապես հայտարարում է, որ կայսրը չի միանա ձեր հարագատ դստեր հետ, մինչև չկատարվեն եկեղեցու կանոնական և օրինական բոլոր ծիսակատարություններն ու հանդիսակարգը՝ «ըստ մեր ամենասուրբ մեծ եկեղեցու հնամենի սրբազան ավանդությունների, որոնք վերաբերում են այսպիսի պարագաների»: Այսպիսի պարագաներ ասելով՝ ժողովականները հավանաբար նկատի ունեն հարսնացուի այլադավանությունից «ուղղափառության» բերելու արարողակարգը: Պատրիարքն հաւատացնում է, որ այդ բոլորը կատարվելու էր, եթե անգամ Հայոց թագավորը այդ չպահանջեր՝ ակնարկելով, որ Լևոն Ա-ը կայսերն ուղղած իր նամակում վերջինիս առաջ այդ պահանջն է դրել¹²⁰: Ժողովականները շեշտում են, որ իրենց կայսրը նման հարցերում բարեպաշտ է և պահպանում է կանոնական և օրինական ավանդությունները: Եվ որպեսզի Հայոց թագավորն այս խնդրում որևէ կասկած չունենա, ժողովականները ստորագրում են նամակի տակ¹²¹: Ամե-

¹²⁰ Այս ակնարկն արդեն իսկ ապացուցում է, որ Նիկիայի կայսրության և Կիլիկիայի արքունիքների միջև 1213/1214 թ. բանակցությունների նախօրյակին տեղի է ունեցել դիվանագիտական վավերագրերի փոխանակում և բավական ակտիվ քաղաքական երկխոսություն:

¹²¹ Այս վավերագրի գրման պարագաները քննարկել է բյուզանդագետ Ն. Օյկոնոմիդեսը (*Oikonomidès N., Cinq actes inédits du patriarche Michel Autôreianos. - REB, vol. 25 (1967), p. 113-145*, տե՛ս հատկապես էջ 128-129), որի կարծիքով Լևոն թագավորի հետ բանակցությունները սկսված պիտի լինեն Թեոդորի կին՝ Ալեքս Ա Անգելոսի դուստր Աննայի մահից (հավանաբար 1212 թվականից առաջ) հետո՝ արդեն 1213 թ. հոկտեմբերին, ու քանի որ Միքայել Ավտորեանոս պատրիարքը մահացել է 1214 թ., երբ կայսր Թեոդորոս Լասկարիսը գտնվում էր Ատալիայի ճանապարհին, իսկ նոր պատրիարք Թեոդոր էյրենիկոսը օծվել է 1214 թ. սեպտեմբերի 28-ին, Ֆիլիպինեի հետ Թեոդոր Լասկարիս կայսեր ամուսնությունը տեղի է ունեցել նույն տարվա դեկտեմբերի 25-ին (հղում է

նայն հավանականությամբ 1213 կամ 1214 թ. հոկտեմբերին կամ ամենաուշը նոյեմբերին հիշյալ ժողովական թղթով հատուկ դեսպանագնացությամբ Սիս է ժամանում Թեոդորոս Ա Լասկարիսի մորեղբայրը՝ Վասիլ Կամատերոսը¹²²: Այս դեսպանագնացության մասին տեղեկացնում է Նիկեոսա Խոնիատեսի նամակներից մեկի բնագիրը¹²³: Ամենայն հավանականությամբ, դեսպանախումբը Կ. Պոլիս է վերադառնում մեկ տարի հետո՝ հավանաբար 1214 թ. վերջին՝ իր հետ Սսից իբրև Թեոդորոս Ա Լասկարիսի հարսնացու տանելով Լևոնի եղբայր Ռուբենի դուստր Ֆիլիպպեին, ինչպես այդ մասին հաղորդում է Սմբատ Գունդստաբլ պատմիչը¹²⁴: Բյուզանդական մատենագիր Նիկողայոս Մեսարիտեսը բանակցությունների ձգձգվածությունը բացատրում է հայկական խորամանկ բնավորությամբ և միության կնքելու խնդրում անզիջում հայկական կողմի նշանադրությունից խուսափելու միտումով¹²⁵: Այդ ամուսնությունը Ն. Օյկոնոմիդեսը, հետևելով Պավլովին, թվագրում է 1214 թ. դեկտեմբերի 25-ով¹²⁶:

Ռուս բյուզանդագետ Պ. Ժավոռոնկովը առանձին հետազոտություն է նվիրել խնդրին: Ըստ նրա կարծիքի՝ հայերը խաբել

ծնթգր. 20a: հմմտ. **Павлов А.**, Синодальная грамота, стр. 164-166; **Heisenberg A.**, Zu den armenisch-byzantinischen Beziehungen am Anfang des 13. Jahrhunderts, Sitzungsber. d. Bayer. Akad. d. Wiss., 1929/6. **Akropolis**, p. 26, որն հաստատում է, որ Աննայի մահը տեղի է ունեցել Թեոդոր Լասկարիսի երկրորդ ամուսնությունից առաջ (εφθη πρό καιρού τελευτήσαι):

¹²² **Տե՛ս Զավորոնկով П. И.**, Из истории никейско-киликкийских отношений в первой половине XIII в., Античные древности и средние века, 1999, вып. 30, стр. 211.

¹²³ **Տե՛ս Nicetae Choniatae Orationes et Epistulae / Recensuit Ioannes Aloysius van Dieten**, Berolini et Novi Eboraci, 1972, p. 216-217 [Corpus Fontium Historiae Byzantinae, vol. III].

¹²⁴ **Տե՛ս La Chronique attribuée au Connétable Smbat / Introduction, traduction et notes par G. Dédéyan**, Paris, 1980, p. 92, n. 12.

¹²⁵ **Heisenberg A.**, Neue Quellen zur Geschichte des lateinischen Kaisertums und der Kirchenunion. III: Der Bericht des Nikolaos Mesarites über die politischen und kirchlichen Ereignisse des Jahres 1214 // SBAW. Phil.-hist. Klasse. München, 1923. №3, S. 47. 25-28.

¹²⁶ **Oikonomidès N.**, Cinq actes inédites du patriarche Michel Autôreianos. – Revue des études byzantines, tome 25, 1967, p. 129.

են թե՛ բյուզանդական բանագնաց Վասիլ Կամատերոսին և թե՛ կայսրին, քանի որ Լևոնի դուստր Ռիթայի փոխարեն Նիկիա են ուղարկել Ռուբենի 32-ամյա դուստր Ֆիլիպինեին¹²⁷: Բյուզանդագետն իրավացիորեն ենթադրում է, որ այդ պահին Լևոնի ունեցած երկու դուստրերից ավագը՝ Ստեփանիան նշանված էր Երուսաղեմի թագավոր Հովհաննես Բրիենի հետ: Այդ իսկ պատճառով ժավորոնկովը ենթադրում է, որ Թեոդոր Լասկարիսի հետ ամուսնանալու լավագույն թեկնածուն իբրև թե Լևոն Ա-ի դուստր Ռիթան էր: Իմ կարծիքով բյուզանդական կայսրության եկեղեցական գործիչների միջավայրում Ֆիլիպինեի ամուսնությունը չէին ողջունում ոչ թե նրա համար, որ իրենց խաբված էին համարում, այլ այն բանի համար, որ կայսրը պիտի ամուսնանար բյուզանդական տեսանկյունից հերձվածողի հետ, այլապես կայսեր ազգական Վասիլ Կամատերոսը երկարատև բանակցություններից հետո իր հետ Նիկիա չէր բերի Ռուբեն Ռուբինյանի դստերը: Հավանաբար կողմերը բանակցությունների ժամանակ այդ ամուսնությունը փորձել են ծառայեցնել իրենց աշխարհաքաղաքական նպատակներին, թեպետ այս ամուսնությունից են ծնվել մի որդի (ըստ Ալիշանի՝ Կոնստանդին) և Սոֆիա անունով դուստր: Ըստ բյուզանդական պատմիչ Գեորգ Ակրոպոլիտեսի՝ Թեոդոր Լասկարիսը գահը հայ կնոջից ծնված որդուն չի փոխանցել, այլ կտակել է իր ավագ դստեր ամուսին Հովհաննես Վատացեսին: Սոֆիա դուստրը ըստ ժավորոնկովի ամուսնացել է ավստրիական Բաբենբերգների տոհմի հերցոգ Ֆրիդրիխ Բ-ի հետ¹²⁸:

Ամենայն հավանականությամբ Ռուբենի դուստր Ֆիլիպինեի և Թեոդորոս Լասկարիսի ամուսնությունը չափազանց կարճ է տևել: 1217 թ. հետո Կիլիկիան ստիպված էր նոր դաշինք

¹²⁷ Տե՛ս **Жаворонков П. И.**, Из истории никейско-киликских отношений в первой половине XIII в. – АДСВ, 1999, вып. 30, стр. 209-215, մասնավորապես էջ 210-212): Իր աշխատանքում նա բավական համոզիչ կերպով ցույց է տալիս Ա. Սավիդեսի և Վ. Ստեպանենկոյի կողմից հայ-բյուզանդական ամուսնական բանակցությունները 1209-1210 թթ. թվագրելու թյուրիմացությունը:

¹²⁸ Տե՛ս **Жаворонков П.И.**, Из истории никейско-киликских отношений..., стр. 212:

հաստատել կամ ենթարկվել Իկոնիայի սուլթանությանը: Հենց 1217 թ. էլ հավանաբար Ֆիլիպինեն հեռանում է Բյուզանդիայից՝ այնտեղ թողնելով իր զավակներին: Այս քայլն հավանաբար կապված է եղել կոնկրետ քաղաքական պայմանների փոփոխության հետ: Իմ կարծիքով՝ 1217 թ. ևս Ֆիլիպինեի և Թեոդորոս Լասկարիսի ամուսնությունը մնում էր իբրև քաղաքական ամուսնություն, որն այլևս չէր կարող բավարարել կողմերին: Դժգոհությունը հավանաբար եղել է երկկողմանի: Քաղաքական պայմանները՝ մանավանդ Իկոնիայի սուլթան Քայ Խոսրովի հետ Կիլիկիայի թագավորության պայմանավորվածությունները, ստիպել են Ֆիլիպինեին հեռանալ Բյուզանդական կայսրությունից: Հայտնի է, որ նույն թվականին Թեոդորոս Ա Լասկարիսը իր երկրի ապահովությունը փորձում էր գտնել Կոստանդնուպոլսի լատինական կայսրության հետ ամուսնական դաշինքի հաստատումով:

ԺԳ դարի վավերագիտական նոր սկզբնաղբյուրների բացահայտման բնագավառում կարևոր բացահայտում կատարեց Հրաչ Բարթիկյանը: Հատկապես կարևորվում են նրա այն աշխատությունները, որոնք նվիրված էին ԺԳ-ԺԴ դարի հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների քաղաքական ծալքերին¹²⁹: Որոշ ժամանակ անց, հեղինակն ավելի մանրամասնորեն անդրադարձավ բյուզանդական Գերմանոս (1222-1244)¹³⁰ և Մանուել (1244-1255)¹³¹ պատրիարքների թղթակցու-

¹²⁹ **Բարթիկյան Հր.**, Կիլիկյան Հայաստանի և բյուզանդական կայսրության եկեղեցական փոխհարաբերությունները և դրանց քաղաքական ծալքերը. – «Աշտանակ» տարեգիրք, հտ. Ա, Երևան 1995, էջ 112-126: Այս հոդվածի ֆրանսերեն տարբերակը տե՛ս **Bartikian H.M.**, Les relations des églises de l'Arménie Cilicien et de l'Empire byzantine et leurs implications politiques. – Actes du Colloque "Les Lusignans et l'Outre Mer" (Poitiers-Lusignan 20-24 octobre 1993), Poitiers, 1993, p. 47-53.

¹³⁰ **Բարթիկյան Հր.**, Հայ-բիզանդական եկեղեցական յարաբերությունները փաստաթղթերում. Կոստանդնուպոլսի պատրիարքներ Գերմանոս Բ-ի (1222-1244) և Մանուել Բ-ի (1244-1255) թղթերը Հեթում Ա թագաւորին և Կոստանդին Ա Բարձրաբերդցի կաթողիկոսին. – «Գանձասար» աստուածաբանական հանդէս, հտ. 7, Երևան, 2002, էջ 27-63: Գերմանոսի նամակի նկարագրությունը տե՛ս Les registes des actes du patriarchat de Constantinople, vol. I: Les actes

թյանը Կոստանդին Ա Բարձրաբերդի կաթողիկոսի կառավարման ժամանակներում: Ըստ ժամանակագրական հերթականության բերենք այդ վավերագրերի հիմնական բովանդակությունը՝ դրանք կապելով ժամանակի քաղաքական իրադարձությունների հետ՝ շեշտադրելով այդ վավերագրերի նշանակությունը բյուզանդական մտածողության մեջ Կիլիկիայի դերը արժեվորելու գործում:

ա/ Նկարագրենք Գերմանոս պատրիարքի նամակը. Վավերագրի վերնագրում կաթողիկոսն անվանված է «τῷ ἱψηλῷ Καθολικῷ πάσης τῆς ἀρμενικῆς ἐκκλησίας, τῆς κατὰ πᾶσαν τὴν οἰκουμένην» (= բարձր կաթողիկոս ողջ Հայոց եկեղեցու, [որ և] ողջ Տիեզերքի): Կարծում եմ բյուզանդական նոտարատանը փորձել են հունարեն թարգմանել «Ամենայն Հայոց կաթողիկոս» տերմինը, որը խորթ է ԺԲ դարի հունարենով պահպանված և Հռոմկլայի կաթողիկոսներին առաքված նամակների բանաձևային համակարգին¹³²: Վերնագրում Կոստանդին Բարձրաբերդի կաթողիկոսն անվանված է նաև «իմաստությամբ և խոհեմությամբ բարեգարդեալ տեր» (καὶ σοφία καὶ συνέσει κεκοσμημένο Κυρῶ): Իհարկե, վերնագրի համար չի կարելի պնդել, որ այդ բանաձևումները ժամանակակից են նամակի բնագրին, սակայն դրանք, կարծում ենք, պատրիարքական նոտարատանը վավերագիրը գրանցելու ժամանակին են վերաբերում: Դրա մասին են վկայում մյուս վավերագրերը, որոնք քննարկվում են ներկա հրապարակման մեջ: Այդ հուշում է նաև վերնագրի առաջին բառը՝ «նոյնի» (τοῦ αὐτοῦ): Քանի որ ձեռագրում այս բնագրից առաջ Գերմանոս Բ պատրիարքի հեղինակած որևէ այլ բնագիր չկա, այսպես կարող էին պատրիարքական դիվանատանը միմյանց հետևից ընդօրինակվել Գերմա-

des patriarches, fasc. IV: Les registes de 1208 à 1309 / par Y. Laurent, Paris, 1971, p. 97-98, № 1290.

¹³¹ Մանուելի նամակի ինքնագրի հրապարակման պատիվը պատկանում է Հր. Բարթիկյանին: Վավերագրի գիտական նկարագրությունը տե՛ս Les actes..., Paris, 1971, p. 115-117.

¹³² Տե՛ս Բոզոյան Ա., Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների վավերագրերը, Երևան, 1995, էջ 111, 122:

նոս պատրիարքի, նոտարատուն մուտք գործող հերթական վա-
 վերագրերի պատճենները: Հավանաբար նամակի թղթառաջը
 չի պահպանվել կամ դուրս է նետվել նոտարատան գրչի կողմից,
 քանի որ նրա բովանդակությունն ամենայն հավանականու-
 թյամբ արտացոլված է վերնագրում, ուր սղված է պատրիար-
 քական թղթառաջի ամբողջական բանաձևը, և թողնված է
 միայն Հայոց կաթողիկոսի անունն ու դիմելու բանաձևը: Նա-
 մակն ունի բավական երկարաշունչ **մուտք (prooimion)**, ուր
 նկարագրված է Կոստանդինի և Տրդատի քրիստոնեությունն ըն-
 դունելու պատմությունը, շեշտված է Գրիգոր Լուսավորչի դերա-
 կատարությունը և երկու միապետների հավատո միությունը: Այ-
 նուիետև վավերագիրն անդրադառնում է հերձվածներին, որոնք
 պառակտում են միությունը. սկզբից ևեթ նզովում է Նեստորին,
 ապա՝ մեղադրում է հայերին «երկու բնությունները իրար խառ-
 նելու և մեկը ստանալու» (*τὰς δύο φύσεις εἰς μίαν συγχέουσι*)
 մեջ, որն էլ երկու եկեղեցիների պառակտման հիմնական պատ-
 ճառն է համարում՝ ակնարկելով նաև, որ հայերը հետագայում
 «ծեռք են բերել նաև եկեղեցական ավանդույթներին ներհակ այլ
 սովորույթներ» (*ἀλλὰ καὶ ἕτερα προσεξέυρεκεν ἔθῃ ταῖς
 ἐκκλησιαστικαῖς ἐναντιούμενα παραδόσεις*): Այդ իսկ պատճառով,
 ըստ պատրիարքի, Աստված այցելել է Հայոց թագավորին (*ἀλλὰ
 καὶ τὸν βασιλικῶς τῶν Ἀρμενίων κατάρχοντα, ὃν καὶ ῥῆγα ἢ
 Λατινὶς προσωνόμασε = այլ Հայոց թագավորիկին, ով լատինե-
 րեն լեզվով ռքս է կոչվում*) և կաթողիկոսին (*σὲ τὸν ἰψηλότατον
 ἐν ἀρχιερευσὶ τῶν Ἀρμενίων καθολικόν, κράτος ἀνεζωσμένον ἐν
 πάσαις ταῖς Ἀρμενικαῖς ἐκκλησίας συναίστησι = քեզ՝ հայրա-
 պետներից ամենաբարձրին՝ Հայոց կաթողիկոսին, ողջ Հայոց
 եկեղեցու վրա իշխանություն ունեցողին*), ջերմացրել է նրանց
 սրտերը: Նկատելի է Հեթում և թագավորին հունարենով տրված
 «բասիլիկոս» անվանումը, որն ըստ նամակագրի հավասարվում
 է լատիներենի «ռեքսին»: Ուշիմ ընթերցողը կնկատի, որ այդ
 անվանումը արդեն մեկ անգամ օգտագործել է նաև ԺԲ դարի
 մատենագիր Միքայել Իտալիկոսը: Կաթողիկոսին դիմելու այս
 բանաձևն էլ անկասկած նոտարատան գրիչն օգտագործել է վա-
 վերագրի վերնագիրը կազմելիս: **Քուն Խնդրի (narratio)** մեջ

շեշտվում է, որ միության բանակցությունները նախաձեռնել են Հայոց թագավորն ու կաթողիկոսը՝ բյուզանդական կայսեր (τόν κράτιστον, θεόπτεστον τε καὶ θεοδόξαστον αὐτοκράτορα = հզորագույն, աստվածատես և աստվածափառ ինքնակալ) և պատրիարքի (ἡμῶν... μετριότητα = մեր նվաստության) մոտ ուղարկելով ուղղափառ դավանություն ունեցող մարդկանց՝ Սկոպելու¹³³ վանքի վանահայր Տեր Թեոդորետոսին (τόν τε δῆλαδὴ δσιώτατον καθηγούμενον τῆς τατὰ τόν Σκόπελον σεβασμίας ἱερομόναχον κύρον Θεοδώριτον = Սկոպելոսի սուրբ վանքի սրբազնագույն վանահայր Տեր Թեոդորետոսին) և վանական Վասիլիոսին (τόν εὐλαβέστατον μοναχὸν κυρὸν Βασίλειον = ամենանաբարեպաշտ վանական տեր Վասիլիոսին): Նրանցից կայսրը (κράτιστος καὶ ἅγιος αὐτοκράτωρ = հզորագույն և սուրբ ինքնակալը) և պատրիարքը (ἡ μετριότης ἡμῶν = նվաստությունս) ստացել են կաթողիկոսի (σε = քո) և Հայոց թագավորների (τοὺς ὑπερενδοξοτάτους ῥήγας τῶν Ἀρμενίων¹³⁴ = ամենափառավորեալ Հայոց թագավորների) նախաձեռնությունը: Պատրիարքին ուրախություն է պատճառել լուրը և դրանով ղզևորված՝ կոչ է արել կայսրին օգնության հասնել լատինների կողմից ավարառված Կ. Պոլսին: Պատրիարքը մաղթում է Հայոց ազգին արժանանալ ուղղափառության և համախոհ լինել իրենց: Հայտնում է, որ ինքը թափառական է դարձել և վտարված է Կ. Պոլսից և իր սուրբ եկեղեցուց, սակայն դեռ կաթողիկոսից նամակ չստացած՝ ձեռնամուխ է եղել գրելու ներկա երկարաշունչ գրությունները¹³⁵ դրանց առաքումը վստահելով մելիտենցիների գերագահ մետրոպոլիտին՝ հավատ ընծայելով Ան-

¹³³ Ըստ Հր. Բարթիկյանի՝ «Հիսիսային Սպորադների կղզի, Եփեսոսից հիսիս: 378 թ. եպիսկոպոսանիստ էր» (Գանձասար, Է, էջ 54, ծնթգր. 14):

¹³⁴ Հայոց թագավորի հոգնակի թվով հիշատակությունն այս բնագրում կարող է բացատրվել երկու կերպ: Կամ ընթերցումը ընդօրինակողի սովորական վրիպում է, կամ էլ այդ պահին Կիլիկիայում Հեթումը գահը կիսել է իր որդիներից որևէ մեկի՝ հավանաբար Լևոնի հետ:

¹³⁵ Հասել է միայն Կոստանդին Բարձրաբերդցուն առաքված, քննարկման առկա թուղթը: Ենթադրելի է, որ մյուս թուղթը գրված պետք է լիներ Հայոց թագավորին կամ թագավորներին:

տիոքի պատրիարքի կողմից իրեն գրված նամակին և Սկոպելուսի մեծ վկա Թեոդորոսի վանքի վանահայր Թեոդորետոսի հաղորդածներին¹³⁶: Ուստի հույս ունի, որ Մելիտենեի եպիսկոպոսը կաթողիկոսին ենթակա եպիսկոպոսներից ոմանց հետ կվերադառնա պատրիարքի մոտ՝ հայտնելով քո (իմա՝ կաթողիկոսի) և բարձրյալիդ (τὸ τοῦ ἱψηλοτάτου) կամքը: Տերմինի օգտագործումը իմ կարծիքով պահանջում է այլ վավերագրերի հետ ստուգում:

Վերջաբան-ամփոփում (corroboratio)- Հրաժեշտի մաղթանքներ է առաքում՝ հավատալով եկեղեցիների միությանը:

Թղթավարտում՝ Գերմանոս պատրիարքի տիտղոսներն են՝ ստորագրությամբ հանդերձ:

բ/ Նկարագրենք Մանուել Բ-ի նամակը. Վերնագրում վավերագիրն անվանվում է Հայոց թագավորին և կաթողիկոսին առաքված երրորդ նամակ¹³⁷, որը հասցեագրված է Հայոց թագավոր (βῆγας) տեր Հեթումին և կաթողիկոս (σφῶν καθολικῶν) տեր Կոստանդինին, գրված՝ 6756 թ. 6-րդ ինդիքտիոնին¹³⁸: Բուն վավերագրում հասցեատերերի անուններն այլևս չեն հիշատակվում:

Թղթառաջքում Մանուել պատրիարքը գերադրական ածականներով է բնորոշում Հեթում թագավորին (Πανευχεστάτε, πανευγενέστατε, πανευδοξοστάτε, πανυψηλότατε, περιώνυμε βῆγ

¹³⁶ Նշանակում է՝ Կ. Պոլսի պատրիարքի կողմից հայոց եկեղեցու հետ միութենական բանակցությունների միջնորդ են եղել Անտիոքի օրթոդոքս պատրիարքը և Սկոպելուսի Թեոդոսիոսի վանքի վանահայր Տեր Թեոդորետոսը: Անտիոքի պատրիարք Դորոթեոսը (1219-1245) միջնորդագիր-նամակ է ուղարկել Կ. Պոլսի պատրիարք Գերմանոսին:

¹³⁷ Վ. Լորանը, հիմնվելով նամակի բնագրի բացատրության վրա, կարծում է, որ բյուզանդական նոտարատանը նկատի են ունեցել պատրիարքական գրասենյակում այս վավերագրից առաջ գրված Գերմանոս Ա-ի վերոհիշյալ նամակը և պատրիարքական աթոռի թափուր եղած ժամանակ սինոդի գրած, դեռևս չիրապարակված նամակը, որը պահվում է Vatic. Gr. 1455, f. 27r-29v և Monac. 207, f. 14v-16r ձեռագիր մատյաններում:

¹³⁸ Հիշատակված թվականի սկիզբը համապատասխանում է Ք. ծ. 1248 թ. սեպտեմբերին: Հետևաբար նամակը գրվել է մինչև 1249 թ. սեպտեմբերը, տե՛ս Grumel V., La Chronologie, Paris, 1958, p. 259 [Traité d'Études Byzantines, I]:

հանգանակը: Ակնարկվում է, որ միանման բովանդակությամբ նամակներից սա երրորդն է: Հիշեցնում է, որ դեռևս իր նախորդ Գերմանոս պատրիարքի օրոք Վեհապետ-թագավորի (ή πανυψηλότης σου... βουλῆ καὶ θελήσει τῆς ἐξουσίας σου...) խնդրանքով Անտիոքի պատրիարքը (toῦ ἀγιωτάτου Πατριάρχου Ἀντιοχείας = սրբազնագույն պատրիարքը Անտիոքի) նամակ է ուղարկել հզոր կայսերն (τὸν κραταῖον θεόληπτον καὶ θεοδόξαστον ἅγιον ἡμῶν αὐτοκράτορα = հզորությամբ Աստուածով ներշնչված և Աստուածով փառավորված սուրբ մեր ինքնակալը...) ու պատրիարքին (τὸν ἀοιδιμού ἐν πατριάρχεις τὸν ἅγιον κύριον Γερμανὸν = ներբողեալ պատրիարքի՝ սուրբ տեր Գերմանոսի)՝ Սկոպելոսի Ս. Թեոդոսի վանահայր Թեոդորոսեսի և վանական Վլասիոսի (Գերմանոսի նամակում՝ Վասիլիոս - Ա.Բ.) միջոցով՝ անկեղծ ցանկություն հայտնելով հավատքի միություն և համերաշխություն հաստատելու մասին: Պատրիարքն (ὁ ἅγιος = սուրբը) էլ ողջունել էր՝ ցանկություն հայտնելով անձամբ գալ ձեզ մոտ: Սակայն քանի որ այդ ցանկությունը հնարավոր չի եղել իրականացնել, պատրիարքը կայսեր (toῦ κραταῖου καὶ ἀγίου ἡμῶν αὐτοκράτορος = հզոր ու մեր սուրբ ինքնակալի) գիտությամբ կաթողիկոսի մոտ է ուղարկել Մելիտենեի սրբազնագույն մետրոպոլիտին (τὸν ἱερώτατον μητροπολίτην): Դեսպանագնացը, հանձնելով Գերմանոս պատրիարքի նամակը, ստացել է պատրիարքին ուղղված նամակ՝ պատասխան դեսպանագնացությամբ [Նիկիա] ժամանելու խոստումով և Հայոց հաւատքի խոստովանության գիր (τῆς τῶν Ἀρμενίων λίβελλον πίστεως): Տարիներ անց թագավորը (σοί)¹³⁹ կայսեր (τὸν κραταῖον θεόσοφον ἅγιον ἡμῶν αὐτοκράτορα = հզոր աստվածային իմաստությամբ մեր սուրբ ինքնակալին) մոտ պատվիրակներ է ուղարկում հավատո խոստովանության գրով (λιβέλλου ἀφίκοντο): Քանի որ Գերմանոս պատրիարքն արդեն մահացել էր, կայսրն (ἄγία αὐτοῦ βασιλεία = նրա սուրբ թագավորությունը) է ժողովի հավաքում եպիսկոպոսներին և ծանոթացնում

¹³⁹ Հայոց թագավորին երկրորդ դեմքի եզակի դերանունով դիմելու այս մտերմիկ ձևը հատուկ է այս նամակին:

հաւատո խոստովանության գրին: Ժողովականների համաձայնությամբ կայսրը թագավորի մոտ է ուղարկում Մելիտենեի մետրոպոլիտին (ὁ ἱερώτατος μητροπολίτης = սրբազնագույն մետրոպոլիտին) և պատրիարքական իշխանավորներից մեկին (= εἷς τῶν πατριαρχικῶν ἀρχόντων)՝ կայսերական (βασιλικῶν) և ժողովական (συνδικῶν) գրություններով, հավատո միությունը իրականացնելու մտադրությամբ: Սակայն դեսպանագնացները ձեռնունայն են վերադառնում, քանի որ կաթողիկոսը գտնվել է թագավորության սահմաններից հեռու՝ Հռոմկայում: **Բուն խնդիր.** Այժմ, տարիներ անց կրկին կայսերը (τὸν κραταῖον καὶ θεοκυβέρνητον ἄγιον ἡμῶν αὐτοκράτορα = հզոր և Աստուծով կառավարող մեր ինքնակալ) նամակ եք գրում և գրությունը պատվիրակների հետ ուղարկում¹⁴⁰: Պատրիարքն հավաստիացնում է, որ ինքը հարցն անուշադրության չի մատնել, չի ձգձգել քննարկումը խառն իրավիճակի պատճառով, թեպետ ցուրտ է եղել և հակառակվողներն էլ պակաս չեն եղել, աղոթում է, որ բարի գործը գլուխ գա: Թագավորի մոտ է ուղարկում Մելիտենեի (անունը չկա) սրբազնագույն (ἱερώτατον) և Փիլադելփիայի (Փոկաս) ամենապատիվ (πανυπέριττοι) մետրոպոլիտներին, որոնց հանձնարարված է հանձնել հավատո գիրը և հայերից պահանջել մի քանի զիջումներ (զլուխներ), իբրև դարձի եկող քրիստոնյաներ (πρὸς χρηματισμὸν τοῖς χριστιανίζουσι): Մաղթում է, որ իր դեսպաններին լավ ընդունելության արժանացնեն, բարյացակամ ընդունեն նրանց ասելիքը և դրանով փառակից դառնան Հայոց ուղղափառ արքա Տրդատին, որը հիմք է դրել առաջին երեք Տիեզերական ժողովներում կողմերի միաբանությանը: Մաղթում է, որ այսուհետև կպահպանեն ուղղափառ դավանանքը, օրինակ, դառնալով հեթանոսներին և

¹⁴⁰ Ամենայն հավանականությամբ խոսքը վերաբերում է Հակոբ վարդապետի դեսպանագնացությանը, որն ըստ Կիրակոս Գանձակեցու՝ տեղի է ունեցել Հեթոմ Ա թագավորի Կարակորում մեկնելուց առաջ: Ըստ ԺԳ դարի պատմիչի՝ դեսպանագնացությունն ուղարկվել է Հովհաննես Վատացես (1221-1254) կայսեր իշխանության տարիներին (տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց / աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 365-366):

հավատո միությանը հետամուտ լինողներին՝ հեռու կպահի ամեն տեսակի փորձանքներից: **Վերջաբան-ամփոփումի** բանաձևում աղթքն ուղղում է Աստվածածնին և բոլոր սրբերին: **Թղթա-վարտում** գրությունը ստորագրել է Մանուել պատրիարքը (Μανουήλ ἐλέω Θεοῦ ἀρχιεπίσκοπος Κωνσταντινουπόλεως Νέας Ῥώμης καὶ Οἰκουμενικός Πατριάρχης)¹⁴¹:

Գերմանոս Բ (1223-1240) և Մանուել Բ (1244-1255) պատրիարքների նամակների բանաձևերում նկատվում է Հայոց կաթողիկոսի և թագավորի պաշտոնների նկատմամբ հարգանքի ընդգծում: Պատրիարքական նոտարատանը գրված՝ Գերմանոս Բ-ի կողմից Կոստանդին Բարձրաբերդցուն արքայած թղթում կաթողիկոսն անվանված է «τῷ ἱψηλῷ Καθολικῷ πάσης τῆς ἀρμενικῆς ἐκκλησίας, τῆς κατὰ πάσαν τὴν οἰκουμένην, καὶ σοφία καὶ συνέσει κεκοσμημένῳ Κυρῷ» (= բարձր կաթողիկոս Ամենայն Հայոց եկեղեցու, [որ և] ողջ Տիեզերքի, և իմաստությամբ և խոհեմությամբ զարդարեալ), ինչպես նաև «ἱψηλότατον ἐν ἀρχιερευσί τῶν Ἀρμενίων καθολικόν, κράτος ἀνεξωσμένον ἐν πάσαις ταῖς Ἀρμενικαῖς ἐκκλησίας συναίστησι» (= ամենաբարձր քահանայապետ[ների] մեջ՝ Հայոց կաթողիկոսին, Հայոց բոլոր եկեղեցիների վրա իշխողին): Թղթում ակնարկ կա նաև Կիլիկիայի թագավորի տիտղոսին «τὸν βασιλικῶς τῶν Ἀρμενίων κατάρχοντα, ὃν καὶ ῥήγα ἢ Λατίνι προσωνόμασε" (=...կարգեց Հայոց թագավոր(իկ)ին, ում և լատիներենով ռեքս են անվանում): Մանուել Բ պատրիարքի նամակը հացեագրված է Հեթում թագավորին (ծր̄γα) և Կոստանդին Ա Բարձրաբերդցի կաթողիկոսին: Վավերագրում հիշատակված են թագավորի և կաթո-

¹⁴¹ Պահպանվել է նաև Կոստանդին Ա Բարձրաբերդցու (1221-1267) «Հաատոյ խոստովանության» հայերեն և հունարեն տարբերակները, ուղարկված ուղարկված Կ. Պոլսի պատրիարք Մանուել Ա-ին: Հայերեն բնագրի հնագույն ձեռագրերից է ՄՄ-2174-ը, իսկ հունարեն բնագրի տեքստը ընթրիինակված է 1574 թ. և ներկայացվել է Լեհաստանի թագավոր Հենրի Գ-ին, իբրև Հայոց դավանանքի ուղղափառ խոստովանություն (տե՛ս Ս. Պետերբուրգի կայսերական [խորհրդային] շրջանում՝ Սալտիկով Շչեդրինի, այժմ՝ Ազգային) գրադարան, Ex museo Petri Dubrowsky, Q. v. I. № 1, հմմտ. **Բոզոյան Ա.**, Հայբյուզանդական..., էջ 36-38):

դիկոսի պաշտոնները: Թղթառաջքում և բուն շարադրանքում նրանք ներկայացված են գերադրական աստիճանի մակդիրներով: Մանուել պատրիարքի նամակում ուշագրավ է նաև Հայոց եկեղեցուն նկատի ունեցող՝ «դարձի եկող քրիստոնյաներ» արտահայտությունը, որը բացակայում է մինչ այդ գրված որևէ վավերագրում:

Կոստանդին Բարձրաբերդցու իշխանության շրջանում Հայոց եկեղեցին բավական գործուն փոխհարաբերություններ էր պահպանում նաև Հռոմի կաթոլիկ եկեղեցու հետ, որի շրջանակներում էլ ավելի են արժեվորվում նկարագրված վավերագրերը¹⁴²: Հռոմկլայի հայոց կաթողիկոսարանի միջեկեղեցական բանակցությունների ակտիվության մասին է խոսում նաև վերջերս շրջանառության մեջ դրված մեկ այլ գտածո: Այս տեսանկյունից կարևոր նորույթ է Հայոց կաթողիկոս Հակոբ Առաջինի կնիքը, որն ուղեկցում է Նինվեի նեստորական արքեպիսկոպոս Հովհաննեսի թղթին¹⁴³: Այս գտածոն հաստատում է մեր այն համոզումը, ըստ որի Հայոց եկեղեցին մոնղոլների տիրապետության շրջանում կարևոր դեր է կատարել արևմուտք-արևելքի եկեղեցաքաղաքական փոխհարաբերություններում¹⁴⁴:

¹⁴² Կոստանդին Ա Բարձրաբերդցու «Հաասոյ խոստովանությունը» պապական նվիրակ Տիմանչի ձեռքով ուղարկվել է նաև Հռոմ, Իննոկենտիոս Դ պապին (1243-1254): Այս փաստաթղթի հայերեն քնօրինակը պահպանվել է Վատիկանի առաքելական արխիվում (Archivum secretum. Vaticanum, տե՛ս A.A. Arm. I-XVIII. 1804 – լուսանկարը հրապարակվել է Կ. Մութաֆյանի կողմից, 1998 թ. Հռոմում հրապարակված Armenia-Roma ցուցահանդեսի ուղեցույցում): Այն գրված է մագաղաթի վրա: Բնագրի 1574 թ. լատիներեն թարգմանության ընդօրինակության հրապարակումը տե՛ս Dom Antonio Staerk, O.S.B., Die Confessio fidei Armenorum aus der Dubrowskischen Sammlung der Kaiserlichen Bibliothek zu St. Petersburg. – BB, т. XIV, вып. 1 (1907), Санкт-Петербург, 1908, с. 192-196 (հմմտ. Բոզոյան Ա., Հայ-բյուզանդական... էջ 36-38):

¹⁴³ Տե՛ս Seibt Werner und Martin Bithnau, Ein Johannes "Ερζβισχοφ 'ον Νυιε" siegelt 1293 tirolische Ablassurkunden mit dem Typar des armenischen Katholikos Yakob I. († 1286). – Mitteilungen des instituts für Österreichische Geschichtsforschung, Bd. 122, Teilband 1, Böhlau Verlag, Wien-Köln-Weimar, 2014, S. 112-123.

¹⁴⁴ Տե՛ս Bozoyan A., Le système hiérarcique de l'Église arméniennes à l'époque

Ինչպես վերևում ասվեց, ԺԴ դարի բյուզանդական սկզբնաղբյուրները խոսեցնելու անկասկած հետաքրքիր օրինակ է Հր. Բարթեկյանի հոդվածը՝ նվիրված Գվիդոն Լուսինյանի կյանքի բյուզանդական ժամանակահատվածին¹⁴⁵: Այստեղ հեղինակը Կիլիկիայի պատմության մասնագետների ուշադրությունն է հրավիրում նաև ԺԴ դարի բյուզանդական եկեղեցու պատրիարք Եսայասի (1323-1334) երկու նամակներին, որոնք ուղղված են Հայոց կաթողիկոս Հակոբ Բ Անավարզեցուն և Հայոց թագավոր Լևոն Դ-ին: Այս նամակները գրվել են այն ժամանակ, երբ դեռ կենդանի էր Միքայել Թ Պալեոլոգի (1295-1320) հետ ամուսնացած, Լևոն Բ թագավորի դուստր Ռիթա (Մարգարիտա)-Մարիա-Քսենիան, որն ամենայն հավանականությամբ մահացել է 1333 թ. կամ դրանից հետո: Պահպանված նամակներն ունեն հետաքրքիր բանաձևային երանգներ, և դարաշրջանի բյուզանդական պատրիարքական նոտարատանը գրված փաստաթղթի դասական օրինակներ են¹⁴⁶: Վավերագրերը թեպետ չունեն կոնկրետ տարեթվի նշումներ, սակայն սկսած Ֆր. Դյուլզերից՝ թվագրվում են 1330/1331 թվականով, քանի որ դրանց բնագրերը առկա են Վիեննայի կայսերական գրադարանի թ. 47 հունարեն ձեռագրում, ուր ժամանակային հերթականությամբ ընդօրինակված են Կ. Պոլսի պատրիարքական նոտարատնից ելած 1315-1331 թթ. վավերագրերը: Այդ ձեռագրի և բոլոր հրատարակությունների հաշվառմամբ մեզ հետաքրքրող վավերագրերի գիտական հրատարակությունը կատարել են

des Mongols. - «Բազմավեպ». Հայագիտական-բանասիրական-գրական հանդես, ՃԿԸ տարի, թիւ 3-4, Վենետիկ, 2010, էջ 529:

¹⁴⁵ Բարթեկյան Հր., Գվիդոն Լուսինյանը Բյուզանդիայում և Կիլիկյան Հայաստանում. - «Աշտանակ» տարեգիրք հտ. Բ, Երևան, 1998, էջ 135-143:

¹⁴⁶ Փաստաթղթերի վերջին, վավերագիտական հրատարակությունը տե՛ս Das Regesten des Patriarchats von Konstantinopel. 1. Teil: Edition und Übersetzung der Urkunden aus den Jahren 1315-1331 / Herausgegeben von **Herbert Hunger** und **Otto Kreisten**..., Wien, 1981, S. 590-604 [Corpus Fontium Historiae Byzantinae, XIX/1, Series Vindobonensis]: Այս նամակների նկարագրությունը տե՛ս Les regestes des actes du patriarcat de Constantinople, vol. I: Les actes des Patriarche, fasc. V: Les regestes de 1310 à 1376 / par **J. Darrouzès**, Paris, 1977, p. 117-118, N 2158; p. 118-119, N° 2159.

Հերբերտ Հունգերը և Օտտո Կրեստենը, որոնք, հետևելով Ֆր. Դյուլգերին և Ժ. Դարուցեզին, Հայոց կաթողիկոսին և Կիլիկիայի Հայոց թագավորին ուղղված նամակները թվագրում են 1330 ապրիլ – 1331 թ. ապրիլ ժամանակամիջոցով: Հ. Հունգերը և Օ. Կրեստենը իրավամբ նամակների հասցեատեր են համարում Հայոց կաթողիկոս Հակոբ Բ Անավարզեցուն և Լևոն Դ թագավորին¹⁴⁷: Նամակները գրված են Անդրոնիկոս Գ Պալեոլոգոսի (1328-1341) իշխանության տարիներին, երբ բյուզանդական արքունիքում բարձր պաշտոն էր զբաղեցնում Գվիդոն Լուսինյանը: Այնուամենայնիվ, ո՛չ կայսրուհի Մարիա-Քսենիան, ո՛չ էլ Գվիդոն Լուսինյանը հիշատակվող վավերագրերի կապակցությամբ սկզբնաղբյուրներում չեն վկայակոչվում: Վավերագրերի հիմնական նյութը եկեղեցիների միության խնդիրն է: Բերեք այդ փաստաթղթերի հիմնական բովանդակությունը.

ա/ Հակոբ Բ Անավարզեցի¹⁴⁸ կաթողիկոսին ուղղված նամակի նկարագրություն. Վավերագրի ինքնագիրը, ինչպես նախորդ դեպքերում, չի պահպանվել: **Թղթառուջքում** պահպանվել է միայն Հայոց կաթողիկոսին դիմելու բանաձևը (Αἰδεσιμώτατε, τιμώτατε, εὐλαβέστατε καθολικὲ τῆς ἐκκλησίας τῶν Ἀρμενίων = Ամենահարգելի, ամենապատվելի, ամենաաստվածավախ Հայոց եկեղեցու կաթողիկոս): Վավերագրի **Մուտքում** Եսայաս պատրիարքը (ὁ μετρίότης ἡμῶν = մեր խոնարհությունը) բարեմաղթանքներ է հղում կաթողիկոսին և նրա ժողովրդին, որպեսզի նրանք գլուխ բերեն միությունը, որին հասնել ինքը շատ է

¹⁴⁷ Das Regesten des Patriarchats von Konstantinopel. 1. Teil ..., S. 590, 598.

¹⁴⁸ Հր. Բարթիկյանը վրիպմամբ կաթողիկոսական նամակի հասցեատեր է համարում Կոստանդին Դ Լամբրոնացի կաթողիկոսին, որը գահակալել է 1323-1326 թթ. (տե՛ս **Բարթիկյան Հր.**, Նոր նյութեր Կիլիկիայի հայկական պետության և Բյուզանդիայի փոխհարաբերությունների մասին. - Բանբեր Մատենադարանի, 4, Երևան, 1958, էջ 34-35, հմմտ. նաև **Խույնի՝** Կիլիկյան Հայաստանի և Բյուզանդական կայսրության եկեղեցական փոխհարաբերությունները և դրանց քաղաքական ծայրերը. - «Աշտանակ» տարեգիրք, հտ. Ա, Երևան, 1995, էջ 116): Հր. Բարթիկյանի այս վրիպումն առանց քննության անցել է նաև Կլ. Մուրաֆյանի մենագրություն, թեպետ վերջինս ծանոթ է եղել Հ. Հունգերի և Օ. Կրիստենի կողմից հիշյալ վավերագրերի հրատարակությանը (տե՛ս **Mutaflan Cl.**, L'Arménie du Levant (XIe -XIVe siècle), t. I, Paris, 2012, p. 553):

ուզում: **Բուն խնդիր.** Եսայի պատրիարքը տեղեկացնում է, որ դեսպանները իրեն են հանձնել կաթողիկոսի (τῆς εὐλαβείας ἡμῶν = ձերդ բարեպաշտության) ուղարկած նամակները: Այդ առիթով պատրիարքը (ἡ μετριότης ἡμῶν = մեր խոնարհությունը) հավաքել է ներկա գտնվող քահանայապետերին ժողովի, որին ներկա է եղել նաև կայսրը (τοῦ κρατίστου καὶ ἁγίου μου αὐτοκράτορος = իմ ամենահզոր և սուրբ ինքնակալը) իր սինկղիտի և թիկնապահների հետ: Վերջինս էլ կարգադրում է ընթերցել այդ նամակները, որոնցից էլ ճշգրիտ տեղեկացել են կաթողիկոսի դարձի մասին (τὴν ἡμετέραν ἐπιστροφὴν = ձեր դարձի), քանի որ տերն է իր արյունով փրկել անջատված հատվածին՝ հաշտեցնելով Հոր հետ: Աստվածային տնօրինությամբ է բացատրում կաթողիկոսի և իր հոտի զոջումով դարձը դեպի իր՝ մայր եկեղեցու գիրկը (πρὸς τὴν κοινὴν μητέρα τῶν ἐκκλησιῶν = ընդհանուրի մորը՝ եկեղեցուն), խոստանալով համամիտ և համահավատ լինել, թույլ է տալիս իրենց կողքին կանգնելով փառաբանել Երրորդությունը: Բյուզանդական եկեղեցու ղեկավարը շեշտում է, որ Հայոց կաթողիկոսն առանց որևէ ճնշման է կատարել իր որոշումը: Այդ իսկ պատճառով էլ բացում է զոջման դուռը և հրավիրում հարազատ զավակների պես անբիժ սրտով փառավորել Երրորդությանը: Այս աստվածահաճո գործը ավարտին հասցնելու համար պատրիարքը կաթողիկոսի մոտ է ուղարկում պալատի կառավարիչ, սուրբ կայսեր բարեկամ, սերաստոս Միքայել Կալիկոնիտեսին, վանական տեր Գաբրիելին, ինչպես նաև իրենց երկրում ապրող հայերի եպիսկոպոսին (τὸν ἐντιμότατον ἐπίσκοπον τῶν ἐνταῦθα Ἀρμενίων = այստեղի հայերի մեծարգո եպիսկոպոսին): Նամակում հայտնվում է նաև, որ սենեկապետը սկզբում այցելելու է սուլթանի մոտ ինչ-որ գործի համար, ինչպես անհրաժեշտ էին գտել կաթողիկոսի ուղարկած դեսպանները, ապա դեսպանախումբը բերելու է կայսեր հրամանը (τό τε σεπτὸν πρόσταγμα τοῦ κρατίστου καὶ ἁγίου μου αὐτοκράτορος = իմ ամենահզոր ու սուրբ կայսեր ամենահարգո հրամանը), այնպես էլ մեր (ἡμετέραν) ներկա նամակը, որից էլ կհմանաք, թե ինչ մեծ հրճվանքով ընդունեցինք ձեր դարձը (ἡμῶν μεταβολὴν): Անդրադառնալով իրենց մոտ դարձի

եկած հայերի խնդրին՝ պատրիարքը հավաստիացնում է, որ նրանց վրա ճշշում չի գործադրվել, նրանք ինքնական են հարել իրենց սուրբ եկեղեցուն: Այնուամենայնիվ, խոստանում է անմիջապես ձեռնամուխ լինել նրանց կառավարմանն ու անդորրության հաստատմանը, եթե դա ընդունելի է կաթողիկոսին: Պատրիարքն անհամբերությամբ սպասում է իր դեսպանների վերադարձին, որպեսզի վերջնական տեղեկություն ստանա հայերի ճշմարիտ դարձի և ուղղման մասին: **Վերջաբան ամփոփում.** Առաջարկում է առանց տարակուսանքի ի փառս Քրիստոսի լինել մի մարմին: Պահպանվել է նաև **Թղթավարտ հրածեշտի** բանաձևը «Ողջ լեր ի Տեր սիրելի կաթողիկոս, այր ամենապատիվ» ("Ερρωσο, έν Κυρίω άγαπητέ καθολικέ, άνερ τιμιώτατε)¹⁴⁹:

բ/ Երկրորդ նամակը ըստ **թղթառաջքի** հասցեագրված է Կիլիկիայի, Բսավրիայի և ամենայն Հայոց մեծ թագավորին (Υψηλότατε ρήξ Κιλικίας και Ίσαυρίας και πάσης Ἀρμενίας και περιπόθετε έξάδελφη του κρατίστου και άγιου μου αυτοκράτορος = Կիլիկիայի, Բսավրիայի և ամբողջ Հայաստանի մեծագույն թագավոր և իմ հզորագույն և սուրբ ինքնակալի ամենացանկալի եղբայր¹⁵⁰): **Մուտքում** պատրիարքը ('Η μετρίότης ήμων = մեր խոնարհություն) բարեմաղթանքներով, գոհությունն է հայտնում Աստծուն ու աղոթում, որ կայուն պահի նրա թագավորությունը (τήν ρήγικήν σου έξουσίαν = քո թագավորական իշխանությունը) և նա ավելի ջերմեռանդությամբ աջակցի ձեռնարկին, որը նաև իր մեծ փափագն է: **Քուն խնդրում** հայտնում է, որ թագավորի (τής ρήγικής σου έξουσίας) ուղարկած դեսպանից ստացել է նամակը, որի ընթերցումից ինքը (ή μετρίότης ήμων =

¹⁴⁹ Այս նամակի գիտական վերջին հրատարակությունը տե՛ս Das Register des Patriarchats von Konstantinopel. 1. Teil: Edition und Übersetzung der Urkunden aus den Jahren 1315-1331 / Herausgegeben von H. Hunger und O. Kresten, unter mitarbeit von Carolina Cupane, Walter Fink, Wolfram Hörander, Ewald Kislinger, Peter E. Pieler, Gerhard Trür, Reinhard Willvonseder, Herbert Wurm, Wien, 1981 [CFHB, vol. XIX/1], S. 590-598.

¹⁵⁰ Այստեղ բավական հետաքրքիր է, որ բանաձևի մեջ Կիլիկիայի Հայոց թագավորն անվանվում է Բյուզանդական կայսեր «ամենացանկալի եղբայր»:

մեր խոնարհությունը) և ներկա գտնվող սրբազան քահանայապետերը (οἱ... ἱερώτατοι ἀρχιερεῖς = սրբազան քահանայապետերը) իմացել են թագավորի (ή ῥηγική σου ἐξουσία) փափագի մասին, որով իրենց է դիմել Հայոց կաթողիկոսը (ὁ αἰδεσιμώτατος καὶ τιμιώτατος καθολικὸς τῆς ἐκκλησίας τῶν Ἀρμενίων = ամենահարգելի և ամենապատվավոր Հայոց եկեղեցու կաթողիկոսը), թագավորի (ή ῥηγική σου ἐξουσία) և ժողովրդի համաձայնությամբ: Թագավորին (ή ῥηγική σου ἐξουσία) վստահեցնում է, որ ընդունել են նրա (τῆς ῥηγικῆς σου ἐξουσίας) և կաթողիկոսի (τοῦ αἰδεσιμωτάτου καὶ τιμιωτάτου καθολικοῦ) խնդրանքը, քանի որ իրենք բարի հովվի աշակերտներ են և ցանկանում են բաժանվածների փրկությունը: Ձեր դարձով մեր եկեղեցին (τὴν ἡμετέραν ἀγίαν καὶ καθολικὴν ἐκκλησίαν = մեր սուրբ և տիեզերական եկեղեցին) շնորհակալ եղավ Աստծո ողորմությանը, քանի որ թոյլ չստվեց հետևել սխալ դրամաների և բաժանված մնալ իր եկեղեցուց: Այդ մասին գրեցինք կաթողիկոսին (τὸν αἰδεσιμώτατον καθολικόν), հիմա էլ Ձեզ (τὴν ῥηγικὴν σου ἐξουσίαν), որ գործի հաջող ելքից հետո կրառնանք Աստծուն հաղորդակից: Խնդիրը ավարտին հասցնելու համար ուղարկում է Միքայել Կալիկրիստեսին (πανσέβαστον τὸν σεβαστὸν οἰκέϊον τῷ κρατίστῳ καὶ ἀγίῳ μου αὐτοκράτορι, προκαθήμενον τοῦ θεοφυλάκτου κοιτῶνος τῆς ἀγίας βασιλείας αὐτου, κῦρ Μιχαὴλ Καλλικρηνίτης = ամենահարգելի սերաստոս, իմ ամենահզոր և սուրբ ինքնակալի բարեկամին, Աստծո կողմից պահվող սուրբ թագավորության պալատի գլխավոր, տեր Միքայել Կալիկրիստեսին), վանական Գարրիելին (τὸν τιμιώτατον ἐν ἱερομονάχοις κῦρ Γαβριὴλ = ամենապատվավոր վանական տեր Գարրիելին), այստեղի հայերի եպիսկոպոսին (τὸν ἐντιμώτατον τῶν ἐπίσκοπον τῶν ἐνταῦθα Ἀρμενίων = այստեղի Հայոց ամենամեծահարգ եպիսկոպոսին¹⁵¹): Սենեկապետը (προκαθήμενος τοῦ βασιλικῶ κοιτῶνος = արքունական սենեկապետը) Ձեր դեսպանների խնդրանքով (οἱ αὐτόθεν

¹⁵¹ Ամենայն հավանականությամբ նկատի ունի ժամանակին Հայոց կաթողիկոսին ենթակա, Կ. Պոլսի քաղկեդոնականություն ընդունած եպիսկոպոսին:

ἐλθόντες ἀποκρισιάριοι) գնալու է նախ սուլթանի (տὸν σουλτάνου) մոտ, իսկ նրա հետ ուղարկվածները կբերեն քեզ (τὴν ῥηγικὴν σου ἐξουσίαν) կայսեր (τοῦ κρατίστου καὶ ἁγίου μου αὐτοκράτορος = իմ ամենահզոր և սուրբ կայսեր) հրովարտակը (τὸ σεπτὸν χρυσόβουλλον = երկրպագելի հրամանագիրը)¹⁵², ինչպես նաև պատրիարքի (ἡμετέραν) այս գրությունը, որոնցով փոխանցել են իրենց ուրախությունը հայերի դարձի գալու համար: Դեսպանագնացները հաղորդելու են նաև այլ պատգամներ: Շեշտում է, որ իրենց մոտի հայերը դարձի են եկել առանց բռնության: Թագավորին (ἡ ῥηγικὴ σου ἐξουσία = քր թագավորական իշխանությանը) հասած լուրերը չեն համապատասխանում իրականությանը: **Վերջաբան-ամփոփում.** Անդրադարձնալով դարձի եկածների խնդրին՝ պատրաստակամություն է հայտնում ստանձնել նրանց կառավարումը, եթե դա հաճելի լինի թագավորին: Մտախոհ է, որ Աստծո հաճությամբ շուտափույթ տեղի ունենա եկեղեցական միությունը Աստվածամոր միջնորդությամբ¹⁵³: Ինչպես երևում է **հրաժեշտի թղթավարտ** բանաձևը՝ թվագրման հետ միասին, մեզ չի հասել:

Հայոց կաթողիկոսին ուղղված նամակի դիմումի բանաձևում վերջինս անվանված է «Αἰδεσιμώτατε, τιμώτατε, εὐλαβέστατε καθολικὲ τῆς ἐκκλησίας τῶν Ἀρμενίων» (= Ամենահարգելի, ամենապատվավոր և ամենաբարեպաշտ կաթողիկոս Հայոց եկեղեցու), իսկ հրաժեշտի բանաձևում՝ *ἀγαπητὲ (սիրելի), ἀνερ τιμώτατε* (=այր ամենապատիվ): Բավական ինքնատիպ է Հայոց Լևոն Դ թագավորին գրած թղթի դիմումի բանաձևը *ὑψηλότατε ῥήξ Κιλικίας καὶ Ἰσαυρίας καὶ πάσης Ἀρμενίας καὶ περιπόθητε ἐξάδελφε τοῦ κρατίστου μου*

¹⁵² Այսպես է անվանվում հավանաբար թագավորական նոտարատանը գրված փաստաթուղթը, որը մեզ չի հասել:

Другой тип именованяй – топонимы, относящиеся исключительно к Киликийской Армении. Это именованя представляют собой или содержат в себе названия главных городов Киликии. Наиболее распространенные примеры: *ṭarsūs* /Тарс (طرسوس)⁴⁹, *Sīs*/Сис (سيس)⁵⁰, а также *wilāyat-i sīs* «Область Сис» (ولایت سیس)⁵¹, *mulk-i sīs* «Государство Сис» (ملک سیس), *diyār-i ṭarsūs* (طرسوس دیار)⁵² примененные в качестве именованяй для всей страны. В одном случае дается гибридное именоване для всей страны: *armaniyya wa ṭarsūs* (ارمنیه و طرسوس), т.е. «Армения и Тарс»⁵³.

2. Города и крепости

В анатолийских источниках присутствуют упоминания на киликийские города и многие крепости (ед.ч. قلعه), не все из которых удастся идентифицировать. Как сказано выше, наиболее часто в источниках встречаются именованя крупнейших городских центров Киликийской Армении – Сиса (سيس, греч. Σίσιον, Միս)⁵⁴ и Тарса (طرسوس, греч. Ταρσός, арм. Տարսնո)⁵⁵. В одном из источников область Караман (قرامان) обозначена как часть Киликийского царства⁵⁶.

В сельджукских источниках упоминается целый ряд киликийских армянских крепостей и замков. Ниже эти киликийские крепости перечисляются в алфавитном порядке. Локализации

⁴⁸ Ta'rikh, p. 94.

⁴⁹ Ibn Bibi (AS), p. 160; Ibn Bibi (Houtsma), p. 60.

⁵⁰ Ibn Bibi (AS), p. 162, 169; Ibn Bibi (Lugal-Erzi), p. 228, 235.

⁵¹ Ibn Bibi (AS), p. 163, 545; Ibn Bibi (Lugal-Erzi), p. 229; Ibn Bibi (Houtsma), p. 249.

⁵² Ta'rikh, p. 113.

⁵³ Ta'rikh, p. 94.

⁵⁴ Ibn Bibi (AS), p. 119; Ibn Bibi (Lugal-Erzi), p. 170.

⁵⁵ Ibn Bibi (AS), p. 160; Ibn Bibi (Lugal-Erzi), p. 224.

⁵⁶ Aqсарayi, p. 32. О тюрках караман в контексте сельджукско-килийских отношений см.: Yildiz S. N. Reconceptualizing..., p. 114–119.

крепостей даны преимущественно по известному исследованию Х. Хелленкемпера и Ф. Хильда, в котором читатель найдет подробное описание как сведений письменных источников о локализованных крепостях, так и сводку археологических данных⁵⁷.

Ālāra (الاره)⁵⁸ – Алар (Ալարա), эта крепость упомянута в «Коронационном списке» Смбата Спарапета⁵⁹. Крепость располагалась в районе современного поселка Alara (на восточном берегу реки Ulugüneý Çayı), однако точная ее локализация затруднительна⁶⁰.

Anāmūr (انامور)⁶¹ – Анамур (Անամուր, греч. Ἀνεμούριον); эта крепость упомянута в «Коронационном списке» Смбата Спарапета⁶². Крепость локализуется как современный Eski Anamur на северо-восточном крае мыса Анамур (32⁴⁰ 36⁰⁰)⁶³.

Andūshij/Andawshij (اندوشيج)⁶⁴ – Андавшч (Անդրշիշ, греч. Ἀντιόχεια ἐπὶ Κράγγω); эта крепость упомянута в «Коронационном списке» Смбата Спарапета⁶⁵. Крепость надежно локализуется – сегодня это руины у Güney Köy, в 20 км юго-восточнее Gazıraşa (32²⁰ 36⁰⁰)⁶⁶.

⁵⁷ Hellenkemper H., Hild F. Kilikien und Isaurien (Tabula Imperii Byzantini, Band 5), Wien, 1990.

⁵⁸ Ibn Bibi (AS), p. 249; Ibn Bibi (Houtsma), p. 103; Ibn Bibi (Duda), S. 109.

⁵⁹ Le Connétable Sempad. Chronique du royaume de la Petite Arménie // Recueil des historiens des Croisades, documents arméniens, t. 1, Paris, 1869, p. 638; Edwards R.W., The Fortifications of Armenian Cilicia, Washington, 1987, p. 279.

⁶⁰ Hellenkemper H., Burgen der Kreuzritterzeit in der Grafschaft Edessa und im Königreich Kleiarmenien, Studien zur historischen Siedlungsgeographie Südost-Kleinasiens (Geographica historica Band 1), Bonn, 1976, S. 17.

⁶¹ Ibn Bibi (AS), p. 343. Идентификация топонима принадлежит Г. Дуде: Ibn Bibi (Duda), S. 142 Anm. d).

⁶² Le Connétable Sempad, p. 638.

⁶³ Hellenkemper H., Hild F. Kilikien und Isaurien, S. 187–191.

⁶⁴ Ibn Bibi (AS), p. 343; Ibn Bibi (Houtsma), p. 142 (اندوشج). Идентификация топонима принадлежит Г. Дуде: Ibn Bibi (Duda), S. 142 Anm. c).

⁶⁵ Le Connétable Sempad, p. 638; Edwards R. W., The Fortifications, p. 279.

⁶⁶ Hellenkemper H., Hild F., Kilikien und Isaurien, S. 191–193.

Janjīn (جنجين)⁶⁷ – Джанджи (Джанджи); эта крепость упомянута в «Коронационном списке» Смба́та Спарапета⁶⁸. Крепость, по-видимому, идентична замку Капнисперти, которая в османские времена была известна Çinçin Kalesi, а ныне – как Meryemçi Kalesi (36²⁰ 37⁴⁰)⁶⁹.

Kānjīn (كانجين)⁷⁰ – Канчи (Чашуш); эта крепость упомянута в «Коронационном списке» Смба́та Спарапета⁷¹. Крепость находилась рядом с Джанджи и локализуется как современный Çukurhisar в 22 км от Göksun (36²⁰ 37⁴⁰).

Kalūnūrūs (كلونوروس)⁷² – Калонорос (Чашушшшшшшш, греч. Καλονόρος «Красивая гора»). Эта крепость большую часть византийского времени была известна как Κορακήσιον. В другом персидском источнике крепость названа *Kanṭālū* (کنطالو)⁷³ ← итальянского Candelore (Cardelor, Cardelloro). Эта крепость упомянута в «Коронационном списке» Смба́та Спарапета⁷⁴. После захвата крепости сельджуками она была переименована в 'Alāiyya (Алайя), а сейчас известна как Алания.

Māfaghā (مافاغا)⁷⁵ – возможно, Манавгат (Шашушшшшшш, греч. Μάναυα, Μάναυα), крепость севернее Алара; эта крепость упомянута в «Коронационном списке» Смба́та Спарапета⁷⁶.

Prākana (پراکنه)⁷⁷ – Пракана (Πρακάνη, греч. Πρακάνη); эта крепость упомянута в «Коронационном списке» Смба́та

⁶⁷ Ibn Bibi (AS), p. 334 (جنجين); Ibn Bibi (Houtsma), p. 138; Ibn Bibi (Duda), S. 140.

⁶⁸ Le Connétable Sempad, p. 636; Edwards R. W. The Fortifications, p. 279.

⁶⁹ Hellenkemper H., Hild F., Kilikien und Isaurien, S. 287–288.

⁷⁰ Ibn Bibi (AS), p. 165; Ibn Bibi (Lugal-Erzi), p. 230.

⁷¹ Le Connétable Sempad, p. 636; Edwards R.W., The Fortifications, p. 279.

⁷² Ibn Bibi (AS), p. 235–248 (ошибочная диакритика на p. 243 – كلونوروس , на p. 250 – كلونوروس); Ibn Bibi (Houtsma), p. 97–102; Ibn Bibi (Duda), S. 104–109.

⁷³ Ta'rikh, p. 89.

⁷⁴ Edwards R. W. ,The Fortifications, p. 279.

⁷⁵ Ibn Bibi (AS), p. 343; Ibn Bibi (Houtsma), p. 142. См. идентификацию в: Ibn Bibi (Duda), S. 142 Anm. b).

⁷⁶ Le Connétable Sempad, p. 638; Edwards R. W., The Fortifications, p. 279.

Спарапета⁷⁸. Крепость находилась в регионе Селевкии, однако точно не локализуется; возможно, она идентична современным Meydan Kalesi или Takkadin⁷⁹

Sikiya (سيكيه)⁸⁰ – Сике (Սիկ, греч. Σικαί); эта крепость упомянута в «Коронационном списке» Смбата Спарапета⁸¹. Крепость локализуется как современное Softa Kalesi в 15 км северо-восточнее Анамура (33⁰⁰ 36⁰⁰)⁸².

Два топонима не поддаются идентификации. Во-первых, *Khanjin* (خنجين)⁸³ взятый сельджуками в ходе кампании 1216 г. (см. выше Раздел 3) исследователи идентифицируют с крепостью Джанджи, захваченной в 1225 г. (см. выше Раздел 3); по этому толкованию, крепость Джанджи бралась дважды с интервалом в девять лет⁸⁴. Однако в 1216 и в 1225 г. боевые действия разворачивались на разных географических пространствах. Можно осторожно предположить, что Ханджи и Джанджи – две разные крепости, но эта гипотеза требует дальнейшей проверки. Во-вторых, не удалось надежно идентифицировать топоним *Nikiya/Nigiya* (نيكيه ?, см. Раздел 3.1225)⁸⁵. Единственно графически и фонетически близким топонимом является Neghir – армянский замок между Canamella и Portella, ныне Mancinik Kalesi⁸⁶, однако возможность такой идентификации требует дальнейшей проверки.

Нельзя не отметить любопытное совпадение – из 11 идентифицированных крепостей, упомянутых в сельджукских источниках,

⁷⁷ Так в: Oğuznama, Berlin, f. 327; Ibn Bibi (AS), p. 547 (برابكا); Ibn Bibi (Houtsma), p. 250 (برابكا); Ibn Bibi (Duda), S. 239 Anm. c).

⁷⁸ Le Connétable Sempad, p. 637; Edwards R. W., The Fortifications, p. 279.

⁷⁹ Hellenkemper H., Hild F., Kilikien und Isaurien, S. 385.

⁸⁰ Ibn Bibi (AS), p. 343 (سيكيه).

⁸¹ Le Connétable Sempad, p. 638; Edwards R.W., The Fortifications, p. 279.

⁸² Hellenkemper H., Hild F., Kilikien und Isaurien, S. 421–423.

⁸³ Ibn Bibi (AS), p. 164 и сл. (حنجين); Ibn Bibi (Lugal-Erzi), p. 229 и сл.; Ibn Bibi (Duda), S. 71.

⁸⁴ Cahen, La Turquie, p. 72.

⁸⁵ Ibn Bibi (AS), p. 343.

⁸⁶ Hellenkemper H., Hild F., Kilikien und Isaurien, S. 365.

восемь, т.е. большинство, названы в известном «Коронационном списке» из хроники Смбата Спарапета. Интересно также, что персидский источник в названиях некоторых крепостей, по всей видимости, воспроизводит армянский родительный падеж для этих названий, как, например, в *Janjin* ← Ծախնոյն и *Kānjin* ← Կախնոյն.

5. Правители и население

1. Именования армянских царей

Базовым именованим армянских царей Киликии в мусульманской анатолийской письменности был термин *تکور* (t-k-w-r) и его вариант *تکفور* (t-k-f-u-r), которые понимались как титул верховного владыки. Термины *تکور* (t-k-w-r) и *تکفور* (t-k-f-u-r) восходят к арм. բաշտաբար «царь», генетически связанному с перс. تاجور (*tājwar*) «венценосец, царь». Возможно, в персо-, арабо- и тюркоязычной Анатолии и на сопредельных мусульманских территориях, хорошо знакомых с армянской традицией и языком, изначально появилась форма *تکور* (t-k-w-r), которая произносилась как *тагавар* → *тагвар* (т.е. в современной графике *تگوار*) → *таквар* (*تکور*). Это удостоверяется, в частности, предпочтением именно этой формы в хронике Ибн Биби⁸⁷. Однако можно предположить, что уже достаточно скоро за термином закрепился новый графический и фонетический вариант *تکفور* (*takfūr*), фиксируемый в персидской анатолийской и ранне-османской литературе XIV–XV вв., который и вошел в современный персидский, турецкий и арабский языки. Персоязычные анатолийцы уже в XIII в. для титула *takwar/takfūr* могли употреблять арабизированное множественное число *تکافره* (*takāfira*), как это фиксируется в тексте Ибн Биби. Однако это множественное

⁸⁷ Ibn Bibi (AS), p. 39, 116, 119 и др.; Ibn Bibi (Lugal-Erzi), p. 55, 166–167, 170 и др.

число явно не было устоявшимся, ибо переписчики текста Ибн Биби не поняли его, ошибочно записав его как *تکاکیرہ* (*takākira*)⁸⁸.

Следует отметить, что титул *такфур* использовался в письмах мусульманских государей к киликийским царям как официальное именование. Например, в малоизвестном в науке сборнике формуляров для официальной переписки «Дастуре» Мухаммада Нахчивани, который был составлен в 60-е гг. XIV в., даются формуляры, восходящие к эпохе Ильханов. Так, Мухаммад Нахчивани сообщает, что «к христианам [*'isāwīyyān*] из *такфуров* Сиса, грузинам, «назаретянам» [*naṣārī* – другое именование христиан – *Р.Ш.*], армянам и франкам таким образом следует писать: “Такфуру Сиса, который является падишахом и главой той общины, василевсу, благороднейшему Файлакусу, славе дома Александра, прибежищу дома Мессии, *такфуру* Сиса” ...»⁸⁹. Как мы видим, титул «такфур» использовался в качестве официального обращения, по крайней мере, по отношению к армянским царям.

Интересно также, что титулы *takwar/takfūr* уже с конца XIII–нач. XIV в. стали прилагаться анатолийскими и ближневосточными мусульманскими авторами к византийским императорам Константинополя, Трапезунда, а также и к более мелким греческим христианским владетелям Анатолии.

Несомненно, что в мусульманской Анатолии знали киликийских царей по именам. Однако в историографическом narra-

⁸⁸ *Ibn Bibi (AS)*, p. 76 (ошибочно – *تکاکیرہ*); *Ibn Bibi (Lugal-Erzi)*, p. 110 (ошибочно – *تکاکیرہ*; ср.: *Ibn Bibi (Houtsma)*, p. 24.

⁸⁹ Концовка формулы выглядит как «великому теру [*tēr*], высокочтимому господину христиан, образцу епископов, предводителю общины Иисусовой – Тер Давиду...». Формула эта вызывает определенное сомнение – совершенно очевидно, что в ней смешано два типа *inscriptio*. В начале ее, бесспорно, подразумевался армянский царь, однако вторая ее половина, по всей видимости, предназначалась для армянских католиков или даже менее значительных иерархов армянской церкви (Мухаммад ибн Хиндушах Нахчивани, *Дастур ал-китаб фи та'йин ал-маратиб / Критический текст, предисл. указат. А.А. Ализаде, М. 1976, с. 391–392*).

тиве происходит следующая интересная трансформация. Для событий начала XIII в. мусульманские авторы киликийским царем называют Лифуна, т.е. царя Левона I, давая это имя в следующей орфографии: ليفون (*lifūn*)⁹⁰ и ليفيون (*lifiyūn*)⁹¹. Однако это именование в историографии превращается в нарицательное: «Лифунами» звали не только тех царей, которые носили имя Левон, но и регент Костандин Пайл, и Хетум. Такого рода трансформация собственного имени царя в имя нарицательное, прилагаемое к его преемникам, хорошо известно в историографии Восточного Средиземноморья. Приведем несколько примеров. В XIII в. нарицательным именем для трапезундских императоров стало «Гидон» (← Γίδων) – патроним трапезундского императора Андроника I Гида (1222–1235): Рубрук и Аксарайи так именовали трапезундского императора Мануила I Великого Комнина (1238–1263)⁹². Точно так же в мусульманской историографии для никейских императоров и ранних Палеологов стало нарицательным имя Ласкарис (الاشكري و لشكري)⁹³.

Интересно, что помимо титула *таквар*, в эпоху монгольских завоеваний Анатолии и Передней Азии, к киликийским царям Ибн Биби прилагает именование *bāyl/pāyl* Сиса – بایل سيس⁹⁴. Это словоупотребление зафиксировано для событий 1243 и 1245 г. (см. Раздел 3). Если в первом случае можно допустить, что подразумевался Костандин Пайл, то для второго случая, скорее всего, имелся в виду сам Хетум I. Очевидно, что именование *bāyl/pāyl* у Ибн Биби выводится из арм. ւայլ *payl*, в частности, именование Костандина отца Хетума I, который стал *пайлом*, т.е. регентом в Киликийском царстве в 1219 г. Возможно, титул

⁹⁰ Rawandi, p. 463–464; Ibn Bibi (AS), p. 39–40; Ibn Bibi (Lugal-Erzi), p. 55–56, 165–166; Ibn Bibi (Houtsma), p. 9; Ibn Bibi (Duda), S. 23; Ta'rikh, p. 113.

⁹¹ Ta'rikh, p. 89.

⁹² Janssens E., Trébizonde en Colchide, Bruxelles, 1969, p. 71; Aqsarayi, p. 83 (غيدان).

⁹³ См., например: Шукуров Р. М., Великие Комнины и Восток (1204–1461), СПб., 2001, с. 135–138.

⁹⁴ Ibn Bibi (AS), p. 522, 547.

пайл Костандина был перенесен и на его сына Хетума I. При этом, интересно, что Ибн Биби рассматривал титулы *пайл* и *таквар* как синонимичные: в сюжете о событиях 1245 г. оба эти два именованя использованы как взаимозаменяемые.

2. Население

Наиболее распространенным именованием населения Киликийской Армении был этноним *arman* (ارمن)⁹⁵. Войско именовалось «армянским»: *lashkar-i armanī* (لشکر ارمنی)⁹⁶. Особо отмечаются армянские всадники и лучники⁹⁷. Мусульманские авторы отмечали и присутствие латинян в Киликийской Армении, обозначая их как «франков» – *farang* и мн. ч. *farangān* (فرنگان و فرنگ)⁹⁸.

Повсеместно отмечалось немусульманское вероисповедание населения, что выражалось через стандартный для историографии термин «неверный» – *kāfir* и мн. ч. *kuffār* (کافر/کفار)⁹⁹. Следует отметить, что определение «неверный» для христиан в мусульманском историографическом дискурсе – вполне обычное, и даже терминологическое. В большинстве случаев, анатолийская мусульманская историография эмоционально нейтральна. Однако, временами христианская принадлежность населения эмоционально подчеркивалась уничижительными эпитетами, прилагаемыми обычно к христианам, как это было, например, у Раванди: он назвал армянского царя «проклятым» (*la'in*, لعین) и

⁹⁵ См., например: *Ibn Bibi (AS)*, p. 91; *Ibn Bibi (Lugal-Erzi)*, p. 133.

⁹⁶ См., например: *Ibn Bibi (AS)*, p. 166; *Ibn Bibi (Lugal-Erzi)*, p. 232.

⁹⁷ *Ibn Bibi (AS)*, p. 170, 341; *Ibn Bibi (Lugal-Erzi)*, p. 236.

⁹⁸ См., например: *Ibn Bibi (AS)*, p. 337, 339, 343, 522. О месте франков в социальной и военной истории Киликийской Армении с дальнейшей библиографией см., например: *Chevalier M.-A., L'ordre de l'Hôpital en Arménie cilicienne du début du XII^e siècle à la fin du règne de Het'oum I^{er}: Aspects généraux de la question // L'Église arménienne entre Grecs et Latins fin XI^e – milieu XV^e siècle / Éd. Isabelle Augé and Gérard Dédéyan, Paris, 2009, p. 79–106.*

⁹⁹ *Ibn Bibi (AS)*, p. 306; *Ibn Bibi (Lugal-Erzi)*, p. 230–231.

«собакой» (*sag*, سگ)¹⁰⁰. Такого рода эпитеты могли прилагаться и к византийским грекам, и к грузинам.

Наивысшего накала негативные эмоциональные оценки армян достигают в сочинении ал-Анави (см. выше Раздел 2.2), который развивал весьма непримиримую антихристианскую и анти-армянскую полемику, в целом не типичную для мусульманской анатолийской литературы. Хотя ал-Анави говорил обобщенно об армянском христианстве, очевидно, что в частности (а может и по преимуществу) он имел в виду именно киликийских армян. Возможно, что в своей критике армянского христианства он использовал темы и аргументы, почерпнутые из анти-армянской полемической традиции Византии и Грузии. По ал-Анави, армяне восприняли учение Иисуса в форме, искаженной неким законоучителем по имени Тийатус (طياطوس, *ṭiyāṭūs*)¹⁰¹.

3. Аристократия

Сельджукские историки знали, что представители аристократических родов армянской Киликии именуются *паронами*: بارون или, возможно, پارون (*bārūn* или *pārūn*) ← арм. ւարոն¹⁰². На страницы мусульманской анатолийской историографии попал несколько имен представителей киликийской знати.

Для событий 1221 г. (см. выше Раздел 3.1221/1) упоминается *кир* Варт (арм. Վարտ Վարդ), владевший Калоноросом. Для событий того же года упоминается его брат-монах, владевший замком Алар, однако источники не дают его имени (Раздел 3.1221/2). Следует отметить, что в «Коронационном списке» Смбата Спарапета *кир* Варт упомянут, а владельцем крепости Алар назван некий Михаил (Միխայլ)¹⁰³. Не исключено, что это и есть имя брата *кира* Варта.

¹⁰⁰ Rawandi, p. 464.

¹⁰¹ Подробный разбор см. в: Peacock A.C.S. An Interfaith Polemic..., pp. 239-246.

¹⁰² Ibn Bibi (AS), p. 166; Ibn Bibi (Lugal-Erzi), p. 232.

¹⁰³ Le Connétable Sempad, p. 638.

Для событий 1216 г. (см. Раздел 3) упомянуто несколько армянских аристократов: *парон* Васил (بارون فاسيل), *парон* Ошин (بارون اوشين), Ношин (نوшин) и коннетабль (کندهصطبل, без указания имени). Большинство из этих имен не поддается однозначной идентификации.

Надежно идентифицируется только *коннетабль* – тут несомненно имеется в виду знаменитый *коннетабль* Костандин (Շուրաշահի՛ն), отец Хетума, будущий регент Киликии.

Парон Васил (Վախիլ) упомянут в «Коронационном списке» 1198 г. как маршал (մարաշահիսլ) и владетель Ванера¹⁰⁴, однако не известно был ли он еще жив в 1216 г. Возможно, под «Василом» подразумевался Азил, правитель Оксена (Ազլ Օքսէնց), который, по словам Смбата Спарапета участвовал в событиях 1216 г. и был захвачен в плен сельджуками¹⁰⁵. Если это так, то имя Азила было не верно понято и истолковано персидским хронистом. Другой вариант – для 1220 г. Смбат Спарапет упоминает некоего *парона* Васи́ла, который помог Костандину Пайлу вернуть Тарс¹⁰⁶. Возможно, именно этот Васил упоминался в связи с событиями 1216 г.

Парон Ошин (Օշի՛ն) упомянут как князь Сивила в 1198 г.¹⁰⁷, но он ли подразумевался в событиях 1216 г. не известно. Не исключено, что тут имеется в виду другой Ошин, князь Ламброна (ум. 1218). Имя Ношин не поддается идентификации.

Есть еще два загадочных персонажа в сельджукских источниках, которые, по-видимому, принадлежали к киликийской знати. Ибн Биби предваряет рассказ о сельджукском походе в 1245 г. (Раздел 3) указанием на врагов мусульман в Киликии: «*таквар* Курихт и его названные братья» (کوريخت و اخوان خوانش) *таквар* (تکور)¹⁰⁸. Это указание пока не поддается толкованию.

¹⁰⁴ Le Connétable Sempad, p. 637.

¹⁰⁵ Le Connétable Sempad, p. 644.

¹⁰⁶ Смбат Спарапет, Летопись, с. 126.

¹⁰⁷ Смбат Спарапет, Летопись, с. 116.

¹⁰⁸ Ibn Bibi (AS), p. 544.

Интересно, что, по утверждению Ибн Биби, двое из князей крепостей были духовными лицами. В первом случае духовным лицом назван князь Алара и брат *кура* Варда, причем определение его духовного статуса дано описательно:

دامن از لذات جهان در کشیده بود و سلک جاده تبتل گزیده و بر اطلس لباس پلاس اختیار کرده...

«[Он] отверг мирские удовольствия, избрал путь посвящения себя [Богу] и атласную одежду [своей жизни] покрыл власяницей»¹⁰⁹.

Во втором случае князь крепости Джанджи назван – *kashish* (کشیش), т.е. «монах»¹¹⁰.

6. Дары Киликийской Армении

Мусульманские анатолийские источники неоднократно упоминают о дарах и дани армянских царей сельджукским государям. Часть номенклатуры этих даров была вполне стандартной, общей для других христианских и мусульманских правящих дворов. Однако в другой своей части, возможно, эти дары носили специфический характер, присущий именно киликийскому царскому двору.

Среди даров могли быть дорогостоящие животные: «арабские и франкские кони» (1211–1213)¹¹¹, «отличные лошади с седлами, украшенными драгоценными камнями» (1216)¹¹², «мулы с легким ходом, как у куропатки, и [по красоте] похожие на павлинов» (1216)¹¹³, «быстролётные ястребы и соколы»¹¹⁴.

¹⁰⁹ Ibn Bibi (AS), p. 249.

¹¹⁰ Ibn Bibi (AS), p. 339–340; Ibn Bibi (Houtsma), p. 140.

¹¹¹ asbān-i tāzi wa farāngī: Ibn Bibi (AS), p. 119; Ibn Bibi (Lugal-Erzi), p. 170.

¹¹² asbān-i nāmdār bā zin-i pūr nigīn: Ibn Bibi (AS), p. 169; Ibn Bibi (Lugal-Erzi), p. 235.

¹¹³ astarān-i rahwār-i kabkraftār-i tāwusdidār: Ibn Bibi (AS), p. 169; Ibn Bibi (Lugal-Erzi), p. 235.

¹¹⁴ bāz-u shāhīn-i tizparwāz: Ibn Bibi (AS), p. 169; Ibn Bibi (Lugal-Erzi), p. 235.

Упоминается в источниках товары из текстиля, а именно, сукно: «суконная [красная?] обувь» (1211–1213)¹¹⁵, «суконные товары» (1216)¹¹⁶.

Киликийская Армения поставляла золото и серебро в виде посуды и звонкой монеты: «золотые и серебряные сосуды» (1211–1213)¹¹⁷, «золотая и серебряная посуда для пиршеств» (1216)¹¹⁸, «кошельки с перперами без числа»¹¹⁹. В качестве дани армянские цари могли поставлять сельджукам золотые «динары»¹²⁰.

В Киликийской Армении были доступны «франкские» товары. Так, во время пребывания султана Гийас ал-Дина Кайхусрава I при дворе Левона I (Раздел 3.1196), киликийский царь одарил султана «ходовыми товарами Фарангистана»¹²¹.

В одном случае упоминается о поставке киликийским двором «прекрасноликих рабынь франкского племени» (1216)¹²².

¹¹⁵ *filārḥā-i saqīrlāt*: *Ibn Bibi (AS)*, p. 119; *Ibn Bibi (Lugal-Erzi)*, p. 170. Оба термина вызывают некоторые затруднения в толковании. *Filār* (فيلار), по всей видимости, идентичен осм. *filar* (فيلار), которое Рэдхауз переводит как "a kind of light, high-heeled shoe". В то же время, персидский поэт XV в. Низам ал-Дин Кари, автор известного «Диван-и албаса» («Стихи об одежде»), упоминает *chikma-i saqīrlāt*, подразумевая сапоги с верхом из сакирлата, сукна (см. **Низам ал-Дин Махмуд Кари Йазди**, *Диван-и албаса*, Стамбул, 1303). Сакирлат – родственен французскому *écarlate*, которое в средневековье обозначало сукно, окрашенное в красный цвет кашенилью. Возможно, Ибн Биби имел в виду именно красную матерчатую обувь.

¹¹⁶ *aḥmāl-i saqīrlāt*: *Ibn Bibi (AS)*, p. 169; *Ibn Bibi (Lugal-Erzi)*, p. 235.

¹¹⁷ *awānī-i zar-u nuqra*: *Ibn Bibi (AS)*, p. 119; *Ibn Bibi (Lugal-Erzi)*, p. 170.

¹¹⁸ *ālāt-i majlis az zarrīn-u simīn*: *Ibn Bibi (AS)*, p. 169; *Ibn Bibi (Lugal-Erzi)*, p. 235.

¹¹⁹ *badrahā-i parpara bish az shumār*: *Ibn Bibi (AS)*, p. 169; *Ibn Bibi (Lugal-Erzi)*, p. 235.

¹²⁰ *Ibn Bibi (AS)*, p. 170; *Ibn Bibi (Lugal-Erzi)*, p. 236.

¹²¹ *Ibn Bibi (AS)*, p. 40; *Ibn Bibi (Lugal-Erzi)*, p. 56.

¹²² *kanizakān-i khūbrūy-i farangnāzhād*: *Ibn Bibi (AS)*, p. 169; *Ibn Bibi (Lugal-Erzi)*, p. 235.

THE IMAGE OF CILICIAN ARMENIA IN ANATOLIAN SELJUK WRITTEN SOURCES

The paper deals with the image of Cilician Armenia in Anatolian written sources of the thirteenth and fourteenth centuries, including the historical writings of Rawandi, Ibn Bibi, Aqsarayi, anonymous "Tarikh-i Ali Saljuq", as well as the hagiographical work of al-Anawi. All these text have been written in the Persian language. I will speak about the following aspects of the image: terminology relating to the Cilician Armenian Kingdom, its rulers and population; the physical and political geography of Cilician Armenia as it was reflected in Anatolian Seljuk texts; I will try to reconstruct a virtual map of settlements which were known to Seljuk writers; ethnic structure of Cilician lands (Armenians, Greeks and Franks); production and goods of Cilicia.

2. ՌՈՒՔԻՆՅԱՆ ՏՈՀՄԸ ԱՐԱՔ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ՎԱՀԱՆ ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ

ԺԱ դարի վերջին քառորդին՝ արշավանքների, զանգվածային տեղաշարժերի ու գաղթերի հետևանքով Արևելյան Միջերկրականի երկրների էթնիկական պատկերը հիմնավորապես փոխվեց: Ժողովրդագրական փոփոխությունների մեջ կարևոր նշանակություն ունեցավ սելջուկ թյուրքերի ներխուժումը տարածաշրջան, ապա նաև եվրոպացի խաչակիրների հայտնվելը Մերձավոր Արևելքում: Ոչ պակաս նշանակալի էր պետականությունը կորցրած և ավերիչ հարձակումներից խուսափող հայության զանգվածային գաղթը Մեծ Հայքից դեպի արևմուտք և հարավ-արևմուտք:

Ընդամենը մեկ-երկու տասնամյակի ընթացքում Փոքր Ասիայի, Ասորիքի և Վերին Միջագետքի մի խոշոր հատվածի վրա հայ տարրը դարձավ մեծաթիվ կամ գերակշռող. ստեղծվեց հայկական իշխանությունների մի մեծ ցանց: Հատկապես Եփրատացիքում ու Կիլիկիայում մեծ թվով հայեր հաստատվեցին: Այդ երկու երկրամասերը ստացան հայկական դիմագիծ, մասամբ կամ ամբողջովին հայացան:

Հայությունը հայտնվել էր նոր երկրում, նոր միջավայրում, նոր հարևանների կողքին: Բնականաբար հայ մատենագրություն պիտի մուտք գործեին նոր անուններ, երկրներ, ազգեր: Նույնիսկ այն ժողովուրդները, որոնց հետ հայերը դարեր շարունակ շփումներ էին ունեցել, նոր վայրում այլ դիտանկյունից պիտի գնահատվեին: Նույնը վերաբերում էր հարևան ժողովուրդների՝ հույների, ասորիների, արաբների, լատինների և այլոց կողմից նորաստեղծ հայաշխարհի հանդեպ ունենալիք վերաբերմունքին. ինչպե՞ս կոչել այդ երկիրը, այդտեղ ապրող ժողովրդին, ի՞նչ անուն տալ այդ նոր երկրի իշխողներին:

Հենց այս վերջին հարցին պատասխանելու համար փորձենք քննել հիշյալ դարաշրջանի պատմական երկերը՝ հիմնականում անդրադառնալով արաբալեզու հեղինակներին: Բանն

այն է, որ իրենց ունեցած տարբերություններով հանդերձ մյուս պատմիչների (հայ, բյուզանդացի, ասորի, լատին) գործածած անվանումները Հայկական Կիլիկիայի առաջնորդների կամ իշխող տոհմի վերաբերյալ միմյանցից շատ չեն տարբերվում: Այլ է պարագան արաբական կամ արաբալեզու պատմագրության դեպքում:

Արաբալեզու պատմիչների և այլ պատմագիրների միջև առաջին ակնառու տարբերությունն այն է, որ արաբական երկերում հազվադեպ է հանդիպում «Կիլիկիա» բառը¹, մինչդեռ մյուս բոլոր աղբյուրներում, հետևելով հռոմեական կամ բյուզանդական ավանդույթին, «Կիլիկիա»-ն որպես երկրի անվանում լայնորեն օգտագործվում է, թեև զուգահեռաբար տրվում են նաև այլ անվանումներ՝ օր. «Հայաստան», «Հայոց երկիր» և այլն:

Երկրորդ ակնառու տարբերությունը հետևյալն է. Կիլիկիայի մասին խոսելիս, արաբ պատմիչները չեն հիշատակում երկրում իշխած երկու հայտնի տոհմերից (Ռուփինյաններ և Հեթումյաններ) և ոչ մեկին²: Փոխարենը հաճախակի կիրառվում է «Իբն Լևոն» բառակապակցությունը: Վերջինիս հանդիպում ենք ԺԲ-ԺԴ դարերի հեղինակներ Իբն ալ-Կալանիսիի, Իբն Շադդադի, Իբն ալ-Իբրիի (Բար Հեբրեսու), Իբն ալ-Ասիրի, Քամալ ալ-Դին Իբն ալ-Ադիմի, Աբու Շամայի, Աբու-լ-Ֆիդայի, ալ-Չահաբիի, Իբն ալ-Դավադարիի և այլոց երկերում:

Նախքան պարզելը, թե հատկապես որտեղից է ծագում և ինչ է նշանակում այս «Իբն Լևոն» անվանումը, տեսնենք, թե ինչպես էին կոչում հայերի բնակեցրած նոր երկիրը և նրա իշխողներին քրիստոնյա պատմիչները՝ սկսելով հենց հայերից:

Կիլիկյան Հայաստանի իշխողները հայ մատենագրության

մեջ

¹ Տե՛ս **Ibn Abd al-Dahir**, *Al-Rawd al-zahir*, Riyad, 1976, p. 439.

² Այս առումով թերևս բացառություն է Քամալ ալ-Դին Իբն ալ-Ադիմի հաղորդումը որն իր պատմական երկում խոսելով 1137 թ. դեպքերի մասին մի տեղ Լևոն իշխանին կոչում է «Լաուն իբն Ռուփալ» (Լևոն իբն Ռուփեն), որը կարող է թարգմանվել նաև որպես «Լևոն Ռուփինյան» (**Kamal al-Din Ibn al-Adim**, *Tarikh Halab*, v. II, Damascus, 1954, p. 262):

Հայ միջնադարյան մատենագրության մեջ Կիլիկյան Հայաստանի թագավորներին տրվող անվանումները էապես չեն տարբերվում Մեծ Հայքի տիրակալների տիտղոսներից:

Ի տարբերություն ԺԹ-ԻԱ դարերի գիտական աշխատանքների, որտեղ անշուշտ ճշգրիտ արտահայտվելու և Մեծ Հայքի հետ չչփոթելու նպատակով, մշտապես օգտագործվում է Կիլիկիա բառը (Կիլիկյան Հայաստան, Միսուան, Կիլիկիայի հայկական պետություն, Կիլիկիայի հայկական թագավորություն և համապատասխանաբար՝ Կիլիկիայի թագավոր, Կիլիկիայի իշխանապետ և այլն), միջնադարի թե՛ հայ և թե՛ օտար աղբյուրները, թիչ բացառությամբ, Կիլիկիա բառը նրա տիրակալի հիշատակման դեպքում չեն գործածում:

Նախ տեսնենք, թե հենց իրենք՝ հայ իշխաններն ու թագավորները, ինչ ինքնանվանում էին տալիս, կամ ինչպես էին ստորագրում փաստաթղթերի ու հրամանագրերի տակ: Այսպես օրինակ, Լևոն Ա Մեծագործը ստորագրել է «Լեւոն շնորհաւքն Աստուծոյ թագաւոր Հայոց» կամ լատիներեն՝ «Leo Dei gratia rex Armenorum»: Շեթում Ա-ը ստորագրել է «Շեթում Աստուծոյ շնորհաւքն թագաւոր հայոց»: Մի փոքր տարբեր են Լեւոն Բ-ի և Լեւոն Գ-ի ստորագրությունները՝ «Լեւոն ի Քրիստոս Աստուած հաւատացեալ թագաւոր ամենայն Հայոց»: Վերջապես Լևոն Դ-ը մի շնորհագրում ստորագրում է «Լեւոն ի Քրիստոս Աստուած հաւատացեալ. շնորհաւքն եւ ողորմութեան նորին թագաւոր ամենայն Հայոց», որը հին ֆրանսերենով գրվում է հետևյալ կերպ՝ «Leon, feal en Iesus-Crist, par la Grace et la misericorde de Dieu, roy de tous Armenis»³:

Դժվար չէ նկատել, որ, չնայած ոչ մեծ տարբերություններին, միապետներն իրենց կոչում են «Թագաւոր Հայոց» կամ «Թագաւոր ամենայն Հայոց»: Որևէ տեղ չի հիշատակվում այն տարածքի պատմա-աշխարհագրական անվանումը, որի վրա նրանք ամբողջությամբ կամ մասամբ իշխում էին (Կիլիկիա, Իսաւրիա, Եփրատացիք): Սա ունի իր բացատրությունը՝ կապ-

³ Բոռնազյան Ս. Վ., Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կիլիկյան հայկական պետությունում XII-XIV դարերում, Երևան, 1973, էջ 53:

ված այն բանի հետ, որ Ռուբինյանները հավակնում էին լինել Մեծ Հայքի արքայատոհմերի (Բագրատունիներ, Արծրունիներ) անմիջական շառավիղներն ու ժառանգորդները՝ միաժամանակ հավակնելով տիրել նաև Մեծ Հայքի տարածքներին կամ հանդիսանալ եթե ոչ քաղաքական, ապա առնվազն ազգային-բարոյական առաջնորդներ ողջ հայության համար: Սակայն այս խնդրի մանրամասների մեջ խորանալը դուրս է մեր նյութի շրջանակներից:

Սմբատ Սպարապետի «Տարեգրքի» վենետիկյան հրատարակության մեջ, օրինակ, Կոստանդին իշխանին (1095-1100) պատմիչը կոչում է «մեծ իշխանն Հայոց»⁴, նրա հաջորդ՝ Թորոսին (1100-1129)՝ «իշխանն Հայոց Թորոս, որդի Կոստանդեայ»,⁵ նրա եղբայր և հաջորդ Լևոնին (1129-1137)՝ «Լեւոն, որդի Կոստանդեայ...»⁶ «...յաշխարհն Կիլիկեցոց»⁷: Անդրադառնալով Թորոս Բ իշխանին (1145-1169)՝ Սմբատ Սպարապետը գրում է. «վախճանեցաւ մեծն Թորոս, որդի Լեւոնի...»⁸ : Եվ վերջապես Լևոն Մեծագործի թագադրման մասին՝ «...օծին զԼեւոն թագաւոր Հայոց»⁹, իսկ նրանց տոհմը անվանում է «...ազգն Ռովբինանց»¹⁰: ԺԳ դարի մի տարեգիր՝ Ստեփաննոս եպիսկոպոսը, գրում է. «...զվերջին թագաւորութիւնն Հայոց՝ որ ի Կիլիկիայ»¹¹: Հետաքրքիր է հաջորդ էջի հաղորդումը՝ «...և վերին տեսչութեամբն արծանի թագաւոր Հայոց յարևմուտս, Կիլիկիայ»¹²: Հերթում Բ-ի տարեգրության մեջ՝ «...պարոն Լեւոնն պսակեցաւ թագիւ և եկաց առաջին թագաւոր ի Կիլիկեա»¹³: Ան-

⁴ Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, Վենետիկ, 1956, էջ 112:

⁵ Նույն տեղում, էջ 134:

⁶ Նույն տեղում, էջ 159:

⁷ Նույն տեղում, էջ 162:

⁸ Նույն տեղում, էջ 189:

⁹ Նույն տեղում, էջ 208:

¹⁰ Նույն տեղում, էջ 211

¹¹ Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ., հ. I, կազմեց Վ. Հակոբյան, Երևան, 1951, էջ 35:

¹² Նույն տեղում, էջ 36:

¹³ Նույն տեղում, էջ 77:

հայտ դարի մի ժամանակագրության մեջ նշվում է. «Ի ՋՃԽԶ (1197) թվին թագաւորեաց Լեւոն Բագրատունեաց ի Կիլիկիա»¹⁴:

Լատին և հին ֆրանսիական աղբյուրներ

Լատին աղբյուրների մեջ կարևորագույնն անկասկած Վիլհելմ Տյուրացին է, կամ Գիյոմ Տյուրոսցին, որի ծավալուն աշխատության մեջ բավական հարուստ տեղեկություններ կան Կիլիկիայի մասին: Երկրի անվանումը նրա մոտ միշտ «Կիլիկիա» է՝ հետևելով ավանդական բյուզանդական անվանմանը: Ռուբինյան տոհմի առաջին երկու ներկայացուցիչների մասին նա ոչինչ չի հաղորդում: Առաջին հիշատակությունը վերաբերում է Թորոս Ա-ին՝ «Ազնվական և նշանավոր հայ իշխան Տավրոսը (Թորոսը), որն իր եղբոր՝ Կոնստանտինի (պետք է լինի՝ Լևոն) հետ Տավրոսյան լեռների լանջերին ուներ անմատչելի ամրոցներ և մեծ թվով խիզախ զինվորներ: Շնորհիվ իրենց հարստության և մեծ հզորության՝ այս ավատատերերը համարվում էին իրենց ժողովրդի թագավորները»¹⁵:

Անդրադառնալով Լևոն Ա իշխանապետին՝ լատին պատմիչը գրում է. «Կրտսեր Ջոսլինի մայրը քույրն էր Հայագգի Լևոնի՝ մի մարդու, որը շատ ազդեցիկ էր իր ժողովրդի մեջ»¹⁶: Քիչ չեն նաև որդու՝ Թորոս Բ-ի վերաբերյալ հիշատակությունները՝ «Կիլիկիայի հողում, Տարսոնի մոտ բնակվում էր մի հզոր հայ ազնվական, որի անունն էր Թորոս»¹⁷, «սուրհանդակներ ուղարկվեցին Թորոսի՝ մի շատ հզոր հայ իշխանի մոտ»¹⁸: Նույն ձևով լատին պատմիչը նկարագրում է Մլեհին. «Միլոն (Մլեհը)՝ մի շատ հզոր հայ իշխան...»¹⁹: Շատ տարբեր չէ նաև Ռուբեն Գ-ի

¹⁴ Նույն տեղում, էջ 385:

¹⁵ **William Archbishop of Tyre**, A history of deeds done beyond the sea, vol. 2, tr. and annot. by Emily Atwater Babcock and A. C. Krey, Columbia University Press, New York, 1943, t. I, p.416 (այսուհետև՝ **William of Tyre**).

¹⁶ **William of Tyre**, t. II, p. 52.

¹⁷ *Ibidem*, p. 253.

¹⁸ *Ibidem*, p. 266.

¹⁹ *Ibidem*, p. 384.

հիշատակումը. «Ռուբինուսը (Ռուբենը)՝ հայերի ազնվական առաջնորդը...»²⁰:

Հին ֆրանսերենով ԺԳ դարում գրված արժեքավոր աղբյուր է Էռնուլի և գանձապահ Բեռնարի «Ժամանակագրությունը»²¹: Այստեղ բացառիկ տեղեկություններ կան Կիլիկյան Հայաստանի և Երուսաղեմի թագավորության հարաբերությունների մասին: Վերջինս, ի տարբերություն Գիյոմ Տյուրսուցու, չի օգտագործում «Կիլիկիա» բառը, այլ բոլոր տեղերում կիրառում է «Հայաստան»-ը, ընդ որում երեք տարբեր ձևերով (Hermerie, Iermerie, Ermerie): Նա իր շարադրանքում քանիցս անդրադառնում է Թորոս Բ-ին, Ռուբեն Գ-ին, Լևոն Մեծագործին, բայց կարծես շարունակելով լատին պատմիչների ավանդույթը՝ որևէ տեղ չի հիշատակում նրանց տոհմը կամ զարմը: Այսպես, մի տեղ նշում է «...Լեռան (կամ Լեռների) Թորոսը, որը Հայաստանի տերն էր» (Thoros de la Montaigne, qui sires estoit d'Ermerie)²², նույնը բազմիցս կրկնվում է՝ "Li sire d'Ermerie"²³, "al segnor d'Ermerie"²⁴, որոնք նույն իմաստն ունեն «Հայաստանի տերը»: Պարզապես հին ֆրանսերենին հատուկ ձևով «Տերը» բառը այստեղ օգտագործվում է երեք տարբեր ձևերով (sire, segnor, signor): Վերջապես, Հայոց թագավորության հռչակումից հետո պատմիչն օգտագործում է "rois d'Ermerie"²⁵, այսինքն «Հայաստանի թագավոր» արտահայտությունը:

Ասորի պատմիչներ

Մեր ուսումնասիրության համար հատուկ նշանակություն ունեն ասորի պատմիչները: Բանն այն է, որ նրանք մի կողմից բաջ ծանոթ էին թե՛ հայ և թե՛ բյուզանդացի հեղինակների գործերին, մյուս կողմից սերտ առնչության մեջ էին արաբական

²⁰ Ibidem, p. 457.

²¹ *Chronique d'Ernoult et de Bernard le Trésorier*, par M. L. de Mas Latrie, Paris, 1871.

²² Ibidem, p. 27.

²³ Ibidem, p. 319.

²⁴ Ibidem, p. 320.

²⁵ Ibidem, p. 323, 411 etc.

միջավայրի հետ, իսկ նրանցից ոմանք նույնիսկ երկլեզու էին (օրինակ՝ Բար Հեբրեոսը կամ Իբն ալ-Իբրին) և կարող էին բաներ ու հասկացություններ փոխանցողների դեր կատարել:

Ընդհանրապես հայտնի փաստ է, որ ասորիներն ու ասորական մշակույթը հսկայական դեր է խաղացել որպես միջնորդ արաբական և այլ մշակույթների միջև, սկսած դեռ Ը-Թ դարերից: Բավական է հիշել Թ դարի սկզբին ծավալուն գրականության հունարենից արաբերեն թարգմանությունը Մամուն խալիֆայի նախաձեռնությամբ: Այն գրեթե ամբողջությամբ կատարեցին ասորիները: Հիշենք այն բազմաթիվ արաբերեն տեղանունները, անվանումներն ու բառերը, որոնց հիմքը ասորական է: Այսինքն, չունենալով քաղաքական ինքնուրույնություն Արաբական խալիֆայության պայմաններում՝ ասորիները, որպես ցեղակից սեմական ժողովուրդ, աստիճանաբար արաբացան, բայց դրա հետ մեկտեղ արաբական մատենագրությունը՝ այդ թվում և պատմագրությունը, հարստացրին բազմաթիվ փոխառություններով ու հասկացություններով: Բազմաթիվ տեղանուններ՝ այդ թվում Թադմոր (Պալմիրա), ալ-Ռուհա (Օրհայ) և այլն, ծագում են ասորական ձևերից: Հայկական Դվին քաղաքին արաբ մատենագիրների կողմից տրված Դաբիլ ձևը ևս անցել է ասորերենից: Սա ապացուցում է մի բան, որ անգամ Ասորիքից դուրս գտնվող քաղաքների ու երկրների անուններ և հասկացություններ արաբերենին անցել են ասորերենից:

ԺԲ դարի ասորի պատմիչներից է Անանուն Եղեսացին: Նրա տեղեկություններից մեզ հետաքրքրող նյութի վերաբերյալ ուշագրավ է հետևյալը. «Այդ ժամանակ Կիլիկիայում իշխում էր Ռուբենի որդի Լևոն անունով հայը, որը Ուտհայի իշխան կրտսեր Ժուլինի քեռին էր»²⁶: Հետագա շարադրանքում (որտեղ խոսում է բյուզանդական կայսր Հովհաննես Կոմնենոսի հայտնի արշավանքի և Լևոն իշխանի գերեվարման մասին) պատմիչը նրան կոչում է պարզապես «Լևոն», իսկ մի տեղ էլ «Լևոն հայ»:

²⁶ Անանուն Եղեսացի, Ժամանակագրություն (Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հտ. 12), թարգմ. Լ.Տեր-Պետրոսյանի, Երևան, 1982, էջ 79 (այսուհետև՝ Անանուն Եղեսացի):

Հայտնի է, որ Լևոնը Ռուբենի ոչ թե որդին էր, այլ թոռը (որդի Կոստանդինի), բայց ասորի պատմիչը պարտադիր չէ, որ սխալված լինի: Չի բացառվում, որ նա այստեղ նկատի ունի Լևոնի՝ Ռուբենի տոհմից սերված լինելը, այլ ոչ թե անմիջապես նրա որդին լինելը²⁷: Այս մեր ենթադրությունը հաստատվում է այլ էջերում՝ «Անարգաբայում և Կիլիկիայում իշխում էին հայերը՝ Ռուբենի որդիները»²⁸, «...Ռուբենի սերնդի հայերը, որոնք իշխում էին Կիլիկիայի գավառներում ու երկրի բերդերում...»²⁹:

Խոսելով 1205 թվականի դեպքերի մասին և անդրադառնալով Լևոն Մեծագործին՝ Անանուն Եդեսացին գրում է. «...Կիլիկիայի իշխան Լևոն հայը դիմեց Խոսրովշահին...»³⁰: Այլ տեղերում օգտագործվում է նաև «Թորոս հայ» և այլն: Կիլիկիայի իշխողներին անվանելու այս ձևը՝ «Թորոս Հայը», «Լևոն Հայը», կամ «Հայազգի Թորոսը», «Հայազգի Լևոնը», հանդիպում ենք նաև արաբ պատմիչների մոտ:

Ասորի պատմիչները՝ այդ թվում և Անանուն Եդեսացին, հայերի, կամ հույների պես շարունակում են երկիրը կոչել Կիլիկիա. «...այնտեղից նրանք մտան Կիլիկիո երկիրը»³¹, «Կիլիկիայի իշխանը, որի անունն էր Մլեհ»³²:

ԺԲ դարի պատմիչ է նաև նշանավոր Միքայել Ասորին, որը Կիլիկիայի մասին հարուստ տեղեկություններ հաղորդող և քաջատեղյակ մատենագիրներից է: Նա ևս երկիրը կոչում է «Կիլիկիա», իսկ նրա իշխողներին ընդհանրական ձևով անվանում է «Ռուբենի որդիներ», «Ռուբենի զարմ», «Ռուբինյաններ»: «Կային նաև հայեր, որոնք տիրում էին մի շարք տարածքների Կիլի-

²⁷ Հմմտ. «Լաուն իբն Ռուբալ» (Kamal al-Din Ibn al-Adim, Tarikh Halab, v.II, Damascus, 1954, p. 262):

²⁸ Անանուն Եդեսացի, էջ 40:

²⁹ Նույն տեղում, էջ 74:

³⁰ Նույն տեղում, էջ 194:

³¹ Նույն տեղում, էջ 37:

³² Նույն տեղում, էջ 135:

կիայի շրջանում. նրանք կոչվում էին Ռուբենի որդիներ (Bene Ruben)»³³:

Պատմիչը հիշատակում է հայ իշխաններին իրենց անունով, առանց որևէ տիտղոս ավելացնելու՝ Ռուբեն, Կոստանդին, Թորոս, Լևոն: Լավագույն դեպքում ավելացվում է «Հայ», «Հայազգի» մակդիրը: «Կիլիկիայի լեռներում կային երկու եղբայր՝ Ռուբենի որդի Կոստանդինի որդիները»³⁴, «վերջինս փախավ Թորոս Հայի մոտ՝ Կիլիկիա»³⁵, «Այդ տարի մահացավ Թորոս Հայը՝ Կիլիկիայի կառավարիչը: Նրան հաջորդեց եղբայրը՝ Լևոնը»³⁶, իսկ մի այլ տեղ ասվում է «Լևոն Հայը»³⁷:

Նույն ձևով է հիշատակվում նաև Թորոս Բ-ը. «Լևոնի որդիներից մեկը՝ Թորոսը փախչում է (գերությունից) ու մեկնում այնտեղից»³⁸, «...Կիլիկիայի վեհանձն (արժանի) կառավարիչ Թորոսը»³⁹, կամ «...Հայազգի Թորոսը՝ Կիլիկիայի իշխանը»⁴⁰: Հաջորդ երեք Ռուբենյանները ևս՝ Մլեհը, Ռուբեն Գ-ը և Լևոն Բ-ը, հիշատակվում են իբրև Կիլիկիայի իշխաններ⁴¹:

Ավելի ուշ շրջանի պատմիչ Բար Հեբրեոսը (ԺԳ դ.) մի տեղ միայն Կիլիկիան կոչում է «Հայաստան», երբ խոսում է այն մասին, որ Ռուբենի որդիները տիրում էին այդ հողերին⁴²: Բայց մնացած ողջ շարադրանքում բազմիցս հիշատակում է «Կիլիկիան»: Օրինակ, նշում է, որ այսինչ անձը մահացավ ու թաղվեց Կիլիկիայի Տարսոնում⁴³: Մի այլ տեղ նշում է. «Այդ ժամանակ Կիլիկիայում իշխում էին Ռուբենի որդի Կոստանդինի

³³ *Chronique de Michel le Syrien*, ed. et tr. Par J.-B. Chabot, t. III, Bruxelles, 1963, p. 187 (այսուհետև՝ *Michel le Syrien*).

³⁴ *Ibidem*, p. 198.

³⁵ *Ibidem*, p. 223.

³⁶ *Ibidem*, p. 227.

³⁷ *Ibidem*, p. 230.

³⁸ *Ibidem*, p. 281.

³⁹ *Ibidem*, p. 304.

⁴⁰ *Ibidem*, p. 310.

⁴¹ *Ibidem*, p. 337, 376, 387.

⁴² *The Chronography of Bar Hebraeus Gregory Abu-I-Faraj*, translated by E. Budge, Amsterdam, 1976, p. 237 (այսուհետև՝ *Bar Hebraeus*).

⁴³ *Ibidem*, p. 238, 244

երկու որդիները»⁴⁴, «Հայազգի Թորոսը՝ Կիլիկիայի կառավարիչը»⁴⁵: Լևոն իշխանի համար ասում է «Հայազգի Լևոնը»՝ նախապես երկրի համար Կիլիկիա բառը գործածելով⁴⁶:

Ուսումնասիրելով Բար Հեբրեոսի հաղորդումները Լևոն իշխանի մասին՝ կարելի է նշել, որ, չնայած իր կարճատև կառավարմանը, նրա օրոք եղած իրադարձություններն ու հենց իր անձը անհամեմատ ավելի շատ անգամ և ավելի նշանակալի իրադարձությունների առիթով է հիշատակվում: Սա խոսում է հոգուտ այն բանի, որ Կիլիկիան ու նրա իշխողները հենց նրա օրոք դարձան գործոն տարածաշրջանում՝ հիմք հանդիսանալով, որ արաբ հեղինակները կիրառության մեջ դնեն «Լևոնյաններ» կամ «Լևոնի որդիներ» ձևը որպես տոհմանուն:

Ասորի պատմիչը նշում է. «Հայազգի Լևոնը՝ Կիլիկիայի կառավարիչը»⁴⁷, «Հայազգի Թորոսը՝ Կիլիկիայի կառավարիչը»⁴⁸: Միաժամանակ խոսելով Սալահ ալ-Դինի տոհմի ծագման մասին՝ ասում է, որ նրանք Հայաստանի նշանավոր Դվին քաղաքից էին՝ քրդական ծագումով⁴⁹:

Այսինքն Բար Հեբրեոսի մոտ (ինչպես և Միքայել Ասորու⁵⁰ մոտ) հստակ տարբերակվում են Մեծ Հայքն ու Կիլիկիան, իսկ վերջինիս իշխողները հիշատակվում են անունով՝ Ռուբեն, Կոստանդին, իսկ Թորոս Ա-ը, Լևոն Ա-ը, Թորոս Բ-ն ու Մլեհը⁵¹ հիշատակվում են գրեթե մշտապես ավելացնելով «Հայազգի» և «Կիլիկիայի կառավարիչ» բառերը:

Վերջապես, խոսելով Մլեհի սպանության և Ռուբեն Գ-ի իշխանության գլուխ անցնելու մասին՝ Բար Հեբրեոսը գրում է՝ «դարձրին իրենց վրա թագավոր»⁵², բայց հետո նույն Ռուբեն Գ-

⁴⁴ Ibidem, p. 246:

⁴⁵ Ibidem, p. 252:

⁴⁶ Ibidem, p. 255:

⁴⁷ Ibidem, p. 275:

⁴⁸ Ibidem, p. 280:

⁴⁹ Ibidem, p. 288:

⁵⁰ Michel le Syrien, t. III, p. 325.

⁵¹ Ibidem, p. 295

⁵² Ibidem, p. 305

ին կոչում է «Կիլիկիայի կառավարիչ»⁵³: Նույն ձևով է հիշատակվում և Լևոն Բ իշխանապետը⁵⁴: Վերջապես 1219 թվականի մասին գրելով (ընդ որում օգտագործելով Հայոց թվականը) նշում է, որ «մահացավ Կիլիկիայի թագավոր Լևոնը»⁵⁵, «և Ֆիլիպին դարձրին Կիլիկիայի թագավոր»⁵⁶, «և Հերթումը հռչակվեց Կիլիկիայի թագավոր»⁵⁷:

Այսպիսով, ասորի պատմիչները հիանալի տարբերակում են Մեծ Հայքը և Կիլիկիան, շատ լավ տեղյակ են, որ Ռուբենն է հանդիսանում այդ տոհմի ու իշխանության հիմնադիրը, միաժամանակ գործածության մեջ են դնում «Ռուբենի որդիներ» բառակապակցությունը «Ռուբենի զարմից սերող» իմաստով և վերջապես նրանց հաղորդումներում Կիլիկիայի առաջին երեք իշխանների համեմատ ակնհայտ կարևորություն է տրվում Լևոն Ա-ին (1129-1137): Ինչպես շուտով կհամոզվենք այս մոտեցումը հատուկ է նաև արաբական պատմագրությանը:

Ինչպես հայտնի է, Բար Հեբրեոսը (Իբն ալ-Իբրի) ունի արաբերենով գրված պատմություն, որն ավելի համառոտ է ասորերենի համեմատությամբ և կոչվում է «Հարստությունների համառոտ պատմություն»⁵⁸: Համեմատելով նույն հեղինակի երկու տարբեր լեզուներով գրած երկերը՝ հետաքրքիր փաստեր ենք արձանագրում:

Պատմիչը, որն իր ասորերեն աշխատության մեջ բազմիցս հիշատակում էր «Կիլիկիա» բառը, այստեղ, ԺԱ-ԺԳ դարերի մասին խոսելիս, այս տեղանունը բնավ չի գործածում: Փոխարենը շրջանառվում են «Բիլադ Իբն Լևոն» (Իբն Լևոնի երկիր), «Բիլադ ալ-Արման» (Հայոց երկիր) արտահայտությունները:

Մյուս ուշագրավ երևույթն այն է, որ իր ասորերեն երկում «Ռուբենի որդիներ» արտահայտությունը մի քանի աղիթով օգտագործող հեղինակը, արաբերենում զարմանալի կերպով ընդ-

⁵³ Ibidem, p. 310:

⁵⁴ Ibidem, p. 328:

⁵⁵ Ibidem, p. 375:

⁵⁶ Ibidem, p. 380:

⁵⁷ Ibidem, p. 390:

⁵⁸ **Ibn al-Ibri**, Tarikh Mukhtasar ad-Duwal, Beirut, 1890 (Այստեղն է՝ **Ibn al-Ibri**).

հանրապես չի հիշատակում Ռուբեն անունը, այլ հիշատակում է արաբ պատմագրության մեջ ընդունված «Իբն Լևոն»-ը⁵⁹, իսկ Հեթում Ա-ի դեպքում պարզապես ասվում է «Հայոց թագավոր Հեթումը»⁶⁰:

Բար Հեբրեոսի երկու տարբեր լեզուներով գրած երկերի քննությունը հանգեցնում է հետևյալ եզրակացության՝ «Կիլիկիա» բառին համապատասխանում են «Իբն Լևոնի երկիր», «Հայոց երկիր» արտահայտությունները, երբեմն էլ պարզապես «Կիրճեր» (Դուրուբ) բառը:

Ռուբինյան տոհմը արաբ պատմագրության մեջ

Ասորի պատմագիրների երկերի վերլուծությունը հնարավորություն է տալիս բացահայտելու Կիլիկյան Հայաստանի վերաբերյալ արաբ պատմագրության մեջ տեղ գտած մի շարք մոտեցումներ ու հասկացություններ:

Փորձենք մեզ հետաքրքրող նյութի տեսանկյունից քննության ենթարկել արաբ պատմիչների երկերը՝ մասնավորապես Իբն ալ-Կալանիսիի (1070-1160) «Դամասկոսի պատմության շարունակություն»-ը, Բահա ալ-Դին Իբն Շադդադի (1145-1234) «Ալյուբյան Սալահ ալ-Դինի կենսագրություն»-ը, Իբն ալ-Ասիրի (1160-1233) «Լիակատար Պատմություն»-ը և «Մոսուլի Աթաբեկների պատմություն»-ը, Յակուտ ալ-Համավիի (1178-1229) «Երկրների բառարան» -ը⁶¹, Քամալ ալ-Դին իբն ալ-Ադիմի (1192-1262) «Հալեպի պատմություն»-ը, Աբու Շամայի (1203-1267) «Քիրթաբ ալ-Ռաուդաթայն»-ը, Իբն ալ-Դավադարիի «Քանզ ալ-դուրար ուա ջամի ալ-դուրար»-ը, Բայբարս ալ-Մանսուրիին վերագրվող (մ. 1325) «Մուխթար ալ-Ախբար»-ը, Աբու-լ-Ֆիդայի (1273-1333) «Ժամանակագրություն»-ը, ալ-Չահաբիի (1274-1348) «Գիրք մահմեդական հարստությունների մասին» երկը և Իբն Բատուտայի (1304-1369) «Ռիհլա» անունով հայտնի գիրքը:

Նշված հեղինակների մեջ ժամանակագրորեն առաջինը Իբն ալ-Կալանիսին է՝ ժԲ դար: Մնացած հեղինակները իրենց

⁵⁹ Ibn al-Ibri, pp. 459-460, 498-500.

⁶⁰ Ibidem, pp. 459-460, 498-500.

⁶¹ Հ. Նալբանդյանը այն թարգմանել է որպես «Աշխարհագրական բառգիրք»:

երկերը շարադրել են ԺԳ-ԺԴ դարերում, ուստի կարող էին օգտվել «Դամասկոսի պատմության շարունակություն» պատմական երկից:

Հիջրայի 531 թվականի (1136/1137) դեպքերի մեջ Իբն ալ-Կալանիսին, խոսելով Բյուզանդիայի կայսր Հովհաննես Կոմնենոսի դեպի Կիլիկիա և Անտիոք կատարած հայտնի արշավանքի մասին, և գրելով, թե ինչպես կայսրը նվաճեց Ադանան, Մսիսը և Այն Ջարբան, ավելացնում է. «...ապա շրջվեց [կայսրն] ու վերադարձավ դեպի Կիրճերը (այսինքն՝ Կիլիկիա) և գրավեց այն բոլոր բերդերն ու շրջակա բնակավայրերը, որ դեռևս մնացել էին Իբն Լևոն Հայի ձեռքում»⁶²:

Այս հաղորդման մեջ անհայտ է, թե ինչու է Լևոն Ա իշխանը կոչվում «Իբն Լևոն», այսինքն՝ «Լևոնի որդի», և անհասկանալի է մնում, թե ում անունով են արաբները կոչում Կիլիկիայի իշխողներին: Բայց մի բան պարզ է, որ ԺԲ դարում (Իբն ալ-Կալանիսին մահացել է 1160 թվականին) արդեն իսկ «Իբն Լևոն»-ը կիրառվում էր: Վերջապես ուշագրավ է, որ Կիլիկիան այստեղ կոչվում է «Դուրուբ» (Կիրճեր):

Իբն ալ-Կալանիսին, Իբն ալ-Ասիրը, Իբն Շադդադը և այլ արաբագիր հեղինակներ, թեև իրենց ուշադրությունը կենտրոնացրել են հիմնականում մահմեդական երկրների պատմության վրա և քրիստոնյաներին անդրադարձել են այնքանով, որքանով սրանք առնչվել են իսլամական աշխարհի հետ, բայց և այնպես նրանք շատ լավ տեղյակ են Կիլիկյան Հայաստանի պատմությանը, նրանք Ռուբինյան պետության ժամանակակիցներն են, հաճախ ապրել են ոչ հեռու (Հալեպ, Մոսուլ և այլն) և հայտնի են որպես հավաստի աղբյուրներ: Հետևաբար նրանք չէին կարող այդ աստիճան անտեղյակ լինել Կիլիկիայի իշխողների մասին և բոլորին (Կոստանդին, Թորոս Ա, Լևոն Ա, Թորոս Բ, Ռուբեն Գ, Լևոն Բ) կոչել «Լևոնի որդի»:

Կիլիկիայի իշխանների ու թագավորների անունների ճշգրիտ իմացության օրինակները արաբ պատմագրության մեջ

⁶² Ibn al-Qalanisi, Dhail tariikh Dimashq, ed. by H. F. Amedroz, Beyrouth, 1908, p. 258.

բազմաթիվ են, հիշենք դրանցից մեկը: «Մուխթար ալ-Ախբար» երկի հեղինակը, խոսելով 1266 թվականին Եգիպտոսի Բեյբարս սուլթանի նշանավոր արշավանքի և Հեթումի որդի Լևոնի ձերբակալման մասին, գրում է. «այդ ժամանակ թագավորն էր Բասակի որդի Կուստանտինի որդի Հայթումը, ...որի որդին էր Լևոնը»⁶³:

Եթե Հեթումի հայր Կուստանդինի անունը որպես պալլ (խնամակալ) կարող էր հայտնի լինել, ապա նաև այս վերջինի հոր՝ Վասակի անվան հիշատակումը զարմանալի է: Հայոց արքայատոհմի ծագումնաբանության նման իմացությունը դժվար է հանդիպել օտար պատմագրության մեջ:

Ռուբինյան Լևոն Ա՞, թե՞ Լևոն Բ

Վերոհիշյալը հուշում է որ՝ «Լևոն», «Իբն Լևոն», «Իբն Լևոնի երկիր» արտահայտությունները նկատի չունեն որևէ կոնկրետ անձի՝ Լևոն անունով, կամ նրա որդուն, այլ ցույց են տալիս այն տոհմը, որին ենթակա էր Կիլիկիան: Շուտով կհամոզվենք, որ այս արտահայտությունը հետադարձ կիրառմամբ օգտագործվել է նաև Կիլիկիայի Ռուբինյան իշխանության սկզբնական («նախալևոնյան») շրջանի համար:

Մնում է պարզել, թե Լևոններից որ մեկն է դարձել տոհմի անվանադիրը արաբ պատմագրության համար: Լևոն Մեծագործը որդի չուներ հետևաբար խոսքը նրա որդու մասին չէր կարող լինել: «Լևոնի որդի» անվանման տակ կարող էին հասկացվել կամ Թորոս Բ-ը կամ Մլեհը (մանավանդ որ հայտնի են վերջինիս սերտ հարաբերությունները Նուր ալ-Դինի և այլ մահմեդական տիրակալների հետ): Բայց սրանցից Լևոն Մեծագործն ու Մլեհը անմիջապես հանվում են թեկնածուների ցանկից, երբ նկատի ենք ունենում, որ «Իբն Լևոն»-ը առաջիններից մեկը կիրառող Իբն ալ-Կալանիսին մահացել է 1160-ին, ուստի չգիտեր և չէր էլ կարող իմանալ ոչ միայն Լևոն Ա Մեծագործ թագավորի, այլև Մլեհ իշխանապետի մասին:

Ինչ վերաբերում է Թորոս Բ-ին, ապա նա իսկապես կարող էր կոչվել «Իբն Լևոն» (Լևոնի որդի), բայց հետագա շարադրան-

⁶³ Baybars al-Mansuri, Mukhtar al-Akhbar, Cairo, 1993, p. 32.

քում կհամոզվենք, որ այս անվանումը չի գործածվում որոշակի անձ նկատի ունենալով, այլ տոհմի անվանում է, այլ կերպ ասած՝ գլխավորը ոչ թե որդին է (Թորոսը կամ որևէ մեկը), այլ հայրը՝ Լևոնը:

Բահա ալ-Դին Իբն Շադդադը պատասխանատու պաշտոններ է վարել Սալահ ալ-Դինի մոտ, ապրել է Հալեպում և մահացել է 1234 թվականին: Հետևաբար ժամանակակիցն ու ականատեսն է այն ամենի, ինչի մասին, որ գրում է:

Իբն Շադդադի «Այյուբյան Սալահ ալ-Դինի կենսագրությունը» երկում, որից հատվածներ է թարգմանել Հ. Նալբանդյանը, նույնպես հանդիպում ենք այդ նույն արտահայտությանը՝ «Բիլադ Իբն Լևոն», որը թարգմանվել է որպես «Լևոնի որդու երկիր»:

«Սուլթանը Կլըջ Արսլանին օգնելու համար արշավեց դեպի Լևոնի որդու երկիրը... անցնելով գնացին դեպի Նահր Ասուադը, որը Լևոնի որդու երկրի սահմանն է կազմում»⁶⁴, կամ «Սուլթանը... սպասում էր Հալեբի բանակներին, որոնք ուշացան, որովհետև նրանք զբաղված էին ֆրանկների հետ հայոց հողի վրա՝ Լևոնի որդու երկրում»⁶⁵: Վերջապես խոսելով Գրիգոր Տղա կաթողիկոսի երկու նամակների մասին՝ ուղղված Սալահ ալ-Դինին, վերապատմում է դրանք՝ այդ ընթացքում Կիլիկիո իշխանապետ Լևոն Բ-ի համար օգտագործելով նույն «Իբն Լևոնը»⁶⁶:

Ուշագրավ է, որ առաջին նամակը վերապատմելուց հետո Իբն Շադդադը գրում է. «Սա է նամակը կաթողիկոսի, և այս բառը նշանակում է խալիֆա. նրա անունն է Բար Քրիքուր Իբն Բասիլ»⁶⁷: Գրիգոր Տղան որդին էր Վասիլի: Արաբ պատմիչը երկու անգամ տղա բառը չգործածելու համար հմտորեն օգտվել է ասորերեն «Բար» (որդի) բառից հիանալի կերպով հասկանալով,

⁶⁴ Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին: Յակուտ ալ-Համավի, Աբու-Ֆիդա, Իբն Շադդադ, թարգմ. Հ. Նալբանդյանի, Երևան, 1965, էջ 293 (այսուհետև՝ Արաբական աղբյուրները):

⁶⁵ Նույն տեղում, էջ 294:

⁶⁶ Նույն տեղում, էջ 294-297:

⁶⁷ Նույն տեղում, էջ 297

որ Գրիգորի հոր անունն է Վասիլ, իսկ «Տղա»-ն նրա մականունն է: Արաբ մատենագրի Կիլիկիայի վերնախավի անունների այս աստիճան ճշգրիտ իմացությունը մեկ անգամ ևս հաստատում է մեր վերևում բերված ենթադրությունը, որ «Իբն Լևոնը» ոչ թե օգտագործել են հայկական անունների վատ իմացության կամ անձերին մեկը մյուսի հետ շփոթելու պատճառով, այլ այն նկատի ունենալով որպես տոհմանուն:

Կիլիկիայի վերաբերյալ շատ հարուստ տեղեկություններ ունի ԺԳ դարի նշանավոր պատմիչ Իբն ալ-Ասիրը իր «Լիակատար պատմության», ինչպես նաև «Պատմություն Մոսուլի Աթաբեկների պետության» երկերում:

Խոսելով խաչակրաց առաջին արշավանքի ու Անտիոքի գրավման մասին՝ Իբն ալ-Ասիրն արդեն իսկ օգտագործում է «հայազգի Լևոնի որդու երկիր» (Բիլադ իբն Լայուն ալ-Արմանի) արտահայտությունը:⁶⁸

Մեջբերում կատարենք Իբն ալ-Ասիրի երկից Հովհաննես Կոմնենոսի հայտնի արշավանքի վերաբերյալ. «531 թվական (29 սեպտեմբեր 1136 – 18 սեպտեմբեր 1137) ... Այստեղից նա (կայսրը) գնաց Ադանա և Մամեստիա (Մասիսա) քաղաքները, որոնք կիրճերի, ամրոցների տեր հայազգի Լևոնի որդու (Իբն Լայուն ալ-Արմանի) ձեռքում էին:.....Նա այնտեղից գնաց Բադրաս և դրա վրայով մտավ հայազգի Լևոնի որդու (Իբն Լայուն ալ-Արմանի) երկիրը, իսկ վերջինս շատ հարստություն տվեց ու նրան հպատակվեց»⁶⁹, կամ արդեն Ռուբեն Գ-ին վերաբերող՝ «576 թվական (28 մայիս 1180 – 16 մայիս 1181)... Այդ տարում Սալահ ալ-Դինը հարձակվեց հայազգի Լևոնի որդու (Իբն Լայուն ալ-Արմանի) երկրի վրա, Կիլիջ Արսլանի հետ գործը վերջացնելուց հետո»⁷⁰:

⁶⁸ Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին 11, Արաբական աղբյուրներ Բ, Իբն ալ-Ասիր, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագր. Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1981, էջ 229 (այսուհետև՝ Իբն ալ-Ասիր), քննազրույց՝ Al-Kamil fi-I-tarikh, Beirut, 2003, VIII volume, p. 186 (այսուհետև՝ Al-Kamil fi-I-tarikh).

⁶⁹ Նույն տեղում, էջ 249, Kamil fi-I-tarikh, v. VIII, p. 358.

⁷⁰ Նույն տեղում, էջ 266, Kamil fi-I-tarikh, v. IX, p. 151.

Վերջապես քննենք Լևոն Մեծագործի դարաշրջանին վերաբերող հետևյալ մի քանի հատվածները. «584 թվական (2 մարտ 1188 – 18 փետրվար 1189)... Բաղրասի գրավման մասին... Իսկ սա մեծ վնաս էր մահմեդականներին, քանզի Հայոց տեր (Սահիբ ալ-Արման) Լևոնի որդին (Իբն Լայուն), որը սահմանակից էր, իր երկրից եկավ, նորոգեց նրա կառուցվածքը, կատարելագործեց և այնտեղ նշանակեց իր զինվորների խումբ, որն այնտեղից ասպատակում էր դրացի երկիրը...»⁷¹, կամ «602 թվական (18 օգոստոս 1205 – 7 օգոստոս 1206)... Լևոնի որդու՝ Հալեբի գավառների դեմ արշավանքի մասին... Այդ տարում կիրճերի տեր հայազգի Լևոնի որդին (իբն Լայուն ալ-Արմանի) մի քանի անգամ արշավեց Հալեբի նահանգի վրա, կողոպտեց, հրկիզեց, գերեց և գերեվարեց»⁷², վերջապես՝ «623 թվական (2 հունվար 1226 – 21 դեկտեմբեր 1226)... Ֆրանկների ու հայերի միջև խռովության մասին... Այդ տարում Անտիոքի տեր ֆրանկ Բրինսը (իշխան) հավաքեց մեծ զորք և շարժվեց հայերի դեմ, որոնք Իբն Լայունի (Լևոնի որդու) երկրի կիրճերում էին [ամրացած] և նրանց միջև սաստիկ պատերազմ տեղի ունեցավ»⁷³:

«Իբն Լևոն»-ը ա՞նձ է, թե՞ տոհմանուն

Հիմնական հարցը, որը պատասխան է պահանջում, հետևյալն է: Ամեն անգամ, երբ հիշատակվում է «Իբն Լևոնը», արդյո՞ք նկատի է առնվում որոշակի անձ, այն է՝ Լևոնի որդի Թորոսը (կամ Մլեհը), թե այս արտահայտությունը ինչ-որ այլ իմաստ ունի: Արաբական աղբյուրները հայերենի թարգմանողները կամ առանց բացատրելու պահպանել են արաբական ձևը կամ «Իբն Լևոն» և «Իբն Լևոնի երկիր» արտահայտությունների կողքին տվել են թարգմանությունը, այն է՝ «Լևոնի որդի» կամ «Լևոնի որդու երկիր»:

Բանն այն է, որ արաբերենում որևէ ցեղ, տոհմ կամ արքայատոհմ հիշատակելու համար այլ ձևեր են ընդունված, և առաջին հերթին «ibn» բառի հոգնակին՝ «banu»-ն (որդիներ,

⁷¹ Նույն տեղում, էջ 273, Kamil fi-l-tarikh, v. IX, p. 195.

⁷² Նույն տեղում, էջ 285, Kamil fi-l-tarikh, v. IX, p. 282.

⁷³ Իբն ալ-Ասիր, էջ 331, Kamil fi-l-tarikh, v. IX, pp. 371-372.

հմմտ. ասորերեն Bene), որը, դրվելով որևէ անձնանվան առջև, դրան տալիս է ցեղի կամ տոհմի իմաստ: Օրինակ՝ Banu Bakr նշանակում է «Բաքր ցեղ», կամ «Banu Tamim»՝ Թամիմ ցեղ, նույնը՝ արքայատոհմի կամ հարստության համար՝ «Banu al-Abbas»՝ Աբբասյաններ, «Banu Umayya»՝ Օմայաններ, «Banu Hamdan»՝ Համդանյաններ և այլն: Ակնհայտ է, որ եթե արաբ պատմիչները օգտագործեին «Banu Levon» արտահայտությունը, ապա այն կթարգմանվեր որպես «Լևոնի որդիներ», «Լևոնյաններ» կամ «Լևոնի տոհմ»:

Բահա ալ-Դին Իբն Շադդադը իր նշանավոր «Այյուբյան Սալահ ալ-Դինի կենսագրությունը» երկում հաճախ օգտագործում է «Բիլադ Իբն Լևոն» (Իբն Լևոնի երկիր) արտահայտությունը: Պատմիչը «Իբն Լևոն» է անվանում նաև Լևոն Բ իշխանին, որին անդրադառնում է խաչակրաց III արշավանքի առիթով:

Իբն Շադդադը հիանալի տեղյակ է Կիլիկիայի անցուղարձից: Ինչպես տեսանք վերևում մեջբերված հատվածից, պատմիչը ճշգրիտ կերպով վերարտադրում է Հայոց կաթողիկոսի ամբողջական անունը, ուստի բացառվում է, որ նա Լևոնին, սխալմամբ կոչեր «Լևոնի որդի»: Այնուամենայնիվ, փորձենք գտնել «Իբն Լևոն»-ի տոհմանուն լինելու միտքը հաստատող հավելյալ տեղեկություններ:

Մի մեջբերում էլ կատարենք Իբն ալ-Ասիրի մյուս՝ «Պատմություն Մոսուլի Աթաբեկների պետության» գործից, որտեղ խոսելով Մլեհի հանդեպ Նուր ալ-Դինի քաղաքականության մասին՝ արաբ պատմիչը գրում է. «Որպես խելամտության մի օրինակ՝ հիշենք նրա վերաբերմունքը Հայոց թագավոր (մալիք ալ-Արման), կիրճերի տեր՝ (սահիբ ալ-դուրուբ) Լևոնի որդի Մլեհի (Մալիհ իբն Լայուն) հանդեպ»⁷⁴:

Այս վերջին տեղեկությունը մի քանի առումով է կարևոր: Նախ սա այն քիչ դեպքերից է, որ Ռուբինյան որևէ իշխան հիշատակվում է իր անունով: Մլեհի հիշատակությունը այստեղ բացառիկ է: Սա թերևս կարելի է բացատրել Նուր ալ-Դինի հետ

⁷⁴ Իբն ալ-Ասիր, էջ 362:

Մլեհի ունեցած հատուկ հարաբերություններով, մահմեդական պետության հետ նրա հաստատած, իր նախորդներից տարբերվող սերտ դաշինքով, որն անշուշտ մահմեդական պատմագրին կարող էր մղել՝ առավել մեծ ուշադրություն հատկացնել նրան:

Միաժամանակ, քանի որ Մլեհի հոր անունը հենց Լևոն է, կարող է տպավորություն ստեղծվել, թե «Իբն Լևոնը» այստեղ հայրանվան իմաստ ունի և արաբ պատմիչը ճշգրիտ կերպով նշել է իշխանապետի անուն-հայրանունը՝ Մալիհ իբն Լայուն (Մլեհ որդի Լևոնի): Սակայն այս տպավորությունը խաբուսիկ է հետևյալ պատճառով:

Բանն այն է, որ նախորդ էջերում այդ նույն Լևոն Ա-ի՝ Մլեհի հոր մասին խոսելիս Իբն ալ-Ասիրը նրան չի անվանում «Լևոն», այլ կրկին կոչում է «Իբն Լևոն», այսինքն վերոհիշյալը պատահական համընկնում է: Հետևաբար «Մալիհ իբն Լայուն» արտահայտության մեջ «Լևոն»-ը ոչ թե հայրանուն է, այլ տոհմանուն և այն, տվյալ դեպքում, պետք է թարգմանվի որպես «Մլեհ Լևոնյան»⁷⁵:

Վերոհիշյալը հաստատվում է մի այլ մատենագրի՝ աշխարհագրագետ Յակուտ ալ-Համավիի հաղորդումով, որն իր «Քիթաբ Մուջամ ալ-Բուլդան»-ում «Աթ-Թաղը» (Աս-Սաղը) հոդվածի մեջ ևս օգտագործում է «Իբն Լևոնի երկիր» (Բիլադ իբն Լավուն)⁷⁶ արտահայտությունը: Այդ նույն «Երկրների բառարան»-ի «Այն Չարբա» հոդվածի մեջ Յակուտը գրում է. «Այդ քաղաքը (Տարսոնը) մինչև այսօր գտնվում է նրանց (հայերի) ձեռքում: Այժմ բնակված է հայերով և Իբն Լավունի երկրների մասն է կազմում»⁷⁷: «Կալաթ առ-Ռում» հոդվածից մեջբերում. «Մոտավորապես հիջրի 610 թվականին (23 մայիս 1213 – 12 մայիս 1214) Լավունի որդի Լավուն հայոց թագավորը, որ Ասորիքի սահմանագոտու Մսիսի, Տարսոնի և Ադանայի վրա է իշխում ...»⁷⁸:

⁷⁵ Իբն ալ-Ասիրի տեղեկության մեջ ուշագոյով է նաև «Հայոց թագավոր» տիտղոսը, որ նա տալիս է Մլեհին:

⁷⁶ Արաբական աղբյուրները, էջ 45:

⁷⁷ Նույն տեղում, էջ 94:

⁷⁸ Նույն տեղում, էջ 100:

Յակուտ ալ-Համադիի երկը հատկանշական է հետևյալ պատճառներով: Թեև մատենագիրը ժամանակակիցն է Լևոն Մեծագործի, բայց երբ հիշատակում է «Լևոն հային ու նրա սերնդին», ակնհայտ է, որ խոսքը Լևոն Ա-ի մասին է: Հետագայում նա խոսում է նաև Լևոն Բ-ի մասին, բայց իբրև մի նոր պատմական անձ: Խիստ ուշագրավ է, որ վերջապես տրվում է Լևոնի անունը՝ «Լավունի որդի Լավուն հայոց թագավոր», այլ կերպ ասած՝ Լևոն Լևոնյան: Ինչպես տեսանք վերևում, թե՛ Իբն ալ-Ասիրը և թե՛ ուրիշ պատմիչներ երբևէ թագավորի անունը չեն տալիս, այլ կրկնում են «Իբն Լևոն» անվանումը: Այս առումով Յակուտի հաղորդումը պետք է բացառիկ համարել: Նա նաև տարբեր առիթներով նշում է, որ «Լևոնյաններին» ենթակա են բազմաթիվ երկրներ:

Կիլիկիայի մասին հարուստ տեղեկություններ է հաղորդում նաև ԺԳ դարի հռչակավոր պատմիչ Քամալ ալ-Դին իբն ալ-Ադիմը իր «Հալեպի պատմության» մեջ: Սա ևս լայնորեն կիրառում է «Բիլադ Իբն Լաուն» (Իբն Լևոնի երկիր) և «Մալիք ուլ-արման Իբն Լաուն» (Հայոց թագավոր Իբն Լաուն) արտահայտությունները:

Հիշատակելով 1177-ին Հարիմ ամրոցի պաշարմանը մասնակցող միացյալ ուժերի ու նրանց ղեկավարների (խաչակիրներ) մասին՝ այլոց շարքում հիշատակում է նաև «Իբն Լևոն»-ին⁷⁹: Խոսելով 1187 թվականի մասին՝ կիրառում է «Իբն Լևոնի երկիրը» (Բիլադ Իբն Լաուն)⁸⁰: Նույն պատմիչը, խոսելով 1204 թվականի դեպքերի մասին, հաղորդում է. «...հարծակում գործեց Հայոց թագավոր Իբն Լաունը»⁸¹: Նույն ձևով է կոչում պատմիչը Կիլիկիայի տիրակալին նաև այլ էջերում՝ թագավորին կոչելով «Իբն Լևոն», իսկ երկիրը՝ «Իբն Լևոնի երկիր»⁸²: Սակայն նույն երկի երկրորդ հատորում Իբն ալ-Ադիմը օգտագործում է

⁷⁹ Kamal ad-Din ibn al-Adim, Tarikh Halab, t. III, Damas, 1968, p. 36.

⁸⁰ Ibidem, p. 91.

⁸¹ Ibidem, p. 155.

⁸² Ibidem, pp. 156-160, 168.

նաև «Բիլադ Լաուն»՝ «Լևոնի երկիր» արտահայտությունը 1137 թվականի դեպքերի մասին խոսելիս⁸³:

Ստեփանեի որդի Լևոն Լևոնյան

Աեր առաջ քաշած տեսակետը հաստատում է նաև ԺԳ դարի մի այլ կարևոր մատենագիր՝ Աբու Շաման (1203-1268): Նա իր երկի Դ հատորում շատ կարևոր գլուխ ունի Հիջրայի 586 (1190)-ի դեպքերի մասին, որը կոչվում է «Ալմանների թագավորի վախճանի և նրա որդու իրեն փոխարինելու մասին»: Նա հիմնականում կրկնում է Իբն Շադդադի մեջբերած Գրիգոր Տղայի նամակը՝ ուղղված Սալահ ալ-Դինին: Բայց նրանց միջև կա մի կարևոր տարբերություն: Աբու Շամայի մոտ Կիլիկիայի թագավորը հիշվում է ոչ թե «Իբն Լևոն», այլ հենց «Լևոն» (Լաֆուն) ձևով⁸⁴: Առաջին հայացքից կարող է կասկած առաջանալ, որ հրատարակիչը կարող էր «ուղղել» «Իբն Լևոնը» և դարձնել «Լևոն», բայց այդ կասկածը վերանում է, երբ շարունակության մեջ Աբու Շաման օգտագործում է «Լաֆուն իբն Խստիֆանա Իբն Լաուն»⁸⁵, այլ կերպ ասած՝ «Ստեփանեի որդի Լևոնը՝ Լևոնյան տոհմից» արտահայտությունը:

Սա մեզ հանդիպած առաջին դեպքն է, երբ ճշգրիտ կերպով տրված է հայոց արքայի թե՛ անունը, թե՛ հայրանունը և թե՛ տոհմանունը, ընդ որում, այդ ամենը մի տեղում: Աբու Շամայի այս արտահայտությունը վերջնականապես մեզ համոզեց, որ գործ ունենք տոհմանվան հետ:

Ինչու՞ Լևոն Ա իշխանը համարվեց տոհմի անվանադիր

Այժմ փորձենք պարզել, թե ինչն էր պատճառը, որ արաբ պատմագրության մեջ Լևոն Ա-ը ոչ միայն մեծ տեղ գրավեց, այլև հենց նա իր անունը տվեց ողջ տոհմին:

Ինչով էր տարբերվում Լևոնը իր պապից, հորից կամ եղբորից: Առաջին հերթին նրանով, որ թեկուզ և մի կարճ ժամանակով (1132-1137), բայց և այնպես կարողացավ տիրանալ

⁸³ Kamal al-Din Ibn al-Adim, Tarikh Halab, v.II, Damascus, 1954, p.263.

⁸⁴ Abu Shama, Kitab al-Raudatayn fi Akhbar al-Dawlatayn, al-Nuriyya wa al-Salahiyya, Beirut, 2002, IV, pp.77-78 (այստեղսն՝ Abu Shama).

⁸⁵ Abu Shama, IV, pp.79.

Դաշտային Կիլիկիային իր մեծ քաղաքներով (Տարսոն, Ադանա, Մամեստիա) հանդերձ:

Կարծում եմ՝ տեղին է մի փոքր ակնարկ կատարել, թե ինչ տեղ էր զբաղեցնում Կիլիկիան արաբների պատմության մեջ, որից էլ բխում է արաբ պատմագրության ներկայացուցիչների վերաբերմունքը այդ երկրամասի հանդեպ:

Կիլիկիայի տարածքը է-ժ դարերում այս կամ այն չափով մաս է կազմել արաբամահմեդական պետությունների: Նախ, արաբական նվաճումների սկզբնական փուլում՝ անշուշտ 636 թ. Յարմուքի բախտորոշ ճակատամարտից (որով վճռվեց Ասորիքի ճակատագիրը) հետո, այն նվաճվել է Օմար և Օսման խալիֆաների զորավարների կողմից: Ապա Կիլիկիան մաս է կազմել Օմայան և Աբբասյան խալիֆայությունների, իսկ հետո՝ Համդանյանների պետության: Մի կարճ ժամանակով այն նույնիսկ նվաճվել է Եգիպտոսի Թուլունիների կողմից: Վերջապես, ժ դարի երկրորդ կեսին Բյուզանդական կայսրությունը այն վերանվաճում է:

Խալիֆայության շրջանում Դաշտային Կիլիկիան մի մասն էր արաբական «Բիլադ ալ-Շամ» (Ասորիք կամ Մեծ Ասորիք) վարչական միավորի: Լեոնային Կիլիկիան դուրս էր մնում «Բիլադ ալ-Շամ»-ից: Իսկ Դաշտային Կիլիկիան ընկալվում էր որպես Անտիոքին հարող ծովեզերքի մի մասը, այլ կերպ ասած՝ Ասորիքի բաղկացուցիչ մասը: Դաշտային Կիլիկիայի գլխավոր քաղաքը՝ Տարսոնը, որը դեռևս հռոմեական ժամանակներից վարչական կենտրոն էր հանդիսացել Կիլիկիայի համար, նաև կարևոր կրոնական նշանակություն ուներ ոչ միայն քրիստոնյաների համար (համարվում է Պողոս առաքյալի ծննդավայրը), այլև մահմեդական արաբների համար, քանի որ Տարսոնում 833 թվականին թաղվել է նշանավոր Մամուն Աբբասյան խալիֆան (Հարուն ալ-Ռաշիդի որդին):

Միաժամանակ, ռազմական առումով Ասորիքի հյուսիսը և Վերին Միջագետքը միավորվում էին այսպես կոչված «ալ-Ավասիմ» (Պաշտպանական գոտի) հասկացության մեջ, որի նպատակը Բյուզանդիայի դեմ պայքարն էր: Ավասիմի առաջնագիծը կոչվում էր «Սուղուր» (Սահմանային ամրությունների գոտի), որը

իրականում առանձնացված էր Ավասիմից, բայց երբեմն նաև այս երկուսը միավորվում էին մեկ հրամանատարության տակ: Ժ դարում Ավասիմի մայրաքաղաքը Անտիոքն էր: Բյուզանդացիների կողմից այդ բոլոր տարածքների վերանվաճումից հետո Ավասիմը մնաց որպես աշխարհագրական անվանում⁸⁶:

Ինչ վերաբերում է «Սուլուր»-ին («Սաղր» կամ «Թաղր» բառի հոգնակին), ապա այն արդեն ընդգրկում էր ողջ Կիլիկիան՝ թե՛ Դաշտայինը և թե՛ Լեռնայինը: Սակայն արաբ վերաբնակիչները հիմնականում հաստատվել էին Դաշտային մասում ոչ միայն մեղմ կլիմայի, այլև այն պատճառով, որ այստեղ էին գտնվում հնագույն շրջանից հայտնի մեծ ու վաճառաշահ քաղաքները: Իսկ Լեռնային Կիլիկիան իր բերդերով ու ամրություններով դիտարկվում էր որպես ռազմականացված մի գոտի բյուզանդացիների դեմ պայքարում, և ի վերջո Լեռնային Կիլիկիայում արաբաբյուզանդական գրեթե մշտական հակամարտության պայմաններում ավելի շատ գինվորական կայազորներ կային, քան հիմնական բնակչություն:

Այսպիսով, ինչպես տեսանք, արաբական շրջանում Կիլիկիան մտնում էր մեկ վարչական՝ «Շամ», և երկու ռազմական միավորումների՝ «Ավասիմ» և «Սուլուր» մեջ: Բացի Սուլուրից, մյուս երկուսն ընդգրկում էին միայն Դաշտային Կիլիկիան:

Լևոն Ա իշխանապետի կողմից Դաշտային Կիլիկիան գրավելու հանգամանքը միջազգային արձագանք ունեցավ, քանի որ պատճառ հանդիսացավ, որ Բյուզանդիայի կայսր Հովհաննես Կոմնենոսը (1118-1143) անձամբ գլխավորի պատժիչ արշավանքը դեպի Կիլիկիա և Ասորիք:

«Միջազգային արձագանք» ասելով առաջին հերթին նկատի ունենք Ասորիքն ու Վերին Միջագետքը, ուստի այն պիտի ազդեր արաբ և ասորի պատմիչների երկերի վրա: Օրինակ, ուսումնասիրելով Բար Հեբրեոսի հաղորդումները Լևոն իշխանի մասին՝ կարելի է նշել, որ, չնայած իր կարճատև կառավարմանը, նրա օրոք եղած իրադարձություններն ու հենց իր անձը

⁸⁶ Canard Marius, al-Awasim, The Encyclopaedia of Islam, v. I, Leiden & New York, 1986, p. 761-762.

անհամեմատ ավելի շատ անգամ է հիշատակվում: Սա խոսում է հոգուտ այն բանի, որ Ռուբինյանները հենց նրա օրոք է, որ կարևոր գործոն դարձան տարածաշրջանում:

Այս առումով հարուստ են Յակուտ ալ-Համավիի տեղեկությունները իր «Մու'ջամ ալ-Բուլդան»-ում. «Այն բոլոր վայրերը, որոնք թշնամու երկրին մոտ են, կոչվում են «Թուղուր», և դրանք կազմում են սահմանային անցքեր: Կան բազմաթիվ վայրեր, որոնց մեջ Շամի Թադրը, որ թուղուրների մի ամբողջություն է, և այդ անվան ներքև բովանդակվում են բազմաթիվ երկրներ, որոնք ծանոթ են Բիլադ իբն Լավուն անունով: ...Ահմադ իբն Յահյա իբն Ջաբիրը վկայում է, որ Շամի Թուղուրը գրավվեց Օմար և Օթման խալիֆաների օրով, և ապա Անտիոքն ու մյուս վայրերը կոչվեցին «Ավասիմ»: Մուսուլմանները այդտեղից անցնում էին՝ հույների երկիրը արշավելու համար.....Ապա Հալեբի վրա հարձակվեցին հույները հիջրի 351 թվականին (962-963): Բնակիչներից ջարդեցին, ինչքան որ կարողացան: Սայֆ ադ-Դաուլան, տկարացած լինելով, Ասորիքը թողեց առանց պաշտպանության և վերադարձավ Մուֆարդին, և այդպիսով Թադրը մինչև Համաթ դատարկված լինելով՝ Նիկեֆորը եկավ դեպի Ասորիք, պաշարեց Մսիսը, գրավեց այն, հետո Թարսուսը և շրջակա քաղաքները: Եվ այս տեղի ունեցավ հիջրի 354 թվականին (965): Երկիրը մնաց նրանց⁸⁷ ձեռքում, մինչև որ այդ վայրերի իշխանությանը տիրացավ **Լևոն հայը**, որի սերնդի ձեռքն էլ գտնվում է այն մինչև օրս»⁸⁸:

Յակուտ ալ-Համավիի այս հաղորդումը մի քանի կարևոր տեղեկություն է պարունակում: Նախ պարզ է դառնում, որ «Սուղուր» հասկացության Շամի հատվածն ամբողջությամբ համընկնում է Կիլիկյան Հայաստանի հետ և այն, ըստ արաբ աշխարհագրագետի, կոչվում է «Բիլադ իբն Լավուն» (իբն Լևոնի երկիր): Մատենագիրը Մամեստիան, Տարսոնը և շրջակա քաղաքները Ասորիքի (Շամ) բաղկացուցիչ մասն է համարում: Եվ վերջապես քննարկվող նյութի տեսակետից ամենակարևոր տեղե-

⁸⁷ Այսինքն՝ բյուզանդացիների:

⁸⁸ Արաբական աղբյուրները, էջ 45-46:

կությունը՝ Կիլիկիան բյուզանդացիների ձեռքից խլել է Լևոն հայը (այսինքն Լևոն Ա իշխանապետը (1129-1137)), որի սերնդի ձեռքում այդ երկիրը գտնվում է մինչև օրս (1224 թ.):

Յակուտ ալ-Համավին, որ Լևոն Մեծագործի ժամանակակիցն է, իր գիրքն ավարտին է հասցրել Լևոն թագավորի մահից ընդամենը հինգ տարի անց, ուստի քիչ հավանական է, որ նա այդպիսի ձևակերպում տար. «որի սերնդի ձեռքում այդ երկիրը գտնվում է մինչև օրս»: Ուստի մեկ անգամ ևս համոզվում ենք, որ խոսքը Լևոն Ա իշխանապետի մասին է: Ուշադրության արժանի է նաև Լևոնի հիշատակումը ոչ միայն որպես պետության, այլև որպես տոհմի հիմնադիր:

Բյուզանդացի հեղինակների հաղորդումները որպես հավելյալ ապացույց

Լևոն իշխանի ձեռք բերած միջազգային հռչակին վերաբերող մի հավելյալ տեղեկության հանդիպում ենք ԺԲ դարի բյուզանդացի հեղինակ Միքայել Իտալիկոսի «Ներբողյանում», որը նվիրված է բյուզանդական կայսր Հովհաննես Կոմնենոսին (1118-1143): Այս գործը բնագրով (հունարեն) հրատարակվել է միայն 1970 թվականին⁸⁹, իսկ նրա հայերեն թարգմանությունն ու ուսումնասիրությունը իրականացրել է ակադեմիկոս Հրաչ Բարթիկյանը ավելի ուշ՝ 1984-ին⁹⁰, ուստի, բնականաբար, դրան նախորդող տարիներին հրատարակված Կիլիկիային վերաբերող ուսումնասիրություններում այն ներառնված չէ:

Ներբողյանում փառաբանվում է Բյուզանդիայի Հովհաննես Կոմնենոս կայսրը Կիլիկիայում և Ասորիքում 1136-1138 թվականներին տարած հաղթանակների համար: Հայտնի է, որ այդ արշավանքի ժամանակ գերվեց Լևոն իշխանը, և որոշ ժամանակով վերացվեց Ռուփինյան իշխանությունը Կիլիկիայում:

Ըստ Միքայել Իտալիկոսի այս երկի՝ Լևոն իշխանը իրեն թագավոր է հռչակել, թագ (դիադեմա) է կապել ու կարմիր կո-

⁸⁹ Franca Fusco, *Il Panegirico di Michele Italico per Giovanni Comneno*, *Ἐπετηρίς Ἐταιρείας Βυζαντινῶν Σπουδῶν*, τομ. ΑΖ, Ἀθήναι, 1969-1970, p. 146-169.

⁹⁰ Բարթիկյան Հ., Միքայել Իտալիկոսի «Ներբողյանը» և Կիլիկիայի հայոց առաջին թագավորի խնդիրը. Պատմաբանասիրական հանդես, 4, 1984, էջ 216-229:

շիկներ է հագել, մի բան, որ հավասարազոր էր Կիլիկիան անկախ պետություն հռչակելուն: Նույն այդ երկում հեղինակը Լևոնին կոչում է թագավոր, իսկ երկիրը՝ թագավորություն: Հենց սա էլ համարվել էր հանդգնություն՝ պատճառ հանդիսանալով Հովհաննես կայսեր պատժիչ արշավանքին:

Հրատարակչի ու թարգմանչի կատարած պատմաբանասիրական բարեխիղճ ու մանրակրկիտ հետազոտությունը ցույց է տալիս, որ վերոհիշյալ երկը, թեև ունի գեղարվեստական բնույթ, միաժամանակ, հիմնված է պատմական փաստերի վրա և հավաստի է իբրև աղբյուր:

«Ներբողյանի» մեջ չի նշվում Լևոնի ինքն իրեն թագավոր հռչակելու տարին: Կարելի է ենթադրել, որ դա կարող էր լինել 1132 թվականը: Առաջին հերթին այն պատճառով, որ այդ թվականին Ռուբինյանները տիրացան Դաշտային Կիլիկիային: Ճիշտ է, դրա հիմքերը դրել էր դեռևս Թորոս իշխանը՝ Լևոնի եղբայրը, որը զգալիորեն ընդարձակել էր իշխանությունը՝ Հայկական Կիլիկիան դարձնելով տարածաշրջանային դերակատար, բայց նա այս կամ այն չափով շարունակում էր ընդունել բյուզանդական գերիշխանությունը: Մինչդեռ նրա եղբայրն ու հաջորդը՝ Լևոնը, վերջնականապես խզեց հարաբերությունները կայսրության հետ և խլեց Ադանա, Մամեստիա և Տարսոն քաղաքները բյուզանդացիներից: Հավանաբար հենց այդ դեպքերից հետո նա իրեն թագավոր հռչակեց, որից հետո իշխեց հազիվ 5 տարի:

Բյուզանդացի մի այլ նշանավոր պատմիչ Նիկետաս Խոնիատեսը, խոսելով Հովհաննես Կոմնենոսի արշավանքի մասին, Լևոնին կոչում է «Հայերի վրա իշխող» գրելով. «... դրանից հետո թագավորը (Հովհաննես Կոմնենոս կայսրը) հայտարարեց դեպի Կիլիկիա արշավանքի մասին՝ նպատակ ունենալով վրեժ լուծել Հայերի վրա իշխող Լեվոնից (Լևոն), քանի որ նա ոչ միայն տիրացել էր հոմենացիներին պատկանող մի շարք ամրոցների, այլև սպառնացել էր գրավել Սելևկիան»⁹¹:

Բյուզանդացի մի այլ պատմիչ՝ Հովհաննես Կինամոսը, եր-

⁹¹ Никиты Хониата История, т.1, Санкт Петербург 1860, Рязань 2003, стр.27.

կիրը կոչում է «Կիլիկիա», բայց Թորոս Բ-ին հիշատակում է առանց որևէ տիտղոսի, միայն նշելով, որ նա, փախչելով բյուզանդական գերությունից ու ժամանելով Կիլիկիա, «դավաճանաբար համոզում էր տեղի քաղաքներին», որ անջատվեն կայսրությունից:⁹² Իսկ մի այլ տեղ նույն Թորոս Բ-ի մասին գրում է «իսկ Թորոսը, որն այն ժամանակ իշխում էր հայերի վրա, նենգաբար խլեց թագավորին պատկանող իսավրիական շատ քաղաքներ»⁹³:

Այսպիսով, մեր առաջարկած մեկնաբանությունը, որն արդեն իսկ բավականաչափ հիմնավորված էր հենց արաբ պատմիչների վկայություններով, հավելյալ հիմնավորումներ է ստանում բյուզանդացի հեղինակների (հատկապես Միքայել Իտալիկոսի) հաղորդումներով:

Ինչու՞ Լևոն Ա, այլ ոչ Թորոս Բ

Քննության ենթարկելով ԺԲ-ԺԴ դարերի պատմագրությունը և ուսումնասիրելով, թե ինչպես են տարբեր պատմիչներ արձագանքել Կիլիկյան Հայաստանի պատմության կարևոր անցքերին և ինչպիսի գնահատականներ են տվել բախտորոշ դեր խաղացած գործիչներին, հանգում ենք այն եզրակացության, որ գործ ունենք դասական մի օրինակի հետ, երբ պետության առաջնորդը կամ ղեկավարը իր երկրի ներսում և երկրից դուրս ստանում է շատ տարբեր գնահատականներ:

Հայտնի է, որ հայ պատմագրության մեջ չկա որևէ տեղեկություն կամ թեկուզ ակնարկ, որ Լևոն Ա-ը թագադրվել է կամ իրեն անկախ է հռչակել: Մինչդեռ, ինչպես տեսանք, այդ մասին է խոսվում բյուզանդական երկում:

Լևոն Ա-ի վերաբերյալ հայ պատմագրության մեջ կան գնահատանքի ու գովեստի խոսքեր, բայց նա որևէ ձևով չի համարվում ոչ տոհմի հիմնադիր և ոչ էլ հայոց պետության հիմնադիր: Մինչդեռ, ինչպես տեսանք, արաբ պատմագրության մեջ

⁹² Иоанн Киннам, Краткое обозрение царствования Иоанна и Мануила Комнинов, С. Петербург, 1859, с. 133.

⁹³ Там же, с. 251.

հայոց ողջ արքայատոհմը Լևոն Ա-ի անունով կոչվում է Լևոնյան:

Կարելի է ասել, որ հայոց մեջ ավանդաբար ոչ պակաս, նույնիսկ մի քիչ էլ ավելի բարձր է գնահատվել Լևոնի որդու՝ Թորոսի գործունեությունը: Լևոն Ա-ը աչքի ընկավ որպես համարձակ քաղաքական գործիչ և ընդունակ զորավար: Արդյունքում նա խզեց կապերը Բյուզանդիայի հետ և նվաճեց Դաշտային Կիլիկիան, բայց այդ վիճակում նա դիմացավ ընդամենը 5 տարի (1132-1137): Չնայած ցույց տրված դիմադրությանը՝ Կիլիկիան նվաճվեց բյուզանդացիների կողմից, ինքը Լևոնն ու իր ընտանիքը գերեվարվեց, իսկ Ռուբինյան իշխանությունը վերացվեց:

Մինչդեռ Թորոս Բ-ը, փախչելով գերությունից և վերադառնալով հայրենիք, ոչ միայն վերականգնեց Ռուբինյան իշխանությունը (որը հավասարազոր էր նոր իշխանություն հիմնելուն), այլև ջախջախեց Անդրոնիկոսի բյուզանդական բանակը, ապա հաջող պայքար մղեց սելջուկների և խաչակիրների դեմ: Վերջապես, Մանուել Կոմնենոս կայսրի դեպի Կիլիկիա և Անտիոք կատարած արշավանքի ժամանակ դրսևորվեց Թորոս Բ-ի նաև դիվանագիտական ծիրքը, երբ նա սկզբում զգուշավորություն դրսևորեց, ապա նաև համաձայնություն հաստատեց Բյուզանդիայի և խաչակիրների հետ: Բնականաբար, այս հաջողությունները պայմանավորված էին նաև միջազգային նպաստավոր իրադրությամբ:

Այնուամենայնիվ, փաստ է, որ եթե Լևոն Ա-ի գործունեության արդյունքում իշխանությունը վերացվում է, ապա Թորոս Բ-ի երկարատև ղեկավարումը հասցնում է երկիրը մի վիճակի, երբ լիարժեք պետություն դառնալն ու թագավորություն հռչակվելը ընդամենը ժամանակի խնդիր էր: Ի վերջո, պատահական չէ որ ժԹ դարում պատմավիպասան Ծերենցը մի ամբողջ վեպ է գրել՝ «Թորոս Լևոնի» վերնագրով, որը նվիրված է հենց Թորոս Բ Ռուբինյանին:

Ժամանակի հայ պատմագրության խոշորագույն դեմքերից մեկը՝ Կիրակոս Գանձակեցին, իր Հայոց Պատմության մեջ Թ-

րոս Բ-ին կոչում է «մեծ իշխան»⁹⁴ կամ «մեծ իշխանաց իշխան Հայոց»⁹⁵, իսկ Լևոն Ա-ին ոչ միայն նման տիտղոսներ չի վերագրում (պարզապես անվանում է իշխան), այլև նրա իշխանության տարիներին անդրադառնում է հարևանցի՝ նրա անունը հիշատակելով միայն իր որդիների մասին խոսելիս: Փոխարենը, Գանձակեցին մի մեծ հատված է նվիրում Թորոս Բ-ի օրոք տեղի ունեցած անցքերին. «Եւ յուղարկեալ սրբոյ հայրապետին զկինն յաշխարհն Կիլիկեցոց առ **մեծ իշխանաց իշխանն Հայոց Թորոս** և նա ետ նմա գիւղս և ագարակս և այլ կալուածս և ուրախ արար զկինն յոյժ և ապա առաքեաց զնա յաշխարհն իւր: Այս Թորոս իշխան և եղբայր իւր Ստեփանէ որդիք էին **իշխանին Լևոնի**, որդւոյ Կոստանդեայ, որդւոյ Ռուբենայ, թոռանք յառաջագոյն ասացելոյ առնն, որ յազգականութենէ և ի զաակացն Գազկայ Արծրունեաց: Սոքա ընդարձակեցին զսահմանս զաւառաց և քաղաքաց աշխարհին Կիլիկեցոց և Սուրացոց և այլոց բազմաց. առին զանուանի քաղաքս աշխարհին՝ զՏարսոն և զՍիս և զԱտանա և զԱելևկիա և որ շուրջ զնոքօք գաւառք և քաղաքք: Զոր լուեալ կայսրն յունաց, Ալեքս կոչիւր, առաքէ բազում զօրօք ի վերայ իշխանացն հայոց՝ Ստեփանեայ և Թորոսին զԱնդրոնիկոս: Եւ ըմբռնեալ զՍտեփանէ խաբէութեամբ՝ ետ սպանանել: Իսկ Թորոսի առեալ գեղքօրորդիս իւր զՌուբէն և զԼևոն, եղ զնոսա ի բերդ մի ամուր և ապա էառ Թորոս զքէն վրիժոյ արեան եղքօր իւրոյ ի հոռոմոց անտի, որ բնակեալ էին յաշխարհին, զի **զբռնացեալսն կոտորէր և զայլսն փախստական առնէր յաշխարհէն և ինքն տիրէր ամենայն զաւառացն մեծաւ զօրութեամբ**»⁹⁶:

Վահրամ Րաբունու մոտ ևս տեսնում ենք, որ ակնհայտորեն գերազանցությունը տրվում է որդուն և ոչ թե հորը, և նույնիսկ երկիրը ստանում է նրա անունը.

«Արիաբար՝ իշխանացեալ,

⁹⁴ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխատասիրութեամբ՝ Կ. Մե-
լիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 154 (այսուհետև՝ Կիրակոս Գանձակեցի):

⁹⁵ Նույն տեղում, էջ 109:

⁹⁶ Կիրակոս Գանձակեցի, էջ 109-110:

Եւ յամենայն՝ ազգաց սիրեալ,
Որք զԿիլիկիա՝ անուն թողեալ,
Եւ **Թորոսի երկիր՝ կոչեալ**»⁹⁷, ապա նաև.
«Ի յԱնտիոք՝ կայսրն երթեալ,
Չմեծն Թորոս՝ զհետ կոչեալ.
Որ քաջութեան՝ գործըս ցուցեալ,
Չամենեսեան՝ հիացուցեալ»⁹⁸:

Վերջապես «**ԸզԿիլիկիա՝ բոլորն առեալ, Ծագէ ի ծագ՝
տիրապետեալ**»⁹⁹:

Լևոն Ա-ի գործունեությանը համապարփակ գնահատական է տվել հայագետ Երվանդ Քասունին իր «Կիլիկիոյ հայկական իշխանապետութիւնը Մերձաւոր Արեւելքի քաղաքական հոլովոյթին մէջ (1080-1137)» մենագրության մեջ. «Յանդուզն ու ռազմագէտ Լևոն Ա, որ այնքան կարճ ժամանակի մէջ կը յաջողէր Կիլիկիոյ հայկական իշխանապետութեան սահմանները մինչեւ Միջերկրական հասցնել, ինք իսկ ականատես կ'ըլլար այդ իշխանապետութեան փլուզումին: Որքան ռազմագէտ ու ռազմավար, **Լևոն Ա-ի կը պակսէր դիւանագիտութիւնը**, որուն այնքան կարիքը ունէր Մերձաւոր Արեւելքի մէջ հասակ առնող նորածին իշխանապետութիւն մը»¹⁰⁰:

«Իբն Լևոն»-ի հետադարձ կիրառությունը վաղ շրջանի համար.

Ուշագրավ է, որ ԺԲ-ԺԳ դարերում «Իբն Լևոն»-ը, «Լևոնյան» իմաստ ստանալով, այնուհետև ժամանակային առումով հետադարձ կիրառություն է գտնում՝ գործածվելով, օրինակ, ԺԱ դարավերջի և ԺԲ դարասկզբի համար, երբ Լևոն անունով իշխան կամ թագավոր Կիլիկիայում ընդհանրապես չկար: Նման հաղորդումների հանդիպում ենք Իբն ալ-Ասիրի մոտ, ինչպես

⁹⁷ Վահրամայ Բաբունեյ, Ոտանաւոր պատմութիւն Ռուբենեանց, Փարիզ, 1859, էջ 195 (այսուհետև՝ Վահրամ Բաբունի):

⁹⁸ Նույն տեղում, էջ 205:

⁹⁹ Նույն տեղում, էջ 207:

¹⁰⁰ Քասունի Երուանդ, Կիլիկիոյ հայկական իշխանապետութիւնը Մերձաւոր Արեւելքի քաղաքական հոլովոյթին մէջ (1080-1137), Պէյրութ, 1974, էջ 212:

նաև Իբն ալ-Իբրիհի (Բար Հեբրեոսի) արաբերեն պատմական երկում:

Իբն ալ-Ասիրը, խոսելով խաչակրաց Ա արշավանքի և Անտիոքի գրավման մասին, հաղորդում է. «**491 թվական (9 դեկտեմբեր 1097 – 27 նոյեմբեր 1098) Ֆրանկների՝ Անտիոքը գրավելու մասին.....**Երբ ֆրանկները որոշեցին Ասորիքի (Շամ) վրա հարձակվել, գնացին Կ. Պոլիս, որպեսզի նեղուցը անցնելով մտնեն մահմեդականների երկիրը՝ ընթանալով ցամաքի ճանապարհով, որն ավելի դյուրին էր: ...Երբ հասան, Կիլիջ Արսլանն իր զորքով դիմադրեց և արգելք եղավ, սակայն նրանք կռվեցին ու հաղթեցին (չորս հարյուր) իննսուն թվականի Ռաջաբ ամսին (4 հունիս – 3 հուլիս): Նրա երկրի միջով անցնելով՝ նրանք մտան հայազգի Լևոնի որդու (**Իբն Լայուն ալ-Արմանի**) երկիրը, որի միջով անցան և դուրս եկան Անտիոք (Անթաքիա) ու պաշարեցին»¹⁰¹:

Իսկ Իբն ալ-Իբրիհն (Բար Հեբրեոսը) գրում է. «...այդ տարին (1112) մահացավ Բասիլ Հայը՝ Կիրճերի՝ Իբն Լևոնի երկրի տերը, որին կոչում էին Գող Բասիլ»¹⁰²:

Այս վերջին տեղեկությունը էլ ավելի է ընդարձակում «Իբն Լևոնի երկիր» արտահայտության իմաստային սահմանները, քանի որ Ռուբինյան իշխանության կամ Կիլիկիայի սահմաններից դուրս գալով՝ այն իր մեջ ներառում է նաև Գող Վասիլի հողերը, այսինքն Եփրատացիքը: Այլ կերպ ասած՝ այստեղ արդեն խոսքը վերաբերում է ԺԱ դարի վերջին քառորդում ձևավորված ողջ «հայաշխարհին»: Հատկանշական է, որ «Կիրճեր» արտահայտությունը համապատասխանում է Կիլիկիային (որը հայտնի է իր լեռնանցքներով), բայց այնքան էլ չի համապատասխանում Եփրատացվոց աշխարհին: Բայց ԺԳ դարի պատմիչը հետադարձ ձևով ԺԱ դարավերջի համար կիրառում է ոչ միայն «Իբն Լևոնի երկիր» արտահայտությունը, այլև զուտ Կիլիկիային վերաբերող «Կիրճերը»:

¹⁰¹ Իբն ալ-Ասիր, էջ 229, Kamil fi-l-tarikh, v. VIII, p. 186.

¹⁰² Ibn al-Ibri, p. 346.

Տեսնենք, թե նույն ժամանակաշրջանի մասին ինչ անուններ է գործածում Բար Հեբրեոսն իր ասորերեն երկում. «Ապա հայերը, որ դեռ Փիլարտոսի ժամանակներից իրենց ձեռքում էին պահում որոշ բնակավայրեր և նրանցից Գող Վասիլը, որ նշանակում է Գող, որ իր ձեռքում էր պահում Քիշումն (Քեսուն) ու Ռաբանը, ինչպես նաև Ռուֆինի (Ռուբեն) որդիները, որ մի շարք բնակավայրերի էին տիրում Հայաստանում, վախենալով, որ ֆրանկները իրենց վրա իշխող կղառնան ու կքշեն իրենց տիրույթներից գաղտնի լուր ուղարկեցին Դանիշմանդի որդի Իսմաիլին, խնդրելով որ նա դարանակալի ֆրանկներին»¹⁰³: Ապա տասը էջ հետո գրում է. «Այդ ժամանակ Կիլիկիայում կային երկու եղբայրներ (Թորոս և Լևոն)՝ Ռուբենի որդի Կոստանդինի որդիները, ... իսկ Քիշումում (Քեսուն), Ռաբանում, Բեթ Հեսնեում և Կալա Ռոմայայում (Հոռմկլա) իշխում էր Գող Վասիլը»¹⁰⁴: Այստեղ հստակ երևում է, որ պատմիչը «Հայաստան» է անվանում միայն Ռուբինյանների տիրույթները, իսկ Գող Վասիլի տիրույթները հստակ առանձնացնում է դրանցից, մինչդեռ իր իսկ արաբերենով գրած երկում Գող Վասիլին կոչում է «Իբն Լևոնի երկրի տերը»: Փաստորեն եթե նախորդ շարադրանքում մի շարք հիմնավորումներով ցույց տրվեց, որ «Իբն Լևոն»-ը «Լևոնյաններ» իմաստն ունի, որ նույնն է թե «Ռուբինյաններ», ապա երկրի անունը տալիս «Բիլադ Իբն Լևոն» հասկացությունը հնարավոր է նույնիսկ ավելի լայն դիտարկել քան «Ռուբինյանների երկիր» կամ «Կիլիկիա»: Այս բառեզրը փաստորեն իր մեջ ընդգրկում է ողջ հայաբնակ տարածաշրջանը՝ թե՛ Կիլիկիան, թե՛ Եփրատացիքը և թե՛ հարևան հայահոծ շրջանները¹⁰⁵, այլ

¹⁰³ Bar Hebraeus, p. 237.

¹⁰⁴ Ibidem, p. 246.

¹⁰⁵ Հանուն ճշմարտության պետք է նշել, որ հայ պատմիչները ևս Կիլիկիան, Իսաուրիան, կամ Եփրատացիքը միշտ չէ որ հիշատակում էին իրենց ճշգրիտ սահմանների մեջ և այս անվանումները երբեմն օգտագործվում էին մեկը մյուսի փոխարեն: Օրինակ, Մխիթար Այրիվանեցին Գող Վասիլի իշխանության հողերը համարում է Կիլիկիա. «Իշխանքն հայոց զօրացան ի Կիլիկիա և առին զԽաառասնէքն և զՄարաշ և զԲեհեսնի», կամ «Վասիլն և այլ իշխանք Կիլիկիոյ տարան աղաչանօք առ ինքեանս զտէր Գրիգոր կաթողիկոսն» (Տե՛ս

կերպ ասած՝ ԺԱ դարի վերջին քառորդին առաջացած նորաստեղծ «հայաշխարհը»: Իսկ ժամանակային առումով թե՛ «Իրն Լևոն»-ը և թե՛ «Իրն Լևոնի երկիր»-ը կիրառելի են սկսած ԺԱ դարի վերջերից մինչև առնվազն ԺԳ դարի 20-ական թվականները:

Մինչև ե՞րբ են գործածվել «Իրն Լևոն», «Բիլադ Իրն Լևոն» արտահայտությունները:

Հայտնի է, որ 1226-ին Հեթում Ա-ի գահակալումը հաճախ չի ընկալվել որպես նոր արքայատոհմի հաստատում, այսինքն չի համարվել, որ Ռուբինյաններին հաջորդում են Հեթումյանները, այլ որպես միացյալ Ռուբինյան-Հեթումյան տոհմի հաստատում (Հեթումի և Ջաբելի ամուսնությամբ), կամ էլ պարզապես որպես Ռուբինյանների շարունակություն: Մինչդեռ արաբ պատմագրության մեջ նույն «Իրն Լևոն»-ի կիրառությանը հետևելով կարելի է եզրակացնել, որ արաբ մատենագիրները հստակ սահմանազատել են նաև Կիլիկյան Հայաստանի իշխող տոհմերին, չնայած Հեթումյաններին տրվող առանձին ինչ որ մի տոհմանուն չեն կիրառում¹⁰⁶: Դրա ապացույցն է այն, որ մեզ հայտնի աղբյուրներում ԺԳ դարի 20-ական թվականներից սկսած այլևս չեն գործածվում «Իրն Լևոն», «Իրն Լևոնի երկիր» արտահայտությունները, մինչդեռ համատարած կերպով կիրառվում է «Հայոց թագավոր», «Հայոց երկիր», «Սսի երկիր», «Սսի երկրի թագավոր», «Սսի տեր» ձևերը, որոնք սակայն նախապես էլ «Իրն Լևոնին» զուգահեռ կիրառվում էին:

Բազմաթիվ օրինակներից հիշենք մի քանիսը: Դիտարկենք որոշ հատվածներ 14-րդ դարի պատմիչ ալ-Ջահաբիի «Գիրք մահմեդական հարստությունների մասին» երկից, որը Կիլիկյան Հայաստանի մասին շատ արժեքավոր տեղեկություններ է պարունակում: Հատկանշական է, որ նույն հեղինակը Մլեհի կամ Լևոն Մեծագործի մասին խոսելիս կիրառում է «Իրն

Մխիթարայ Արիվանեցոյ Պատմութիւն Հայոց, ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1860, էջ 60-61):

¹⁰⁶ «Իրն Լևոնի» համանմանությամբ դա կարող էր լինել ասենք «Իրն Հեթում», կամ «Իրն Կոստանդին»:

Լևոն»-ը, իսկ հետագա (Վերումյան շրջանի) դեպքերի մասին խոսելիս այն այլևս չի կիրառում:

Օրինակ, խոսելով Մլեհ-Նուր ալ-Դին հարաբերությունների մասին Հիջրայի 568 (1172/1173) թվականին օգտագործում է «Մալիհ իբն Լաուն ալ-Արմանի ալ-Նասարանի» այսինքն «հայ քրիստոնյա Մլեհ Լևոնյանը»¹⁰⁷ արտահայտությունը: Նույն պարբերության մեջ Կիլիկիայի վերաբերյալ օգտագործվում է մի դեպքում «Բիլադ Սիս»՝ այսինքն «Սսի երկիր», իսկ մի այլ տեղում «Մամլաքա Սիս»՝ այսինքն «Սսի թագավորություն»¹⁰⁸:

Խոսելով Լևոն Ա թագավորի կողմից Անտիոքի առաջին պաշարման մասին՝ (Հիջրայի 600՝ 1203/1204) ալ-Ջահաբին կիրառում է «Սահիբ Սիս»-ը (Սսի տերը)¹⁰⁹ :

Հիջրայի 602 (1205/1206) թվականին եղած անցքերի մեջ, խոսելով Հալեպի երկրի վրա Լևոն թագավորի գլխավորությամբ հայերի հարձակումների մասին, նա արքային անվանում է «Սահիբ Սիս Իբն Լայուն» (Սսի տեր Իբն Լևոն)¹¹⁰:

Մեջբերենք ևս մի քանի հատված, որոնք վերաբերում են ԺԳ դարի վերջին և ԺԴ դարի առաջին տասնամյակներին: Հիջրայի 692 (1292/1293) թվականի դեպքերի շարքում պատմիչը գրում է այն մասին, որ Եգիպտոսի սուլթանը պահանջեց Բեհեսունին Կիլիկիայի թագավորից, և վերջինս նախընտրեց հանձնել այն: Այստեղ Հայոց թագավորին հիշատակում է որպես «Սահիբ Սիս» (Սսի տերը)¹¹¹:

Նույն ալ-Ջահաբին 697 (1297/1298) տարվա դեպքերի մեջ հիշատակում է մամլուքների հարձակման և այն մասին, թե ինչպես պաշարեցին «Սսի ամրոցները», ապա շարունակում է՝ նշելով, որ «խլեցին Մարաշի ամրոցը»¹¹²:

¹⁰⁷ Al-Dahabi, Kitab duwal al-Islam, Beirut, 1999, p. 73 (Այսուհետև՝ Al-Dahabi).

¹⁰⁸ Ibidem.

¹⁰⁹ Ibidem, p. 107.

¹¹⁰ Ibidem, p. 109.

¹¹¹ Ibidem, pp. 217-218.

¹¹² Al-Dahabi, pp. 225-226. Ինչպես հայտնի է Մարաշը բուն Կիլիկիայից դուրս է և մտնում է Եփրատացիք նահանգի մեջ: Պարզ է որ արաբ պատմիչը հայերի կողմից ցանկացած նվաճված տարածք անվանում է Սսի երկիր /Սիսուան/.

Հիջրայի 699 (1299/1300) թվականի մեջ ալ-Չահաբին հիշատակում է, թե ինչպես թաթարները ներխուժեցին Դամասկոս, իսկ նրանց հետ եկող Կիլիկիայի թագավորը հրկիզեց Դամասկոսի մեծ մզկիթը, ընդ որում գրում է «Սսի տերը և անհավատները» (Սահիբ Սիս ուա է-քուֆարա)¹¹³ կարծես շեշտելու համար մզկիթ այրելու արարքի անվայել լինելը: Հիջրայի 722 (1322) թվականի դեպքերի շարքում հաղորդում է՝ «Եվ այդ տարում գրավեցին Այասն ու հրկիզեցին այն և կողոպտեցին Սսի երկիրը»¹¹⁴:

Վերջապես 736 (1335/1336) թվականի մասին խոսելիս նշում է կիլիկեցիներից մի ամրոց գրավելու մասին . «Եվ գրավեց Նաֆիր ամրոցը Սսի երկրում ...»¹¹⁵:

ԺԴ դարի հեղինակ է Իբն Բատուտան, որն անձամբ անցել է Կիլիկիայով և իր ճամփորդությունների մասին պատմող գրքում (որն ընդունված է կարճ անվանել «Ռիհլա») հաղորդում է հետևյալը. «Բերդը (Բաղրաս) ամուր և անառիկ է: Նրա մոտ կան պարտեզներ և արտեր: Այդ տեղից մտնում են Սսի երկիրը, այն է՝ քաֆիր հայերի երկիրը: Նրանք Մալիք-ալ-Նասիրին հպատակ են և նրան հարկ են տալիս»¹¹⁶:

«Սսի երկիր» արտահայտությունը կիրառվում է արաբ պատմագրության մեջ ԺԲ դարի վերջերից, երբ 1173-ին Սիսը դառնում է Ռուբինյան իշխանապետության մայրաքաղաք: Շուտով Սիսը ոչ միայն վարչաքաղաքական, այլև առևտրատնտեսական առումով կարևոր նշանակություն է ձեռք բերում՝ հավասարվելով ու գերազանցելով Կիլիկիայի հին ավանդույթներով քաղաքներին (Տարսոն, Ադանա, Մամեստիա, Անագարբա): Վերջապես ԺԳ դարի վերջին (1292-ին Հոմակլայի գրավումից հետո) Սիսը դառնում է նաև կաթողիկոսանիստ քաղաք, թե՛ քաղաքական և թե՛ հոգևոր կենտրոն: Հավանաբար սրանով

անկախ այն բանից դա աշխարհագրականորեն Կիլիկիա է թե ոչ, անգամ Գող Վասիլի իշխանությունը կոչվում է Սսի երկիր:

¹¹³ Ibidem, p. 229.

¹¹⁴ Ibidem, p. 261.

¹¹⁵ Ibidem, p. 281.

¹¹⁶ Իբն Բատուտա, Հրաչյա Աճառյանի թարգմանությամբ, Երևան, 1940, էջ 9:

պետք է բացատրել, որ արաբ պատմիչներն ավելի ու ավելի շատ են սկսում գործածել «Սսի երկիր» արտահայտությունը, իսկ հայոց թագավորներին էլ կոչում են «Սսի երկրի տեր» կամ պարզապես «Սսի տեր», «Սսի թագավոր»: Ուշ շրջանի պատմիչների մոտ այս անվանումը ավելի հաճախ է կիրառվում, քան «Հայաստան», «Հայոց երկիր» անվանումը, իսկ «Իբն Լևոն», «Իբն Լևոնի երկիր» բառերը ընդհանրապես չեն գործածվում:

«Բայթ Լևոն» կամ «Տունն Լեւոնեանց»

Արդեն իսկ ուսումնասիրված նյութի վրա մի շատ կարևոր տեղեկություն է ավելացնում ԺԳ դարի պատմիչ Իբն ալ-Դավադարին: Իր բազմահատոր պատմական երկի Ը հատորում, խոսելով Հիջրայի 673 (1274-1275) թվականի դեպքերի մասին և անդրադառնալով Կիլիկյան Հայաստանին, իր ընթերցողին ավելի մանրամասն տեղեկություններ հաղորդելու նպատակով, նա ակնարկ է կատարում դրանից հարյուր տարի առաջ, այն է Հիջրայի 568 (1172-1173) թվականին տեղի ունեցած դեպքերին՝ մանրամասն պատմելով Մլեհի և Նուր ալ-Դինի դաշինքի, ինչպես նաև բյուզանդացիների ու խաչակիրների դեմ Մլեհի մղած հաջող պայքարի և ողջ Կիլիկիան իրեն ենթարկելու մասին:

Անշուշտ Իբն ալ-Դավադարին օգտվել է այլ, այդ թվում և մեզ չհասած աղբյուրներից, բայց շատ կարևոր է, որ գործածում է ևս մի նոր հասկացություն՝ «Բայթ Լաուն», այն է՝ «Տունն Լևոնի»: Հետաքրքիր է, որ այս հասկացությանը հանդիպում ենք Կիլիկիայի մասին պատմող գլխի վերնագրում, որը կարելի է թարգմանել այսպես՝ «Հիշենք [թե ինչպես] Լևոնի տունը (զարմը) դարձավ Սսի տերը (կամ Սսի վրա տիրապետող դարձավ)»¹¹⁷:

Իբն ալ-Դավադարին իր բազմահատորանոց երկը գրել է ԺԳ դարի վերջին և ԺԴ դարի սկզբին, այսինքն այն ժամանակ, երբ այլևս գործածական չէր «Իբն Լևոն» հասկացությունը, և փոխարենը շատ գործածական էր «Սսի տեր»-ը, «Սսի երկրի տեր»-ը, «Սսի թագավոր»-ը: Այստեղ պատմիչը կիրառում է «Իբն Լևոն»-ին փոխարինող, միաժամանակ նույն այդ «Իբն Լևոն»-ը

¹¹⁷ Ibn al-Dawadari, Kanz al-durar wa jami al-ghurar, VIII, Cairo, 1971, p. 180.

վերջնականապես բացատրող մի բառեզր՝ «Լևոնի տուն»։ Հետագա տեքստում հանդիպում ենք նաև արդեն մեզ ծանոթ «Իբն Լևոն»-ին հետևյալ նախադասության մեջ. «...և նրա (այդ երկրի) վրա իշխեց Մալիի իբն Լաունը»¹¹⁸։ Փաստորեն, ԺԴ դարում ևս արաբ պատմիչը օգտագործում է «Իբն Լևոն»-ը, քանի որ խոսքը վերաբերում է 1172-1173-ի դեպքերին։

Այստեղ պատմիչը ևս մի շատ կարևոր բացատրություն է տալիս։ Նույն այդ «Լևոնի տունը» (Տունն Լեւոնեանց) ընթերցողին ներկայացնելու համար ավելացնում է «Այդ Լևոնի տունը հենց Թաքֆուրի (թագավորի) տունն է»¹¹⁹, այլ կերպ ասած բացահայտում է Լևոնյանների արքայատոհմ լինելու հանգամանքը։

Այսպիսով՝

• ԺԱ-ԺԴ դարերում Փոքր Ասիայի՝ Ասորիքին հարող մասում, Միջերկրականի հյուսիսարևելյան անկյունում գոյատևած պետության զբաղեցրած տարածքը անվանելու համար միջնադարյան բազմալեզու աղբյուրները կիրառել են հիմնականում երկու մոտեցում՝ այն կոչել ըստ տիրող և բնակչության մեծամասնությունը կազմող էթնոսի անվանման, այսինքն՝ Հայաստան, Հայոց երկիր և այլն, կամ էլ գործածել այդ պետության հիմնական տարածքը կազմող երկրամասի հնագույն ժամանակներից եկող և հռոմեաբյուզանդական շրջանում ընդունված անվանումը՝ Կիլիկիա։ Սա վերաբերում է թե հայ, թե ասորի, թե լատին (այդ թվում հին ֆրանսերենով գրած), թե բյուզանդացի պատմիչներին, որոնք այս կամ այն չափով կիրառել են այս երկու մոտեցումները։ Այս երկու մոտեցումներին հետևում են նաև արաբ պատմիչները, բայց որոնք կիրառում են բոլորից նաև արաբ պատմիչները անվանումներ։ Հայոց երկիր անվանման կողքին նրանք կիրառում են «Կիրճեր», «Կիրճերի երկիր» և մանկուղքին նրանք կիրառում «Սիս», «Սսի երկիր» անվանանավանդ, ավելի ուշ շրջանում՝ «Սիս», «Սսի երկիր» անվանումները, որով հասկացվում է ոչ թե մի քաղաք, այլ ողջ երկիրը՝ Սիսուանը՝ Կիլիկիան։

¹¹⁸ Ibidem.

¹¹⁹ Ibidem.

- Արաբ պատմագրության մեջ լայնորեն կիրառվում է «Իբն Լևոն» անվանումը, որը բառացի նշանակում է «Լևոնի որդի», բայց իրականում պետք է թարգմանվի որպես «Լևոնի որդիներ», «Լևոնի զարմ», «Լևոնյան» կամ «Լևոնյաններ», քանի որ արաբ պատմիչներն այն կիրառելով նկատի չեն ունեցել որևէ կոնկրետ անձի, այլ պարզապես մատնանշել են պատկանելությունը որոշակի տոհմին, որն ընդունված է կոչել «Ռուբինյան», մինչդեռ արաբներն այլ անվանում են տվել:

- Տոհմի անվանադիրը Լևոն Ա իշխանապետն էր, որի օրոք հայերը առաջին անգամ գրավեցին Դաշտային Կիլիկիան իր խոշոր քաղաքներով, ինչպես նաև լիովին խզելով կապերը Բյուզանդական կայսրության հետ՝ փորձ կատարեցին բացարձակապես անկախ պետություն ստեղծել: Այս երկու հանգամանքը և այն, որ Դաշտային Կիլիկիան Է-Ժ դարերում գտնվել էր տարբեր արաբական պետությունների կազմում և արաբամահմեդական ընկալման մեջ Բիլադ ալ-Շամի, այսինքն մեծ Ասորիքի մաս էր կազմում, էլ ավելի նշանակալից է դարձրել Լևոն Ա-ին: Նա ընկալվել է ոչ միայն որպես քաջ զորավար, այլև որպես հայկական նոր պետության և նրա իշխող հարստության հիմնադիր:

- Այլ լեզուներով ստեղծված պատմագրությունների մեջ մեր խնդրո առարկայի համար բացառիկ նշանակություն ունեն ասորի պատմիչները, որոնք մի շարք բառերի, հասկացությունների, կամ նույնիսկ քարացած ձևերի փոխանցողների դեր են կատարել քրիստոնյա և մահմեդական միջավայրերի միջև: Սրանցից Բար Հեբրեոսը առավել կարևոր նշանակություն ունի մեր նյութի համար, քանի որ շարադրել է հավասարապես թե՛ ասորերեն և թե՛ արաբերեն, և նրա երկու պատմական երկերի համեմատությունը մեզ մեծապես օգնեց Ռուբինյանների հանդեպ արաբ պատմիչների մոտեցումները բացահայտելու գործում:

- Հավանաբար նույնպես միայն արաբ պատմագրության հատուկ երևույթ է ոչ միայն «Իբն Լևոն» անվանման գործածումը, այլև դրա ժամանակային առումով հետադարձ կիրառումը: Խոսքը դեռևս ԺԱ դարի վերջին ու ԺԲ դարի սկզբին վերա-

բերող հաղորդումների մասին է, որտեղ կիրառվում է «Իբն Լևոնի երկիր» հասկացությունը: Այսինքն այն ժամանակներում, երբ այդ անունով որևէ իշխան չկար Կիլիկիայում:

- Սա կիրառվում է նույնիսկ Գող Վասիլի իշխանության մասին հիշատակելիս, որը, ինչպես հայտնի է, գտնվում էր Եփրատացիքում: Սա ցույց է տալիս, որ արաբ պատմիչների համար տարածաշրջանի (Կիլիկիա, Իսաւրիա, Եփրատացիք, Կապադովկիա) ցանկացած հայկական պետական կազմավորում ընկալվում էր որպես «Իբն Լևոնի երկիր»:

- ԺԳ դարի 20-ական թվականներից սկսած՝ արաբ պատմիչները դադարում են «Իբն Լևոն»-ը կիրառել՝ մի տեսակ ջրբաժան ստեղծելով Ռուբինյան և Նրան հաջորդող շրջանի միջև: Դրանից հետո արդեն կիրառվում է երկրի համար «Հայոց երկիր» (նախկինում արդեն կիրառված), «Սսի երկիր», «Սիս», իսկ իշխողների համար՝ համապատասխանաբար «Հայոց թագավոր», «Հայոց երկրի թագավոր», «Սսի երկրի թագավոր», «Սսի տեր» անվանումները:

- Արաբ պատմագրության մեջ հանդիպող «Բայթ Լաուն» (Լևոնի Տուն, Տունն Լեւոնեանց) արտահայտությունը մեկ անգամ ևս հաստատում է «Իբն Լևոնի» տոհմանուն լինելու հանգամանքը: Այն ցույց է տալիս, որ խոսքը որոշակի որդու մասին չէ, այլ Լևոնի (ընդ որում արդեն վստահ կարելի է ասել, որ դա Լևոն Ա-ն է) որդիների ու ժառանգների մասին է:

- Շատ հարցերի վերջնական պատասխան է տալիս Յակուտ ալ-Համավիի տեղեկությունն այն մասին, որ Կիլիկիան բյուզանդացիներից խլել է Լևոն հայը, որի սերնդի ձեռքում է այդ երկիրը: Կասկածից վեր է, որ այդ «Լևոն հայը» Լևոն Ա իշխանապետն է (1129-1137), որից էլ, ըստ արաբ պատմագրության ծագում են Լևոնյանները:

- Անհրաժեշտ է նշել որ «Լևոն» անունը դժվար է ճշգրիտ վերարտադրել արաբերենով այն պարզ պատճառով, որ դասական արաբերենում բացակայում են e, v, o տառերը, ուստի արաբ հեղինակների մոտ այն հանդիպում է մի շարք տարբերակներով, այն է՝ «Laun», «Layun», «Lawun», «Lifun»: Համեմատելիս այն դեպք, բոլոր տարբերակներում էլ առկա է «n» տառը, որով

դրանք հեռանում են լատինական Leo-ից: Միաժամանակ տարբերակների մեծ մասում ինչ-որ ձևով առկա է հայերենի «ւ»-ը տարբերվելով հունական Leon-ից ու մոտենալով հայկական «Լեոն»-ին:

- Եթե «Իբն Լևոն» անվանումը նշանակում է «Լևոնյաններ», որը հավասարազոր է «Ռուբինյաններ»-ին, այդ դեպքում ինչպե՞ս պետք է վարվի թարգմանիչը կամ հետազոտողը, որը թարգմանում է արաբ պատմիչի երկը, կամ նրանից հատվածներ է մեջբերում: Մեր կարծիքով «Իբն Լևոն» կամ «Իբն Լևոնի երկիր» արտահայտությունները պետք է ընկալել որպես քարացած արտահայտություններ, որոնք ենթակա չեն թարգմանության: Այսինքն հայերեն տեքստում դրանք նույնությամբ պետք է պահպանել՝ օժտելով համապատասխան ծանոթագրություններով:

RESUME

THE RUBENID DYNASTY IN THE MEDIEVAL ARAB HISTORIOGRAPHY

The Arab historians of 12-14th centuries in their reports on Cilician Armenia and its rulers don't mention the famous Armenian dynasty of Cilicia – Rubenids. Instead, very often they use the term “Ibn Levon (Lawun, Layun, Lifun etc.)”. The latter is used while writing about the historical deeds and personalities up to the 20-ies of 13th century. We come across to that term in the works of Ibn al-Qalanisi, Ibn Shaddad, Ibn al-Athir, Yaqut al-Hamawi, Ibn al-Ibri (Bar Hebraeus), Kamal al-Din Ibn al-Adim, Abu Shama, Abu-I-Fida, al-Dahabi, Ibn al-Dawadari and other authors of the same period.

Considering the semantic significance of the term “Ibn Levon” in the reports of the medieval Arab authors and comparing them with Armenian, Byzantine, Latin and especially Syriac sources, we came to a conclusion that “Ibn Levon” doesn't refer to a specific person, like “son of a certain man called Levon”, but it is a common form used in the Arab historiography to name the Rubenid dynasty in Cilicia and, accordingly, the expression “Bilad Ibn Levon” (Country of Ibn Levon) refers to the Cilician Armenia.

In Arab medieval historiography in order to name a family or a dynasty the word “Banu” (Sons) is used, e.g. Banu Umayya – Omeyyades, or Banu I-Abbas – Abbasids etc., while in this case they use the singular form of the word “Banu”- “Ibn” (Ibn Levon). Thus, if translated literally, it can create confusion. That is why the term “Ibn Levon” cannot be translated as “Son of Levon”. The Arabic form has to be preserved and provided with an explanation, saying that it means “Sons of Levon”, or “One of the sons of Levon”, or simply the “Levonids” (Rubenids).

In addition to that, we have observed that the origin of this term is the name of the prince Levon I (1129-1137), who was the first (before him the Rubenid principality was limited to the territory of the Mountainous Cilicia) to conquer the fertile land of The Lower Cilicia with its big cities Tarsus, Adana and Mamistra.

We have noticed that the Lower Cilicia had much more importance in the Arab milieu as an integral part (7-10th cc.) of "Bilad al-Sham" (Larger Syria). That is why prince Levon was considered by the Arab authors as the founder (unlike the Armenian tradition) of the dynasty.

The assumption, that Levon I was considered as the founder of the dynasty (and the Armenian principality as well) was confirmed furthermore when we met the term "Bayt Levon", which can be translated as "The House (or the dynasty) of Levon".

It is worth to be mentioned that while speaking about late 11th and early 12th c. events (that is before Levon I) the Arab historians and geographers of 13-14th cc. also use the term "Ibn Levon" or the expression "The country of Ibn Levon".

3. «ԹԱԳԱՎՈՐ / ԹԱՔՖՈՒՐ» ՏԻՏՂՈՍԸ
ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՄՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ
ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԳԱԳԻԿ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Կիլիկիայի Հայոց իշխանապետության ու թագավորության պատմությունը, հայոց պատմության կարևոր գլուխներից մեկը լինելով, նույնչափ արժեքավոր է Մերձավոր Արևելքի քաղաքական ու մշակութային պատմության համատեքստում: Կիլիկիայի հայկական պետության շուրջ երեքհարյուրամյա գոյությունը նշանավորվել է ոչ միայն նյութական ու մշակութային հսկայական ժառանգության ստեղծումով, այլև հատկանշական հետք է թողել մերձմիջերկրածովյան Մերձավոր Արևելքի միջազգային քաղաքական փոխհարաբերությունների պատմության մեջ: Այդ հարաբերությունների բազմակողմանի լուսաբանման համար պահպանված մատենագրական-պատմագրական նյութը առաջնային կարևորություն ունի ոչ միայն ընդհանրապես՝ որպես պատմական տեղեկությունների աղբյուր. նրանում ավանդված անվանացանկերի (նոմենկլատուրա), տիտղոսակազմերի, տերմինաբանության, անգամ առանձին խրթնիմաստ բառերի ու փոխառությունների ուսումնասիրությունը նույնպես կարող է շատ բան ավելացնել մեր ընկալումներին: Այս երևույթի փայլուն օրինակ է միջնադարյան մուսուլմանական մատենագրության մեջ լայն կիրառություն ստացած հայկական «թագավոր» տիտղոսը:

Թագավոր բառն, ըստ էության, հայկական ծագում ունի ու առաջացել է «թագ» (իրանական ծագման) բառարմատի և ունենալու, կրելու հատկանիշ արտահայտող *-[ա]վոր* բառակազմական ածանցի բաղադրությամբ, այն է՝ «թագակիր», «թագ ունեցող-կրող»: Բառի ստուգաբանության այս տարբերակը տակավին ժԹ դարում առաջարկել է ականավոր հայագետ Հ. Հյուբշմանը¹: «Կիլիկյան շրջանում» բառը փոխառնվել է ասորերենի

¹ Տե՛ս H. Hübschmann, Armenische Grammatik: I Theil. Armenische Etymologie, Druck und Verlag von Breitkopf & Härtel, Leipzig, 1897, S. 153.

(takāwōr²/ takpūr³), արաբերենի (takfūr) թուրքերենի և պարսկերենի (tekfūr, tekūr/takwar, tekīr, teker տարբերակներով) կողմից⁴: Բառի ծագման այս մեկնությունը, սակայն, երկար ժամանակ միակը չի եղել⁵: Ի դեմս Թ. Յենկերի և այլոց, օրինակ, այն կարծիքն է շրջանառվել, որ tekfūr պատմաբանն առաջացել է Նիկեֆորոս կայսեր (Նիկեֆորոս II Փոկաս, կառ. 963-969 թթ.) անվան տառադարձված ձևի աստիճանական աղավաղման հետևանքով (Nikfūr>Tekfūr)⁶, «վասն զի այս երկու նշանագրերը արաբերենի մեջ որոշիչ կիտագրության թուովը միայն կը զանազանուին իրարմէ»⁷: Հիրավի, բառի մեկնության այս վարկածը

² Կլ. Ցիանկազլինին տարօրինակ կերպով takāwor-ը (բացատրում է՝ «հայերի արքան») համարել է ասորերենին ոչ թե անմիջապես հայերենից, այլ պարսկերենից անցած փոխառություն: St'ū Cl. A. Ciancaglino, *Iranian Loanwords in Syriac*, Dr. Ludwig Reichert Verlag, Wiesbaden, 2008, p. 267.

³ Կիլիկիո հայոց արքա Հեթում Բ-ին (1289-1307 թթ.՝ ընդհատումներով), օրինակ, իր պատմության մեջ հենց takpūr անունով է կոչում նեստորական վանական, ճանապարհորդ ու դիվանագետ Բար Սաուման (մահ. 1294 թ.): Նա պատմում է մոնղոլ էմիր Նովրուզի հետապնդումներից նեստորականների կաթողիկոս Մար Յահրալահային ազատելու համար հայոց արքայի գործադրած ջանքերի մասին: «Դարան Սաումայի կառուցած եկեղեցուն հասավ խիթամ (Հեթում) «Takpūr»-ը՝ հայերի արքան, և մեծ ընծաների միջոցով (այսինքն՝ Նովրուզին կաշառելով՝ Գ.Դ.) և իր զորքով փրկեց այն ավերումից»: St'ū The Monks of Kublai Khan, Emperor of China or The History of the Life and Travels of Rabban Sawma, Envoy and Plenipotentiary of the Mongol Khans to the Kings of Europe, and Markos Who as Mar Yahbh-Allaha III Became Patriarch of the Church of the East in Asia, tr. from Syriac E. A. W. Budge, Religious Tract Society, London, 1928, pp. 103-104.

⁴ St'ū Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հտ. Բ (Ե-Կ), Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 1973, էջ 136:

⁵ Բառի ստուգաբանության այլ տարբերակների մասին տե՛ս Անդ, էջ 135-136:

⁶ J. T. Zenker, *Türkisch-Arabisch-Persisches Handwörterbuch*, Heft I, Verlag von Wilhelm Engelmann, Leipzig, 1862, S. 304.

⁷ St'ū Ֆր. ֆոն Կրելից-Գրայֆէնհորստ, Հայերեն փոխառելի բառեր թուրքերենի մեջ (Fr. Kraelitz-Greifenhorst, *Armenische Lehnwörter im Türkischen*) // Հանդէս Ամսօրեայ, Վենետիկ, 1911, էջ 262:

լիովին թյուր է, որովհետև կայսեր անունը արաբական աղբյուրներում տառադարձվել է Niqfūr, այլ ոչ թե Nikfūr⁸ ձևով:

Կրելից-Գրայֆենհորստը թագավոր բառի՝ թուրքերենում անմիջական, թե միջնորդավորված փոխառություն լինելու հարցին պատասխանելիս որպես առաջինի փաստարկում է բերել այն հանգամանքը, որ, համենայն դեպս, «*թագավոր Հայոց*» տիտղոսը քաջածանոթ էր Ռումի սելջուկներին հայ-սելջուկյան երկկեզվյան դրամների մակագրություններից: Համաձայնելով նրա հետ, այնուամենայնիվ կարծում ենք, որ բառը քիչ ավելի վաղ փոխառություն է և թուրքերեն է թափանցել հայ-սելջուկյան շփումների արդյունքում Կիլիկիո Հայոց թագավորության ստեղծումից անմիջապես հետո, այսինքն ԺԳ դարի սկզբներին: Մերձավոր Արևելքի և Փոքր Ասիայի թյուրքական տարրի միջոցով *թագավոր* տիտղոսը տարածվել է Տրապիզոնի կայսրերի և տարածաշրջանի այլ քրիստոնյա մանր տիրակալների վրա նույնպես⁹: Այնպես որ, *թագավոր* բառը, հավանաբար, անմիջական փոխառություն է ինչպես թուրքերենի, այնպես էլ արաբերենի համար: Ավելին, թուրքերենում բառը կիրառության շատ ավելի լայն ոլորտներ է ընդգրկել՝ պատմագրական գրականությունից բացի թափանցելով նաև թյուրքական ժողովրդական բանահյուսության (էպոսներ, լեգենդներ) բառապաշար¹⁰ ի տարբերու-

⁸ Անդ, էջ 264: Աճառյան, Արմատական բառարան, հտ. Բ, էջ 136:

⁹ Հմմտ. Օ. Вильчевский, [Рец. на кн.:] Книга моего деда Коркута, Огузский героический эпос // Советская этнография, 1963, № 5, с. 173: *Թագավոր* տիտղոսի՝ թյուրք-թյուրանդական և ընդհանրապես բյուզանդա-մուսուլմանատիտղոսի համար ներկայացրած նշանակության ասպեկտները դուրս են այս հետազոտության ծիրից, առավել ևս, որ դրանք արդեն իսկ բավարար կերպով լուսաբանված են Ա. Սավվիդեսի (A. Savvides, On the origins and connotation of the term "tekkur" in Byzantine-Turkish relations // Byzantion 71.2, 2001, pp. 451-461 և Tekfur // The Encyclopaedia of Islam (New edition), vol. 10 (T-U), Brill, Leiden, 2000, pp. 413-414) ու Ռ. Շուրտրուլի (Р. М. Шуртов, Великие Комнины и Восток (1204-1461), под. ред. С. П. Карпова, Алетея, Санкт-Петербург, 2001, с. 48-50) կողմից:

¹⁰ Տե՛ս, օրինակ, Книга моего деда Коркута: Огузский героический эпос, пер. В. В. Бартольда, Издательство Академии Наук СССР, Москва-Ленинград, 1962, с. 48, 50, 73. Եւոյնի մասին տե՛ս նաև Savvides, On the origins, pp.

թյուն արաբերենի, որի դեպքում բառը կիրառություն է գտել բացառապես պատմագրական գրականության մեջ՝ վերագրվելով Կիլիկիո Հայոց արքային, ինչպես նաև Բյուզանդիայի¹¹ և Տրապիզոնի կայսրերին: Թերևս, հարկ է հավելել, որ տեքմուր բառը պահպանվել է նաև մի շարք թուրքական աշխարհագրական տեղանուններում (ինչպես Tekirdag, Tekir-gözü, Tekfur-saray և այլն)¹²:

Արդ, «թագավոր Հայոց»-ը պետության աշխարհիկ ղեկավարին տրվող ամենատարածված ու սովորական դարձած տիտղոսներից մեկն էր դեռ Արշակունյաց ու Բագրատունյաց հարըստությունների օրոք: Բագրատունի հարստության գահակալների տիտղոսակազմի մյուս առավել գործածական բանաձևներից էին նաև «արքայ Հայոցը», «շահնշահը» և «տիեզերակալը»: Արաբ մատենագիրները, ինչպես Ա. Տեր-Ղևոնդյանն է բնորոշել, Բագրատունի արքաների մասին խոսելիս պարզապես պատճենել են «թագավոր Հայոց» և «արքայ Հայոց» տիտղոսները malik al-arman¹³ ձևով: «Եթե Աշոտ I-ի և Սմբատ I-ի օրոք, - շա-

456-457: Օղուզ թուրքերի բանավոր ավանդություններն արտացոլող մեկ այլ երկի մասին տե՛ս ստորև:

¹¹ Դեռ ԺԹ դարում որոշ ուսումնասիրողների կողմից շրջանառության մեջ է դրվել մի թյուր տեսակետ ևս, ըստ որի տեքմուր-ը մուսուլման մատենագիրների կողմից փոխառնվել է bagfir (bagbir) բառի նմանահնչողության համար, որով մուսուլման մատենագիրները կոչում էին չին կայսրերին (Բյուզանդիայի կայսրը՝ Արևմուտքում, չին կայսրը՝ Արևելքում): Տե՛ս, օրինակ, *The book of Ser Marco Polo, The Venetian, concerning the Kingdoms and Marvels of the East*, vol. 2, tr. and ed. by C. H. Yule, London, 1871, p. 110, note 1: Բառի կիրառության մի առանձնահատուկ դեպքի մասին տե՛ս *Travels of Ibn Battuta*, A. D. 1325-1354, ed. by H. A. R. Gibb, Hakluyt Society, London, 1958, p. 488, ինչպես նաև *Savvides, On the origins*, pp. 455-456; *Աճառյան*, Արմատական բառարան, հտ. Բ, էջ 136-137:

¹² Տե՛ս Անդ, էջ 136, ինչպես նաև *Savvides, On the origins*, p. 453.

¹³ Ա. Տեր-Ղևոնդյան, Հաղբատի արաբերեն արձանագրությունը և Բագրատունի թագավորների տիտղոսները // Լրաբեր հասարակական գիտությունների, 1979, № 1, էջ 75: Տե՛ս նաև *տպյնի՝ Армения и Арабский Халифат*, Издательство АН Армянской ССР, Ереван, 1977, с. 238, 248, ինչպես նաև *К. Н. Юзбашян, Армянские государства эпохи Багратидов и Византия IX-XI вв.*, Наука, Москва, 1988, с. 70-71.

րունակում է գիտնականը,- երբ Հայաստանը միաձույլ կենտրոնացած հզոր թագավորություն էր, Բագրատունի տիրակալները օգտագործում էին *արքա Հայոց, թագավոր Հայոց, թագավոր Հայոց և Վրաց*, ինչպես նաև *Տիեզերակալ* տիտղոսները, ապա Ժ դարի 20-ական թվականներից մինչև ԺԱ դարի կեսերը, երբ Հայոց թագավորությունը պակաս կենտրոնացած էր, այս տիտղոսների կողքին հանդես եկավ նաև *շահնշահը*: Դրա գլխավոր պատճառն այն էր, որ գավառական տիրակալները սկսեցին կրել *թագավոր* տիտղոսը»¹⁴: Ինչևիցե, Բագրատունի արքաների և առավել ևս վերոնշյալ գավառական տիրակալների առնչությամբ արաբագիր մատենագիրների մոտ չենք գտնում գործածված «*թագավոր / թաքֆուր*» տիտղոսը: Մնում է ենթադրել, որ տիտղոսը Մերձավոր Արևելքի դիվանագիտական հարաբերությունների բառապաշարում է հայտնվել միայն Կիլիկիայի Հայոց թագավորության ստեղծումից հետո:

1198 թվականին Լևոն Ա-ի թագադրությամբ Կիլիկիայի Հայոց պետությունը, ստանալով միջազգային իրավական նոր կարգավիճակ, թևակոխեց պատմա-քաղաքական նոր շրջափուլ: Թագադրությունից անմիջապես հետո Լևոն արքան (1198-1219 թթ.) արքայական հրովարտակաների, պաշտոնական նամակների, դրամների մակագրությունների միջոցով շրջանառության մեջ դրեց «*թագավոր ամենայն Հայոց*» տիտղոսը¹⁵, «որի բովանդակած պատգամն,- ինչպես Լ. Տեր-Պետրոսյանն է ձևակերպում,- ուղղված էր միաժամանակ թե՛ արտաքին աշխարհին, թե՛ ներհայկական միջավայրին»¹⁶: Լևոն արքայի և նրա հա-

¹⁴ Տեր-Ղևոնդյան, Հաղթատի արաբերեն արձանագրությունը, էջ 76:

¹⁵ Թերևս ճշմարիտ է այն տեսակետը, որ այս տիտղոսն առաջացել է «ամենայն Հայոց կաթողիկոս» արդեն իսկ գոյություն ունեցող տիտղոսի համանմանությամբ: Տե՛ս Ա. Բոզոյան, Կաթողիկոս հայոց տիտղոսի նորովի ընկանմանության մասին // Հայաստանը և լուրը Բագրատունյաց թագավորության անկումից հետո // Հայաստանը և ժողովուրդը, Երևան, 2000, էջ 160-161; Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները և հայերը, հտ. Բ, Պատմա-քաղաքագիտական հետազոտություն (Հայկական մատենաշար Գալուստ Կիլպենկեան հիմնարկության), Երևան, 2007, էջ 196:

¹⁶ Անդ, էջ 196:

ջորդների կրած «թագավոր Հայոց» տիտղոսը հետայդու դարձավ միջազգային քաղաքական ասպարեզում հայկական պետության նույնականացման ու ճանաչման միջոցներից մեկը: Խոսքն այստեղ, իհարկե, Հայոց թագավորության՝ արաբամուսուլմանական մատենագրության մեջ ավանդված անվանումներից մեկի՝ bilād takfūr-ի («թագավորներ/ի երկիր») մասին է, որին դեռ անդրադառնալու ենք ստորև:

Հայոց արքային հայկական թաքֆուր տիտղոսով կոչելու համար, սակայն, մուսուլման մատենագիրներն ավելի լուրջ և իսլամական աշխարհակալական գաղափարաբանության դիտակետից ավելի տրամաբանական պատճառ ունեին: Բանն այն է, որ Կիլիկիան իր ռազմավարական դիրքի շնորհիվ արաբների և Բյուզանդական կայսրության միջև կովախնձոր է եղել արաբա-բյուզանդական շուրջ հինգհարյուրամյա հակամարտության ողջ ընթացքում: Ժամանակ առ ժամանակ գրավելով երկրամասը և իր վերահսկողությունը հաստատելով մասնավորապես Լեոնային Կիլիկիայի դժվարանցանելի կիրճերի ու կապանների վրա՝ կողմերից մեկն առավելություն էր ստանում հակառակորդի նկատմամբ: Այս պարագայում ամենևին էլ զարմանալի չէ, որ արաբներն այս շրջանները նաև bilād al-Durūb՝ «Լեոնանցքների երկիր»¹⁷ են անվանել: Թշնամական երկրի՝ տվյալ դեպքում Բյուզանդիայի հարակից այդ տարածքների (dawāhī al-Rūm) անվտանգությունն ապահովելու համար սահմանի երկայնքով կառուցվել էին բերդամրոցների ('awāsim) երկարածիզ շարքեր, որ ʿaḡr (հզ. ʿuḡūr) էին կոչվում: Արաբների համար հատկապես կարևոր էր սահմանային ամրությունների ʿuḡūr al-Šām («Շամի կամ Ասորիքի բերդաշարք») կոչված շղթան, որ պաշտպանում

¹⁷ St'ū, օրինակ, *Yāqūt al-Ḥamāwī*, *Mu'ḡam al-buldān*, ց. 2, *Dār ṣādir*, *Bayrūt*, 1977, ց. 447; *Ibn al-Aṭīr*, *al-Kāmil fi al-tārīḥ*, ց. 10, *bi-taḥqīq Muḥammad Yūsuf Daqqāq*, *Dār al-Kutub al-'Ilmiyya*, *Bayrūt*, 2003, ց. 469; *al-'Umāri*, *Kitāb al-Ta'rif bi-muṣṣṭalaḥ al-šarīf*, *Maṭba'at al-'Ašima*, *al-Qāhira*, 1894, ց. 40; *Ibn Ḥaldūn*, *al-'Ibar wa-diwān al-muhtada' wa-l-ḥabar fi tārīḥ al-'Arab wa-l-Barbar*, ց. 5, *bi-taḥqīq Ḥalīl Šihāda wa-Suhayl Zakkār*, *Dār al-Fikr*, *Bayrūt*, 2000, ց. 480; *al-'Aynī*, *'Iqd al-ḡumān fi tārīḥ ahl al-zamān*, ց. 3, *bi-taḥqīq Maḥmūd Rizq Maḥmūd*, *Dār al-kutub wa-l-waṭā'iq al-qawmiyya*, *al-Qāhira*, 2007, ց. 179 (հետայսու՝ 'Iqd-MRM).

էր Տավրոսի հարավային անցքը՝ իր մեջ առնելով Կիլիկիո բերդաքաղաքներից Տարսոնը, Մսիսն ու Ադանան¹⁸: Այնպես որ, ոչ վաղ անցյալում եղած լինելով այս երկրամասի տիրակալները՝ մուսուլմանները չէին կարող հաշտվել Կիլիկիայի նոր տերերի՝ հայերի ներկայության հետ՝ անօրինական համարելով Հայոց արքայի իշխանությունը մի երկրամասում, որ մի ժամանակ Dār al-Islām-ի («Իսլամի տուն») անբաժանելի մասն ու պաշտպանողական պատվարն է եղել¹⁹:

Արաբ պատմագիր ալ-Ումարիի (մահ. 1349 թ.) հետևյալ մեկնաբանությունը ողջ խորքով է արտացոլում Հայոց արքաների նկատմամբ տաճած վերաբերմունքի էությունը. «Եվ վերջա-

¹⁸ *St' u Ibn Hurdadbih, al-Masālik wa-l-mamālik*, Baril, Laydan, 1889, §. 99-100; *Qudāmat ibn Ġa'far*, *Kitāb al-Ḥarāğ wa-şinā'at al-kitāba*, bi-taḥqīq Muḥammad Ḥusayn al-Zubaydī, Bağdād, 1981, §. 186; *Yāqūt al-Ḥamāwī*, *Mu'ğam*, ǧ. 2, §. 79, ինչպես նաև *նույնի՝* *Kitāb al-Muštariq wa'd'an wa-muftariq şaq'an*, al-ṭab'a al-tāniya, 'Ālam al-kutub, Bayrūt, 1986, § 87; *Abū al-Fidā'*, *Taqwim al-buldān* (*Géographie d'Aboulfēda*, ed. M. Reinaud et W. Mac Guckin de Slane, Paris, 1840), §. 234-235; *al-Dimaşqī*, *Nuḥbat al-dahr fi 'ağā'ib al-barr wa-l-baḥr* (*Cosmographie de Chems-ed-Din Abou Abdallah Mohammed ed-Dimichqui*, ed. M. A. F. Mehren, Saint-Petersbourg, 1866), §. 214.

¹⁹ Երկրամասը նույնպիսի կարևորություն ուներ նաև բյուզանդացիների համար: Սահմանային ամրությունների գոտիների մասին մանրամասն տե՛ս *C. E. Bosworth*, *al-Thughur*; 1. *In the Arab-Byzantine frontine region // The Encyclopaedia of Islam* (New edition), vol. 10 (T-U), E. J. Brill, Leiden, 2000, pp. 446-447, ինչպես նաև *նույնի՝* *The city of Tarsus and the Arab-Byzantine frontiers in Early and Middle 'Abbasid times // Oriens*, vol. 33, 1992, pp. 268-286; *M. Bonner*, *The naming of the frontier: 'Awāşim, Thughūr, and the Arab geographers // BSOAS*, vol. 57.1, 1994, pp. 17-24; *şābir Muḥammad Diyāb*, *al-Muslimūn wa-ğihāduhum ǧidda al-Rūm fi Arminiya wa-l-juğūr al-Ġazariyya wa-l-Şāmiyya ḥilāla al-qarn al-rābi'* al-*hiğrī*, *Maktabat al-Salām al-Ālamiyya*, al-Qāhira, 1984, ինչպես նաև *Հ. Թ. Նալբանդյան*, Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին: Ցակուտ ալ-Համվի, Արուլ-Ֆիդա, Իբն Շադդադ, Երևան, 1965, էջ 151-152; *Тер-Гевондян*, *Армения и Арабский Халифат*, с. 153-154, ինչպես նաև *նույնի՝* Արաբական սահմանային ամրությունների գոտին ինչպես նաև *նույնի՝* Արաբական սահմանային ամրությունների գոտին (Սուղոր) // Պատմա-բանասիրական հանդես, 1981, № 2, էջ 134-149 և *Sa'īd 'Abd al-Fattāḥ 'Āşūr*, *Buḥūt wa-dirāsāt fi tāriḥ al-uşūr al-wustā*, al-Qāhira, 1977, §. 225-227.

պես նրանց (հայերի) հպատակությունը Ռումի սելջուկյան արքաների մնացած մասի նկատմամբ էր (li-baqiyyat al-mulūk al-salāḡiqa bi-l-Rūm), և նրանց վրա [զլխա]հարկ ու [բոլորին] հայտնի հնազանդություն կար սահմանված, և սելջուկյան արքայի կողմից երկրի վրա գործակատար-վերակացուներ (al-'ummāl wal-šihānī 'alā-l-bilād) կային կարգված, մինչև որ թուլացավ այդ [սելջուկյան] պետությունը...ինչին տեսչում էր այդ անիծյալը (Հայոց արքան), և նրա թռչնակը արծվի վերածվեց, ու հաճախացան նրա երդմնազանցությունները... և նա գրավեց այս երկրներն ու տիրեց դրանց և [աստիճանաբար] նվազեցնելով սելջուկների ժառանգությունը՝ [վերջնականապես] յուրացրեց այն»²⁰: Ալ-Կալկաշանդին (մահ. 1418 թ.) նույնպես, իրերն իրենց անուներով կոչելով, բացորոշ կերպով բացատրում է այդ վերաբերմունքի հիմնապատճառը: «Արդ, այն (Կիլիկիան) խալիֆաների օրոք սահմանային ամրությունների երկիր (bilād al-tuḡūr wa-l-'awāšim) էր կոչվում և մուսուլմանների ձեռքում էր²¹, - այսպես է սկսում մատենագիրն իր խոսքն ու հետևյալ կերպ եզրափակում, - և նրան mutamallik Sis («Սոխ իշխող») էին անվանում, այլ ոչ թե malik Sis («Սոխ արքա») նախ և առաջ այն պատճառով, որ այն (Սոխ երկիրը) ի սկզբանե մուսուլմանների ձեռքում էր, և հետո միայն հայերի վերոհիշյալ ղեկավարը նետվեց (հարձակվեց) նրա վրա և գրավեց այն մուսուլմանների ձեռքից: Եվ, Աստծուն փառք, որ [Նա] այն մուսուլմանների ձեռքը վերադարձրեց և ամրապնդեց (հաստատեց) իսլամական թագավորությունների կազմում»²²:

²⁰ Sb'ū al-'Umārī, al-Ta'rif, ֆ. 55-56: Երկի ամբողջական անվանումը al-Ta'rif bi-muštalah al-šarīf («Մանրագրում բարձր տերմինաբանության (ոճի) հետ») է:

²¹ Al-Qalqašandī, Šubhī al-a'šā fi šin'at al-inšā', ց. 8, al-Maṭba'a al-Amiriyya, al-Qāhira, 1915, ֆ. 29-30.

²² Sb'ū Անդ, 33: Հմմտ. նույնի՝ ց. 8, ֆ. 130-131: Նույնիսկ այն դեպքերում, երբ արաբագիր պատմիչները Կիլիկիո Հայոց պետության ամրապնդման մասին խոսում են հայ-մուսուլմանական գործակցության համատեքստում, ինչպես որ Մլեխ իշխանի (կառ. 1170-1175 թթ.) ու Նուր ալ-Դին Ջանգիի (կառ. 1146-1174 թթ.) պարագայում էր, նրանք կամ խորը ավսոսանքով են գրում այդ մասին կամ էլ ամեն գնով փորձում են արդարացնել նրան՝ նրա դիրքորոշումը հա-

մարելով բացառապես քաղաքական իրավիճակով ու հեռատեսությամբ թելադրված քայլ, ինչը, ըստ էության, իսկապես ճշմարտության բաժին ուներ: Օրինակ, Իբն ալ-Դավադարին (մահ. 1335 թ.) և մի շարք այլ հեղինակներ, հղելով մեկ այլ պատմիչ Իմադ ալ-Դին ալ-Իսֆահանսին (մահ. 1201 թ.), ում al-Barq al-Šāmi երկը մեզ է հասել ալ-Բունդարիի (մահ. 1226 թ. հետո) համառոտագրությամբ, այդ անցքերի մասին հետևյալ կերպ են արտահայտվում. «Իմադ ալ-Դինը, Աստված օրհնի նրան, «Կայծակում»՝ իր պատմության մեջ, որը նա «Ասորիքյան կայծակ» է անվանել, ասել է. «Այս երկիրը հոռոմների *խշտոդի* (mutamallik al-Rūm) իսկողության տակ էր, բայց Մալիկ իբն Լաունը գրավեց այն: Եվ որովհետև ալ-Մալիք ալ-Ադիլ Նուր ալ-Դին ալ-Շահիդը հենվում էր նրա վրա և ինքն էլ ուժեղացնում նրան՝ սատարելով նպատակների իրականացման գործում: Արդ, Նուր ալ-Դինը, Ալլահն օրհնի նրան, սրանով դիտավորություն ուներ անհավատ[ներ]ին իշխանություն տալ անօրինաց դեմ պայքարելու համար (sallata al-kafara 'alā al-fağāra), և [հետևաբար] զորեղացնում էր նրան դրակիջ ֆրանկների դեմ: Երբ ամրասնդվեցին Մալիկ իբն Լավունի դիրքերն [այս] երկրում, հոռոմների արքան նրա դեմ ուղարկեց Անդրոնիկոս անունով իր ազգականին (շփոթ կա. հավանաբար նկատի է առնված Կոնստանդին Կալոմանը, ով այդ ժամանակ զբաղեցնում էր Կիլիկիայի բյուզանդական կառավարչի պաշտոնը: Հմմտ. 'Imād al-Dīn al-Isfahānī (վերագրված), al-Bustān al-ğamī' li-ğamī' tawārīh ahl al-zamān, bi-tahqīq Muḥammad 'Alī al-Ta'ānī, Irbid, 2003, թ. 405) մեծամրոխ մի զորքով: Ալեին առճակատման դուրս եկավ նրա դեմ և ստորացուցիչ պարտության մատնեց (kassarahum karratan šanī'atan)՝ գերելով նրանց հրամանատարներից երեսուն հոգու: Նրանց միջև այս բախումը տեղի է ունեցել 568 թ. Ռաբի ալ-ախսար ամսվա (20 նոյեմբերի 1172 թ. - 19 դեկտեմբերի 1172 թ.) վերջերին: Երբ Նուր ալ-Դին ալ-Շահիդը տեղեկացավ այդ մասին, նրան լավություն արեց և շնորհների արժանացրեց, ապա նամակ հղեց Բաղդադ՝ նրան խալիֆայի մոտ գովասանքի և շնորհակալության արժանացնելով: Ալեիը համարվում էր Նուր ալ-Դին ալ-Շահիդի վասալներից մեկը: Այս ժամանակներից ի վեր, այս թագնորի (takfūr) ուժն ավելացավ այս երկրում Նուր ալ-Դին ալ-Շահիդի փոխարեն»: Sb'u Ibn al-Dawādārī, Kanz al-durar wa-ğāmī' al-ğurar, ց. 8, bi-tahqīq Ūlrih Hārman, al-Qāhira, 1971, թ. 180 և հմմտ. Abū Šāma, Kitāb al-Rawdatayn fi aḥbār al-dawlatayn al-Nūriyya wa-l-Šalāhiyya, ց. 2, bi-tahqīq Ibrāhim Šams al-Dīn, Dār al-Kutub al-'ilmiyya, Bayrūt, 2002, թ. 174; Ibn 'Abd al-zāhir, al-Rawḍ al-zāhir fi sirat al-Malik al-zāhir, bi-tahqīq 'Abd al-'Azīz al-Ḥuwayfīr, Riyāḍ, 1976, թ. 440; [Ibn] al-Ğazarī, Hawādiḥ al-zamān / Al-Dahabī, al-Muḥtār min tārih Ibn al-Ğazarī, bi-tahqīq Ḥaḍīr Hawādiḥ al-zamān / Al-Dahabī, al-Muḥtār min tārih Ibn al-Ğazarī, Dār al-Kitāb al-'Arabī, Bayrūt, 1988, թ. 276; al-Dahabī, Tārih al-Islām, ց. 39, bi-tahqīq 'Umar 'Abd al-Salām Tadmūrī, Bayrūt, 1996, թ. 45-46; Mufaḍḍal ibn Abī al-Fadā'il, al-Nahğ al-sadiḍ wa-durr al-

Արաբ մատենագիրների այսօրինակ մեկնաբանությունները գալիս են ապացուցելու, որ Կիլիկիայում Հայոց արքայի իշխանության օրինականության մերժողական դիրքերից շատ ավելի ձեռնտու էր Հայոց միապետին ցանկացած այլ կերպ, քան malik անվանելը²³: Հենց այստեղ էլ, ըստ էության, մուսուլման մատենագիրներին օգնության է եկել takfūr տիտղոսը, որը, պատկերավոր ասած, յուրատեսակ գեղադիտակ է ծառայել մուսուլմանական պետությունների կողմից Հայոց թագավորության (և տարածաշրջանի քրիստոնեական մյուս պետությունների) նկատմամբ ունեցած պաշտոնական վերաբերմունքի կեղծ պատկերը՝ առերևույթ լոյալությունն ու հանդուրժողականությունը ցուցադրելու և իրականում դրա հուզական կողմը, այլ կերպ ասած՝ խտրական ու ստորադասական էությունը քողարկելու համար:

Թաքֆուր տիտղոսը դիվանագիտական փաստաթղթերում ու պաշտոնական գրագրության մեջ, ինչպես նույն ալ-Ումարին է մատնանշում իր al-Ta'rif-ում, համարժան էր malik-ին և կարող էր կիրառվել վերջինի փոխարեն: Նա մասնավորապես գրում է. «Իսկ նրանց արքաներին takfūr անունով են կոչել, որ նրանց է

farid fimā ba'da tāriḥ Ibn al-'Amīd (Moufazzal ibn Abil-Fazālī, Histoire des sultans mamlouks, Texte Arabe publié et traduit en Français par E. Blochet // Patrologia Orientalis, tome 14, Paris, 1919), §. 230-231 [394-395]; **Ibn al-Furāt**, Tāriḥ al-duwal wa-l-mulūk, §. 7, bi-taḥqīq Qusṭanṭin Zurayq, Bayrūt, 1942, §. 27-28; **Ibn al-Šihna**, al-Durr al-muntaḥab fi tāriḥ mamlakat Ḥalab, bi-taḥqīq 'Abd Allāh Muḥammad Darwiš, Dimašq, 1984, §. 182: Ալ-Չահաբին էլ գրում է. «Երբ Մլեիը պարտության մատնեց Ռումին, նա զորեղացավ ու ամրացրեց Սիսը, և սա համարվեց Նուր ալ-Դինի սխալներից մեկը»: Տե՛ս **al-Dahabī**, Tāriḥ duwal al-Islām, §. 2, bi-taḥqīq Ḥasan Ismā'il Marwa, Dār šādir, Bayrūt, 1999, §. 73: Հմմտ. Իբն ալ-Ասիրի (մահ. 1233 թ.) և Իբն ալ-Ադիմի (մահ. 1262 թ.) հաղորդումների հետ: Տե՛ս **Ibn al-Aṣīr**, al-Kāmil, §. 10, §. 46, ինչպես նաև **Ա. Տեր-Ղևոնդյան** (թարգ., առաջաբան և ծնթգր.), **Իբն ալ-Ասիր** (Օտար արքայությունը Հայաստանի և հայերի մասին 11), ՀՍՍՀ ԳԱ իրատ., Երևան, 1981, էջ 262-263 և **Ibn al-'Adīm**, Zubdat al-halab min tāriḥ Ḥalab, bi-taḥqīq Ḥalil Manšūr, Dār al-Kutub al-'Ilmiyya, Bayrūt, 1996, §. 356.

²³ Հմմտ. **Āšūr**, Buḥūṭ, §. 239.

վերագրվել, ինչ նրանք կան և ընդհուպ մինչև օրս»²⁴: Իր մեկ այլ՝ Masālik al-abṣār աշխատության մեջ նույն հեղինակը գրում է. «Տրապիզոնի արքան, ինչպես որ Հայոց արքան, թաքֆուր է կոչվում»²⁵: Իբն Խալդունի (մահ. 1406 թ.) «Պատմության» մեջ կարդում ենք. «Իսկ նրանց արքային թաքֆուր տիտղոսով են կոչում, և նրանց արքան այս կիրճերի (durūb) տերն էր [տակավին] ալ-Մալիք ալ-Քամիլի և Սալահ ալ-Դինի օրոք...»²⁶: Բադր ալ-Դին ալ-Այնին (մահ. 1451 թ.) մամլուքյան սուլթան ալ-Մուայյադ Շեյխին (կառ. 1412-1421 թթ.) նվիրված իր կենսագրական երկում գրում է. «Սլավոնների արքային մաջաք (māǧak) են կոչում, Խլաթի երկրամասի իշխողին՝ շահրաման (šahramān), իսկ հայոց արքային թակֆուր (կիրառում է taqfūr ձևով) են անվանում»²⁷:

Այն, որ takfūr-ն իլ-խանների օրոք Հայոց արքայի պաշտոնական անվանումներից մեկն էր, պաշտոնական գրագրության «կաղապարների» իր ձեռնարկում՝ Dastūr al-kātib-ում, հավաստում է նաև ԺԴ դարի պարսկագիր մատենագիր Մուհամմադ Նախջիվանին (մահ. 1376 թ.). «Սաի քրիստոնյա թաքֆուրներին... հարկավոր է [այսպես] գրել՝ Սաի թաքֆուրին, որ այս համայնքի ղեկավարն է ու գլուխը, մեծ վասիլևսին, հարգամեծար ֆայլակուսին՝ Ալեքսանդրյան ընտանիքի փառք, քրիստոնյաների ապաստան, Սաի թաքֆուրին, որի մեծությունը թո՛ղ մշտատև լինի...»²⁸:

²⁴ Al-'Umārī, al-Ta'rif, ց. 55.

²⁵ Sb'u նույնի՝ Masālik al-abṣār fi mamālik al-amṣār, ց. 3, bi-tahqīq Kāmil Salmān al-Ġubūrī, Dār al-kutub al-'ilmiyya, Bayrūt, 2010, ց. 258.

²⁶ Ibn Ḥaldūn, al-'Ibar, ց. 5, ց. 444.

²⁷ Sb'u al-'Aynī, al-Sayf al-muhannad fi sirat al-Mālik al-Mu'ayyad "Ṣayḥ al-Maḥmūdī", al-ṭab'a al-ṭāniya, bi-tahqīq Fahim Muḥammad Ṣaltūt, Dār al-kutub al-Miṣriyya, al-Qāhira 1998, ց. 100. Հմմտ. նույնի՝ 'Iqd, ց. 3, bi-tahqīq Muḥammad Muḥammad Amin, al-Qāhira, 1990, s. 150-152 (հետայսու՝ 'Iqd-MMA).

²⁸ Мухаммад ибн Хиндушах Нахчивани, Даstur ал-катиб фи та'йин ал-маратиб (Руководство для писца при определении степеней), Критич. текст, предисл. и указатели А. А. Али-заде, Москва, Наука, 1976, с. 391: Հմմտ. Шукуров, Великие Комнины, с. 49-50: Հատկանշական է, որ Ն. Միկլովս-Մակլայի կողմից ԺԳ դարի առաջին կեսով թվագրված 'Ağā'ib al-Dunyā («Աշխարհի հրաշալիքները») վերնագիրը կրող պարսկերեն մի աշխարհագրական երկի

Դրան հակառակ ու չնայած ալ-Ումարիի՝ երկու տիտղոսների համարժեքության վերոբերյալ դիտարկմանը՝ մամլուքյան պաշտոնական գրագրության մեջ ու փաստաթղթերում որպես Հայոց արքայի պաշտոնական անվանում, այնուհանդերձ, առավել գործածական էր malik տիտղոսը: Դրանում կարելի է համոզվել մամլուքյան արքունական գրագրության ալ-Ումարիի, ալ-Կալկաշանդիի և Իբն Նազիր ալ-Ջալշի (մահ. 1384 թ.) ձեռնարկներում Հայոց արքաներին ուղղված նամակների բանաձև-կաղապարների և մեզ հասած հայ-մամլուքյան պայմանագրերի տեքստերի քննությունից²⁹: Ալ-Ումարին, օրինակ, բերում է Կիլիկիո Հայոց արքա Լևոն Դ-ին (կառ. 1320-1342 թթ.) ուղղված մի նամակի նմուշօրինակ-բանաձևը, որ հետևյալ դիմումով (rasm al-mukataba) է սկսվում. «Այս նամակը հղվել է մեծարգո արքային (ḥaḍrat al-malik)՝ հարգամեծար, արի, խիզախ, քաջակորով կտրիճին, առյուծին (al-ḍirḡām al-ḡaḍanfar)՝ Օշինի որդի Լևոնին (Lifūn ibn Mīšin)՝ քրիստոնեկան դավանանքի փառք, քրիստոնեական համայնքի ապաստան, կնքավորության (banū ma'mū-diyya՝ կնքված, մկրտված մարդկանց) հենասյուն, սուլթանների ու արքաների ընկեր...»³⁰: Անգամ Հայոց թագավորության կործանման նախօրեին Հայոց թագավորին մամլուքյան իշխանությունների հղած մի նամակի կաղապարում, որ իր Taṭqif al-Ta'rif

անանուն հեղինակը թյուրիմացաբար tekūr/takwar տիտղոսի կրողներ է անվանում «Աբխազի (այն է՝ Վրաց) և ֆրանկների տերերին»: Տե՛ս 'Аджа'иб ад-дунйā (Чудеса мира), крит. текст, пер. с перс., введ., коммент. и указатели Л. П. Смирновой, Наука, Москва, 1993, с. 223, 519: Նույն երկում տիտղոսի երկրորդ կիրառությունը ոչ պակաս հետաքրքրական է և ամենայն հավանականությամբ վերագրված է Խաչենի հայ իշխաններին: Նա մասնավորապես գրում է. «[Նրա բնակիչները] հայեր են: Աբխազի ժողովուրդը նրանց փաղիշահին tekūr/takwar է կոչում»: Անդ, с. 199, 503: Հմմտ. Н. Д. Миклухо-Маклай, Географическое сочинение XIII в. на персидском языке (Новый источник по исторической географии Азербайджана и Армении) // Учёные записки института востоковедения, т. IX, Москва-Ленинград, 1954, сс. 204-205: Տե՛ս նաև Ա. Յակոբեան, Խաչեն-Խոխանաբերդ ամրոցը և նրա իշխանատոհմը Թ-ԺԳ դարերում // Հանդես ամսօրեայ, 2010, էջ 105-107:

²⁹ Այդպիսի մի պայմանագրի անդրադարձ ենք կատարելու ստորև:

³⁰ Տե՛ս al-'Umārī, al-Ta'rif, §. 57: Տե՛ս նաև al-Qalqaṣandī, ṣubḥ, ց. 8, §. 31.

տրված այս անունը Իբն Աբդ ալ-Չահիրից անմիջապես կամ միջնորդաբար փոխառելով՝ հաջորդ սերնդի մամլուքյան պատմիչներից արձանագրել են նաև ալ-Նուվայրին³⁵, ալ-Մակրիզին³⁶ և ալ-Այնին³⁷: Al-Malik al-muğir-ը, որ արաբերենից բառացի թարգմանած նշանակում է «հովանավոր արքա» (ստացվում է՝ «հովանավոր արքան՝ Վասակի որդի Կոստանդինի որդի Հեթումը»), առաջին հայացքից պատվանման տպավորություն է թողնում: Բայց ինչու՞ պետք է մուսուլման մատենագիրը, որ մեկ այլ տեղում իսլամական հողերի նկատմամբ հայոց արքայի կատարած ոտնձգությունների պատճառով նրա արարքները *murāwaga* (բնագրում՝ *murāwagat al-takfūr*, այն է՝ «թագավորի խորամանկությունը» կամ «նենգամտությունը») է անվանում, այսպիսի պատվանուն վերագրեր Հեթումին³⁸: Սա թույլ է տալիս մեզ պատվանվան հիմքում հայկական հետք որոնել: Շատ հավանական է, որ Հեթումի կողմից Բայբարսին ուղարկված դեսպանները արքային այդպես ներկայացրած լինեն, իսկ սուլթանական դիվանատան գլխավոր քարտուղարը հարկ համարած լինի սա արձանագրել որպես նրա անվան բաղադրիչ կամ մականուն: Չէ՞ որ, ինչպես Լևոն Տեր-Պետրոսյանն է ցույց տվել,

³⁵ Տե՛ս al-Nuwayrī, *Nihāya*, ց. 30, ք. 185.

³⁶ Ուշագրավ է, որ Իբն Աբդ ալ-Չահիրի al-malik al-muğir արտահայտության փոխարեն ալ-Մակրիզիի Kitāb al-sulūk երկի համապատասխան տեղում al-Takfūr է: Տե՛ս al-Maqrizī, al-Sulūk, ց. 1.2, ք. 551: Այնուհանդերձ, ալ-Մակրիզին այլուստ՝ Հեթումի մահվան մասին իր հաղորդման մեջ, Իբն Աբդ ալ-Չահիրի պես արձանագրել է al-malik al-muğir արտահայտությունը: Տե՛ս Անդ, ք. 590 և հմմտ. Ibn 'Abd al-Zāhir, al-Rawḍ, ք. 374: Հատկանշական է, որ Մ. Քատրմերը Kitāb al-sulūk-ի այդ հատվածի ֆրանսերեն թարգմանության մեջ, չհասկանալով al-malik al-muğir-ի իմաստը, հարկ չի համարել թարգմանել այն (Melik-Moudjir-Haithoum (Haithon) fil de Constantin, roi de Sis): Տե՛ս Histoire des Sultans Mamlouks, de l'Egypte écrite en Arabe par Taki-Eddin-Ahmed-Makrizi, traduite en Français par M. Quatremère, t. 1.2, Paris, 1837, p. 84.

³⁷ Ալ-Այնիի 'Iqd al-ğumān երկի հրատարակության մեջ al-malik և Haytūm բառերի միջև բառ է բաց թողնված, որը երկի հրատարակիչ Մուհամմադ Ամինին անընթեռնելի է եղել ձեռագրից: Ակնհայտ է, որ այդ բառը al-muğir-ն է եղել: Տե՛ս al-'Aynī, 'Iqd-MMA, ց. 1, ք. 422.

³⁸ Տե՛ս Ibn 'Abd al-Zāhir, al-Rawḍ, ք. 269.

միջնադարի հայկական աղբյուրները բազմաթիվ պատվանուններ են վերագրում իր սրբակենցաղությանը հայտնի Հեթումին, և նրանց մեջ ամենատարածվածը «բարեպաշտն է»: Ջուր չէ, որ նրան «բարեպաշտ» կամ «հավատացյալ արքա» է անվանում նաև Բար Հեթրեոսը³⁹:

Այն, որ Հեթումին վերագրված *muğir*-ը իսկապես որպես մականուն է դիտվել մուսուլմանների կողմից, օգնում են հասկանալ հենց մուսուլման մատենագիրները: Մասնավորապես ալ-Ջահաբին իր «Իսլամի պատմություն» երկում «Կոստանդինի որդի Հեթումին» ներկայացնում է որպես *al-kalb, al-malik al-muğir, šaḥib Sis* («շունը՝ *հովանավոր արքան՝ Սսի տերը*): Ակնհայտ է, որ վիրավորական բառի կողքին *al-malik al-muğir*-ն ընկալվում է բացառապես որպես մականուն, այլ ոչ թե պատվանուն⁴⁰:

Վերստին դառնալով *թագավոր/թաքֆուր* տիտղոսին՝ նշենք, որ մուսուլման մատենագիրները, խոսելով Կիլիկյան Հայաստանի մասին, երբեմն երկիրն անվանում են արքայական տիտղոսի միջոցով, այն է՝ *bilād takfūr*⁴¹: Հայոց թագավորու-

³⁹ Տեր-Պետրոսյան, Խաչակիրները, հտ. Բ, էջ 290: *St' u Bar Hebraeus, The Chronography of Gregory Abū'l-Faraj, The son of Aaron, The Hebrew Physician, The first part of his Political History of the World, vol. I, trans. Ernest A. Wallis Budge, Oxford University Press, London, 1932, reprinted by Gorgias Press, 2003, p. 446*: Երկի արաբական խմբագրության մեջ հատվածը բացակայում է:

⁴⁰ *St' u al-Dahabī, Tārīḥ al-Islām, ց. 49, ք. 297-298.*

⁴¹ *St' u 'Abd al-zāhir, Tašrif al-ayyām wa-l-'uṣūr fi sīrat al-Malik al-Manšūr, bi-taḥqīq Murād Kāmil, al-Qāhira, 1961, ք. 256; al-'Umāri, Masālik, ց. 3, ք. 197; al-Qalqašandī, Šubḥ, ց. 4, ք. 373 և ց. 5, ք. 365; al-Maqrīzī, al-Sulūk, ց. 2.1, ք. 229 և նույնի՝ Kitāb al-Muqaffā al-kabir, bi-taḥqīq Muḥammad Ya'alāwī, ց. 2, Dār al-Ğarb al-Islāmī, 1991, ք. 250; al-'Aynī, 'Iqd-MMA, ց. 3, ք. 152*: Կիլիկյան Հայաստանը մուսուլմանական մատենագրության մեջ վերոհիշյալ *bilād al-Durūb, bilād al-arman, bilād takfūr* անվանումներից բացի կոչվել է նաև *bilād Sis* (տե՛ս *ahbār al-bašar, ց. 4, al-Maṭba'a al-Ḥusayniyya al-Miṣriyya, al-Qāhira, 1907, ք. 46, 139; Ibn Kaṭīr, al-Bidāya, ց. 18, ք. 10-11; al-Maqrīzī, al-Sulūk, ց. 1.3, ք. 923*) և *bilād Ibn Lāwān* (տե՛ս *orhūwāl, Ibn Šaddād, al-Nawādir al-sultāniyya wa-l-maḥāsin al-Yūsufiyya, bi-taḥqīq Ğamāl al-Dīn Šayyāl, al-Qāhira, 1994, ք. 98, 125; Ibn al-'Adīm, Zubda, ք. 447-448; Abū al-Šāma, Kitāb al-Rawdatayn, ց. 3, ք. 39*;

թոյունը արքայական տիտղոսի միջոցով անվանելու դեպքեր կարելի է գտնել նաև պարսկագիր մատենագիրների մոտ, ինչպես որ Համդալլահ Ղազվինին (մահ. 1349 թ.) է իր Nuzhat al-Qulūb («Սրտերի զվարճություն») աշխարհագրական երկում գրում. «Ապա [‘Āṣī գետը] (Օրոնտես) անցնելով թաքֆուրի ու Սսի երկիր, որ Փոքր Հայաստանն (նույն է, թե Կիլիկյան Հայաստանը) է՝ ի վերջո թափվում է Միջերկրական ծով»⁴²:

Abū al-Fidā', Taqwīm, §. 257; al-'Umāri, Masālik, g. 27, §. 133; al-'Aynī, 'Iqd-MRM, §. 3, §. 66, 223: Ուշագրավ է, որ արաբագիր մատենագիրներին, այնուամենայնիվ, բոլորովին անծանոթ չէ նաև երկրամասի Կիլիկիա անվանումը: Տեղանվան եզակի կիրառություններից մեկը գտնում ենք Բայբարս և հետո նաև Կալավուն և ալ-Աշրաֆ Խալիլ մամլուքյան սուլթանների արքունական գրագիր Իբն Աբդ ալ-Ջահիրի al-Rawḍ al-zāhir երկում, ով մամլուքների 1275 թ. արշավանքի իրադարձությունների շարադրանքում նախքան Մելիի մասին վերորբերյալ պատմությունը ներկայացնելը մի կարճատև պատմա-տեղագրական «ակնարկ» է տալիս Կիլիկյան Հայաստանի մասին: Հաջորդ սերնդի պատմիչներից Իբն Աբդ ալ-Ջահիրի այս հաղորդումը որոշ լրացումներով կամ կրճատումներով արձանագրել են նաև ալ-Լուվայրին, Իբն ալ-Դավադարին, ղպտի Մուֆադդալը, Իբն ալ-Ֆուրաթն ու այլք: «Տարսունը, Ադանան և Նրանց հարակից տարածքները Կիլիկիա (Իբն ալ-Դավադարիի մոտ՝ «հայոց լեզվով» bi-l-lisan al-armani) են կոչվում: Մսիսը Հիպոկրատ [անունով] բժշկի (Abqarāt al-ḥakīm) «երկիրն» է (բնագրում՝ balad, իմա՝ «ծննդավայրը»- Գ. Դ.), իսկ ոմանք էլ ասում են՝ Հոմսը: [Միայն] Ալլահը գիտի...»: Երկի՝ Աբդ ալ-Ազիզ ալ-Խուվայտիրի իրատարակած բնագրում տեղանունը տառադարձված է գրչագրական սխալով՝ Qiliqā, մինչդեռ մյուս հեղինակների մոտ արդեն ճիշտ՝ Qiliqā ձևով: Sb'u Ibn 'Abd al-zāhir, al-Rawḍ, §. 439 և հմմտ. al-Nuwayrī, Nihāya, §. 30, §. 218; Ibn al-Dawādārī, Kanz, §. 8, §. 179; Mufaḍḍal, al-Nahḡ (14), §. 228-229 [392-393]; Ibn al-Furāt, al-Duwal, §. 25-26; Ibn al-Siḥna, al-Durr, §. 180, ինչպես նաև 'Izz al-Din ibn Šaddād, Tārīḥ al-Malik al-zāhir, bi-taḥqiq Aḥmad Ḥuṭayt (Die Geschichte des Sultans Baibars von 'Izz ad-Dīn Muḥammad b. 'Alī b. Ibrāhīm b. Šaddād (st. 684/1285), Franz Steiner Verlag, Wiesbaden, 1983), §. 109.

⁴² Ḥamd Allāh Mustawfī Qazwīnī, Kitāb Nuzhat al-Qulūb, Bumbāy, 1894, §. 218: Երկի անգլերեն թարգմանության հեղինակը, takfūr-ը տարբերեցնելով Nikfūr, կրկնում է այն սխալը, որի մասին խոսել ենք վերևում: Sb'u The geographical part of the Nuzhat-al-Qulūb composed by Ḥamd-Allāh Mustawfī of Qazwīn in 740 (1340), tr. by G. Le Strange, E. J. Brill, Leiden-London, 1919, p. 210: Այնուամենայնիվ, Համդալլահ Ղազվինին սխալվում է կարծելով, թե Օրոնտեսն անցնում է Կիլիկյան Հայաստանի տարածք: Հմմտ., օրինակ, Յակուտ ալ-

Հայոց արքաներին վերագրվող տիտղոսակազմի մյուս ոչ պաշտոնական բանաձևերում ցայտուն է նրանց նկատմամբ տաճած խտրական՝ երբեմն անգամ վիրավորանքի հասնող վերաբերմունքը: Օրինակ, ակներև վիրավորանքի կամ ծայրահեղ դեպքում ստորադասության երանգ ունեն *mutamallik al-arman*⁴³, *mutamallik Sis*⁴⁴ և *hākim Sis* («Սսի կառավարիչ»)՝⁴⁵ բանաձևերը, որովհետև դրանցով, ըստ ամենայնի, կասկածի տակ է դրվում Հայոց արքայի իշխանության օրինականությունը: Նույնը չի կարելի ասել, թերևս, Հայոց արքային տրվող մեկ այլ՝ *šāḥib* տիտղոսի (հանդիպում է *šāḥib Sis*՝ «Սսի տեր» և *šāḥib al-arman*՝ «Հայոց տեր» բանաձևերով)⁴⁶ մասին, որ չեզոք ու բացասական են-

Համավիի, Արու ալ-Ֆիդայի և ալ-Դիմաշկիի հետ: *Sb'u Yāqūt al-Ḥamāwī*, *Mu'ğam*, ց. 4, ց. 67-68; *Abū al-Fidā'*, *Taqwīm*, ց. 49; *al-Dimašqī*, *Nuḥba*, ց. 107.

⁴³ *Sb'u Ibn 'Abd al-Zāhir*, *al-Rawḍ*, ց. 191, 196; *Baybars al-Manšūrī*, *Zubdat al-fikra fi tāriḥ al-higra, bi-taḥqīq Dunāld Ritšārdz*, *Bayrūt*, 1998, ց. 88; *al-Nuwayrī*, *Nihāya*, ց. 33, ց. 46; *al-'Umārī*, *Masālik*, ց. 3, ց. 239.

⁴⁴ *Sb'u Baybars al-Manšūrī*, *Muḥtār*, ց. 106; *al-Nuwayrī*, *Nihāya*, ց. 33; *al-Ġazarī*, *Ḥawādīṭ al-zamān wa-anbā'uḥu wa-wafayāt al-akābir wa-al-a'yān min abnā'ihī*, *al-tab'a al-ūlā*, *bi-taḥqīq 'Umar 'Abd al-Salām Tadmuri*, ց. 2, *al-Maktaba al-'ašriyya*, *Bayrūt*, 1998, ց. 941; *al-'Umārī*, *al-Ta'rīf*, ց. 55 և *նույնի*՝ *Masālik*, ց. 3, ց. 238; *al-Qalqašandī*, *Šubḥ*, ց. 5, ց. 365; *al-Maqrīzī*, *al-Sulūk* ց. 3.2, ց. 471; *Ibn Taġrī Birdī*, *al-Nuġūm al-zāhira fi mulūk Mišr wa-l-Qāhira*, ց. 8, *bi-taḥqīq Muḥammad Ḥusayn Šams al-Dīn*, *Dār al-Kutub al-'ilmiyya*, *Bayrūt*, 1992, ց. 122.

⁴⁵ *Sb'u al-Maqrīzī*, *al-Sulūk*, ց. 3.2, ց. 471: Հարկ է պարզաբանել, որ ալ-Մակ-րիզին այստեղ «կառավարիչ» է անվանում գահընկեց արված ու արդեն շուրջ յոթ տարի Կահիրեում գերության մեջ գտնվող Հայոց վերջին արքա Լևոն Ե-ին (կառ. 1374-1375 թթ.): Նա մասնավորապես գրում է. «Եվ [իիջրայի 784 թ. Ջու-մադա ալ-ախիր ամսին՝ 11.08.1382-09.10.1382 թ.] նամակ ստացվեց Սեվի-լիայի իշխող (mutamallik Ašbiliyya) Ալֆոնսից Սսի կառավարիչ *թաթնորին* ազատ արձակելու առնչությամբ, և պատասխանեցին դրան»:

⁴⁶ *Sb'u Ibn al-Dawādārī*, *Kanz*, ց. 8, ց. 94-95; *Baybars al-Manšūrī*, *Muḥtār*, ց. 50; *al-Yūnīnī*, *Ḍayl Mirāt al-zamān*, *al-tab'a al-ūlā*, ց. 2, *Maṭba'at Dā'irat al-Ma'ārif* 50; *al-'Uṭmāniyya*, *Ḥaydarābād*, 1955, ց. 191-192; *Abū al-Fidā'*, *al-Muḥtašar*, ց. 4, ց. 3-4, 54, 99; *al-Nuwayrī*, *Nihāya*, ց. 30, ց. 98-99; *al-Ġazarī*, *Ḥawādīṭ*, ց. 1, ց. 149-150; *al-Qāhabī*, *Tāriḥ al-Islām*, ց. 49, ց. 6, 19; *Ibn al-Wardī*, *Tatimmat al-Muḥtašar fi aḥbār al-bašar*, *Dār al-kutub al-'ilmiyya*, *Bayrūt*, 1996, ց. 218-219; *Ibn Kaṭīr*, *al-Bidāya*, ց. 17, ց. 467; *al-Maqrīzī*, *al-Sulūk*, ց. 1.1, ց. 160.

թատեքստից զուրկ տիտղոս էր և նույն հաջողությամբ վերագրվում էր նաև մուսուլման տիրակալներին: Արաբ մատենագիրների ստորադասական վերաբերմունքի ակնառու ապացույց են նաև անտիտղոս հիշատակությունները, որոնցում Հայոց պետության գահակալները (խոսքը մասնավորապես Ռուբինյանների մասին է) պարզապես Ibn Lāwūn (կամ Ibn Līfūn և կամ Ibn Lāyūn՝ «Լևոնի որդի», «Լևոնի զարմից») են անվանվում⁴⁷: Շատ հաճախ բոլոր այս տիտղոսներից յուրաքանչյուրը հիշատակվում է takfūr տիտղոսի զուգադրությամբ (ինչպես օրինակ, al-takfūr mutamallik Sīs, al-takfūr malik al-arman, al-takfūr šāḥib Sīs, al-takfūr šāḥib al-arman, al-takfūr Ibn Lāwūn և այլն):

Կիլիկիայի Հայոց արքաների վերաբերմամբ մուսուլման մատենագիրների գործածած ամենահարգի անվանումը սուլթանն (sulṭān) է, որի կիրառության եզակի դեպքեր կարելի է գտնել սուկ: Այս տիտղոսը, որ մեծամասամբ վերագրվում էր մուսուլման տիրակալներին, Հայոց արքայի վերաբերմամբ մի անգամ գործածված ենք գտնում Յակուտ ալ-Համավիի «Աշխարհագրական բառարանում»՝ Սիսիյա (նույնն է, թե Սիս) բա-

⁴⁷ Տե՛ս Ibn al-ʿAdīm, Buḡyat al-ṭalab fi tāriḥ Ḥalab, ց. 1, bi-taḥqīq Suhayl Zakkār, Dār al-Fikr, Bayrūt, ց. 175; Abū al-Šāma, Kitāb al-Rawḍatayn, ց. 5, ց. 79-80; Ibn al-Furāt, al-Duwal, ց. 5.1, ց. 82; al-Maqrīzī, al-Sulūk, g. 1, ց. 275; al-Aynī, ʿIqd-MRM, ց. 2, ց. 215: Քանի որ արաբ մատենագիրները երբեմն Ibn Lāwūn են անվանում նաև Կիլիկիո վերջին իշխանապետ (կառ. 1187-1198 թթ.) ու թագավորության հիմնադիր Լևոնին (կառ. 1198-1219 թթ.), ապա հետևում է, որ «Լևոնի որդի» ասելով նրանք նկատի են ունեցել նրա պապին՝ Լևոն Ա իշխանապետին (կառ. 1137-1145 թթ.): Եվ իսկապես որ, Մլեհին վերաբերող այն հատվածը, որ մեջբերեցինք վերևում, արաբ պատմիչների մոտ վերնագրված է «[Մլեհի հայր] Լևոնի տան (տոհմի) կողմից Սսի ու կիրճերի (էսցճր) գրավման մասին»: Սրա օգտին է խոսում նաև այն հանգամանքը, որ պատմիչները որոշ դեպքերում Լևոն Բ իշխանապետին (Լևոն Ա արքային) անվանում են «Լևոնի որդի Ստեփանոսի որդի Լաֆուն» (Lāfūn ibn Iṣṭifānat ibn Layūn): Տե՛ս Ibn al-Aṭīr, al-Kāmil, ց. 10, ց. 194; al-Nuwayrī, Nihāya, ց. 28, ց. 284 (հղում է էրն ալ-Ասիրին): Ibn Wāṣil, Mufarrig al-kurūb fi aḥbār banī Ayyūb, ց. 2, bi-taḥqīq Ḡamāl al-Dīn al-Šayyāl, al-Qāhira, 1957, ց. 319: Հմմտ. Վ. Տեր-Ղևոնդյան, Կիլիկյան Հայաստանի արտաքին քաղաքականությունը XII դարի վերջին, ՊԲՀ, 2010, № 1, էջ 119, հղ. 13 և ʿĀšūr, Buḥūṭ, ց. 239.

ռահողվածում. «Wa-bi-hā maskan Ibn Lāyūn sulṭān tilkā al-nāhiyat al-armānī» («Եվ այնտեղ [Սուն] է այդ երկրի Հայոց սուլթան Իբն Լայունի բնակավայրը (նստոցը, աթոռանիստը)»): Կարծում ենք՝ սխալված չենք լինի, եթե ենթադրենք, որ աշխարհագրի այս հիշատակությունը պարզապես տեղեկատվական բնույթ չունի, այլ ընդհակառակը՝ տիտղոսի որոշակի կշիռ ունի:

ԺԳ-ԺԴ դդ. պարսկագիր մատենագիրները դուզն-ինչ «առատածեռն» են այդ հարցում: Եվ դա զարմանալի չէ, քանի որ խոսքն այստեղ այն պարսիկ մատենագիրների մասին է, որոնք նաև պետական գործիչներ էին և կառավարչական բարձր պաշտոններ էին զբաղեցնում մոնղոլական Իլ-խանությանում: Հետևաբար Հայոց թագավորության ու Հայոց արքայի նկատմամբ ունեցած նրանց լոյալ վերաբերմունքը կարելի է ողջ տարողությամբ տեղավորել հայ-մոնղոլական «դաշնակցության» տրամաբանության մեջ: Հայոց արքային sulṭān տիտղոսով անվանելու դեպքեր պարսկագիր մատենագիրներից հայտնաբերում ենք Ջուվայնիի (մահ. 1283 թ.) և Համդալլահ Ղազվինիի մոտ: Վերջինս, օրինակ, իր չափածո պատմության մեջ՝ Zafar-nāma-ում, («Հաղթանակների գրքում») Հայոց միապետին մի անգամ sulṭān takfūr է անվանում: Ահա այդ հիշատակությունը. «Երբ սուլթան թաքֆուրը մարտի մեջ մտավ, թշնամու դեմքը դժգունվեց: Ու այլևս ոչ մի փրկություն չկար ոսոխի գլուխների համար մարտերում կոփված Յաուլդարի բազուկներից...⁴⁸»:

Շատ ավելի ուշագրավ են Ջուվայնիի «Ջահանգոշայում» (Tārīḫ-e Ġahān-Gušā) բառի կիրառության դեպքերը: Վերջինս,

⁴⁸ Համդալլահ Ղազվինիի այս քիչ հայտնի երկը մեզ է հասել երեք ձեռագրերով, որոնցից միայն մեկն է ուսումնասիրվել ու հրատարակվել նմանապես՝ երկու հատորով (Hamd Allāh Mustawfi, Zafar-nāmah, ց. 1-2, Österreichische Akademie der Wissenschaften, Vienna, 1999): Այդ մասին տե՛ս Ch. Melville, Hamd Allah Mustaufi // Encyclopaedia Iranica, Vol. XI, Fasc. 6, p. 633): Բնագրի վերջին՝ մոնղոլների պատմությանը նվիրված գլուխը, որ ցայտօր մնում է չհրատարակված, իր ատենախոսության մեջ անգլերեն է թարգմանել՝ մուսուլմանական: Ստուգելու համար տե՛ս L. J. Ward, "The Zafar-nāmah of Hamd Allāh Mustaufi and the Il-Khān dynasty of Iran," Ph.D. diss., University of Manchester, 1983, vol. 3, p. 500 (հատվածը բնագրում՝ vol. 1, 698b):

մասնավորապես խոսելով Կարակորումում գումարված մեծ կուրիլտայի, Գույուկ խանի (կառ. 1246-1248 թթ.) թագադրության արարողության, արքունիք ժամանած հյուրերի և հաջորդած անցքերի մասին, երկու անգամ գործածում է *sulṭān-e Tākavor* արտահայտությունը⁴⁹: Այսինքն մատենագիրը ոչ միայն Հայոց գահակալին սուլթան է անվանում, այլև *թագավոր* բառը կիրառում է տեղանվանական նշանակությամբ: Սակայն բարդությունն այստեղ այն է, որ Կիլիկիո Հայոց թագավոր Հեթումը չէր կարող ներկա լինել Գույուկի թագադրությանը, քանզի աներկբա է, որ նա Կարակորում է մեկնել միայն 1254 թ.: Հայոց արքայի փոխարեն 1247 թ. Կարակորում է մեկնել Սմբատ Գունդստաբլը և Հեթումի անունից իր հնազանդությունը հայտնելով խանին՝ նրանից յառլիկ («հրովարտակ», «դաշնաթուղթ») է ստացել: Մի՞թե «Աշխարհակալի պատմության» հեղինակը *sulṭān-e Tākavor* ասելով Սմբատին է նկատի ունեցել:

Վերջերս Ա.-Կ. Մութաֆյանը «Լևանտյան Հայաստանը (ԺԱ-ԺԴ դարեր)» գրքում, անդրադառնալով այս արտահայտությանը, դժվարացել է հստակ բացատրություն տալ: «Թագավոր» բառը,- գրում է գիտնականը,- հայերեն արքա նշանակությամբ տրամաբանորեն կարելի է նույնացնել Հեթումի հետ, ինչպես որ Բար Հեբրեոսն է գրում»⁵⁰: Ի վերջո, Կլ. Մութաֆյանը, ենթադրում է, որ Ջուվայնին «*Թաքավորի սուլթան*» ասելով նկատի է ունեցել Ջաքարյան իշխան Ավագին՝ այդ ենթադրության համար կովան ծառայեցնելով Վրաց անանուն տարեգրի վկայությունները: «Տարեթվերը համապատասխանում են.- շարունակում է գիտնականը,- Ավագը, թեպետև, թագավոր չէր, այլ այսպես ասած «իշխանաց իշխան» էր Մեծ Հայքում (Բուն Հայաստան), բայց պետք է ենթադրել, որ [Ջուվայնին] հենց նրան է նկատի ունեցել, և որ հենց նա էր ներկայացնում հայկական իշխանու-

⁴⁹ Տե՛ս 'Alā' al-Dīn 'Aṭā' Malik ibn Muḥammad Ğuwaynī, Kitāb Tārīḥ-e Ğahān-Guṣā, taṣḥīḥ Muḥammad Qazwīnī, ց. 1, Baril, Laydan, 1919, ց. 205, 212: Մեկ այլ տեղում երկի խմբագիրը, քնագրում եղած Diyār Bakr-ը մյուս երկու կիրառությունների հիման վրա համարելով գրչական սխալ, ուղղում-դարձնում է Tākavor: Տե՛ս Անդ, ց. 205.

⁵⁰ Bar Hebraeus, Chronography, p. 411.

թյունները [Գույուկի թագադրության] արարողության ժամանակ»⁵¹: Այն, որ Ավագն իսկապես եղել է մոնղոլական խանի արքունիքում, անվիճելի է, ու այդ մասին վկայում է ոչ միայն Վրաց ժամանակագրությունն, այլև Կիրակոս Գանձակեցին⁵²: Բայց խոսքն այստեղ աթաբեկ Ավագի այն այցելության մասին է, որ վերջինս կատարել է ենթադրաբար 1240-1241 թթ. Մեծ խան Ուզեդեյի մոտ: Կլ. Մութաֆյանի ակնարկած երկրորդ այցելության մասին հայկական աղբյուրները լռում են, իսկ Վրաց տարեգրի վկայությունների տարտամությունը թույլ չի տալիս աներկմտորեն պնդել այդ մասին: Այսպես, Ջուվայնիի, Ռաշիդ ալ-Դիևի և Հոռմի պապի բանագնաց Պլանո Կարպինիի վկայությամբ՝ երկու Դավիթների գահակալական վեճը հարթել է Գույուկ խանը, մինչդեռ Վրաց տարեգիրը պնդում է, թե Բաթու խանը Դավիթներին ուղարկել է Մանգու խանի մոտ, այլ ոչ թե Գույուկի, ավելին, գահակալական այդ թնջուկը «բազում տարիներ անց» է լուծվել մեծ խան Ղուբիլայի միջնորդությամբ⁵³: Վրաց հեղինակի այս վկայությունները փաստում են, որ վերջինս Վրաց հեղինակի այս վկայությունները փաստում են, որ վերջինս չորջանի անցքերի մասին: Ինչևէ, այս ամբողջ խառնաշփոթում Վրաց ժամանակագրի՝ Ավագ աթաբեկի երկրորդ այցելության մասին արած ակնարկները հավաստության նվաղ հույսեր են ներշնչում⁵⁴: Այնուամենայնիվ, եթե հավատ ընծայելու լինենք այդ

⁵¹ Cl. Mutafian, L'Armenie du Levant (XIe-XIVe siècle), Les Belles Lettres, Paris, 2012, p. 137: Հմմտ. S. Der-Nersessian, Western iconographic themes in Armenian manuscripts // Gazette des Beaux Arts, vol. 26, 1944, p. 87.

⁵² Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, ՀՍՄՌ ԳԱ հրատ., Երևան, 1961, էջ 262-267:

⁵³ Վրաց ժամանակագրություն (1207-1318), թարգմանությունը հին վրացերենից, առաջարանը և ծնթգր. Պարույր Մուրադյանի, Երևան, 1971, էջ 96-97: Հմմտ. Ստեփանոս Օրբելյանի վկայության հետ: Տե՛ս Ստեփաննոս Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, ի լոյս ընծայեաց Կ. Շահնազարեանց, հտ. 1, 1859, էջ 167:

⁵⁴ Ավագ աթաբեկի երկրորդ այցելության եզրակացությանը Մութաֆյանից առաջ հանգել է նաև Ա. Շահնազարյանը (Հայ-վրացական և մոնղոլական հարաբերությունները (1236-1240-ական թթ.) // ԼՀՀ, 2004, № 1, էջ 3-22): Նա իր ենթադրության համար Վրաց ժամանակագրի վկայություններից բացի

ակնարկներին, միևնույն է չենք կարծում, թե աթաբեկն արժանացած լիներ *sultān* բարձր կոչմանը, որին մուսուլմանական մատենագրության մեջ քրիստոնյա գահակալներն էին անգամ եզակի դեպքերում արժանանում:

Sultān-e Tākavor-ի՝ Մուֆաֆյանի առաջադրած վարկածը միակը չէ գիտական գրականության մեջ: Այս արտահայտությունը ներհակ տեսակետների պատճառ է դարձել նախորդ դարի 30-ական թվականներից սկսած: Նախ «*Թաքավորի սուլթանին*» հանգամանորեն անդրադարձել է Մուհամմադ Կազվինին՝ Ջուվայնիի երկի առաջին՝ Բրիլյան հրատարակության գլխավոր խմբագիրը⁵⁵ խնդրին տալով մեր կարծիքով բավականին հիմնավոր լուծում: Ապա Ջ. Բոյլեն՝ Ջուվայնիի երկի անգլերեն թարգմանության մեջ, անդրադառնալով «*Թաքավորի սուլթանին*», լիովին համաձայնում է Կազվինիի ենթադրության հետ⁵⁶: Նախորդ դարի 80-ական թվականներից սկսած մի շարք բյուզանդագետների կողմից շրջանառության մեջ է դրվել *sultān-e Tākavor-ի* մեկնության մեկ այլ տեսակետ: Այն, ըստ էության, առաջին անգամ արտահայտված ենք գտնում Բ. Լիպպարդի

նպաստավոր է համարում նաև Բաչու-նոյինի գորակայանում 1247 թ. գտնված Ինոկենտիոս Դ պապի նվիրակ Ասցելինի բանագնացության զեկույցում առկա հաղորդումները ոմն Ավգուտի (այլուր՝ Անգուտ) մասին (գիտնականը ենթադրում է, թե խոսքն Ավագի մասին է), որի Կարակորումից ժամանմանը անհամբերությամբ սպասում էին Բաչուի գորակայանում: Ա. Շահնագարյանն օգտագործել է Ասցելինի բանագնացության զեկույցի՝ Դ. Յազիկովի ռուսերեն թերակատար թարգմանությունը (Д. И. Языков, Собрание путешествий к татарам и другим восточным народам, Санкт-Петербург, 1825): Զեկույցի քննական տեքստն ամբողջությամբ հրատարակել է Ժ. Ռիշարը (J. Richard, *Simon de Saint-Quentin: Histoire des Tartares*, Paris, 1965): Անգուտի անձի մասին այլ կարծիքների համար տե՛ս P. Pelliot, *Les Mongols et la papauté* // *Revue De L'Orient Chrétien*, Tome VIII (XXVIII), 1931-1932, p. 17 [155]; J. Richard, *Simon de Saint-Quentin*, p. 110; P. Jackson, *Eljigidei* // *Encyclopedia Iranica*, vol. VIII, Fasc. 4, ed. Ehsan Yarshater, Mazda Publishers, Costa Mesa, 1998, pp. 366-367.

⁵⁵ Ğuwaynī, Ğahān-Guṣā, ց. 3, ֆ. 484-490.

⁵⁶ J. A. Boyle, *The History of The World-Conqueror* by 'Ala-ad-Din 'Ata-Malik Juvaini (Ph.D.), tr. from the text of Mirza Muhammad Qazvini, vol. 1, Harvard University Press, 1958, p. 250, note 6.

ատենախոսության մեջ: Վերջինիս կարծիքով Գույուկ խանի թագադրությանը ներկա գտնված *sultān-e Tākavor*-ը ոչ այլ ոք է, եթե ոչ Տրապիզոնի կայսր Մանուել Ա Մեծ Կոմնենոսը (կառ. 1238-1263 թթ.)⁵⁷: Այնուհետև Լիպպարդի կարծիքին հար և նման տեսակետ է արտահայտել և այս խնդրին մի առանձին հոդվածով անդրադարձել է Է. Բրայերը⁵⁸: Վերջերս էլ Ջ. Լանգդոնը, հաստատված համարելով այդ ենթադրությունը, եզրակացրել է, որ «*Ժաքավորի սուլթանը*» պարզապես Տրապիզոնի կայսրության յուրատեսակ անվանումն է՝ տրված նրա տիրակալի տիտղոսի միջոցով⁵⁹: Ռուսական բյուզանդագիտության ներկայացուցիչներից էլ այս կարծիքին են հակված Ռ. Շուքուրովն⁶⁰ ու Դ. Կորոբեյնիկովը⁶¹:

Հատկանշական է, որ Բար Հեբրեոսից մեզ պատմագրական արժեք ներկայացնող երկու հիմնարար աշխատություններ են հասել՝ Մուրաֆյանի ակնարկած ասորերեն «Ժամանակագրությունը» և վերջինիս առաջին մասի համառոտ արաբերեն խմբագրությունը՝ «Հարստությունների համառոտ պատմու-

⁵⁷ St' u B. G. Lippard, *The Mongols and Byzantium*, PhD dissertation, 1983, pp. 179-180.

⁵⁸ A. Bryers, *The Grand Komnenos and The Great Khan at Karakorum in 1246* // *Res Orientales*, 1994, vol. 4, pp. 257-261: Նույնատեսակ ենթադրությունների է հանգել նաև ֆրանսիացի մասնագետ Մ. Կուրշանսկիսը: St' u M. Kursanskis, *L'empire de Trébizonde et les Turcs au 13e siècle* // *Revue des études byzantines*, v. 46, 1988, p. 121, note 42: Ըստ նրա՝ Մանուել I Կոմնենոսը ձեռնամուխ է եղել սեփական արձաթեղրամների հատմանը գլխավորապես մոնղոլ խանին հարկ վճարելու նպատակով: St' u **նույնի՝** *The Coinage of the Grand Komnenos Manuel I* // *Archeion Pontou*, t. 35, 1979, pp. 23-37.

⁵⁹ St' u J. S. Langdon, *Byzantium's initial encounter with the Chingissids: An introduction to Byzantino-Mongolica* // *Viator*, vol. 29, 1998, p. 120, n. 140.

⁶⁰ **Шукуров**, *Великие Комнины*, с. 162, ինչպես նաև **նույնի՝** *Трапезундская империя и Восток* // С. П. Карпов, *История Трапезундской империи, Алетейя, Санкт-Петербург*, 2007, с. 370.

⁶¹ **Д. А. Коробейников**, *Михаил VIII Палеолог в Румском Султанате. Византийский современник*, 64 (89), отв. ред. И. С. Чичуров, Москва, Наука, 2005, с.

թյուն»-ը (al-Muḥtaṣar fi [tārīḥ] al-duwal)⁶², որի՝ մոնղոլների պատմությանը վերաբերող բաժնի առանցքային աղբյուրն անկասկած եղել է նրա ժամանակակից Ջուվայնիի «Աշխարհակալի պատմությունը»: Այդ մասին ինքը՝ Բար Հեբրեոսն է գրում⁶³: Այս և Ջուվայնիի երկի համապատասխան հատվածների զուգադրությունից պարզ է դառնում, որ խոսքն իրականում այստեղ Սմբատ Սպարապետի մասին է, ում Ջուվայնին շփոթել է Հայոց արքայի հետ.

Ջուվայնի	Բար Հեբրեոս
<p>ա. «Բումից եկավ սուլթան Ռուքն ալ-Դինը, և [եկավ] <u>Թաքալորի սուլթանը</u>. Վրաստանից՝ երկու Դավիթները, Հալեպից՝ Հալեպի տիրոջ եղբայրը ...»⁶⁴</p>	<p>բ. «Իսկ Ռումից [եկավ] սուլթան Ռուքն ալ-Դինը, իսկ հայերից [եկավ] <u>Գունդստարը՝ թաքֆուր Հեթումի եղբայրը</u>, Վրաստանից՝ Մեծ և Փոքր Դավիթները, իսկ Ասորիքից՝ Հալեպի տեր ալ-Մալիք ալ-Նասիրի եղբայրը...»⁶⁵</p>
<p>ա. «Եվ յառիկներ տրվեցին <u>Թաքալորի</u> և Հալեպի սուլթաններին և դեսպաններին...»⁶⁶</p>	<p>բ. «Եվ յառիկներ ու հավաստագրեր գրեց <u>Թաքֆուրի</u> և Հալեպի տեր ալ-Մալիք ալ-Նասիրի համար»⁶⁷</p>

⁶² Այս երկրորդը, սակայն, պարզապես թարգմանություն չէ, այլ համապատասխան մասի լրամշակում, քանի որ ներառում է նաև հատվածներ ու տեղեկություններ, որոնք տեղ չեն գտել ասորերեն բնագրում: Տե՛ս J. B. Segal, Ibn al-'Ibrī // The Encyclopaedia of Islam (New edition), vol. 3 (H-IRAM), E. J. Brill, Leiden, 1986, p. 805: Հմմտ. Lawrence I. Conrad, On the Arabic chronicle of Bar Hebraeus. His aims and audience, Parole de l'Orient: revue semestrielle des études syriaques et arabes chrétiennes: recherches orientales: revue d'études et de recherches sur les églises de langue syriaque, XIX, 1994, pp. 319-378.

⁶³ Bar Hebraeus, Chronography, p. 473.

⁶⁴ Տե՛ս Ğuwaynī, Ğahān-Guṣā, ց. 1, ֆ. 205.

⁶⁵ Ibn al-'Ibrī, Tārīḥ muḥtaṣar al-duwal, al-ṭab'a al-ṭāniya, bi-taḥqīq Anṭūn ṣāliḥānī al-Yasū'ī, Dār al-Rā'id al-Lubnānī, Bayrūt, 1994, ֆ. 448.

⁶⁶ Ğuwaynī, Ğahān-Guṣā, ց. 1, ֆ. 212.

(ընդգծումները մերն են- Գ.Դ.):

Ավելին, ասորի պատմագիրը գործածում է *գունդսուրաբլ* բառը՝ ցրելով բոլոր հնարավոր կասկածները: Դատելով Հայոց թագավորության մասին ասորի մատենագրի հայտնած տեղեկությունների հավաստիությունից՝ Բար Հեբրեոսին վստահելու համար մենք ծանրակշիռ պատճառներ ունենք, մանավանդ, որ, ինչպես ինքն է վկայում նույն «Հարստությունների պատմություն» երկում, անձամբ ծանոթ էր Հայոց Հեթում արքային և բազմիցս առիթ էր ունեցել զրուցելու նրա հետ⁶⁸:

Ինքը՝ Սմբատը, որքան էլ որ տարօրինակ է, «Տարեգրքում» չափազանց հակիրճ է խոսում իր այցելության մասին⁶⁹: Կարակորում գնալու ճանապարհին՝ Սամարղանդից Կիպրոսի արքա Հենրի Ա Լուսինյանին հղած և [1247 թ.] փետրվարի 7-ով թվագրված նրա նամակն ավելի օգտակար տեղեկություններ է պարունակում նրա այդ առաքելության մասին⁷⁰: Նշանակում է, ինչպես Կլ. Մութաֆյանն է հաշվարկում, Սմբատը Կարակորում պիտի հասած լինի ենթադրաբար 1247 թ. վերջերին (կամ ծայրահեղ դեպքում՝ 1248 թ. սկզբներին)⁷¹, և հետևաբար նա Գու-

⁶⁷ Տե՛ս *Ibn al-'Ibrī*, *Muḥtaṣar*, ֆ. 540: Տե՛ս նաև Մուհամմադ Կազվինիի համեմատական քննությունը, *Šuwaynī*, *Šahān-Guṣā*, ց. 3, ֆ. 484-485.

⁶⁸ *Ibn al-'Ibrī*, *Muḥtaṣar*, ֆ. 460: Թեև Ա. Գալստյանն անտեղյակ է եղել «Աշխարհակալի պատմության» հեղինակի այս վիճահարույց արտահայտությանը, բայց նրան հայտնի է եղել Սմբատ Գունդսուրաբլի բանագնացության վերաբերյալ Բար Հեբրեոսի հիշյալ հաղորդումը աշխատության լատիներեն թարգմանությունից: Տե՛ս **Գալստյան Ա.**, Հայ-մոնղոլական առաջին բանակցությունները // ՊԲՀ, 1964, № 1, էջ 103: Հոդվածը հրատարակվել է նաև Ռ. Բեդրոսյանի անգլերեն թարգմանությամբ: Տե՛ս *A. G. Galstyan*, *The first Armeno-Mongol Negotiations* // *Armenian Review*, v. 29, 1976, p. 33.

⁶⁹ Տե՛ս **Սմբատայ Սպարապետի** Տարեգիրքը, աշխատասիրութեամբ Հ. Սերովրթի Ազըլեանի, Վենետիկ, 1956, էջ 228 և **Նույնի՝** Տարեգիրք. ի լույս ընծայեաց հանդերձ ծանօթութեամբք Կարապետ Վարդապետ Շահնազարեանց, Փարիզ, 1859, էջ 124:

⁷⁰ Տե՛ս *Richard J.*, *La lettre du Connétable Smbat et les rapports entre chrétiens et Mongols au Milieu du XIII^{ème} siècle* // *Armenian studies in memoriam Haïg Berbérian*, Lisbon p. 683-696.

⁷¹ *Mutafian*, *L'Arménie du Levant*, p. 138.

յուկի թագադրության բուն արարողությանը չէր կարող մասնակցել: Բայց այստեղ հարկ է նշել, որ Սմբատը, ինչպես որ մոնղոլ ուսումնասիրող Դ. Բայարսայխանն է կարծում, խանի արքունիք է հասել այն ժամանակ, երբ հավանաբար Գոյուկի թագադրության արարողություններից հետո դեռ Կարակորումում էին Հոմի պապի բանագնաց Պլանո Կարպինիի, վրացական, Ռումի սուլթանության, Ալամուտի, Շիրվանի, Լուրի և այլ դեսպանությունները և շարունակում էին բանակցել մոնղոլական իշխանությունների հետ⁷²: Միգուցե, ա՛յս հանգամանքն է մատենագիրներին շփոթության մեջ գցել⁷³:

Այնպես որ, մեր կարծիքով «Թաքավորի սուլթան» արտահայտությունը, ըստ էության, պարսիկ մատենագրի սխալն է, որ հետագայում ուղղվել է Բար Հեբրեոսի կողմից նրա «Հարստությունների համառոտ պատմություն» երկում: Այն պարագային, որ սա իսկապես սխալմունքի կամ չիմանալու արդյունք է, կարելի է ծառայեցնել նաև այն հանգամանքը, որ Ջուվայնին ի թիվս Կարակորում ժամանած հյուրերի հիշատակում է նաև «Էրզրումի սուլթանին» (Sulṭan-e Arz-e Rūm)⁷⁴, մինչդեռ Էրզրումը մի քանի տասնամյակ էր, ինչ գրավված էր (1201 թ.) ու վաղուց

⁷² D. Bayarsaikhan, *The Mongols and the Armenians (1220-1335)*, Brill, Leiden, 2011, p. 83, ինչպես նաև նույնի՝ *Submissions to the Mongol Empire by the Armenians // Mongolian & Tibetan Quarterly*, v. 18.3, 2009, p. 88: Հմմտ. Կիրակոս Գանձակեցու մի վկայության հետ, ըստ որի՝ Սմբատը Կարակորումից հետ է վերադարձել Իկոնիայի սուլթան Քայ-խոսրով Բ-ի որդու՝ Ռուքն ալ-Դինի հետ միասին: Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն, էջ 188-189:

⁷³ Ջուվայնիի այս արտահայտությունը, հավանաբար, շփոթեցրել է նաև մոնղոլական Իլ-խանության մյուս պաշտոնական պատմիչ Ռաշիդ ալ-Դինին (մահ. 1318 թ.): Նա, ում Ġāmī al-tawārīḫ-ի առանցքային աղբյուրներից մեկն «Աշխարհակալի պատմութիւնն» է, Գոյուկի թագադրության արարողության հյուրերի շարքից իրավացիորեն բաց է թողնում «Թաքավորի սուլթանին»: Տե՛ս *The Successors of Genghis Khan*, trans. from the Persian of *Rashīd al-Dīn* by J. A. Boyle, Columbia University Press, New York and London, 1971, pp. 183-184, ինչպես նաև *Рашид-ад-Дин*, Сборник летописей, том II, пер. Ю. П. Верховского, Издательство Академии Наук СССР, Москва-Ленинград, 1960, с. 118, 120.

⁷⁴ Ġuwaynī, Ġahān-Guṣā, ց. 1, ֆ. 305, 312.

արդեն գտնվում էր Սելջուկյան սուլթանության կազմում (1230 թ.)⁷⁵: Ինչ վերաբերում է մյուս՝ Մանուել Ա-ի վարկածին, ապա այն նույնպես անհամոզիչ է և հիմնովին կառուցված է ենթադրությունների վրա: Վ. Ռուբրուքի այն վկայությունը, որ Մանգուխանի օրոք Տրապիզոնի կայսրը ենթակա ու հարկատու էր մոնղոլական պետությանը⁷⁶, հարկավ, բավարար չէ Մանուել կայսրին Ջուվայնիի հիշատակած *sulṭān-e Tākavor*-ի (այն էլ *tākavor*, այլ ոչ թե *takfūr* ձևով) հետ նույնացնելու համար⁷⁷:

Թագավոր տիտղոսի ուսումնասիրության համար առանձնահատուկ հետաքրքրություն ներկայացնող հաջորդ պատմագրական երկը, որին հարկ ենք համարում անդրադառնալ, Իբն Բիբիի (*Ibn Bibi al-Munaḡḡima*, մահ. 1285 թ.) «Սելջուկնամեն» է կամ *al-Awāmir al-'Alā'iyya fi al-umūr al-'Alā'iyya*-ն⁷⁸, որ Իկոնիայի սուլթանության սելջուկ տիրակալների 1192-1280 թթ. պատմությունն է: Ընդ որում հեղինակն իր աշխատությունը գրել է վերոհիշյալ Ջուվայնիի կարգադրությամբ, և այն սկսվում է վերջինիս գովասանքով: Իբն Բիբին իր երկում *թաքֆուր* (*takfūr / takwar*) է անվանում ոչ միայն Հայոց արքային (ինչպես որ Լևոն Ա-ին՝

⁷⁵ St' u Boyle, *The History of The World-Conqueror*, p. 250, note 10.

⁷⁶ Путешествия в восточные страны *Плано Карпини и Рубрука*, Государственное изд. географической литературы, Москва, 1957, стр. 89, 223, прим. 21, 22.

⁷⁷ St' u Bryers, *The Grand Komnenos*, p. 260.

⁷⁸ Իբն Բիբիի ժամանակագրությունը մեզ է հասել երկու տարբերակով՝ ամբողջական և համառոտ (*Muhtaşar*): Համառոտ տարբերակի գերմաներեն թարգմանությունից (*Duda W. H., Die Seltchukengeschichte des Ibn Bibi Munksgaard*, Kopenhagen, 1959) հայերին վերաբերող հատվածները քաղել ու հայերեն է թարգմանել Հ. Տեր-Պողոսյանը: Տե՛ս Հ. Պ. Տեր-Պողոսյան, Հայաստան Իբն Բիբիի համեմատ // Հանդէս ամսօրեայ, 1960, № 4-6 (Ապրիլ-Յունիս), էջ 10-12, 162-177, № 10-12 (Հոկտեմբեր-Դեկտեմբեր), էջ 482-492: «Սելջուկնամեն»-ի ամբողջական տարբերակի հրատարակությունը (*Ibn-e Bibi, El-Evāmirü'l-'Alā'iyye fi'l-umūri'l-'Alā'iyye, onsöz ve fihristi hazirliyan A. S. Erzi, Türk Tarih Kurumu Basimevi, Ankara, 1956-1957*) ձեռքի տակ չենք ունեցել, իսկ *Muhtaşar*-ը մեզ հասանելի է եղել Մ. Հաութսմայի խմբագրությամբ (*Recueil de Textes Relatifs à L'Histoire Des Seldjoucides par M. Th. Houtsma, vol. IV, Histoire des Seldjoucides d'Asie Mineure d'après l'abrégé du Seldjournāme d'Ibn-Bibi, E. J. Brill, Leide, 1902*).

Lifūn Takfūr)⁷⁹, այլև Սելջուկյան պետության հարևան որոշ պետական կազմավորումների քրիստոնյա տիրակալներին, ինչպես օրինակ՝ Տրապիզոնի կայսրության հիմնադիր Կիո Ալեքսին (Ալեքսեյ Ա Մեծ Կոմնենոս, կառ. 1204-1222 թթ.)⁸⁰:

Իր «Ժամանակագրությունների ժողովածու»-ում (Ġāmi' al-tawāriḥ) հայոց միապետին *թաքֆուր* է անվանում նաև Իլ-խանյան ժամանակաշրջանի ամենաերևելի պատմիչը՝ Ռաշիդ ալ-Դինը: Իր «Ֆրանկների պատմության» (Tāriḥ-e afrang) մեջ, օրինակ, մատենագիրը գրում է. «Այս երկրի բնակիչների՝ քրիստոնյա լինելու պատճառով եգիպտոսի և Ասորիքի մուսուլմանական զորքերը [մշտապես] ասպատակում են Հայոց երկիրը: *Թաքֆուրը*, որ Փոքր Հայաստանի արքան է, թողնում է երկիրը և նավով գնում է ծովը...»⁸¹: Ġāmi' al-tawāriḥ-ի մեկ այլ «Օղուգ-

⁷⁹ Տե՛ս օրինակ Անդ, ֆ. 40.

⁸⁰ Անդ, ֆ. 54; **Տէր-Պողոսեան**, Հայաստան Իրն Բիբիի համեմատ, էջ 162-163, հղ. 2: *Malik al-arman takfūr* արտահայտության մի կիրառության էլ գտնում ենք Սելջուկյան սուլթանության մեկ այլ արքունական Ակսարայիի (մահ. 1323-1327 թթ. միջակայքում) *Musāmarat al-ahbār wa-musāyarat al-ahyār* («Հաղորդումների գրույց և օգուտների համապատասխանություն») երկում: Տե՛ս **Kerimuddin Mahmud Aksarayi**, *Mūsāmeret ül-ahbār*, *Moğollar zamanında Türkiye selçukluları tarihi*, *Mukaddime ve haşiyelerle tashih ve neşreden O. Turan*, *Türk Tarih Kurumu*, Ankara, 1944, S. 311.

⁸¹ Ռաշիդ ալ-Դինի այս երկում Կիլիկյան Հայաստանի մասին եղած պատմաաշխարհագրական տեղեկություններն ուսումնասիրել և համապատասխան հատվածը հայերեն է թարգմանել **Հ. Դ. Փափազյանը** (Ռաշիդ-էլ-Դինը Կիլիկյան Հայաստանի մասին // ՊԲՀ, 1978, № 2, էջ 129-139): Փափազյանն օգտվել է Կառլ Յանի ավստրիական հրատարակությունից (**K. Jahn**, *Die Frankengeschichte des Rašid ad-Din*, Verlag der Österreichischen Akademie der Wissenschaften, Wien, 1977, S. 44, 45; Tafel 42), իսկ մեզ հասանելի է եղել նաև բնագրի մի նոր հրատարակություն (**Rašid al-Dīn**, *Ġāmi' al-tawāriḥ* (Tāriḥ-e Afrang, *Pāpān wa-Qayāsera*), taših-i Moḥammad Rowšān, Mirāḡ Maktūb, Tehrān, 2005, ց. 1, ֆ. 41-42): *Takfūr Sis* արտահայտության մի հիշարժան վկայություն էլ կա 1462 թ. Կարա-կոյունլու սուլթան Ջհանշահի կնոջ՝ Բեգում-խաթունի կողմից Գանձասարի Հովհաննես կաթողիկոսին տրված մի հրովարտական: «Սկսած հին ժամանակներից և համաձայն Սսի *թաքֆուրի* գրության՝ Արվանքի բոլոր վայրերի առաջնորդությունն ու ղեկավարությունը պատկանում է Մատ-

ների պատմություն» (Tārīḥ-e Oğūz) անվանված գլխում, որը օղուզական ցեղերի նախահայր-նահապետի՝ Օղուզի կյանքի ու գործունեության, նվաճումների և ժառանգների մասին կիսա-առասպելական ավանդությունների ժողովածու է, Ռաշիդ ալ-Դինը քանիցս գործածում է *թաքֆուր* բառը (tekūr/takwar, tekfūr-ḥān)՝ ամենայն հավանականությամբ նկատի ունենալով Կիլիկիո հայոց արքաներին: Ահա այդ հիշատակություններից մեկը. «Ապա նա իր զորքի յուրաքանչյուր հազարյակից հարյուրական մարտիկներ առանձնացրեց և իր վեց որդիների հետ միասին ուղարկեց *Թաքֆուր-խանի* մոտ, ում մենք այսօր *Թաքֆուր* ենք կոչում»⁸²:

Մոնղոլական Իլ-խանության մեկ այլ պատմիչ Քաշանին (Abū al-Qāsim 'Abd Allāh Kašānī կամ al-Qāšānī, մահ. 1337/1338 թ.) Ուջայթու խանին (կառ. 1304-1316 թթ.) նվիրված իր տարեգրության մեջ (Tārīḥ-e Ulğāytū)⁸³ նույնպես գործածում է *թաքֆուր* տիտղոսը (մի քանի անգամ taqfūr ձևով) Կիլիկիայի Հայոց արքաների մասին խոսելիս: Նա պատմում է Բիլարղու (Bilārgū, Bülārgī) անունով մոնղոլ զորահրամանատարի կողմից Հայոց դեռատի գահակալ Լևոն Գ-ի (կառ. 1306-1307 թթ.) և նրա խնամակալ՝ հայոց գահակից արքա Հեթում Բ-ի անագորոյն սպանության մասին, ովքեր, Բիլարղուի պատրաստած դավադրու-

թեոս կաթողիկոսին»: Տե՛ս Հ. Դ. Փափագյան, Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, I (Հրովարտակներ), Երևան, 1956, էջ 45, 248:

⁸² Այս եզրակացությանն է հանգել է նաև «Օղուզների պատմության» գերմաներեն թարգմանության հեղինակ Կառլ Յանը: Տե՛ս K. Jahn, Die Geschichte der Oğuzen des Rašid ad-Din, Wien, 1969, S. 31, A. 6, ինչպես նաև S. 32-34: Դրան հակառակ, աղբրեջանցի հետազոտող Ռ. Շուքյուրովան առանց իր պնդման համար փաստարկներ ներկայացնելու այն համոզմունք է հայտնել, թե երկուս *թաքֆուր* եզրույթով «ակներևաբար Բյուզանդական կայսրերն են նկատի անված»: Տե՛ս Фазлаллах Рашид ад-Дин, Огуз-наме, пер. Р. М. Шукюровой, Баку, 1987, с. 44: Տե՛ս Rašid al-Dīn, Ğāmī' al-tawārīḥ / Tārīḥ-e Oğūz, tašhīḥ-e Moḥammad Rowšān, Tehrān, 2005, ք. 27, ինչպես նաև ք. 28-34.

⁸³ Հայտնի է, որ Ռաշիդ ալ-Դինը համագործակցել է Քաշանիի հետ հայտնի Ğāmī' al-Tawārīḥ-ը գրելիս: Չնայած ինքը՝ Քաշանին, պնդում է, թե հենց ինքն է եղել «ժամանակագրությունների ժողովածու»-ի իրական հեղինակը՝ Ռաշիդ ալ-Դինին մեղադրելով գրագողության մեջ:

թյանն անգիտակ, մի շարք երևելի հայ ազնվականների հետ միասին ներկայացել էին Անավարզայի (ʿAyn Zarba, Անարզաբա) մոտ գտնվող նրա ռազմական ճամբար: Բիլարղուին ներկայացնելով որպես օրինակելի մուսուլման՝ պարսիկ մատենագիրը գրում է. «Որպես իր զորքերի համար ձմեռվա կայան նա ընտրեց Թաքֆուրի երկիրը՝ Սիսը և Այասը, որ ասորական և եգիպտական շահմար-ի մաս են կազմում»⁸⁴: Այնուհետև տալով սպանության նկարագրությունը՝ պատմիչը վկայում է, որ երբ Թաքֆուրը և նրա թոռը՝ «կրտսեր Թաքֆուրը» (Takfūr-e kahin, որով անկասկած Լևոն Գ-ն է նկատի առնված), իրենց 30 սպասավորների հետ արքունիքում էին, մոնղոլ զորավարը, ձևացնելով, թե պատրաստվում է աղոթել «մերկացրեց իր սուրը և բարձրածայն takbir-ի կոչ անելով (այն է՝ Allāhu akbar գոչելով)՝ մեկ հարվածով գլխատեց Թաքֆուրին: Հենց որ նրա (Բիլարղուի) սպասավորները լսեցին takbir-ի գոչը, նրանք էլ նրա (Հեթումի) ուղեկիցներին սրախողխող արեցին, և կրտսեր Թաքֆուրը նույնպես սպանվեց»⁸⁵:

Հարկավ, *թազավոր/թաքֆուր* տիտղոսի ուսումնասիրության համար պատմագրական երկերը միակ սկզբնաղբյուրը չեն, քանզի այս առնչությամբ հետաքրքրական տեղեկություններ կարելի է քաղել նաև դրամագիտական նյութից: Հայ-սելջուկյան երկլեզվյան դրամների ու սելջուկների շրջանում տիտղոսի տարածման վրա ունեցած հնարավոր ազդեցության մասին արդեն խոսել ենք վերևում, և խոսքն այստեղ ամենևին էլ դրանց մասին չէ: Բանն այն է, որ Մամլուքյան տերության տարածքում մամլուքյան արծաթե դիրհամներին (dirham) զուգահեռ դրամական շրջանառության մեջ էին նաև հարևան երկրների դրամները, այդ թվում Կիլիկյան Հայաստանի արծաթեդրամները: Այդ դրամները, որ հայոց մեջ «*թազավորին*» էին կոչվում, արաբական մատենագրության մեջ վկայված են takfūrīyya («*թազավորա-*

⁸⁴ Al-Qasānī, Tārīḥ-e Ūlgaytū, be-ehthemām Mahin Hamblī, Tehrān, 2005, §. 77.

⁸⁵ Անդ, §. 80: Այս իրադարձությունների ավելի մանրամասն քննությունը տե՛ս A. Stewart, The Assassination of King Het'um II: The conversion of the Ilkhans and the Armenians // Journal of the Royal Asiatic Society, vol. 15.1, 2005, pp. 45-61.

կան») անվանումով: Հետաքրքիր է, որ Մերձավոր Արևելքում արծաթի պաշարների համընդհանուր սղության պայմաններում արծաթը շարունակել է մնալ Կիլիկիո Հայոց թագավորության հիմնական արժույթը: Իսկ մամլուքյան իշխանությունները արծաթեդրամների իրենց պակասությունը լրացրել են հպատակ երկրներից ստացվող հարկերի ու ռազմատուգանքների միջոցով⁸⁶: Հայկական թագավորինները նույնպես Մամլուքյան պետության գանձարանում են հայտնվել և ապա կրկին շրջանառության մեջ դրվել Կիլիկիայի Հայոց թագավորության կողմից վճարվող տարեկան հարկերի ու ռազմատուգանքների շնորհիվ: «Ի վերջո, արծաթը մնում էր արծաթ՝ անկախ նրանից, թե որ երկրից էր ծագում», - այս առիթով գրում է Վ. Շուլցը⁸⁷: Զ. Պտուկյանի կարծիքով Հայոց թագավորությունը հավանաբար արծաթի հանքեր է շահագործել Տավրոսի լեռներում, ինչը փաստերով ապացուցելու հնարավորություն մենք, ցավոք սրտի, չունենք: Ինչևէ, նա չի բացառում նաև, որ արծաթի պաշարների մի զգալի մասը Կիլիկիա էր գալիս Արևմուտքից՝ «նրա նավահանգիստներով անցնող ապրանքների վրա դրված հարկերի ու մաքսերի տեսքով»⁸⁸:

Առկա դրամագիտական նյութը թույլ է տալիս կարծել, որ հայկական takfiriyya-ն դրամաշրջանառության մեջ էր մտնում ոչ միայն ուղղակիորեն, այլ հաճախ նաև վերադրոշմվելուց կամ կրկնադրոշմվելուց հետո: Ավելին, միշտ չէ, որ «թագավորական» դրամների վերադրոշմումը հետևողականորեն ու խնամքով էր կատարվում: Այդ մասին են վկայում հայտնաբերված մի շարք վերադրոշմված դրամները, որոնց դարձերեսին դեռ ընթեռնելի

⁸⁶ Մամլուքյան արծաթի պաշարների սակավության հարցի այլ բացատրություններ էլ կան: Այդ մասին տե՛ս W. Schultz, The circulation of dirhams in the Bahri period // The Mamluks in Egyptian and Syrian politics and society, ed. by M. Winter and A. Levanoni, Brill, Leiden-Boston, 2004, pp. 242-244.

⁸⁷ Անդ, p. 241.

⁸⁸ P. Z. Bedoukian, Some Armenian coins overstruck in Arabic // Armeniaca, Saint Lasare, Venise, 1969, p. 147.

են հայերեն մակագրությունները⁸⁹: «Պատերազմական տուգանքների պատճառով արժեզրկված»⁹⁰ հայկական այս դրամների մասին տեղեկություններ են պահպանվել նաև ժամանակի վենետիկյան աղբյուրներում. իտալացի վաճառականներն իրենց առևտրական պայմանագրերում հայկական արծաթեդրամները *taccolino* են անվանում⁹¹, որ «թագվորինի» աղավաղված ձևն է ու արաբերեն *takfūriyya*-ի համարժեքը:

Takfūriyya տերմինի կիրառության մեզ հայտնի միակ դեպքը արաբ պատմիչ Իբն Աբդ ալ-Ջահիրի (մահ. 1292 թ.) մոտ է: Վերջինս, խոսելով մամլուքյան սուլթան ալ-Մանսուր Կալավունի Կիլիկիա կատարած ռազմարշավի արդյունքների ու Հայոց թագավորության կողմից Մամլուքյան սուլթանությանը վճարվելիք տարեկան հարկի մասին, մեջբերում է հայ-մամլուքյան պայմանագրի ամբողջական տեքստը, որից մեզ մասնավորապես այս հատվածն է հետաքրքրում. «Արքա Հեթումի որդի արքա Լևոնը պարտավորվում է մեր տեր սուլթան ալ-Մալիք ալ-Մանսուրին... հաշտության այս պայմանագրի կնքումից հետո և ընդհուպ մինչև դրա ժամկետի ավարտը ամեն տարի մատուցել իր, իր ենթակաների և երկրի համար սահմանված հարկը: Իսկ ամենամյա տրվելիք հարկը, որ առաջին տարում պիտի նախօրոք վճարվի, կազմում է գումար՝ 500.000 դիրհամ՝ [մուծելի] արծաթաճուլթաթֆուրիյյա-դահեկաններով (*al-ṭalaḡam al-takfūriyya*)՝ հաշվված

⁸⁹ P. Balog, *The Coinage of the Mamluk Sultans of Egypt & Syria*, New York (The American Numismatic Society), 1964, pp. 146-47; Bedoukian, *Some Armenian coins*, p. 147: Հատկանշական է, որ *թագվորիններն* ավելի փոքր տրամագիծ ունեին (տե՛ս Schultz, *The circulation of dirhams*, p. 241), քան մամլուքյան դիրհամները, հանգամանք, որը նույնպես անհնար էր դարձնում հայկական արծաթեդրամների լիարժեք կրկնադրոշմումը մամլուքյան փողերանոցների կաղապարներով: Տե՛ս Ե. Ներսեյան, Կիլիկեան Հայաստանի արաբերէտով կրկնադրոշմուած դրամները // Հայկագեան հայագիտական հանդես, հտ. Ի, Պեյրոպ, 2000, էջ 161.

⁹⁰ Բնորոշումը՝ Ե. Ներսեյանի: Տե՛ս Անդ, էջ 158:

⁹¹ Հայկական դրամների համար վենետիկյան վավերագրերի ներկայացրած հետաքրքրության ասպեկտների ուսումնասիրությունը տե՛ս A. Stahl, *Italian sources for the Coinage of Cilician Armenia* // *Armenian Numismatic Journal*, vol. 15, 1989, pp. 59-66.

ըստ կշռի, որի կեսը 250.000 դիրհամ է: Ինչպես նաև ընտիր նժույզներ ու ջորիներ...»⁹²:

Ահա այսպիսի կշիռ, նշանակություն ու տարողություն է ունեցել Հայոց արքաների թագավոր/թաքֆուր տիտղոսը ԺԳ-ԺԴ դարերի միջազգային հարաբերություններում: Թագավորության անկումից և հատկապես այն բանից հետո, երբ 1393 թ. Կիլիկիո Հայոց վերջին տարագիր արքա Լևոն Ե-ն կնքեց իր մահկանացուն Ֆրանսիայում, և վերջնականապես խորտակվեցին թագավորությունը արևմտավրոպական տերությունների սատարությամբ նորոգելու վերջին հույսերը՝ «թագավոր» տիտղոսը բուն հայկական միջավայրում մեկընդմիշտ դադարեց լինել Հայոց միապետական իշխանության և ընդհանրապես պետականության հիմնական խորհրդանիշներից մեկը: Հայոց արքա հորջորջումը հետայսու «ժառանգական իրավունքով» ներառվեց Կիպրոսի թագավորների տիտղոսակազմի մեջ ու դրոշմվեց վեր-

⁹²Տե՛ս Ibn 'Abd al-zāhir, Taṣrif al-ayyām, ֆ. 98-99: Պայմանագրի տեքստը ֆրանսերեն թարգմանության հետ մեկտեղ առաջին անգամ հրատարակել է Մ. Քատրմերը (*Quatremere, Histoire, tome 2.1, 1845, p. 166-171, 201-212*), ապա՝ Վ. Լանգլուան (*V. Langlois, Le trésor des chartes d'Arménie ou Cartulaire de la chancellerie royale des Roupénides, Venise, 1863, pp. 217-231*) և Մ. Կանարը (*Le royaume d'Arménie-Cilicie et les Mamelouks jusqu'au traité de 1285 // Revue des Études Arméniennes, N° 4, 1967, p. 249-258*): Դաշնագրի տեքստը Քատրմերի ֆրանսերեն թարգմանությունից հայերեն թարգմանել ու «Բանասերի» էջերում հրատարակել է Բակուրանը (Դաշնագիր խաղաղութեան ընդմեջ Լեւոն Գ Թագաւորի եւ Եգիպտոսի Մէմլուքեան սուլթան Գալաւոնի, կնքուած 1285 մայիս 7ին // Բանասեր ամսաթերթ գրական եւ գիտական, 1902 (մարտ), N° 3, էջ 69-79): Անգլերեն թարգմանությունը տե՛ս *Scott R. J., Mamlūk-Armenian relations during the Bahri period to the fall of Sis (1250-1375), McGill University, Montreal, 1981 (unpublished MA thesis), pp. 184-196* և *P. M. Holt, Early Mamluk Diplomacy (1260-1290). Treaties of Baibars & Qalāwūn with Christian Rulers, E. J. Brill, 1995, pp. 92-103*: Արդ, հարկ է հավելել, որ մինչև այժմ հայտնաբերված չեն Լևոն Բ-ի հատած ու արաբերենով կրկնադրոշմված դրամներ: Ներսեսյանն ըստ այդմ ենթադրում է, որ մամլուքները հավանաբար «հալեցուցին հայատառ այդ դրամները և հատանեցին իրենց դիրհեմները»: Տե՛ս *Ներսէսյան, Կիլիկեան Հայաստանի արաբերենով կրկնադրոշմուած դրամները, հոդվածում էջերի հերթականության տպագրական շփոթ կա. պետք է լինի էջ 155-156*:

ջիններիս հատած դրամների վրա⁹³: Կիպրոսի թագավորության անկումից հետո այն փոխանցվեց Սավոյայի դուքսերին, Պիեմոնտի ու Իտալիայի արքաներին⁹⁴: Տարածաշրջանի միջազգային քաղաքական-դիվանագիտական հարաբերություններում *թագավոր-թաքֆուր* տիտղոսը, սակայն, պահպանեց իր կենսունակությունը ևս մեկ-երկու հարյուրամյակ (ԺԴ-ԺԵ դարեր)՝ շարունակելով վերագրվել Կ. Պոլսի և Տրապիզոնի կայսրերին, ինչպես նաև Փոքր Ասիայի ու Թրակիայի բյուզանդական արքայիկներին ու իշխաններին⁹⁵:

Այսպիսով, եթե ամփոփելու լինենք այս հետազոտությամբ մեր առջև դրված խնդիրների քննությամբ ձեռք բերված հիմնական արդյունքները, պիտի փաստենք *թագավոր/թաքֆուր* տիտղոսի հատկանշական կարևորությունը ԺԳ-ԺԴ դարերի մերձմիջերկրածովյան Մերձավոր Արևելքի և ի մասնավորի Կիլիկիո Հայոց թագավորության և հարակից մուսուլմանական պետական միավորների քաղաքական-դիվանագիտական հարաբերությունների նրբություններն ընկալելու և դրանց լիարժեք գնահատական տալու առումով:

⁹³ Տե՛ս Մելիք Ս. Դափթ-Բէկ, Լուսինեանք, Մխիթարեան տպարան, Վիեննա, 1900, էջ 20-22; Կ. Յ. Բասմաջեան, Լետն Ե Լուսինեան. վերջին թագավոր Հայոց, Փարիզ, 1908, էջ 163; Տեր-Պետրոսյան, Խաչակիրները և հայերը. Հատոր Բ, էջ 465:

⁹⁴ Cl. Moutafian, Le Royaume Arménien de Cilicie, XIIe-XIVe siècle, CNRS Editions, Paris, 1993, p. 90, ինչպես նաև *տույնի*՝ L'Arménie du Levant, pp. 394-395; Տեր-Պետրոսյան, Խաչակիրները և հայերը, Հատոր Բ, էջ 465; R. H. Hewsen, Armenia Maritima: the historical geography of Cilicia // Armenian Cilicia, ed. by R. G. Hovhannisian and S. Payaslian, Mazda Publishers, Costa Mesa, 2008, p. 43.

⁹⁵ Տե՛ս Savvides, On the origins, pp. 457-461.

RESUME

THE TITLE T'AGAVOR/TAKFŪR IN THE MEDIEVAL MUSLIM HISTORIOGRAPHY

The three hundred years long existence of the Armenian state in Cilicia was marked not only by creation of abundant cultural heritage, but it also had a momentous contribution to the history of political interrelations of the Middle and the Near East. For the in-depth and complex analysis of these relations the preserved historiographical material is of vital importance not merely as major source of information; the examination of nomenclature, titulature, terminology and even the separate study of obsolete words and borrowings encountered in it, can also add a lot to our perceptions. An illustrative example of this is the Armenian title "t'agavor" (arm. "king", "coronate") widely utilized in the medieval Muslim historiography.

The word "t'agavor" was probably a direct borrowing for Arabic, Turkish and Persian languages. It is suggested that the term was incorporated into the vocabulary of diplomatic relations of the Middle East quickly after the formation of the Armenian kingdom. In virtue of Turkish elements of Near East and Asia Minor, the title was also spread over the emperors of Trebizond and Byzantium, as well as some other Christian rulers of the region. Taking into consideration almost all the cases of usage of the term in the Muslim historiography of XIII-XV cc., it is demonstrated that judging from the denying position of the legitimacy of Armenian king's power in Cilicia it was more advantageous to call Armenian sovereigns in any way but not *malik*. Here, in fact, the title *takfūr* came to help the Muslim chroniclers as a proper term, which, figuratively speaking, served as a unique kaleidoscope to depict the false image of the official attitude towards the Armenian kingdom, to show the feigning loyalty and tolerance and in fact to conceal the emotional side of it, in other words, its discriminatory and subjective nature.

Along with *takfūr*, all the other titles attributed by Muslim historians to the Armenian kings (*mālik*, *mutamallik*, *ṣāḥib*, *ḥākim* etc.) are discussed and instances of their usage are cited from a great number of Arabic and Persian historical sources of XIII-XV cc. The most respectful title by which Armenian kings of Cilicia are referred to by Muslim historians is *sulṭān*, but there can be found only unique cases of its usage.

ԳԼՈՒԽ Գ
«ՀԱՅՈՑ ԽԱԼԻՖԱՆ»

Գ. Գ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀՌՈՄԿԼԱՅԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԱԹՈՒԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՐԱԲԱԿԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Հայ ժողովրդի քրիստոնեական շրջանի պատմության ողջ ընթացքում հոգևոր իշխանությունը գրեթե միշտ հաստատ կապի մեջ է եղել աշխարհիկ-քաղաքական իշխանության հետ: Հայ մարդու հոգևոր-կրոնական կարիքները հոգալուց և քրիստոնեական դաստիարակություն տալուց զատ՝ եկեղեցին խիստ կարևոր դերակատարություն է ունեցել հայության ազգային ինքնության և մշակութային դիմագծի պահպանության գործում: Եկեղեցու դերը ավելի ակնառու է եղել պետականության բացակայության պայմաններում, երբ այն ստանձնել է նաև հայաշխարհի հավաքականության, սոցիալական և տնտեսական կառուցվածքի ապահովման և նրա քաղաքական շահերի պաշտպանության հանձնառությունը:

Պատմական հանգամանքների բերումով, ինչպես որ Հայոց քաղաքական կենտրոնների՝ մայրաքաղաքների դեպքում է, կաթողիկոսական աթոռանիստը նույնպես բազմիցս մի վայրից մյուսն է տեղափոխվել: Ընդհուպ մինչև Բագրատունյաց պետության անկումը (1045 թ.) Հայոց կաթողիկոսների նստավայրերը գտնվել են Բուն Հայաստանի տարածքում (Վաղարշապատ, Դվին, Աղթամար, Արգինա, Անի): Թագավորության կորստից հետո Հայոց կաթողիկոսները հարկադրված էին հոգևոր նոր կենտրոնի ընտրության հարցում նախապատվությունը տալ Կիլիկիայի և Հյուսիսային Ասորիքի մերձակա երկրամասերին՝ Կապադոկիային և Եփրատացիք նահանգին: Բանն այն է, որ տարագրության և ահազնացող ներգաղթի պատճառով այստեղ սովորացող հայկական բնակչությունը ստեղծել էր մանր իշխանություններ, որոնց աստիճանական հզորացումն ու ընդարձակումը կարող էր բարենպաստ պայմաններ ստեղծել նաև հոգևոր իշխանության բնականոն գործունեության համար: Այսպես, արդեն 1066 թ. Գրիգոր Բ Վկայասեր կաթողիկոսը (1066-1105 թթ.) իր աթոռանիստ է դարձնում Կապադոկիայում հաստատված Գագիկ Աբասյանի տիրույթներից Ծամնդավ բերդաքա-

դաքը¹: Ենթադրաբար 1105 թ. հայ իշխան Գող Վասիլի հրավերով Գրիգոր Բ-ը կաթողիկոսանիստը փոխադրում է Շուրը՝ Քեսունի գավառի Սև լեռան Կարմիր վանք²: Նրան հաջորդած Բարսեղ Անեցի կաթողիկոսը (1105-1113 թթ.) Լուսավորչի աթոռը Անիում հաստատելու հուսահատ փորձ է անում՝ շատ չանցած հարկադրված լինելով կրկին ապաստանել «ի մէջ լեռանց Շուրը անուանեալ»³: 1116 թ. Գրիգոր Գ Պահլավունին (1113-1166 թթ.) հայրապետական նստոց է դարձնում Տլուք գավառի Ծովք դղյակը (մինչև 1150 թ.): 1150 թ. նույն Գրիգոր Գ-ն տեղափոխվում է Հոռմկլա («հոռոմների կամ հույների բերդ»), որը Հայոց հայրա-

¹ Տե՛ս Օրմանեան Մ., Ազգապատում: Հայ ուղղափառ եկեղեցւոյ անցքերը սկիզբէն մինչեւ մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմուած, հտ. Ա, հրատարակութիւն Վ. եւ Հ. Տէր-Ներսէսեան, Կոստանդնուպոլիս, 1912, սյուն 1277-1278:

² Միքայել Ասորու մոտ կարդում ենք. «Քեշումում (Քեսուն), Ռաբանում և Ջոբար լեռան վրա էին [հաստատված] Գող Վասիլը, Վասիլ Տղան և Գող Վասիլի կինը, ով Տղայի ստնտուն էր (ծծմայրը), ոչ թե մայրը: Նրանք ունեին Կուրտիզ (Քուրդիկ) անունով մի կառավարիչ՝ դաժանաբարո այր, ով ատում էր ասորիներին: Նա այնպես կազմակերպեց, որ Գող Վասիլի կինը ասորիներից խլեց Քեշումին մերձ գտնվող Կարմիր վանքը, որ վաղուց ի վեր մեր ազգին է պատկանել: Վտարելով ասորի վանականներին՝ նա այս վանքը Ջոբար լեռան վրա գտնվող և Բեթ Կենայա կոչվող հինգ այլ վանքերի հետ միասին, որոնցում Բազմաթիվ կրոնավորներ կային, տվեց Գրիգորիոս կաթողիկոսին և հայ վանականներին»: Տե՛ս Chronique de Michel le Syrien, patriarche jacobite d'Antioche (1166-1199), ed. et trad. en français par J.-B. Chabot, t. 3, Ernest Leroux, Paris, 1905, p. 199, ինչպես նաև The Syriac Chronicle of Michael Rabo (The Great): A Universal history from the Creation, eng. trans. and introduction by Matti Moosa (հետայսու՝ The Syriac Chronicle), Beth Antioch Press, 2014, p. 628: Հմմտ. Bar Hebraeus, The Chronography of Gregory Abū'l-Faraj, The son of Aaron, The Hebrew Physician, The first part of his Political History of the World, vol. I, trans. Ernest A. Wallis Budge, Oxford University Press, London, 1932, reprinted by Gorgias Press, 2003, p. 246: Տե՛ս նաև Каждан А. П., Армяне в составе господствующего класса Византийской Империи, изд. АН АССР, Ереван, 1975, с. 17 և Dédéyan G., Les Arméniens entre Grecs, musulmans et croisés: étude sur les pouvoirs arméniens dans le Proche-Orient méditerranéen (1068-1150), v. 2: De l'Euphrate au Nil: Le réseau diasporique, Lisbonne, 2003, pp. 1067-1069.

³ Տե՛ս Ներսեսի Շորհալոյ Բանք Չափաւ, Վենետիկ, 1830, էջ 550:

պետների հաստատուն հանգրվան է մնում գրեթե մեկուկես հարյուրամյակ՝ ընդհուպ մինչև 1292 թ. մամլուքների կողմից նվաճվելը: Վարդան Արևելցին իր պատմության մեջ Հայոց հայրապետների դեգերումների մասին գրում է. «Յայնմ ժամանակի աթոռն Հայոց շրջեալ 'ի բազում վայրս' ի Կարմիր վանքն, և 'ի Շուղրն, և 'ի Ծովքն, գնացեալ դադարէ 'ի Հոռոմկլայն կոչեցեալ դղեակն, վասն Հոռոմ արեղայի անդ բնակելոյ...»⁴: Այստեղ հաստատված Հայոց հայրապետները տասն են եղել՝ վերը հիշատակված Գրիգոր Գ Պահլավունին, Ներսես Դ Կլայեցի-Շնորհային (1166-1173 թթ.), Գրիգոր Դ Տղան (1173-1193 թթ.), Գրիգոր Ե Քարավեժը (1193-1194 թթ.), Գրիգոր Զ Ապիրատը (1194-1203 թթ.), Հովհաննես Զ Սսեցին (1203-1221 թթ.), Կոստանդին Ա Բարձրաբերդցին (1221-1267 թթ.), Հակոբ Ա Կլայեցին (1268-1286 թթ.), Կոստանդին Բ Կատուկեցին (1286-1289 թթ.) և Ստեփանոս Դ Հոռմկլայեցին (1290-1293 թթ.):

Հոռմկլան (հայ մատենագրության մեջ՝ Հոռմկլայ, Հոռոմկլայ, նաև Հոռոմ-Քար, Կլայն Հոռմէական, Կլայն Հոռոմական, Ռոմեիխոսի կլայ կամ պարզապես Կլայ, լատին.՝ Ranculat, արաբերեն՝ Qal'at al-Rūm, ասոր. աղբյուրներում՝ Qal'āh Rōmāitā կամ Hesna de Rōmāyē, թուրք.՝ Rumkale)⁵ դժվարամատչելի բերդ էր Եփրատի աջակողմյան ափին՝ Մերզիման (կամ Մարզուբան) գետի միախառնման տեղում: Բերդը գտնվում էր սեպանման ու ժայռոտ հրվանդանի վրա, որի ստորոտները երեք կողմերից ողողվում էին Եփրատի ու Մերզիմանի ջրերով: Ուներ քառա-

⁴ Հաարյուն պատմութեան Վարդանայ Վարդապետի, լուսաբանեալ աշխատասիրութեամբ Ղ. Ալիշանի (Մատենագրութիւնք նախնեաց: Պատմագիրք հայոց), Վենետիկ, 1862, էջ 127-128:

⁵ Իսկ ԺԴ-ԺԵ դարի գերմանացի ճանապարհորդ Յոհան Շիլտբերգերն իր ուղեգրություններում բերդն Սրուքուլա է անվանում: St'u Reisen des **Johannes Schiltberger** aus München in Europa, Asia und Afrika von 1394 bis 1427, Hrsg. Karl Friedrich Neumann, München, 1859, S. 74, ինչպես նաև The bondage and travels of **Johann Schiltberger**, a native of Bavaria, in Europe, Asia, and Africa, 1396-1427, tr. and ed. by K. F. Neumann and J. B. Telfer, Hakluyt Society, London, 1879, p. 22.

շարք պարիսպներ՝ աշտարակավոր դարպասներով⁶:

Միջնադարի մատենագիրները ամրոցի մասին խոսելիս մշտապես շեշտում են նրա անադիկության հանգամանքը: Հայոց քահանայապետների նստավայրը գրեթե միշտ «անադիկ»⁷, «անմատչելի»⁸, «ամրակառույց»⁹, «անմատուց»¹⁰, «անհաղ-

⁶ Բերդի, նրա աշխարհագրական դիրքի և տեղագրության մասին տե՛ս **Ինճի-ճեան Ղ.**, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, Հատոր Ա, մասն Առաջին (Ասիա), Վենետիկ, 1806, էջ 339-341; **Ալիշան Ղ.**, Շնորհալի եւ պարագայ իւր, Սուրբ Ղազար, Վենետիկ, 1873, էջ 226-232; **Rey E.**, Les colonies francaques de Syrie aux XII^{me} et XIII^{me} siècles, Paris, 1883, p. 318-320; [**Գուլամիլյանց Ա.**], Կիլիկիա, Փորձ աշխարհագրութեան արդի Կիլիկիոյ, տպ. Յ. Ի. Լիբերմանի, Պետերբուրգ, 1894, էջ 372-378; **Կյուլեսերյան Բ.**, Ծովք-Տուրք եւ Հոռմ-Կլայ: Պատմական եւ տեղագրական ուսումնասիրութիւն, Մխիթարեան տպարան, Վիեննա, 1904, էջ 61-86; **Lawrence T. E.**, Oriental Assembly, Williams and Nortgate, London, 1947, pp. 28-37; **Hellenkemper H.**, Burgen der Kreuzritterzeit in der Grafschaft Edessa und im Königreich Kleinarmenien (Geographica Historica), Band 1, Rudolf Habelt Verlag, Bonn, 1976, S. 51-61; **Sinclair T. A.**, Eastern Turkey: an Architectural and Archaeological Survey, vol. IV, Pindar Press, London, 1990, pp. 166-172; **Honigmann E.-[Bosworth C. E.]**, Rūm Ḳalesi // Encyclopaedia of Islam (New Edition, հետալյուն՝ E12), vol. 8 (NED-SAM), E. J. Brill, Leiden, 1995, pp. 606-607; **Raphael K.**, Muslim Fortresses in the Levant: Between Crusaders and Mongols, Routledge, London & New York, 2011, pp. 185-193, ինչպէս նաև **Նալբանդյան Հ. Թ.**, Արաբական արքայութիւնը Հայաստանի և հարևան երկրների մասին: Յակոտ ալ-Համալի, Արուս-Ֆիդա, Իրն Շարդադ, Երևան, 1965, էջ 191-192; The Cilician Kingdom of Armenia, ed. by **Boase T. S. R.**, Scottish Academic Press, Edinburgh & London, 1978, pp. 166-167; **Stewart A.**, Qal'at al-Rūm/Hromgla/Rumkale and the Mamluk Siege of 691AH/1292CE // Muslim Military Architecture in Greater Syria, ed. by H. Kennedy, Brill, Leiden, 2006, pp. 273-275; **Mutafian Cl.**, L'Arménie du Levant (XIe-XIVe siècle), Les Belles Lettres, Paris, 2012, p. 604-606.

⁷ Տե՛ս, օրինակ, **Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ** (հետալյուն՝ ՀՁԸ), ԺԳ դար, կազմեց Ա. Ս. Մաթևոսյան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1984, էջ 175, 284, 676, 688, 731; **Գիրք Թղոց** (Մատենագրութիւն նախնեաց), տպարան Տ. Ռօտինեանց եւ Մ. Շարաձէ, Թիֆլիս, 1901, էջ 530; **Ներսես Շնորհալի**, Բանք Չափաւ, էջ 224:

⁸ Տե՛ս, օրինակ, **ՀՁԸ**, ԺԳ դար, էջ 190, 250; **Հովսեփյանց Գ.**, Յիշատակարանք ձեռագրաց, Անթիլիաս, 1951, սյուն 428:

⁹ Տե՛ս, օրինակ, նույն տեղում, էջ 240, ինչպէս նաև **ՀՁԸ**, ԺԲ դար, էջ 272:

¹⁰ Տե՛ս, օրինակ, **ՀՁԸ**, ԺԳ դար, էջ 242:

թելի»¹¹ և «անպարտելի»¹² մակդիրներով է անվանված հայ մատենագրության մեջ: Բերդի դժվարամատչելիության մասին հաղորդումները սովորական երևույթ են նաև արաբագիր ու պարսկագիր պատմիչների և աշխարհագիրների երկերում: Օրինակ, Յակուտ ալ-Համավին (մահ. 1229 թ.) իր Mu'ğam al-buldān աշխարհագրական բառարանում գրում է. «Հոմկլան (Qal'at al-Rūm) ամուր բերդ է Եփրատի արևմտյան կողմում՝ ալ-Բիրայի դեմ-դիմաց՝ նրա և Սամոսատի (Sumaysat) միջև»¹³: Աշխարհագրական համանունների մասին իր մեկ այլ բառարանում նույն հեղինակը վերահաստատում է իր պնդումը. «Հոմկլան գտնվում է Եփրատի վրա՝ ալ-Բիրայի և Սամոսատի մոտ, և այն շատ անառիկ է (haṣīna ḡiddan)»¹⁴:

Արու ալ-Ֆիդան (մահ. 1331 թ.) էլ իր Taqwīm al-buldān-ում բերդն այսպես է բնութագրում. «Հոմկլան արվարձաններ, պարտեզներ ու մրգեր (պտղատու ծառեր) ունի, ինչպես նաև մի գետ Մարզուբան անունով, որ գալիս է լեռան կողմից և Հոմկլայի [պարիսպների] տակ թափվում Եփրատը: Իսկ Եփրատն անցնում է բերդի ստորոտով: Այն անմատչելի, ամուր բերդերից մեկն է: Այն հայերից խլել է սուլթան ալ-Մալիք ալ-Աշ-րաֆը՝ սուլթան ալ-Մալիք ալ-Մանսուր Կալավունի որդին, Աստված օրհնի նրան: Եփրատի հարավ-արևմտյան կողմում է: Այն ալ-Բիրայից արևմուտք է՝ մոտ մեկ marḡala (այն է՝ «մեկ օրվա ճանապարհ»)՝ Գ.Դ.) հեռավորության վրա, Սամոսատից արևելք, Եդեսիայից (al-Ruhā) հարավ, բայց այդ բոլորն էլ մոտ են նրան»¹⁵:

¹¹ **Շնորհալի**, Բանք Չափաւ, էջ 225:

¹² Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ **Ստեփաննոսի Օրբէլեան** արք եպիսկոպոսի Սիւնեաց, ի լոյս ընծայեաց հանդերձ ծանօթութեամբք Կ. Վ. Շահնազարեանց, հտ. Բ, Փարիզ, 1859, էջ 190:

¹³ **Yāqūt al-Ḥamāwī**, Mu'ğam al-buldān, ց. 4, Dār ṣādir, Bayrūt, 1977, ց. 390.

¹⁴ **Նույնի՝** Kitāb al-Muṣṭarīk waḍ'an wa-muftariq ṣaq'an, al-ṭab'a al-ṭāniya, 'Ālam al-Kutub, Bayrūt, 1986, ց. 357.

¹⁵ **Abū al-Fidā'**, Taqwīm al-buldān (Géographie d'Aboulféda, ed. M. Reinaud et W. Mac Guckin de Slane, Paris, 1840), ց. 269.

ԺԵ դարի պարսիկ մատենագիր Հաֆիզ Աբրուն գրեթե նույնությամբ կրկնում է Աբու ալ-Ֆիդային. «Հոռմկլան շատ պարտեզներ և պտղատու ծառեր ունի: Այն գտնվում է Շումայաստի (Սամոսատ) արևելյան կողմում՝ Եփրատի ափին: Գետը, որ հայտնի է Մարզուբան անունով, գալիս է լեռան կողմից և թափվում Եփրատը: Եփրատը հոսում է լեռան ստորոտով՝ բերդի արևելյան կողմով: Բերդը շատ հայտնի է, և նրա մասին ասում են, որ նրա առումը շատ բարդ գործ է: Այն Ասորիքում (belad-e Šam) է գտնվում»¹⁶:

Բերդի դիրքի ու շրջակա քաղաքներից ունեցած հեռավորության մասին լրացուցիչ տեղեկություններ է տալիս ալ-Կալկաշանդին (մահ. 1418 թ.): Նա մասնավորապես գրում է. «Այն հնում Qal'at al-Rūm էր կոչվում: Այն Կիննասրինի (Qinnasrin) ռազմական շրջանի (ḡund)¹⁷ բերդ է՝ Եփրատի հարավարևմտյան ափին: Հալեպից հյուսիս-արևելք է՝ նրանից մոտ հինգ marḥala հեռավորության վրա, ալ-Բիրայից արևմուտք՝ մեկ marḥala հեռավորության վրա: Եփրատն անցնում է նրա կողքով: Այն գտնվում է չորրորդ իկլիմում (երկրամասում): Որոշ աստղաբաշխների (aṣḥāb al-azyāḡ) հավաստմամբ այն գտնվում է 62° 20' երկարության և 36° 50' լայնության վրա: Այն ամուր և անհասանելի բերդերից է: Ունի արվարձաններ և այգիներ: Նրա կողքով է անցնում նաև Մարզուբան անունով գետը, որը թափվում է Եփրատը»¹⁸:

¹⁶ Ġoġrafiyā-ye Ḥāfeẓ-e Abrū, ց. 1, taḥqīq-e ṣādeq Saġḡādī, Tehrān, 1997, ց. 369.

¹⁷ Իսլամական նվաճումներից հետո «ջունդ» էին անվանում ռազմական այն շրջանները, որոնք զորք էին տրամադրում պարբերաբար կազմակերպվող արշավանքներին: Ասորիքը, օրինակ, սկզբում բաժանված էր չորս «ջունդերի»՝ Հորդանանի, Դամասկոսի, Պաղեստինի և Հիմսի: Հետագայում՝ Արբասյանների օրոք, սրանց ավելացվեց հինգերորդը՝ Կիննասրինի ռազմական շրջանը: Կիննասրինի ջունդի մասին տե՛ս Elisseeff N., Qinnasrin // EI2, vol. V (KHE-MAHI), E. J. Brill, Leiden, 1986, pp. 124-125; Տեր-Ղևոնդյան Ա. (թարգմ. Բնագրից, ներածություն), Արաբական աղբյուրներ Գ (Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հտ. 16), ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2005, էջ 314-315:

¹⁸ Sb' al-Qalqašandī, ṣubḥ al-A'šā, ց. 4, al-Maṭba'a al-Amiriyya, al-Qāhira, 1915, ց. 119.

Ամրոցի մեկ այլ արժեքավոր նկարագրություն ենք գտնում 1292 թ. Հռոմկլայի առմանը վճռորոշ մասնակցություն ունեցած Դամասկոսի փոխարքա (na'ib al-saltana) էմիր Ալամ ալ-Դին ալ-Շուջջաիի կողմից Դամասկոսի զաժի al-quḍāt-ին («գլխավոր դատավորին» կամ «դատավորների դատավորին») ուղարկված ավետիս-նամակում (baššāra կամ bušrā), որին անդրադառնալու առիթ դեռ քանիցս ունենալու ենք: Մամլուքյան պատմիչներից այս նամակը պահպանել են ալ-Ջազարին, ալ-Նուվայրին, Իբն ալ-Դավադարին, ԺԳ-ԺԴ դարի մի անանուն ժամանակագիր և Իբն ալ-Ֆուրաթը: «Այն բարձր զառիվայրեր ունեցող ամրոց է, մինչդեռ այն տափարակ հարթության վրա է: Անցորդն այնտեղ կարող է ոտք դնել միայն, թերևս, այդ քարափների վրայով անցնելով: Այն աչքի համար դժվար տեսանելի է (բառացի՝ «սիրտդ կոկորդիդ է հասնում, մինչև որ տեսնում ես այն»): Այն, ասես, լեռների սրտում եղած թաքստոց լինի. սպանում է քողարկված մնալով, հսկում է շրջակայքը՝ ծածուկ լինելով: Երկնաբեռձ լեռներն իրենց ծամերն են փռել նրա վրա, իսկ ամպերը կարծես իրենց քողերն են խփել նրա վրա...: Եփրատը անցնում է նրա արևելյան կողմով վրեժխդրի (ḡalib al-ḡair) ուսի մեջ խրված թրի պես, իսկ արևմտյան կողմից մեկ այլ գետ է բոլորում նրան՝ պարիսպ կազմելով շուրջը: Նրա կատարից ավելի վերև ձգվող լեռ կա, որը գրեթե ամբողջովին փակում է տեսադաշտը, և հայացքդ մոլորվում է նրա հրվանդանը պատկերացնելիս ու առանց որևէ հուշող նշանի չի գտնում դեպի նրա ապարանքները տանող ճիշտ ուղին: Այս կերպ է նրա թե՛ արևելյան և թե՛ արևմտյան կողմից, ու անգամ արևի ու լուսնի լույսը ոչ ծագի ժամանակ և ոչ էլ աղջամուղջին [բերդի պարիսպներից] ներս չեն թափանցում: Նրա շուրջը անդունդներ ու խանդակներ (կամ փոսեր, խորշեր՝ ḡanādiq) են, որոնցում կիսալուսինը միայն նկարագրությամբ գիտեն, իսկ արևը միայն կիսով չափ են տեսնում»¹⁹:

¹⁹ Zetterstéen K. V., Beiträge zur Geschichte der Mamlükensultane in den Jahren 690-741 der Hıgıra nach arabischen Handschriften (հետայսու պայմանականորեն կանվանենք **al-Mu'allif al-mağhūl**, այն է՝ «Անանուն հեղինակ»), E. J. Brill, 1919, §. 14: Հմմտ. **al-Nuwayrī**, Nihāyat al-arab fi funūn al-adab, ց. 31, Dār al-Kutub al-'Ilmiyya, Bayrūt, 2004, §. 148; **Ibn al-Furāt**, Tārıh al-duwal wa-l-mulūk, ց. 8, bi-

Հռոմկլայի գրավման ականատես մեկ այլ մամուլիք բարձր-աստիճան պաշտոնյա և պատմիչ Բայբարս ալ-Մանսուրին (մահ. 1325 թ.) իր Zubdat al-fikra երկում գրում է. «Այդ թվականին (իմա՝ հիջրայի 691 թ.) սուլթանը Հալեպից ճամփա ընկավ դեպի Հռոմկլա, որն ամենամուր բերդերից է, իր բարձրությամբ և անմատչելիությամբ ամենահզորներից մեկը: Նրան հնարավոր է հասնել միայն դժվարանցանելի, խոչընդոտոտներով լի և քարքարոտ ճանապարհով: Նրա ճանապարհների անհարթության և ներկայացրած դժվարության պատճառով հեծյալը միայն քայլելով է կարողանում հասնել նրան: Իսկ եփրատ գետը (baḥr al-Furāt) հոսում է նրա տակով՝ տեղ չթողնելով նրա պաշարման համար»²⁰:

Հռոմկլայի ու այնտեղ նստած Հայոց կաթողիկոսների մասին միջնադարի արաբական մատենագրության մեջ պահպանված մյուս տեղեկությունները քննելուց առաջ հարկ է, որ համառոտակի անդրադառնանք ամրոցի վաղ պատմությանն ու հայոց կաթողիկոսանիստ դառնալու հանգամանքներին:

Հռոմկլայի հիմնադրման մասին ստույգ վկայություններ չկան: Հաճախ այն նույնացնում են հին աղբյուրներում հիշատակվող Ուրեմա կամ Ուրեմնա բերդի հետ²¹: Բայց և այնպես,

taḥqīq Qusṭanṭīn Zurayq wa-Naǧlā 'Izz al-Dīn, al-Maṭba'a al-Amīrkāniyya, Bayrūt, 1939, ք. 140; al-Ġazarī, Ḥawādīṭ al-zamān wa-anbā'uḥu wa-wafayāt al-akābir wa-al-a'yān min abnā'ihī, al-tab'a al-'ūlā, bi-taḥqīq 'Umar 'Abd al-Salām Tadmurī, ց. 1, al-Makṭaba al-'ašriyya, Bayrūt, 1998, ք. 106-107; Ibn al-Dawādārī, Kanz al-durar wa-ḡāmi' al-ḡurar, ց. 8, bi-taḥqīq Ūlriḥ Ḥarmān, al-Qāhira, 1971, ք. 229-230.

²⁰ Տե՛ս նաև **Baybars al-Manṣūrī**, Zubdat al-fikra fi tāriḥ al-higra, bi-taḥqīq Dunāld Riṯšārdz, Bayrūt, 1998, ք. 288: Հմմտ. **Նույնի՝** al-Tuḥfa al-mulūkiyya fi al-dawla al-turkiyya, bi-taḥqīq 'Abd al-Ḥamid Ṣāliḥ Ḥamdān, al-Dār al-Miṣriyya al-Lubnāniyya, 1987, ք. 130-131: Բայբարս ալ-Մանսուրի հաղորդումը գրեթե նույնությամբ կրկնում է ալ-Քուֆուրին (1363 թ.): Նրա 'Uyūn al-tawārīḥ բազմահատոր ժամանակագրության փոքր մասն է միայն հրատարակված, բայց և այնպես մեզ հասանելի է եղել Ստամբուլի Թուրկական պալատի հավաքածուի թիվ 2922/22 ձեռագրի լուսապատճենը: Տե՛ս **al-Kutubī**, 'Uyūn al-Tawārīḥ (A 2922), ց. 22, թերթ 27:

²¹ Տե՛ս **Cahen Cl.**, La Syrie du Nord à l'époque des Croisades et la principauté franque d'Antioche, Geuthner, Paris, 1940, p. 122; **Նալբանդյան**, Արաբական

հայտնի են որոշ տեղեկություններ մինչև հայոց կաթողիկոսանիստ դառնալը նրա ունեցած տերերի մասին: Բյուզանդական տիրապետության օրոք Հռոմկլան ամենայն հավանականությամբ եղել է կարևոր գետանց և սահմանապահ բերդ՝ հսկելով Եփրատի աջակողմյան ափն ի վար ձգվող ճանապարհը²²: ԺԲ դարի առաջին կեսին այն Գող Վասիլի և իսկ հետո նաև նրա որդեգիր Վասիլ Տղայի տիրոջների մաս է կազմել²³: 1116 թ. Վասիլ Տղայից բերդը խլել է Եդեսիայի կոմս Բալդուին դը Բուրգը, և մինչև ԺԲ դարի կեսն այն մտել է խաչակրաց այս պետության կազմի մեջ²⁴: 1150 թ. Նուր ալ-Դին Ջանգիի հարվածների տակ վաղուց արդեն հոգևարք ապրող Եդեսիայի կոմսությունը վերջնականապես կործանվեց: Կոմս Ժոսիկն Բ-ն գերության քշվեց Հալեպ և մի քանի տարի անց այնտեղ էլ մահացավ: Գիյոմ Տյուրացու վկայությամբ՝ կոմսի կնոջ՝ Բեստրիսի հետ կայացած համաձայնությամբ քրիստոնյաների տիրապետության տակ մնացած բոլոր բերդերը (Turbessel՝ Թել Բաշիր, Hamtab՝ Այնթաբ, Ravendel՝ Ռավանդան, Ranculat՝ Հռոմկլա, Bile՝ ալ-Բիրա կամ Պիր, Samosatun՝ Սամոսատ) հանձնվեցին Բյու-

արքյուրները, էջ 191; Mutafian, L'Arménie, p. 604; Honigmann E.-[Bosworth C. E.], Rūm ḵal'esi, p. 606.

²² Stewart, Qal'at al-Rūm, p. 271.

²³ Տե՛ս Տարեգիրք **Սմբատայ Սպարապետի**, Փարիզ, 1859, էջ 91: Հմմտ. **Նույնի՝** Վենետիկ, 1956, էջ 139; **Սամուէլ Անեցի** եւ շարունակողներ, Ժամանակագրություն, աշխատասիրությամբ Կ. Մաթևոսյանի, Երևան, «Նաիրի» հրատ., 2014, էջ 204; **Bar Hebraeus**, Chronography, p. 246: Ըստ Միքայել Ասորու՝ Հռոմկլան գտնվել է Գող Վասիլի ենթակա Կուրտիզի վերահսկողության տակ, ում մասին արդեն ակնարկել ենք վերևում: Տե՛ս **Michel le Syrien**, Chronique, tome III, p. 199, ինչպես նաև **Michael Rabo**, The Syriac Chronicle, p. 628.

²⁴ Տե՛ս **Մատթեոս Ուռհայեցի**, Ժամանակագրություն, գրաբար քննադիրը Մ. Մելիք-Աղամյանի և Ն. Տեր-Միքայելյանի, աշխարհաբար թարգ.-ը՝ Հ. Բարթիկյանի, Երևանի համալսարանի հրատ., 1991, էջ 406-407 (Գրիգոր Երեցի շարունակությունը): Տե՛ս նաև Անանուն Եղեսացու՝ 1144 թ. Նուր ալ-Դինի կողմից Պիրի պաշարման վերաբերյալ վկայությունը, որում հիշատակություն կա Հռոմկլայի մասին՝ **Անանուն Եղեսացի**, Ժամանակագրություն, թարգ. քննադրից առաջաբան և ծնթգր. Լ. Տեր-Պետրոսյանի, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1982, էջ 95:

զանդիայի կայսր Մանուելին (կառ. 1143-1180 թթ.)²⁵: Սակայն մեկ տարի չանցած՝ մերձեփրատյան բոլոր այս տիրոջները՝ բացառությամբ Հռոմկլայի, գրավվեցին տարածաշրջանի իրար հետ դաշն կնքած մուսուլմանական կազմավորումների՝ Հալեպի աթաբեկության, Իկոնիայի սուլթանության, ինչպես նաև Արթուկյանների համատեղ ուժերով: Դեպքերի ժամանակակից իբն ալ-Ազրակ ալ-Ֆարիկի (մահ. 1168 թ. հետո) պատմիչը այդ մասին գրում է. «Ֆախր ալ-Դին Կարա-Արսլանը ժուլինի որդու (Ibn Gūslin) տարածքներից տիրեց Հիսն Մանսուրին և Բաբալուն, իսկ հայերից խլեց Քարքար բերդամրոցը²⁶: Սուլթան Կիլիջ Արսլանը վերցրեց Մարաշը, Քայսունը և շրջակայքը: Ժուլինի որդուն այլևս ոչ մի տիրոջ չմնաց՝ բացի Հռոմկլայից, որը Հուսամ ալ-Դինն անկասկած կգրավեր, եթե ողջ լիներ»²⁷: ԺԳ դարի

²⁵ St' u Recueil des historiens des croisades (հետայսու՝ RHC), Historiens occidentaux. Tome 1.1, Academie des inscriptions et belles-lettres, Paris, 1844, p. 786, ինչպես նաև William of Tyre, A history of deeds done beyond the sea, vol. 2, tr. and annot. by Emily Atwater Babcock and A. C. Krey, Columbia University Press, New York, 1943, p. 209.

²⁶ Քարքար (հայկական աղբյուրներում՝ Կարկառ) ամրոցում էր հաստատված Վասիլ անունով մի հայ իշխան, որ հայոց կաթողիկոս Գրիգոր Գ Պահլավունու եղբայրն էր: Ըստ Գրիգոր Երեցի՝ Արթուկյան էմիր Ֆախր ալ-Դին Կարա-Արսլանը բերդը հանձնելու դիմաց համաձայնել է խնայել նրա, նրա ընտանիքի և զինվորների կյանքը: Ավելին՝ «զիշխանն Վասիլ ընդ իւր տարեալ յերկիր իւր մեծաւ փառատրութեամբ, երկիր տուեալ որպէս սիրելի եղօր իւր»: Տե՛ս Մատթոս Ուտայեցի, Ժամանակագրութիւն, էջ 438-439: Այս մասին տե՛ս նաև Michel le Syrien, Chronique, tome III, p. 295, ինչպես նաև Michael Rabo, The Syriac Chronicle, p. 633: Ըստ Սմբատի՝ Վասիլ իշխանը, իրեն օգնական վերցնելով Ջուլինի 400 զորական, փորձել է հաց հասցնել Քարքարի քնակչությանը, բայց «խլիճ-Ասլանն (սխալ է. պետք է լինի՝ «Կարա-Ասլանն» - Գ.Դ.) տէրն Հանձթայ, անկեալ ի վերայ ձերբակալ արար զամենեսեան»: Տե՛ս Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, 1956, էջ 167:

²⁷ Ibn al-Azraq al-Fariqi, Tārīḥ Mayyāfariqin wa-Āmid (C. Hillenbrand, The history of the Jazira 1100-1150: The contribution of Ibn al-Azraq al-Fariqi, vol. 1, p. 255, vol. 2, p. 57): Տարընթերցելով իբն ալ-Ազրակի այս հաղորդումը՝ սխալվել է Կլոդ Կահենը՝ գրելով, թե Հռոմկլան նույնպես գրավվել է Հուսամ ալ-Դին Տիմուրթաշի կողմից: Տե՛ս Cl. Cahen, Le Diyar Bakr au temps des premiers Urtukides // Journal Asiatique, tome CCXXVII, Paris, 1935, p. 254, n. 1: Թեև գիւ-

պատմիչ Վարդան Արևելցին այդ անցքերի մասին գրում է, թե հույներից (Հռոմ արեղայից) բերդն «առին Տաճիկք, և 'ի նոցանէ Վասիլ իշխանն Հայոց, և 'ի նմանէ առին Փռանգք. և 'ի յորսի պատահեալ իշխանին որոգայթի մատնիլ 'ի ձեռս Տաճկաց, զոր տարեալ 'ի Հալպ, մեռաւ անդէն»²⁸: Վարդանը շարունակում է, թե գերեվարված կոմսի կինը՝ Բեատրիսը, որոշեց Հռոմկլան նվիրել (ավելի ճիշտ՝ ի պահ տայ) հայոց կաթողիկոսին մի պայմանով, որ եթե իր որդին երբևէ կարողանա նորոգել հոր կորսված իշխանությունը, վերադարձնի նրան, «զի և ինքն ոչ վստահանայր միայն բնակիլ ի մէջ այլազգեաց. քանզի տիրեալ էր Թուրքն բոլոր շրջակայ գաւառացն»²⁹: Իսկ Միքայել Ասորու «Ժամանակագրության» հայերեն խմբագրություններից մեկում կարդում ենք. «...և մնաց միայն Հռոմկլայն ուր կայր կինն նորա դստերօքն, և նախախնամութեամբն Աստուծոյ ետ զնա տէր Գրիգորի Հայոց Կաթողիկոսին, և եղև աթոռ նոցա յալտեան»³⁰: Ահա այսպես, Գրիգոր կաթողիկոսը «ազգայնաւք և

նականն իր մեկ այլ աշխատության մեջ ուղղել է իր սխալը: Հմմտ. *նոյնի՝ La Syrie*, p. 386.

²⁸ Վարդան, Հաւաքումն, էջ 128:

²⁹ Նոյն տեղում:

³⁰ Տե՛ս ժամանակագրութիւն տեառն **Միխայէլի Ասորոց Պատրիարքի**, տպարան Սրբոց Յակովբեանց, Յերուսաղէմ, 1871, էջ 423-424: Մյուս խմբագրությունը շարունակում ու լրացնում է. «Եւ եկն կաթողիկոսն և եղև անդ մինչեւ եկն որդին Ջօշկին և հաւանեցուցին դրամով. և դարձուցին անդրեն: Քանզի և ինքն ոչ հավատայր եթէ կարէ ունել զնա 'ի մէջ Թուրքաց...»: Տե՛ս Տեառն **Միխայէլի Պատրիարքի Ասորոց** ժամանակագրութիւն, տպարան Սրբոց Յակովբեանց, Յերուսաղէմ, 1870, էջ 429-430: Այն մասին, որ բերդի հանձնման վերջնական համաձայնությունը կայացվել է «դրամական վճարի» դիմաց, տե՛ս նաև **Վարդան**, Հավաքումն, էջ 128 («ինչս յուրով»); **Ստեփաննոս Օրբէլեան**, Պատմութիւն, հտ. 2, էջ 193 («գանձագին արարեալ»); **Սմբատ**, Տարեգիրք, Վենետիկ, էջ 169 (15 հզ. դահեկանով և բերդի նկատմամբ ունեցած իրավունքներից հրաժարվելու Ջոսիկի գրած երդմագրով): Հմմտ. *Der Nersessian S., The Kingdom of Cilician Armenia // A History of the Crusades* (հետալայն՝ HC), vol. II: *The Later Crusades 1189-1311*, gen. ed. K. M. Setton, The University of Wisconsin Press, 1969, p. 642: Հետաքրքիր է, որ Միքայել Ասորու պատմության ասորերեն բնագրում բերդի հանձնումը լրիվ այլ կերպ է ներկայացված: «Հռոմկլայում (Qal'a Romaytā) ժոսիկը նստեցրել էր հայազգի

ամենայն զարմիք և սպասաւորաք և ամենայն լրմամբ սրբոյ աթոռոյն»³¹ տեղափոխվեց Հոռնկլա, որը, գտնվելով Կիլիկյան Հայաստանի սահմաններից դուրս, դարձավ հայոց հայրապետների նստավայրը՝ յուրատեսակ անկլավ՝ շրջապատված մուսուլմանական տարածքներով: Աշխարհագիր Յակուտ ալ-Համալին ուշադրություն է հրավիրում այդ փաստի վրա. «Այս ամրոցը մուսուլմանական երկրների մեջտեղում է, որ միակն է, որ մնացել է հայերի ձեռքում, մինչդեռ շրջակա մյուս բոլոր հողերը [վաղուց] արդեն գրավված են: Դրա պատճառը նախ և առաջ նրա անօգտակարությունն է, քանզի այն ոչ մի շահույթ չի բերում, և երկրորդ՝ նրանց հովվապետերի (կամ կրոնանապետի՝ rabb al-milla) նստավայրը լինելու պարագան, որոնք [սովորաբար] ազատ են թողնվում, ինչպես որ վանքերն ու եկեղեցիներն են իսլամի երկրներում ազատ թողնվում»³²:

Ա. Ստյուարտը, փորձելով բացատրել հայոց կաթողիկոսարանի նկատմամբ մուսուլմանների այս անտարբերության ու հանդուրժողականության պատճառը, ենթադրում է, թե «հավանաբար հայոց կաթողիկոսն իրենցից վտանգ չէր ներկայացնում Զանգիների կամ Այյուբյանների համար, կամ գուցե

Միքայել անունով մեկին: Սա իմանալով ժուլիի մահվան մասին՝ պահանջեց նրա կնոջից ու որդուց, ով դեռ Թել Բաշիրում էր, հայտնել Գրիգորին՝ հայոց կաթողիկոսին, ով այդ ժամանակ գտնվում էր Ծովքում՝ այսինքն Փոքր Լճում, կարպետազի ճամփա ընկնի Հոռնկլա՝ իրեն օգնելու: Սակայն կաթողիկոսը խորաորպեսզի ճամփա ընկնի Հոռնկլա՝ իրեն օգնելու: Սակայն կաթողիկոսը խորամանկում և խարում էր նրան, և ի վերջո բռնեց նրան, չարչարանքների ենթարկեց, խլեց այն ամենն, ինչն ուներ և վտարեց: Գրիգոր կաթողիկոսն ինքը հաստատվեց Հոռնկլայում»: Տե՛ս Michel le Syrien, Chronique, tome III, p. 297, ինչպես նաև Michael Rabo, The Syriac Chronicle, p. 686: Ասորի պատրիարքի այս պատմությունը հասկանալի պատճառով գրեթե բառացիորեն կրկնում է նաև Բար Հեբրեոսը: Տե՛ս Bar Hebraeus, Chronography, p. 277: Մինչդեռ Դյուլրիեն իրավացիորեն նկատում է, որ այս «հեքիաթն» ամենայն հավանականությամբ արձագանքն է հայերի նկատմամբ ասորիների և հակոբիկների տածած քողարկված առեւտրության, որի ապացույցներն Ասորու պատմության մեջ քիչ չեն: Տե՛ս RHC: Documents arméniens, tome 1, Academie des inscriptions et belles-lettres, Paris, 1869, p. 154.

³¹ Տե՛ս Հովսեփյանց, Յիշատակարանք, սյուն 428:

³² Yāqūt, Mu'gam, ց. 4, ք. 390.

Հոռմկյան ռազմավարական առումով այլևս այնպիսի նշանակություն չունենր՝ ալ-Բիրայի մոտ Եփրատի արևելյան և արևմուտյան ափերը կապող խիստ կարևորություն ձեռք բերած գետանց ճանապարհի հետ համեմատած»³³: Թ. Սինկլերի համոզմամբ այդ «արտասովոր հանգամանքը» բացատրելի է թերևս միայն բանուկ ճանապարհներից ու ուղիներից բերդի ունեցած հեռավորությամբ և նրա անմատչելի ամրություններով³⁴: Այս իրավիճակը, սակայն, ժամանակի ընթացքում փոխվել է: Հայոց թագավորության հզորացման և հայ-մոնղոլական գործակցության պայմաններում կաթողիկոսանիստի գրավումը Մամլուքյան սուլթանության համար օրակարգային հարց է դարձել: Էմիր Ալամ ալ-Դին ալ-Շուջջախի վերոհիշյալ ավետիս-նամակում «սևով սպիտակի վրա» գրված է. «Հիշյալ ամրոցը իսլամական սահմանային ամրությունների գոտու համար նույնն էր, թե կոկորդումդ խրված ոսկորը, և կամ բարքերի [անակընկալ] անկումը, կամ կուրծքդ խեղդող ծարավը, և կամ լիալուսնի վերահաս խավարումը, երբ քո դեմ դավեր է հյուսում, բայց ցույց է տալիս, թե թույլ է [ու ենթարկվող], երբ սքողում է իր դավաճանությունն ու երևան հանում ներողությունը: Նրա բնակչությունը [միշտ էլ] իր հույսը դրել է հարևաններին խաբելու և թաթարների հետ զինակցելու վրա»³⁵:

Սկևռայում գրված «Վարք Սրբոց»-ի հիշատակագիրը, կաթողիկոսության անհաստատ ու աստանդական վիճակից նեղսրտած, գրում է. «Եւ ընդ նուաղել թագաւորութանն յազգէ Բագրատունեաց և ցան և ցիր լինել ազգի մերոյ ընդ ստրկութեամբ ծառայութեան այլասեռ ազգաց, բարծաւ և հայրապետութիւն ի բնիկ աշխարհէն և քաղաքացն Հայոց, և ոչ ուրեք գոյր հաստատութիւն դիտապետացն թորգոմեան տանն լինել ժառանգաւոր հայրենի աթոռոյն, այլ որբ մնալով յիրեանց ժառանգութենէն և ի տեղիս շրջէին հայրապետքն՝ կալով ընդ իշխանու-

³³ Stewart, Qal'at al-Rūm, p. 272.

³⁴ Sinclair, Eastern Turkey, vol. 4, p. 215.

³⁵ Sb'u al-Mu'allif al-maǧhūl, §. 14: Հմմտ. al-Nuwayrī, Nihāya, ց. 31, §. 147; Ibn al-Furāt, al-Duwal, ց. 8, §. 139-140; al-Ġazarī, Ḥawadit, ց. 1, §. 106; Ibn al-Dawādārī, Kanz, ց. 8, §. 229.

թեամբ անարէն ազգին Իսմայէլացոց»³⁶: Լուսավորչի աթոռի տարագիր կացութիւնն ու հայ ժողովրդի հիմնական հատվածներից Հռոմկլայի կտրվածությունը հանուր հայությանն ուղղված իր շրջաբերական-նամակում սրտի կսկիծով է հիշում նաև Ներսես Շնորհալին. «Եւ քաղաք թագաւորական և բազմաժողով ոչ գոյ ազգի մերում, որպէս զի անդանօր նստելով յԱթոռ հայրապետութեան եւ վարդապետութեան՝ ուսուցանէաք ժողովրդեան մերում զաստվածային պատուիրանս ըստ առաջին հայրապետացն և վարդապետաց: Այլ եմք իբրեւ զայծեամն յորսորդաց և ՚ի շանց փախուցեալք ՚ի քարանձաւս յայս բնակելով»³⁷:

Արդի հետազոտողների՝ կաթողիկոսությունը երկրի սահմաններից դուրս գտնվող Հռոմկլայում հաստատելու պատճառների վերաբերյալ կարծիքները նույնպես տարամիտվում են: Համաձայն Ա. Բոզոյանի հայտնած տեսակետի՝ Հայոց հոգևոր դասը, հետապնդելով «համահայկական» քաղաքական նպատակներ և ձգտելով պահպանել իր ինքնուրույնությունը պետական իշխանությունից և պետական միավորի հետ ձուլումից, նախընտրել է մնալ օտար հողում՝ «մուսուլմանական պետություններին ենթակա Հռոմկլա ամրոցի պաշտպանության ներքո»³⁸: Ըստ Կ. Մուֆաֆյանի՝ մեկուսի Հռոմկլայում, այլ ոչ թե այդ ժամանակ արդեն հայկական Կիլիկիայում հաստատվելու հարցի պատասխանը պարզ է. «Հոգևոր իշխանությունը ցանկություն չունեի կախման մեջ լինել աշխարհիկ իշխանությունից և, հետևաբար, նախընտրում էր հնարավորին չափ պահպանել իր անկախությունը, և մուսուլմանների և ֆրանկների շրջապատում գտնվելը դրան հասնելու ամենաապահով ուղին էր»³⁹: Մեզ համար ընդունելի այս երկու տեսակետներին հակառակ՝ Գ. Հարու-

³⁶ Հովսեփյանց, Յիշատակարանք, սյուն 551:

³⁷ Ընդհանրական թուղթք Ս. Ներսիսի Շնորհալոյ, տպ. Սրբոց Յակովբեանց, Յերուսաղէմ, 1871, էջ 6-7:

³⁸ Տե՛ս Բոզոյան Ա. Ա., Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը և Կիլիկյան Հայաստանը ԺԲ դարի 30-70-ական թվականներին, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1988, էջ 17:

³⁹ Mutafian, La Cilicie au carrefour des empires, t. 1, Les Belles Lettres, Paris, 1988, p. 380.

թյունյանը կարծում է, որ հայրապետական աթոռը Հռոմկա փոխադրելը Ռուբինյան իշխանների նախաձեռնությունն էր: Ըստ ուսումնասիրողի՝ նրանք այդ քայլով մի կողմից Հայոց եկեղեցին Կոստանդնուպոլսի պատրիարքության ազդեցությունից ազատելու և մյուս կողմից էլ՝ նրա նկատմամբ «ուղղակի և արդյունավետ վերահսկողություն սահմանելու» խնդիր էին լուծում: «Ճիշտ է, վարչական առումով Հռոմկան Կիլիկյան Հայաստանից դուրս էր, - շարունակում է Հարությունյանը, - սակայն սա բավարար պայման չէր, որպեսզի հայոց կաթողիկոսությունը ի վիճակի լիներ ինքնուրույն քաղաքականություն վարել»⁴⁰:

Հռոմկայի կաթողիկոսների շնորհիվ Հայոց եկեղեցին դուրս եկավ միջազգային ասպարեզ և բարձր վարկ ձեռք բերեց միջեկեղեցական հարաբերություններում: Կաթողիկոսական աթոռն ակտիվ շփումներ հաստատեց Հռոմի պապական, բյուզանդական և ասորական եկեղեցիների հետ⁴¹: Կաթողիկոսանիստը շատ կարճ ժամանակում վերածվեց հայկական մշակույթի ու գիտության մի իսկական հնոցի: Այստեղ են կրթվել ու այնուհետև գիտամանկավարժական եռանդուն գործունեություն ծավալել իրենց ժամանակի խոշորագույն հայ այրերը⁴²: Հայոց

⁴⁰ Հարությունյան Գ., Դիտողություններ Կիլիկիայում հայկական պետականության առաջացման հարցի շուրջ // Հայոց պատմության հարցեր, հատոր 6, Երևան, 2005, էջ 242:

⁴¹ ԺԲ դարի 60-ական թվականներից եկեղեցադավանաբանական հարցերի և եկեղեցական միության խնդրի շուրջ ակտիվ բանակցություններ էին վարվում հատկապես Մանուել կայսեր և Կոստանդնուպոլսի պատրիարքության հետ: Տե՛ս **Բոզոյան**, Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը, էջ 218-252: Հայ-բյուզանդական եկեղեցական միության և ծիսադավանաբանական որոշ հարցեր քննարկելու համար 1178 թ. այստեղ գումարվել է մեծ ժողով, որին մասնակցել են բարձրաստիճան հոգևորականներ Կիլիկիայից և Բուն Հայաստանից, ինչպես նաև Աղվանից կաթողիկոսն ու Ասորի պատրիարքի ներկայացուցիչները: Տե՛ս **Ներսես Շնորհալի**, Ընդհանրական թուղթ, էջ 198-199:

⁴² Ըստ Բար Հեբրեոսի՝ ծնունդով հռոմկայեցի է եղել նաև Սիմեոն անունով մի հայտնի ասորի բժիշկ, ում Հուլիոս իլ-խանը (կառ. 1256-1265 թթ.), իր մոտ ծառայության վերցնելով, պալատական բժշկապետ էր նշանակել: Նա բավականին մեծ ազդեցություն ու հեղինակություն էր ձեռք բերել Իլ-խանության արքունիքում: Տե՛ս **Bar Hebraeus**, Chronography, p. 437: Սիմեոնը 1289 թ.

հայրապետանոցը հատկապես հռչակված էր իր մանրանկարչական դպրոցով (ի դեմս Կիրակոսի, Վարդանի, Հովհաննեսի, Թորոս Ռոսլինի և այլոց), որ նոր շունչ ու խթան է հաղորդել միջնադարյան հայ գրքարվեստի զարգացմանը, նպաստել մանրանկարչության նորանոր կենտրոնների բացմանը: Հռոմկլայում են գրվել ու ծաղկվել հայ գրքարվեստի բազմաթիվ բացառիկ նմուշներ⁴³:

Ամրոցում հայոց հայրապետանոցի գործունեության մեկուկեսդարյա ժամանանակաշրջանում նաև մեծածավալ շինարարական գործեր են կատարվել: Գրիգոր Գ Պահլավունի կաթողիկոսը ամրացրել է Հռոմկլայի պարիսպներն ու կառուցել երկու հոյակերտ եկեղեցի՝ Ս. Գրիգոր Լուսավորիչն ու Ս. Աստվածածինը: Ավելի ուշ այստեղ կառուցվել է նաև Ս. Փրկիչ եկեղեցին: «Հռոմ-Կլայ քիչ ժամանակի մէջ ճոխացաւ, փառաւորեցաւ, գրում է Կյուլեսերյանը՝ շարունակելով,- եւ Կաթողիկոսարանի եկեղեցիները թէ՛ Շնորհալոյ նոր ժամեգութեամբ եւ թէ՛ Գրիգոր Տղայի շինութիւններով իսկապէս նշանաւոր ու հռչակաւոր

մահապատժի է ենթարկվել Արղուն իլ-խանի (կառ. 1284-1291 թթ.) կողմից իր դեմ կազմակերպված դավադրանքին մասնակից լինելու մեղադրանքով: «Թագիքներից (täzikān, այն է՝ «ոչ մոնղոլներից») սպանեցին էմիր Ալի Թամաղաջիին, Հուսամ ալ-Դին Կազվինիին, Իմադ ալ-Դին Մունաջջիմին (աստղաբաշխին), Ռում Կալա (Rūm Qal'a) անունով հայտնի Շամունին ու քրիստոնյա Բահա ալ-Դաուլա Աբու ալ-Քարամին»: Տե՛ս **Rašīd al-Dīn**, ǧāmiʿ al-tawārīḫ, be-kušeš-e Bahmān Karīmī, Eqbāl, Tehrān, 1960, ǧ. 2, ʃ. 818, ինչպես նաև **Рашид-ад-Дин**, Сборник летописей, том III, пер. с персидского А. К. Арендса, Издательство Академии Наук СССР, Москва-Ленинград, 1946, с. 121: Սիմոն «Հռոմկլայեցուն» նվիրված առանձին հոդված ունի Հ. Տակահաշին: Տե՛ս **Takahashi H.**, Simeon of Qal'a Rumaīta, Patriarch Philoxenus Nemrod and Bar 'Ebroyo // Hugoye: Journal of Syriac Studies, vol. 4, 2001, pp. 45-91.

⁴³ Հռոմկլայի մանրանկարչական դպրոցի և ընդհանրապես կիլիկյան մանրանկարչական ավանդույթի մասին մանրամասն տե՛ս **Երեմյան Ա.**, Մանրանկարիչ Թորոս Ռոսլին // Էջմիածին, 1955, հ. 2, էջ 22-31; **Ազարյան Լ.**, Կիլիկյան մանրանկարչությունը XII-XIII դդ., Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1964 (հատկապես էջ 88-106); **Der Nersessian S.**, Miniature Painting in the Armenian Kingdom of Cilicia from the Twelfth to the Fourteenth Century, Dumbarton Oaks Studies, Washington D.C., 1993 (հատկապես էջ 1-35):

եղան»⁴⁴: Հայտնի է նաև, որ Հովհաննես Զ Սսեցու կարգադրությանը կաթողիկոսանիստի թանկարժեք գոհարեղենն ու զարդարուն սպասքը վաճառվել են, և ողջ հասույթն օգտագործվել է բերդի ամրակառուցման աշխատանքներ կատարելու համար⁴⁵: Ժե դարի մամուլային պատմիչ Բադր ալ-Դին ալ-Այնին (մահ. 1453 թ.) իր 'Iqd al-ğumān երկում գրում է. «Այն հնում [միայն] երեք վանք-ամրոց (qalā' al-šawāmi') ուներ՝ լեռների միջև խրված, բայց հետո հայերն այն ամրացրել են պարիսպներով»⁴⁶:

Հռոմկլայի կաթողիկոսության ունեցած միջազգային հեղինակության ապացույց է գերմանացի բանաստեղծ Վոլֆրամ ֆոն Էշենբախի (մահ. մոտ 1220 թ.) «Պարցիֆալ» ասպետական վեպում նրա մասին եղած ակնարկը. «Դարպասին հասնելով՝ նա գտավ վաճառականին, ում տաղավարն ամենևին էլ դատարկ չէր: Այնքան շատ բան կար նրանում վաճառքի հանված, որ եթե ես այդ մեծ հարստության տերը լինեի, [անշուշտ] երջանիկ մարդ կհամարվեի: Գավանն իջավ իր ձիուց և ընդառաջ գնաց նրան: Նա երբևէ այսքան թանկարժեք ապրանքներ չէր տեսել, ինչքան որ այնտեղ վիճակվեց տեսնել: Տաղավարը դիպակից էր, քառակուսաձև, բարձր ու ընդարձակ: Իսկ ի՞նչ էր այնտեղ վաճառքի դրված: Եթե եղած ամեն ինչի արժեքները հանրագումարի բերվեին, ապա նույնիսկ Բաղդադի [խալիֆա] Բարուկը և ոչ էլ Ռանկուլատի կաթողիկոսը (katolicō von Ranculat, այն է՝ «Հռոմկլայի կաթողիկոսը») չէին կարող վճարել դրանց համար»⁴⁷:

Ֆոն Էշենբախը, ինչպես տեսնում ենք, Հայոց կաթողիկոսին համեմատում է «Բաղդադի խալիֆայի» հետ: Գերմանացի

⁴⁴ Կյուլեսերյան, Ծովը-Տլուք, էջ 68:

⁴⁵ Տե՛ս Սմբատ, Տարեգիրք, 1859, էջ 115, ինչպես նաև Օրմանեան, Ազգապատում, հտ. 1, սյուն 1561-1562:

⁴⁶ Տե՛ս al-'Aynī, 'Iqd al-ğumān fi tāriḫi ahl al-zamān, ց. 3, bi-taḥqīq Muḥammad Muḥammad Amīn, al-Haya al-Miṣriyya al-'amma li-l-kitāb, al-Qāhira, 1990, ց. 121.

⁴⁷ Տե՛ս Wolfram's von Eschenbach Parzival und Titurel, herausgegeben von Karl Bartsch, Theil 1, F. A. Brockhaus, Leipzig, 1870, S. 248, ինչպես նաև Wolfram von Eschenbach, Parzival and Titurel, trans. with notes by Cyril Edwards, Oxford University Press, 2006, p. 237.

քնարերգուի արտահայտությունը հարմար մեկնակետ է ուսումնասիրության հիմնական մասին անցնելու համար, քանզի հայոց կաթողիկոսները միջնադարյան արաբական մատենագրության մեջ շատ հաճախ «խալիֆա» տիտղոսով են բնորոշվել:

Խալիֆան (արաբ.՝ «փոխանորդ», «փոխարինող», «տեղապահ») մուսուլմանական համայնքի (umma) ղեկավարն է՝ նրա հոգևոր և աշխարհիկ առաջնորդը: «Խալիֆայի» ինստիտուտն ի հայտ է եկել Մուհամմադ մարգարեի (rasūl Allah՝ «Ալլահի առաքյալ») մահից հետո՝ նրա հաջորդների իշխանության իրավական ու բովանդակային էությունը սահմանելու նպատակով (նախ՝ ḫalīfat rasūl Allah՝ «Աստծո առաքյալի փոխանորդ», ապա՝ ḫalīfat Allah՝ «Աստծո փոխանորդ»): Ժամանակի ընթացքում մի կողմից Խալիֆայության աստիճանական թուլացման ու տրոհման պատճառով, մյուս կողմից՝ մուսուլմանական նոր ու ավելի ազդեցիկ տերությունների (բուիների, սելջուկների) առաջացմանը զուգահեռ, տիտղոսի ընկալումը փոխվել է: Մի ժամանակ բացարձակապես խալիֆային վերապահված գործառույթներն ու լիազորությունները հետզհետե սահմանափակվել են հոգուտ նոր՝ «սուլթանի» (sulṭān) ինստիտուտի: Դրա արդյունքում զրկվելով պետական կամ աշխարհիկ իշխանության ատրիբուտներից՝ նա շարունակել է պահպանել սուկ մուսուլման հավատացյալների հոգևոր առաջնորդի (imām) դիրքն ու կրոնական գործերը տնօրինելու իրավունքը⁴⁸: 1258 թ. մոնղոլների կողմից Բաղդադի գրավումը նշանավորեց Աբբասյան խալիֆայության կործանու-

⁴⁸ «Խալիֆա» ինստիտուտի, նրա պատմական զարգացման և «սուլթան» ինստիտուտի հետ հարաբերակցության վերաբերյալ հանգամանորեն տե՛ս **Бартольд В. В.**, Халиф и султан // Сочинения, том VI (Работы по истории ислама и Арабского Халифата), Наука, Москва, 1966, с. 15-78; **Гусейнов Р. А.**, Султан и халиф: (Из истории сюзеренитета и вассалитета на Ближнем Востоке XI-XII вв.) // Православный Палестинский сборник, вып. 19 (82), 1969, с. 127-138, ինչպես նաև երկու տիտղոսների մասին հոդվածներն Իսլամի հանրագիտարանում: **St' u Sourdell D., Lambton A., de Jong F., Holt P., Khalifa** // Encycopaedia of Islam, vol. 4, E. J. Brill, Leiden, 1997, pp. 937-953 և **Kramers J.-[Bosworth C. E.]**, Schumann O., Kane O., Sulṭān // EI2, vol. 9 (SAN-SZE), E. J. Brill, Leiden, 1997, pp. 849-854.

մը: Այնուամենայնիվ, շատ չանցած (1260 թ.)՝ մամլուք սուլթան Կալ-Չահիր Բայբարը (կառ. 1260-1277 թթ.) իր իշխանությանը լեզվափոխություն հաղորդելու նկատառումով Կահիրեում հանդիսավոր կերպով խալիֆա հռչակեց Աբբասյան դինաստիայի մի ներկայացուցչի՝ Կալ-Մուսթանսիր անունով, իսկ վերջինիս մահից հետո մեկ այլ թեկնածուի՝ Կալ-Հաքիմ անունով: Սուլթանն իր այդ քայլով, փաստորեն, վերականգնեց կործանված խալիֆայությունը, որը, թեկուզև ունենալով բացառապես խորհրդանշական և ծիսական-արարողակարգային բնույթ, իր գոյությունը պահպանեց մինչև օսման թուրքերի կողմից Եգիպտոսի նվաճումն ու Մամլուքյան սուլթանության կործանումը (1517 թ.)⁴⁹:

Վերոնշյալից պարզ է դառնում, որ հայոց հոգևոր առաջնորդին «փոխանորդ» անվանելով արաբները նկատի ունեին նրա «Աստծո փոխանորդ» հանդիսանալու հանգամանքը, ինչպես որ իրենց խալիֆան էր համարվում «Ալլահի փոխանորդը»: Եվ իսկապես, որ Յակուտն այդ մասին գրում է. «Այնտեղ է (Հռոմկլայում) հայոց բատրիքի (baṭrik, այն է՝ պատրիարք)՝ նրանց համար «Քրիստոսի փոխանորդի» (ḫalifat al-Masīḥ) նստոցը, ում հայերեն «քաթաղիքուս» են անվանում»⁵⁰: Իբն Վասիլի

⁴⁹ Կահիրեի Աբբասյան խալիֆայության մասին տե՛ս **Ayalon D.**, *Studies on the Transfer of The 'Abbāsīd Caliphate from Bagdād to Cairo* // *Arabica*, vol. 7.1, 1960, pp. 41-59; **Holt P. M.**, *Some Observations on the 'Abbāsīd Caliphate of Cairo* // *BSOAS*, vol. 47.3, 1984, pp. 501-507; **Heidemann S.**, *Das Aleppiner Kalifat* (A. D. 1261): *Vom Ende des Kalifates in Bagdad über Aleppo zu den Resaturationen in Kairo*, E. J. Brill, Leiden, 1994, ինչպես նաև վերջինիս գրախոսությունը Ռ. Ամիտայի կողմից՝ **Amitai-Preiss R.**, *The Fall and Rise of the 'Abbāsīd Caliphate* // *Journal of the American Oriental Society*, Vol. 116, No. 3, pp. 487-494.

⁵⁰ **Yāqūt**, *Mu'ğam*, ց. 4, ք. 390: Հմմտ. **Ibn 'Abd al-Haqq al-Baghdādī**, *Marāsīd al-ittilā' 'alā asmā' al-amkina wa-l-biqā'*, ց. 3, *Dār al-ğil*, Bayrūt, 1992, ք. 1118: Համեմատության համար արժե մեջբերել նույն Յակուտի՝ Հռոմի պապին տված բնութագիրը. «Այնտեղ (Հռոմում) է քնակվում պապը (al-bābā), ում հնազանդվում են ֆրանկները: Նա նրանց մոտ իմամի դիրքն է զբաղեցնում: Նրանք, ովքեր հակառակվում են նրան, համարվում են ապստամբ ու մեղսավոր, և արժանանում արքայի, վտարման և կամ մահվան: Նա է նրանց արգելում հարաբերություններ ունենալ կանանց հետ, [անգամ] լվացվել, ուտել և խմել, ու ոչ-ոք չի կարող ընդդիմանալ նրան»: Տե՛ս **Yāqūt**, *Mu'ğam*, ց. 3, ք. 100:

(մահ. 1298 թ.) Mufarriğ al-kurūb երկում մեկ այլ պարզ բացատրություն ենք գտնում. «Սուլթանին հասավ հայոց կաթողիկոսի՝ Հոռմկլայի տիրոջ նամակը (բնագրում գրչագրական սխալով՝ kāğitūs), ով հայերի համար նույնն է, ինչ որ խալիֆան մեզ համար»⁵¹: ԺԴ դարի մամլուք մատենագիր Կալ-Ումարին (մահ. 1349 թ.) կաթողիկոսանիստի մասին խոսելիս չի կարողանում զսպել քրիստոնյա հայերի նկատմամբ տաճած անհանդուրժողական վերաբերմունքը. «Այն հայտնի է Հոռմկլա անունով: Այնտեղ էր «հայոց խալիֆայի» բնակավայրը (maskan), և այն անհավատության նեղի (կամ կուոքի՝ քօգյտ al-kufr) հանգրվան էր»⁵²: Իսկ Կալ-Այնիի 'Iqd al-ğumān երկում կարդում ենք. «Նրա անվանումը հայերեն Հոռմ Բլայն է (Hrūm Klayn) է, որի արաբերեն բացատրությունը Qal'at al-Rūm է: Այս բերդը եղել է հայոց թագավորության աթոռը (kursī mamlakat al-arman), որտեղ նստում էր նրանց խալիֆան, ում անունը Քիսադիքուս է»⁵³:

Հայոց կաթողիկոսին «խալիֆա» կոչելու դեպքերը խորթ չեն նաև միջնադարի պարսկալեզու գրականությանը՝ այդ թվում Իկոնիայի Սելջուկյան սուլթանության մշակութային միջավայրում ստեղծված: Խոսքն այստեղ մասնավորապես վերջերս գիտական շրջանառության մեջ դրված մի աղբյուրի մասին է, որի ներկայացրած բացառիկությունը հայագիտության համար հաշվի առնելով՝ հարկ կհամարենք փոքր-ինչ ընդարձակ անդրադարձ կատարել: Երկի հեղինակը մոտ 1142 թ. Անի քաղաքում

Պետք է նշել, սակայն, որ արաբական պատմագրության մեջ թեկուզև եզակի, բայց, այնուամենայնիվ, գտնվում են նաև Հոռմի պապին իalifa բառով անվանելու դեպքեր (իalifat al-franğ ձևով, այն է՝ «ֆրանկների խալիֆա»): Տե՛ս օրինակ, **Abū al-Fidā'**, Kitāb al-Muḥtaṣar fi aḥbār al-bašar, ց. 4, al-Maṭba'a al-Ḥusayniyya al-Miṣriyya, al-Qāhira, 1907, ց. 39; **Ibn Wāsil**, Mufarriğ al-kurūb fi aḥbār banī Ayyūb, ց. 4, bi-taḥqīq Ġamāl al-Dīn al-Šayyāl, al-Qāhira, 1957, ց. 248; **Ibn al-Furāt**, al-Duwal, ց. 7, bi-taḥqīq Quṣṭantīn Zurayq, al-Maṭba'a al-Amīr-kāniyya, Bayrūt, 1942, ց. 33.

⁵¹ Տե՛ս **Ibn Wāsil**, Mufarriğ, ց. 2, ց. 320: Հմմտ. **Ibn al-Furāt**, Tārīḥ al-duwal, ց. 4.1, bi-taḥqīq Ḥasan Muḥammad al-Šammā', Bašra, 1967, ց. 216.

⁵² Տե՛ս **Al-'Umārī**, Kitāb al-Ta'rif bi-muṣṭalah al-šarif, bi-taḥqīq Muḥammad Husayn Šams al-Dīn, Dār al-Kutub al-'Ilmiyya, Bayrūt, 1988, ց. 232-233.

⁵³ **Al-'Aynī**, 'Iqd, ց. 3, ց. 121.

ծնված Բուրհան ալ-Դին ալ-Անավին է (իմա՝ «Անեցի», մահ. 1222 թվականից հետո): Նա ծառայության մեջ է եղել նախ Խլաթի Շահ-Արմեններից Սայֆ ալ-Դին Բեքթեմուրի (կառ. 1185-1193 թթ.) մոտ: Ապա տեղափոխվել է Ռում և Իզզ ալ-Դին Քայկավուս Ա-ին (կառ. 1211-1220 թթ.)՝ վերջինիս գահակալության առթիվ նվիրել իր Anīs al-qulūb (պարսկ.՝ «Սրտերի գրուցակից») չափածո երկը: Շահելով սելջուկ սուլթանի համակրանքը՝ Բուրհան ալ-Դինը նշանակվել է Մալաթիայի կադիի (qāḍī՝ «դատավոր») պաշտոնում: Anīs al-qulūb-ը այսպես կոչված «մարգարեական պատմությունների» (qīṣaṣ al-anbiyā) ժանրի երկ է: Հիսուսի «պատմության» մեջ երկի հեղինակը խոսում է իր ժամանակի քրիստոնյաների մասին՝ ամենաընդարձակ հատվածը հատկացնելով հայերին, որոնց միջավայրում ինքը ծնվել և տևական ժամանակ ապրել է (անգամ տիրապետել է հայերենին): Հատվածը հակահայկական կրոնական բանավիճության իսկական նմուշ է: Այնտեղ ներկայացված է հայոց կողմից քրիստոնեության ընդունման և սուրբ Գրիգոր Լուսավորչի (հեղինակի կողմից անվանված է Կյāḫūṣ) գործունեության աղավաղված պատմությունը: Բուրհան ալ-Դինի երկն անտիպ է և պահպանվել է Ստամբուլի Սուլեյմանիե գրադարանի եզակի ձեռագրով: Մինչ օրս այն գրավել է սուկ մեկ-երկու ուսումնասիրողի ուշադրությունը: Բոլորովին վերջերս Anīs al-qulūb-ի՝ հայերին վերաբերող հատվածն ուսումնասիրել և մի առանձին հոդվածով գիտական շրջանառության մեջ է դրել Էնդրյու Փիքոքը⁵⁴: Ինչպես նշեցինք, Բուրհան ալ-Դինի երկին այսպիսի մանրամասներով անդրադառնալու մեր դրդապատճառն այն է, որ նրանում նաև Հռոմ-կլայի ու այնտեղ նստող հայոց կաթողիկոսի մասին հիշատակություն կա: Ըստ Բուրհան ալ-Դինի՝ *Տիշպարուսի* մահից հետո «աշխարհի արքաները» սկսեցին մրցել նրա ոսկրերը ձեռք

⁵⁴ Տե՛ս **A. Peacock**, *An interfaith polemic of Medieval Anatolia: Qāḍī Burhān al-Dīn al-Anawī on the Armenians and their heresies // Islam and Christianity in Medieval Anatolia*, ed. by A.C.S. Peacock, Bruno De Nicola and Sara Nur Yıldız, Ashgate, 2015, pp. 233-261: Մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում պրոֆեսոր Փիքոքին Սուլեյմանիե գրադարանի թիվ 2984 ձեռագրի լուսապատճենը մեզ սիրալիբ կերպով տրամադրելու համար:

բերելու համար, գողանալ մեկը մյուսից: «Երբ նրա մարմինը Ռում հասավ, թաքցրին այն,- շարունակում է ալ-Անավին, և այժմ ինչ որ գիտեն նրա մասին, գտնվելու վայրն է: Նրանից միայն աջ ձեռքն է մնացել: Ասորիքի սահմաններին մոտ մի ամրոց կա, որ կոչվում է Խուրամկալա⁵⁵: Այնտեղ մի ամբարտավան ու ինքնահավան կղերական (kašiš) կա, որ հայ ազգի (բնագրում՝ millat-i Armanī) խալիֆան է: Նա է պահում այդ ձեռքն իր մոտ, որը նրան մեծ հարգ է տալիս: Բոլոր հայերը՝ թե՛ Արևելքում և թե՛ Արևմուտքում, հպատակվում են այդ ձեռքին: Նրանք նրա (իմա՝ «հայոց խալիֆայի») -Գ. Դ.) մոտ են գալիս աշխարհի բոլոր ծայրերից՝ հարգանքի ու պատվի ակնկալիքով, քանզի նա բոլոր երկրներում իրեն փոխանորդ է կարգում, որ առաջնորդ (rahbar) լինի այնտեղ: Բարին ու չարը (bad u-nik), անհավատությունը (kufr), և թե ինչն է թույլատրելի կամ անկարելի (ḥalāl u-ḥaram), նրանք բացառապես նրանից են իմանում⁵⁶:

Ամփոփելով վերոնշյալը՝ արձանագրենք, որ ԺԲ-ԺԵ դարերի մուսուլմանական պատմագրության մեջ հայոց հայրապետների ամենատարածված անվանումները կամ տիտղոսներն են baṭrik al-arman-ը («հայոց պատրիարք»)՝⁵⁷, որը հանդիպում է նաև batrik al-arman ձևով⁵⁸, հայերեն «կաթողիկոս» բառի տա-

⁵⁵ Բնագրում Կրm+qal'a է: Փիքքոքն այն բառացի է ընկալել և թարգմանել «Երանության ամրոց»: Տե՛ս Peacock, An interfaith polemic, p. 242: Մինչդեռ մեր կարծիքով՝ մուսուլման հեղինակը պարզապես փորձել է տառադարձել հայերեն Հոռմկալա բառը, իսկ հայերեն «հ» հնչյունի պարսկերենում ինձ-ով արտահայտված լինելու պատճառը կարող է զուտ գրչագրական սխալագրություն լինել (حرم قلعه > حرم قلعة):

⁵⁶ Տե՛ս Burhān al-Dīn al-Anawī, Anīs al-qulūb, Süleymaniye Kütüphanesi, Ayasofya 2984, թերթ 257ա: Հատվածի ամբողջական թարգմանությունը տե՛ս Peacock, An interfaith polemic, p. 260: «Լուսավորչի աջին» կրկին անդրադառնալու առիթ ներքևում դեռ ունենալու ենք:

⁵⁷ Տե՛ս օրինակ, Yāqūt, Mu'ğam, ց. 4, ք. 390; al-Nuwayrī, Nihaya, ց. 31, ք. 144; Baybars al-Manṣūrī, Zubda, ք. 289; al-Kutubī, 'Uyūn al-Tawārīḥ (A 2922), ց. 22, թերթ 27; Ibn 'Abd al-Haqq, Marāšid, ց. 3, ք. 1118; al-Maqrīzī, Kitāb al-Muqaffā al-kabīr, bi-taḥqīq Muḥammad Ya'alāwī, ց. 3, Dār al-Ġarb al-Islāmī, 1991, ք. 797.

⁵⁸ Տե՛ս Ibn al-Furāt, al-Duwal, ց. 8, ք. 137, 142; Ibn Ḥaldūn, al-'Ibar wa-diwān al-mubtada' wa-l-ḥabar fi tāriḥ al-'Arab wa-l-Barbar, ց. 5, bi-taḥqīq Ḥalīl Šiḥāda wa-

նադարձված՝ շատ հաճախ աղավաղված կամ գրչագրական սխալով մի սկզբնաղբյուրից մյուսն անցած տարբերակները (քաթաղիքուս, քիթաղիքուս, քաղիքուս, քաղիլուս, քինաղիլուս)⁵⁹, *ṣāhib Qal'at al-Rūm*-ը («Հռոմկլայի տեր»)՝⁶⁰ և վերջապես *ḫalifat al-arman*-ը («հայոց խալիֆա») կամ «հայոց փոխանորդ»): Շատ հաճախ բոլոր այս անվանումներից յուրաքանչյուրն օգտագործված է մեկ ուրիշի զուգորդությամբ: Ինչ վերաբերում է «հայոց փոխանորդ» ձևին, ապա պետք է նշել, որ արաբական մատենագրության մեջ այն մի եզակի դեպքում արտահայտված է ոչ թե *ḫalifa*, այլ այլընտրանքային՝ *muṣtaḥlaf* բառի միջոցով, որը նույնպես «փոխարինող», «ժառանգորդ» կամ «տեղապահ» նշանակությունն ունի: *Muṣtaḥlaf al-arman*-ի կիրառության այդ դեպքը հանդիպում է Նուր ալ-Դինի արքունական դպիր (*kātib*) Իմադ ալ-Դին ալ-Իսֆահանիի (մահ. 1201 թ.) *al-Barq al-Šāmī* («Ասորիքյան շանթ») երկում: Ուշագրավ է, որ դա Հռոմկլայի հայոց կաթողիկոսության մասին մեզ հայտնի առաջին հիշատակությունն է միջնադարյան արաբական պատմագրության մեջ⁶¹:

Suhayl Zakkār, *Dār al-Fikr*, Bayrūt, 2000, ֆ. 464; **al-Maqrīzī**, *Kitāb al-sulūk li-ma'rifat duwal al-mulūk*, ց. 1.3, bi-taḥqīq Muḥammad Muṣṭafā Ziyāda, *Maṭba'at al-ta'lif wa-l-tarḡama wa-l-naṣr*, al-Qāhira, ֆ. 778-779; **Ibn Wāṣil**, *Mufarriḡ*, ց. 2, ֆ. 320.

⁵⁹ **St'v 'Imād al-Dīn al-Iṣfahānī**, *Kitāb al-Fath al-qussī fi al-fath al-Qudsī* ('Imād ed-dīn el-kātib el-iṣfahānī, *Conquete de la Syie ed de La Palestine par Ṣalāḥ ed-dīn*, publié par le comte Carlo de Landbeerg, E. J. Brill, Leide, 1888), ֆ. 262; **Abū al-Fidā'**, *al-Muḥtaṣar*, ց. 4, ֆ. 27; **Ibn al-Wardī**, *Tatimmat al-Muḥtaṣar fi aḥbār al-baṣār*, *Dār al-kutub al-ilmīyya*, Bayrūt, 1996, ֆ. 237; **al-Mu'allif al-maḡhūl**, ֆ. 15, 17; **Ibn Šaddād**, *al-Nawādir al-sulṭāniyya wa-l-maḡāsin al-Yūsufiyya*, bi-taḥqīq Ḡamāl al-Dīn Šayyāl, al-Qāhira, 1994, ֆ. 191; **Abū Šāma**, *Kitāb al-Rawḡatayn fi aḥbār al-dawlatayn*, ց. 3, bi-taḥqīq Ibrāhīm Šams al-Dīn, *Dār al-Kutub al-ilmīyya*, Bayrūt, 2002, ֆ. 77.

⁶⁰ **'Imād al-Dīn**, *al-Fath*, ֆ. 216, 262; **Ibn Wāṣil**, *Mufarriḡ*, ց. 2, ֆ. 320.

⁶¹ Իմադ ալ-Դինի (ալ-Բունդարիի) այս հաղորդման մասին առաջին անգամ խոսել ենք Մլեխ իշխանին նվիրված մեր վերջերս ներկայացրած մի զեկուցման մեջ: Այն հրատարակվել է տվյալ գիտաժողովի նյութերն ամփոփող ժողովածուում: **Տե՛ս Դանիելյան Գ.**, Մլեխ իշխանի գործունեությունը ԺԲ-ԺԵ դարերի արաբ պատմագիրների գնահատմամբ // Հայաստանը և արաբական աշխարհը. Պատմություն և արդի խնդիրներ, Երևան, 2014, էջ 89-91:

Մատենագրի հաղորդումը, սակայն, միջնորդավորված է մեզ հասել, քանի որ երկի բնագիրն ամբողջական տեսքով չի պահպանվել: Աշխատության մի մասը պահպանվել է ԺԳ դարի հեղինակ ալ-Բունդարիի համառոտագրությամբ՝ *Sanā al-barq al-Šāmī* («Ասորիքյան շանթի փայլատակում») վերնագրով, ինչպես նաև հաջորդ սերնդի պատմիչների հատվածական մեջբերումներում⁶²: Պատմիչի հիշատակությունը վերաբերում է 1173 թ. կաթողիկոսական աթոռի զբաղեցման շուրջ բոլորքված վեճին ու վերջինիս հարթման գործում հայոց իշխան Մլեհի (կառ. 1170-1175 թթ.) և Նուր ալ-Դինի (կառ. 1146-1174 թթ.) ունեցած դերակատարությանը: Բանն այն է, որ Հայոց կաթողիկոս Ներսես Դ Կլայեցին (Շնորհալին) իր հաջորդ էր հայտարարել իր ավագ եղբորորդուն՝ Գրիգոր Տղային, սակայն «աագ եղբոր որդին չէր մերձ մահու հորեղբորն, կրսերն առեալ զմատանին նորա՝ քարոզեցաւ Կաթողիկոս»⁶³: Գրիգոր Տղան, իմանալով այդ մասին, վիճարկեց այս որոշումը և իր ոտնահարված իրավունքների վերականգնման համար դիմեց իր փեսային՝ հայոց իշխան Մլեհին: Վերջինս, որ այդ ժամանակ մասնակցում էր Իկոնիայի սուլթան Կիլիջ Արսլանի դեմ կազմակերպված արշավանքին, իր հերթին դիմեց աթաբեկ Ջանգիին: Ի վերջո, Նուր ալ-Դինի միջամտությամբ հայրապետական աթոռը զբաղեցրած Գրիգոր Ապիրատը հեռացվում է Հռոմկլայից, և նրա փոխարեն Հայոց կաթողիկոս է ձեռնադրվում Գրիգոր Տղան: Միքայել Ասորու ժամանակագրության հայերեն խմբագրություններից մեկում, օրինակ, այս իրադարձությունների առնչությամբ կարդում ենք. «Եւ նա գնաց դարձաւ առ փեսայն իւր առ պարոն Մլեհն. և Մլեհն էառ զնա և տարաւ առ Նորադինն, և նորին օգնութեամբն եմոյժ զնա ՚ի Հռոմկլայն. և նստաւ յաթոռ հայրապետութեան հորեղբորն՝ Գրիգոր անուն»⁶⁴:

⁶² Պահպանված են միայն երկի երրորդ և հինգերորդ մասերը, որոնց ձեռագրերը գտնվում են Օբսֆորդի Բոդլեյան գրադարանում: *St'ū Richards B., 'Emād-al-Dīn Kāteb // Encyclopaedia Iranica, vol. VIII, Fasc. 4, pp. 380.*

⁶³ *St'ū Միխայել Ասորի, Ժամանակագրություն, 1871, էջ 472:*

⁶⁴ *St'ū Անդ, էջ 472 և Եսայի՝ 1870, էջ 471-472: Հմմտ. Michel le Syrien, Chronique, tome III, pp. 353-354, ինչպես նաև Michael Rabo, The Syriac Chronicle,*

Հայագիտության մեջ կարծիք կա տարածված, թե, ինչպես օրինակ Լ. Տեր-Պետրոսյանն է կարծում, այս անցքերի մասին խոսողը միայն ասորական աղբյուրներն ու նրանցից օգտված հայ հեղինակներն են⁶⁵, մինչդեռ արաբական մի քանի աղբյուրներում այս տեղեկության առնչությամբ նույնպես ուշագրավ վկայություններ են գտնվում: Այդ մասին հաղորդող առաջին արաբագիր պատմիչը, ինչպես նշեցինք, Իմադ ալ-Դինն է, ում վկայությունը մասնակի «սրբագրություններով» կրկնում են նաև հաջորդ սերնդի մի քանի այլ մատենագիրներ: Իմադ ալ-Դինը, թվարկելով Նուր ալ-Դինի մոտ ծառայության մտած և նրա հետ Իկոնիայի սուլթան Կիլիջ Արսլանի դեմ արշավանքին մասնակցած գործիչներին, գրում է. «Եկավ [հիջրայի հինգ հարյուր] վաթսունինը թվականը (1173/1174 թ.), և Նուր ալ-Դինն արդեն գրավել էր Մարաշ, Բեհեսն, Արբիլ և Քեյսուն բերդամրոցները, իսկ Հայոց իշխող (mutamallik al-arman) Մալիհ [ի]բն Լավունը ծառայության մեջ էր նրա մոտ՝ ապաստանելով նրա հովանու ներքո: Նրա մոտ ծառայության էին անցել նաև Դայա ալ-Դին Մասուդ իբն Կիֆջակը..., որոնց նա ավելի մեծ շնորհների էր արժանացրել (sarraḥahum bi-l-‘aṭā’ al-ağzal): Ապա նա ցույց

բ. 704: Տե՛ս նաև **Վարդան**, Հաաքումն, էջ 129 («եւ առնու զքօղն Գրիգոր եղբորորդի իւր ձեռնտութեամբ Նորադնին»):

⁶⁵ **Տեր-Պետրոսյան Լ.**, Խաչակիրները և հայերը, հտ. Բ, Պատմա-քաղաքագիտական հետազոտություն (Հայկական մատենաշար Գալուստ Կիլիպենկեան հիմնարկութեան), Երևան, 2007, էջ 496-497: Հայ պատմագրության մեջ Միքայել Ասորու հայերեն խմբագրություններից բացի Գրիգոր Տղայի գահակալման գործում արթաբելի ունեցած դերակատարության մասին խոսում են նաև Լ. Տեր-Պետրոսյանի հրատարակած «Պատմութիւն սրբոց հարցն մերոց»-ը (Տե՛ս Անդ, էջ 521-522), ինչպես նաև մեկ-երկու մանր տարեգրություններ, ինչպես օրինակ՝ Սամվել Անեցու երկի համար Ստեփանոս Օրբելյանի գրած շարունակությունը (տե՛ս **Մանր Ժամանակագրություններ XIII-XVIII դդ.** (հետայսու՝ ՄԺ), կազմեց Վ. Ա. Հակոբյան, հտ. 1, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1951, էջ 35) և **Սամուէլ Անեցի**, Ժամանակագրութիւն, էջ 231, ինչպես նաև Ժէ դարի ժամանակագիր Դավիթ Բաղիշեցին (տե՛ս ՄԺ, հտ. 2, 1956, էջ 342): Հմմտ. **Բողոյան**, Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը, էջ 119-120 (ծնթգր. 3) և **Տեր-Պետրոսյան**, Խաչակիրները, հտ. Բ, էջ 152-153 (ծնթգր. 17):

տվեց, որ արշավում է Հռոմկլա, որ Եփրատի վրա է, և «հայոց փոխանորդը» (mustahlaf al-arman) ընդունեց նրան անմեղությամբ (bi-l-barā'a), իսկ նա (Նուր ալ-Դինը) էլ վերցրեց հինգ հազար դինար որպես ջիզյա (գլխահարկ) և ենթակայության հավաստիք ու վերադարձավ Հալեպ՝ ամեն ինչում հաջողած»⁶⁶:

Աբու Շաման (մահ. 1267 թ.) և Իբն Բասիրը (մահ. 1373 թ.) Իմադ ալ-Քաթիբի այս հաղորդումը քիչ այլ կերպ են վերաշարադրում, բացի այդ երկուսի մոտ էլ հինգ հազարի փոխարեն հիսուն հազար է նշված վճարված ջիզյայի չափը⁶⁷: Թիվը հավանաբար սխալագրությամբ է մի երկից մյուսն անցել կամ գուցե միտումնաբար է ուռճացվել արաբ պատմիչների կողմից: ԺԳ դարի մեկ այլ արաբ պատմիչ Իզզ ալ-Դին իբն Շադդադը (մահ. 1285 թ.), ում չպետք է շփոթել Սալահ ալ-Դինի կենսագիր Բահա ալ-Դին իբն Շադդադի (մահ. 1234 թ.) հետ, ենթադրաբար սխալ հասկանալով իր նախորդների վկայությունները՝ աղավաղված բացատրություն է տալիս դեպի Հռոմկլա Նուր ալ-Դինի կատարած արշավանքի նպատակներին: Նա մասնավորապես գրում է. «...նրանից հետո էլ ոչ ոք չարշավեց Կիրճեր (lam yudrib) ընդհուպ մինչև [հիջրայի] 569 թ.: Այդ թվականին սուլթան ալ-Մալիք ալ-Ադիլ Նուր ալ-Դինն արշավեց Կիրճեր և պաշարման մեջ առավ հայոց երկիրը՝ այն նրանց ձեռքից խլելու նպատակով, սակայն նրա (հայոց երկրի) տերը 50 հազար դինար ընծայեց,

⁶⁶ Տե՛ս 'Imād al-Dīn, Sanā al-barq al-Šāmi (Iḥtišār al-Bundāri), bi-taḥqīq Fatḥiyya al-Nabrāwī, al-Qāhira, 1979, ք. 71: Երկի խմբագիրը սխալմամբ այս mustahlaf al-arman-ին նույնացնում է Սեբաստիայի (Սիվասի) Դանիշմանյան էմիր Ջու ալ-Նունիի հետ: Տե՛ս նույն տեղում՝ ծնթղթ. 11:

⁶⁷ Ավելին, Աբու Շամայի մոտ mustahlaf al-arman-ի փոխարեն mustahlaf al-ard (արաբ.՝ «հող», «երկիր») է: Տե՛ս **Abū Šāma**, Kitāb al-Rawḍatayn, ք. 2, ք. 176: Հմմտ. նույնի՝ 'Uyūn al-Rawḍatayn, bi-taḥqīq Aḥmad al-Baysūmī, Manšūrāt wizārat al-ṭāqāfa, Dimašq, 1991, ք. 1, ք. 333: Տե՛ս նաև **Ibn Kaṭīr**, al-Bidāya wa al-nihāya, ք. 16, bi-taḥqīq 'Abd Allāh ibn 'Abd al-Muḥsin al-Turkī, Dār Haḡar, 1998, ք. 471-472: Հմմտ. **Elisseeff N.**, Nūr ad-Dīn, Un grand prince musulman de Syrie au temps des croisades (511-69H./1118-1174), tome II, Institut Français de Damas, 1967, pp. 691-692 և **Տեր-Ղևոնդյան Վ. Ա.**, Կիլիկյան Հայաստանը և Մերձավոր Արևելքի արաբական երկրները 1145-1226 թվականներին, «Գիտություն», 1994, էջ 68:

որ Նուր ալ-Դինն [հոժարությամբ] ընդունեց՝ նրան ներման արժանացնելով»⁶⁸: Վերջին արաբագիր մատենագիրն, ում մոտ վկայություն ենք գտնում Հոռմկլայի «արշավանքի» մասին, Բադր ալ-Դին ալ-Այնին է: Նա իր տեղեկության սկզբնաղբյուր է նշում Աբու ալ-Ֆիդայի Muḥtaṣar երկի մի անհայտ համառոտագրություն, որն ըստ նրա՝ al-Hada'iq wa-l-'uyūn վերնագիրն է կրել: Ալ-Այնին մասնավորապես գրում է. «Սուլթան Նուր ալ-Դին ալ-Շահիդը⁶⁹ ճամփա ընկավ դեպի այն [հիջրայի] 569 թ., և հայոց խալիֆան ընդունեց [նրան] 500 հազար (°) դիրհամ հարկով՝ որպես ջիզյա, ապա [Նուր ալ-Դինը] վերադարձավ [Հալեպ]»⁷⁰:

Այսպիսով, ճիշտ է, արաբ մատենագիրները անուններ չեն նշում, բայց նրանց այս վկայությունները բավական են արձանագրելու համար այն փաստը, որ Գրիգոր Տղայի հաստատումը հայրապետական աթոռին իրապես տեղի է ունեցել Մլեհի միջնորդության ու Նուր ալ-Դինի միջամտության շնորհիվ:

Գրիգոր Տղան հայոց հայրապետական աթոռի գահակալ է եղել ուղիղ երկու տասնամյակ: Նրա կաթողիկոսության ժամանակ շարունակվել են դեռ Ներսես Կլայեցու օրոք մեկնարկած հայ-բյուզանդական եկեղեցական միության բանակցությունները: Անձամբ այդ միության ջատագով լինելով՝ նա հարցի քննարկման համար 1178 թ. մեծ եկեղեցական ժողով է հրավիրել Հոռմկլայում, որի մասին արդեն ակնարկել ենք վերևում: Եկեղեցական գործերը տնօրինելուց և միջեկեղեցական հարաբերություններ հաստատելուց զատ՝ Գրիգոր Տղան դրսևորել է նաև հմուտ ու շրջահայաց քաղաքական գործչի ունակություններ: Արաբական մատենագրության մեջ Հոռմկլայի կաթողիկոսության մասին ժամանակագրական առումով երկրորդ հիշատակությունը նույնպես կապված է նրա անվան հետ: Խոսքը վերաբերում է 1190 թ. Եգիպտոսի Այյուբյան սուլթան Սալահ ալ-Դինին հայոց կաթողիկոսի հղած նամակներին:

⁶⁸ St' u 'Izz al-Dīn ibn Šaddād, al-A'lāq al-ḥaṭīra fi dīkr umarā' al-Šām wa-l-Ġazīra, ց. 1.2, bi-tahqīq Yahyā Zakariyā 'Abbāra, Dimašq, 1991, ց. 337.

⁶⁹ Šahīd նշանակում է «նահատակ», «վկա»՝ հանուն իսլամի կոված ու մարտիրոսված:

⁷⁰ St' u al-'Aynī, 'Iqd, ց. 3, ց. 121.

Սակայն մինչ այդ նամակագրությանն անցնելը, հարկ է, որ համառոտակի ներկայացնենք ԺԲ դարի 80-90-ական թվականներին Մերձավոր Արևելքում հաստատված բազմաբարդ քաղաքական իրավիճակի պատկերը: Դեռ 1171 թ. Եգիպտոսի փաստական տիրակալ դարձած Այյուբյան հարստության հիմնադիր Սալահ ալ-Դինը Նուր ալ-Դինի մահից (1174 թ.) հետո գործողությունների լիակատար ազատություն ստացավ: Իրեն սուլթան հռչակելով՝ նա կարճ ժամանակում իր տիրապետությունը հաստատեց Դամասկոսի, Համայի և Ասորիքի մյուս քաղաքների վրա՝ բացառությամբ Հալեպի: Հաջողությամբ շարունակելով իր հաղթարշավը՝ Սալահ ալ-Դինը 1180-1186 թթ. իրեն հնազանդեցրեց նաև Հալեպը, Ջազիրան և Մոսուլը՝ դառնալով տարածաշրջանի հզորագույն ուժն ու խաչակիրների դեմ պայքարի անվիճարկելի դրոշակակիրը: Ի շարս հիշյալ տարածքների՝ Հռոմկյան նույնպես հայտնվեց Սալահ ալ-Դինի ենթակայության տակ գտնվող հողերում: Ֆրանկների հետ սուլթանի հարաբերությունները առանձնակի սրություն ստացան 1187 թ., երբ մուսուլմանական զորքերը ջախջախիչ պարտության մատնեցին խաչակիրներին Հիթթինի ճակատամարտում: Հիթթինում գերի ընկավ Երուսաղեմի թագավոր Գի դը Լուզինյանը, որից ամիսներ անց Երուսաղեմը ստիպված էր անձնատուր լինել Սալահ ալ-Դինին⁷¹:

Երուսաղեմի առումը ծանր հարված էր ֆրանկներին, ովքեր՝ ի դեմս Ֆրանսիայի թագավոր Ֆիլիպ Բ Օգոստոսի (կառ. 1180-1223 թթ), Անգլիայի թագավոր Ռիչարդ Ա Առյուծասիրտի (1189-1199 թթ.) և Սրբազան Հռոմեական Կայսրության տիրակալ Ֆրիդրիխ Ա Շիկամորուսի (կառ. 1155-1190 թթ.) մտադրվեցին ստեղծված այդ օրհասական վիճակը շտկել Երրորդ խաչակրության (1189-1192 թթ.) կազմակերպմամբ: Արշավանքի ռազմավորանքից երկուսը՝ Ֆիլիպ Բ-ն և Ռիչարդ Ա-ն, Սուրբ Երկիր ուղևորվեցին նավերով և ափ իջնելով Պաղեստինում՝ պաշար-

⁷¹ Երուսաղեմի թագավորության կործանման մասին տե՛ս Baldwin M. W., The decline and fall of Jerusalem, 1174-1189 // HC, vol. I, The First Hundred Years, pp. 590-625.

ման մեջ առան Աքրան: Իսկ Ֆրիդրիխ Ա-ն վճռեց խաչակրաց զորքերի մնացյալ մասը Երուսաղեմ առաջնորդել ցամաքային ճանապարհով: Նա, սակայն, ճանապարհին մահացավ, և զորքերը Աքրա հասցրեց նրա որդին⁷²:

Խաչակիրների և Սալահ ալ-Դինի հակամարտության անկանխատեսելիությունը հաշվի առնելով՝ Կիլիկիայի հայոց իշխան Լևոն Բ-ը նախընտրեց չեզոքություն պահպանել և իր երկիրն ազատել մուսուլման տիրակալի հետագա հնարավոր վրեժխնդրությունից: Երիցս խուսափելով գերմանացի կայսեր հետ հանդիպելուց և այդ արշավանքին անձամբ մասնակցելու վերջինս հորդորներից՝ հայոց իշխանը միայն ապաստան ու պարեն տրամադրեց երկար ճանապարհից ու քաղցից հյուծված ֆրանկ զինվորներին⁷³: Լևոնի փոխարեն, բայց ըստ էության նրա հետ համաձայնեցնելով, կայսեր հետ նամակագրություն հաստատեց Գրիգոր Տղան՝ հայտնելով, թե ինքը Սսում «անհամբերությամբ» սպասում է նրա ժամանմանը⁷⁴: Սալահ ալ-Դինի կենսագիր Բահա ալ-Դին իբն Շադդադը Լևոնի ու խաչակիրների հետագա փոխհարաբերությունների մասին այսպես է գրում. «Երբ Իբն Լաֆունը (Ibn Lāfūn) լսեց նրանց պատահած անհաջողությունների և նրանց արքայի վախճանի պատճառով նրանց պատուհասած սովի, մահվան, վախի ու տկարության մասին, նպատակահարմար չգտավ նրանց շարքերը մտնել, քանզի չգիտեր, թե իրադարձություններն ինչ ընթացք կունենային, բացի այդ նրանք ֆրանկ էին, իսկ ինքը՝ հայ, և ամրացավ իր անառիկ բերդերից մի քանիսում»⁷⁵:

⁷² Ֆրիդրիխ Շիկամորուսի խաչակրության մասին տե՛ս **Edgar N. Johnson**, *The Crusades of Frederick Barbarossa and Henry V* // HC, vol. II, pp. 87-122.

⁷³ Տե՛ս **Ibn al-Aṭīr**, *al-Kāmil fi al-tārīḫ*, ց. 10, bi-taḥqīq Muḥammad Yūsuf Daqqāq, Dār al-Kutub al-ʿIlmiyya, Bayrūt, 2003, ք. 194, ինչպես նաև **Տեր-Ղևոնդյան Ա.** (թարգ., առաջաբան և ծանոթագր.), Իբն ալ-Ասիր (Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին 11), ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1981, էջ 275:

⁷⁴ **Վարդան**, Հաաքումն, էջ 136:

⁷⁵ Տե՛ս **Ibn Šaddād**, *al-Nawādir*, ք. 191, ինչպես նաև **Նալբանդյան**, Արաբական աղբյուրները, էջ 298: Տե՛ս նաև **Տեր-Ղևոնդյան**, Կիլիկյան Հայաստանը, էջ 98-99: Հմմտ. **Sibṭ ibn al-Gawzī**, *Mirāt al-zamān fi tārīḫ al-ʿayān* (ed. with

Հաջորդ քայլով հայոց կաթողիկոսը մի այլ նամակ հղեց Սալահ ալ-Դիհին: «Այս ընթացքում սուլթանին, Աստված օրհնի նրան, մի նամակ էր հասել «Քաղիքուսից», որ հայերի առաջնորդն է և Եփրատի կողմում գտնվող Հռոմկլայի տերը», - գրում է Իբն Շադդադը՝ այնուհետև մեջբերելով նամակի թարգմանությունը: Կաթողիկոսը նրանում սուլթանին ահազանգում է և տեղեկություններ հաղորդում մոտեցող խաչակրաց զորքերի մասին՝ միաժամանակ ջանալով արդարացնել խաչակիրներին օթևան տրամադրելու ու իր տարածքով անցկացնելու Լևոնի հարկադրված արարքը: Նրանում, օրինակ, ասվում էր, որ հայոց իշխանը Հաթիմ (Շեթում) անունով մի դեսպան էր ուղարկել Իկոնիայի սուլթանությունից Կիլիկիա ճանապարհ բռնած կայսերն ընդառաջ՝ խորհուրդ տալով նրան հրաժարվել ձեռնարկումից և ետ դառնալ Կիլիջ Արսլանի երկիր: «[Քո] հլու ծառան այս տեղեկություններն է հաղորդում [ներկա] իրավիճակի մասին, և եթե նորություն լինի, այդ մասին [հավելյալ] կտեղեկացվի, եթե Բարձրյալ Աստված կամենա: Սա է նամակը Քաղիքուսի, որ «խալիֆա» է նշանակում, ում անունը Բար Քրիքուր իբն Բասիլ է (Վասիլի որդի Գրիգոր Տղա-Գ.Դ.)», - եզրափակում է պատմիչը ⁷⁶: Քիչ անց Իբն Շադդադը հաղորդում է «Քաղիքուսից» սուլթանի մոտ ուղարկված մի երկրորդ դեսպանագնացության մասին, ում ընդունմանն ինքը՝ պատմիչը, անձամբ ներկա է գտնվել: Ըստ նրա՝ կաթողիկոսի նվիրակը տեղեկություններ է հայտնել սուլթանի դեմ շարժվող խաչակիրների մեծաթիվության, բայց և խիստ անմխիթար ու բարոյալքված վիճակի մասին: Հետաքրքրական է, որ Իբն Շադդադի հաղորդմամբ՝ պատվիրակը հայտնել է, որ «երբ Իբն Լաֆունն իմացել է նրանց այդ թշվառ վիճակի մասին, նկրտել է օգտվել նրանց արքայի հիվանդությունից ու տկարությունից և տեր դառնալ նրա հարստությանը»⁷⁷:

introduction by J. R. Jewett, The University of Chicago Press, Chicago, 1907), g. 8, s. 258.

⁷⁶ Ibn Šaddād, al-Nawādir, s. 193.

⁷⁷ Sb' u Uնդ, s. 195-197: Sb' u նաև Abū Šāma, Kitāb al-Rawdatayn, g. 4, s. 77.

Վ. Տեր-Ղևոնդյանի կարծիքով «Գրիգոր կաթողիկոսի նամակի մասին հիշատակում են երեք արաբ պատմիչներ: Նրանցից առաջինը Բեհա ադ-Դին Իբն Շադդադն (XII–XIII դդ.) է նշում իր «Սալահ ադ-Դին Այյուբիի կենսագրությունը» գրքում. այն գրեթե նույնությամբ, չնչին փոփոխություններով մեջբերում է XIV դ. եգիպտացի պատմիչ Իբն ալ-Ֆուրաթը իր «Պատմության» մեջ, իսկ XIII դ. դամասկոսցի պատմիչ Աբու Շաման իր «Գիրք զույգ պարտեզների» երկում համառոտ վերապատմում է կաթողիկոսի նամակը»⁷⁸: Պետք է նշել, սակայն, որ արաբական պատմագրության մեջ նամակի մասին հիշատակություններն իրականում շատ ավելի են: Այսպես, կաթողիկոսի նամակի առաջին հիշատակությունը հայտնաբերում ենք Իմադ ալ-Քաթիբի մոտ, ով Նուր ալ-Դինի մահից հետո դարձել էր արդեն Սալահ ալ-Դինի արքունի քարտուղարը: Խաչակիրների դեմ սուլթանի հաղթական պատերազմներին նվիրված իր գրքում՝ al-Fath al-qussi-ում, հեղինակը պատկերավոր կերպով և հանգավորված արձակով պատմում է հայոց հայրապետի հղած նամակի բովանդակությունը: Նա գրում է. «Նամակ հասավ Քայադիքուսից՝ Հռոմկլայի տիրոջից, որում նա գայթակղում ու ահաբեկում էր, որոտում և կայծակնահարում, հավաստում և թվարկում, սայթաքում էր (կամ վայր էր ընկնում՝ yudahdihu) և սպառնում, ցույց էր տալիս, թե [անկեղծ] խորհուրդ է տալիս»⁷⁹: Վերջում հեղինակը խոսում է «Հռոմկլայի տիրոջ» հաղորդած տեղեկությունների հարուցած տագնապի մասին. «Երբ այս լուրերը հասան, երկիրը սկսեց անհանգստանալ (idfarabat al-Diyar). ահով լցվեցին սարահարթ ու քարանձավ: Ասում էին՝ այս կողմից այլևս հնարավոր չէ դիմադրել [թշնամուն], և որ կողմ էլ, որ ուղղվեր, նրան խոչընդոտ չէր լինելու: Կասկած չկար, որ նա

⁷⁸ Տե՛ս Տեր-Ղևոնդյան Վ., Կիլիկյան Հայաստանի արտաքին քաղաքականությունը XII դարի վերջին // Պատմա-բանասիրական հանդես (հետալոստ՝ ՊԲՀ), 2010, № 1, էջ 125: Հմմտ. նույնի՝ Կիլիկյան Հայաստանը, էջ 99: Հատվածը Աբու Շամայի և Իբն ալ-Ֆուրաթի երկերում տե՛ս Kitāb al-Rawḍatayn, ց. 4, ք. 77-78 և al-Duwal, ց. 4.1, ք. 216-219.

⁷⁹ Imād al-Dīn, al-Fath, ք. 262.

Ասորիքի խորքն էր շարժվում՝ հատելով իսլամի սահմանները»⁸⁰։ Իբն Շահդադից փոխառելով՝ նամակի տեքստը մանր փոփոխություններով իր Mufarrig al-kurūb երկում է ներառել նաև Իբն Վասիլը (մահ. 1298 թ.)⁸¹։ Իբն Վասիլին հղելով՝ նամակն իր Tārīḥ al-Islām-ում մեջբերել է նաև ԺԴ դարի հեղինակ ալ-Չահաբին (մահ. 1348 թ.)⁸²։ Նամակից մի հատված հիշատակում է նաև ԺԵ դարի մամուլքյան պատմիչ ալ-Այնին⁸³։

Հատկանշական է, որ այս նամակի ստուգությունն ու վավերականությունը տևական ժամանակ կասկածի տակ է դրվել հետազոտողների կողմից՝ այն համարելով հորինվածք։ Այդ կարծքին են եղել օրինակ, Ղ. Ալիշանն ու Ֆ. Տուրնըբիզը։ «Այլ ընդ այլոյ և ստութեամբ պատմեն աստանօր Արաբացիք,- գրում է Ալիշանն այդ առիթով,- դժկամակս ցուցանել զՀայս՝ ընդ գալուստ Ալամանացն և ընդ անցս յերկիր իւրեանց. և զայս իբրու առ ահի կամ առ մտերմութեան Սալահէտտինայ. և մեծագոյն ևս ստայօդ թուղթ մի կարկատեալ են յանուն Գրիգորի որդւոյ Վասիլի, որպէս թե կաթողիկոսին Գր. Տղայոյ, առ Սալահէտտին, լրտեսաբար ծանուցանելով նմա զորքանութիւն բանակին Ալամանաց»⁸⁴։ Բայց ժամանակի ընթացքում սկզբնաղբյուրների ավելի մանրամասն ու բազմակողմանի քննության արդյունքում այս տեսակետը դուրս է մղվել գիտական շրջանառությունից։ Գրիգոր Միքայելյանից⁸⁵ սկսած՝ հարցն արծարծած հետազոտողները՝ Հ. Նալբանդյանը⁸⁶, Հ. Քյուրոյանը⁸⁷, Վ. Տեր-Ղևոնդ-

⁸⁰ Անդ, §. 264.

⁸¹ Ibn Wāṣil, Mufarrig, §. 2, §. 320-322.

⁸² Sb'ū al-Dahabī, Tārīḥ al-Islām, §. 41, bi-tahqīq 'Umar 'Abd al-Salām Tadmuri, Dār al-kitāb al-'arabī, Bayrūt, 1996, §. 50-52.

⁸³ Sb'ū al-'Aynī, 'Iqd, §. 2, §. 144.

⁸⁴ Ալիշան Ղ., Միտում։ Համագրութիւն Հայկական Կիլիկիոյ եւ Լեւոն Մեծագործ, Վենետիկ, 1885, էջ 447։ Հմտ. Tournebiz Fr., Histoire politique et religieuse de l'Arménie, depuis les origines des Arméniens jusqu'à la mort de leur dernier roi (l'an 1393), Paris, 1910, p. 185.

⁸⁵ Микаелян Г. Г., История Киликийского Армянского государства, изд. АН АССР, Ереван, 1952, с. 145-147.

⁸⁶ Նալբանդյան, Արաբական աղբյուրները, էջ 302-303։

յանը⁸⁸, Ա.-Կ. Մութաֆյանն⁸⁹ ու այլք իրենց ուսումնասիրություններում նամակի հավաստիությունը աներկբայելի փաստ, և դեռ ավելին՝ «կիլիկյան դիվանագիտության» եզակի նմուշ են համարել: Արագ կողմնորոշվելով ստեղծված քաղաքական դժվարին կացության մեջ՝ հայոց իշխան Լևոնն ու Հռոմկլայի հայոց կաթողիկոս Գրիգորը, փաստորեն, խիզախել էին դրացիության ու համերաշխության բանակցություններ ծավալել երկու ներհակ ճամբարներում միաժամանակ: Աչալոջորեն հետևելով իրադարձությունների զարգացմանը և իրենց ապահովագրելով այդ առճակատման անկանխատեսելի արդյունքներից՝ նրանք, ըստ էության, հաջողեցին երկիրն անցնցում և առավելագույնս անվնաս դուրս բերել երկու հզոր ուժերի բախման վտանգաշատ ոլորտից:

Արաբական մատենագրության մեջ Հռոմկլայի կաթողիկոսների մասին եղած ժամանակագրական առումով հաջորդ հիշատակությունը վերաբերում է Գրիգոր Տղայից հետո հայոց հայրապետական աթոռը զբաղեցրած Գրիգոր Ե Քարավեժին, ավելի ճիշտ՝ նրա և հայոց իշխան Լևոնի անհաշտ հարաբերություններին: Չնայած կաթողիկոսական գահի մի քանի հավակնորդներից (Ներսես Լամբրոնացի, Գրիգոր Ապիրատ, Հովհաննես Սսեցի) հենց երիտասարդ Գրիգորին իր հավանությունը տված լինելուն՝ Լևոնը կարճ ժամանակ անց թշնամաբար տրամադրվեց նրա նկատմամբ: Բանն այն է, որ «Լեոն կը յուսար իրեն հնազանդ և իւր ուզածը ընելու պատրաստ հայրապետ մը ունենալ. ոչ միայն տարիքին բերմամբ տկար, այլև իրեն երախտապարտ անձ մը ունենալով աթոռին վրայ,- այսպիսի նկրտում է տեսնում Մ. Օրմանյանը հայոց իշխանի կայացրած որոշման

⁸⁷ Քիրտեան Յ., Գրիգոր Տղայ և Սալահ էդ-Տին // Բազմավէպ, 1975, թիվ 1-2, էջ 172:

⁸⁸ Տե՛ս վերևում՝ Տեր-Ղևոնդյան, Կիլիկյան Հայաստանի արտաքին քաղաքականությունը, էջ 118-128:

⁸⁹ Mutafian, L'Arménie, p. 93, ինչպես նաև նույնի՝ The brilliant diplomacy of Cilician Armenia // Armenian Cilicia, ed. by Richard G. Hovhannisian and S. Payaslian, Mazda Publishers, 2008, p. 99.

հիմքում՝ շարունակելով,- Գրիգոր չեղաւ ինչ կը սպասուէր»⁹⁰: Օրմանյանի դիտարկումը հաստատվում է Սմբատ Գունդատաբլի հայտնած տեղեկություններով. «Իսկ տղայ կաթողիկոսն Տէր Գրիգորիս յորժամ եղեւ կաթողիկոս՝ չինազանդէր ամենեցուն զառաջինն, այլ ինքնիշխանութեամբ տանէր զհայրապետութիւնն: Այնժամ մախացեալ ընդ նա աւագ մարդիկն՝ գրեն առ Լևոն թէ ոչ ունի սա իմաստօթին վարել զհայրապետութիւնն, որպէս արժանն է. և չարախոսեցին զնմանէ երեք, չորս անգամ, մինչև շարժեցին զպարոն Լևոն ի կամս իրեանց»⁹¹: Ի վերջո, հայոց իշխանի կարգադրությամբ և Սսի Հովհաննես եպիսկոպոսի ձեռքով Գրիգորը ձերբակալվում է և զնդան նետվում Կոպիտառ բերդում: Նա իրեն հավատարիմ մնացած հռոմկլայեցիների հորդորով բերդից «կտավով» իջնել-փախչելու անհաջող փորձ է կատարում, «եւ քարավէժ (այստեղից էլ նրա մականունը՝ Քարավէժ- Գ.Դ.) լեալ ի Դղեկէն Կօպիտառոյ՝ եւ կայ ի Դրագարկն հանգուցեալ»⁹²: Մինչդեռ բացառված չէ, որ կաթողիկոսի սպանությունը Լևոնի կամ նրան հավատարիմ եպիսկոպոսների կազմակերպած դավը լինի: Կիրակոս Գանձակեցին այդ մասին գրում է. «Եւ զայս ոմանք ասէին, եթե մախողքն նորա ընկեցին եպիսկոպոսքն, որ ակն ունէին ժառանգել զաթոռն»⁹³: Անանուն Եղեսացի ասորի պատմիչը նույնպէս կարծել է, որ կաթողիկոսին Կոպիտառից ազատել ցանկացողները իրականում դավադրության մասնակիցներ էին, ովքեր այդ կերպ ցանկանում էին նրա դէմ կազմակերպված մահափորձը ներկայացնել որպէս դժբախտ պատահար⁹⁴:

Հետաքրքիր է, որ Լևոնի և Քարավէժի այս վեճն իր արձագանքն է գտել նաև արաբական պատմագրության մեջ: Այս

⁹⁰ Օրմանյան, Ազգապատում, հտ. 1, սյուն 1501:

⁹¹ Տե՛ս Սմբատ, Տարեգիրք, 1859, էջ 106: Հմմտ. Նույնի՝ 1956, էջ 205:

⁹² Տե՛ս Սամուէլ Անեցի, Ժամանակագրութիւն (Ստեփանոս Օրբելյանի շարունակությունը), էջ 232 և ՄԺ, հտ. 1, էջ 35: Մի ավելի մանրամասն պատում տալիս է Սմբատը՝ Տարեգիրք, 1859, էջ 106-107 և Նույնի՝ 1956, էջ 205-206:

⁹³ Կիրակոսի Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1961, էջ 148:

⁹⁴ Անանուն Եղեսացի, Ժամանակագրություն, էջ 192:

դեպքերի մասին փոքրիկ, բայց բացառիկ վկայություն ենք գտնում ժԲ դարի անանուն հեղինակի al-Bustān al-ġami' վերնագիրը կրող մի տարեգրության մեջ, որ կրկին երբեմն վերագրվում է Իմադ ալ-Դին ալ-Իսֆահանսին: Հիշրայի 590 թ. (1193 / 1194 թ.) տակ Անանուն պատմիչը գրում է. «Այդ թվականին մահացավ Հռոմկլայում նստող հայոց բատրիկը (baṭriq), և նրա տեղը զբաղեցրեց եղբոր որդին, սակայն Իբն Լավունը (Ibn Lāwun) հնարք բանեցրեց նրա վրա և կաթողիկոսությունը խլեց ձեռքից»: Ճիշտ է՝ մատենագիրը անուններ չի նշում, բայց ենթադրելի է, որ խոսքը հենց Քարավեժի մասին է⁹⁵:

Հայոց իշխանի և Հռոմկլայի կաթողիկոսի հակոտնյա հարաբերությունների մասին ևս մի գրույց կա արաբական մատենագրության մեջ: Այդ մասին հաղորդում է Յակուտ ալ-Համավին իր «Երկրների բառարանում»՝ Հռոմկլա բառահոդվածում: Եթե հայ պատմիչները Լևոնի և Գրիգորի թշնամության կոնկրետ պատճառ չեն հիշատակում, ապա արաբ մատենագիրը որպես այդպիսին նշում է Լևոնի «կնամոլությունը»⁹⁶: Ըստ նրա՝ «Հնուց ի վեր պատրիարքությունը զբաղեցնող կաթողիկոսն ընտրվում էր «Դավթի սերնդից» (wald Dāwud), խաղաղություն նրան ('alayhi al-salām): Այդ մասին վկայող նշանը նրանց ձեռքերի երկարությունն էր, քանզի երբ ուղիղ կանգնում էին և [ներքև] ձգում ձեռքերը, դրանք անցնում էին ձևներից: Մոտ 610 թ. Հայոց արքա Լայուն իբն Լայունը, որ ասորիքյան հողերին հարող հողերի՝ Մսիսի, Տարսոնի և Ադանայի վրա էր իշխում, ասելի էր դարձել հայերին: Եվ որովհետև, երբ մի գյուղ կամ գավառ էր մտնում, իր մոտ էր կանչել տալիս [տեղի] հայ աղջիկներից մեկին և գիշերը նրա հետ անկողին կիսում, իսկ երբ ցանկանում էր հեռանալ, նրան ազատ էր արձակում՝ հետ ուղարկելով իր ազգականներ-

⁹⁵ Տե՛ս 'Imād al-Din al-Iṣfahānī (վերագրված), al-Bustān al-ġami' li-ġami' tawāriḥ ahl al-zamān, bi-tahqiq Muḥammad 'Alī al-Ṭa'ānī, lrbid, 2003, թ. 445.

⁹⁶ Լևոնի այս «թուլության» մասին հայ պատմագրության մեջ եզակի վկայությունը Կիրակոս Գանձակեցունն է. «Եւ այսպէս բարեկարգութեամբ հաստատէր զիւր թագաւորութիւնն բարեպաշտն Լևոն, և էր նա ամենայն իրօք բարեքազոյն, բաց միայն միով մասամբ. զի էր նա իգասէր»: Տե՛ս Կիրակոսի Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, էջ 159:

րին: Հայերն այս մասին բողոքեցին կաթողիկոսին»⁹⁷: Յակուտը շարունակում է, որ կաթողիկոսը դիմում է արքային՝ ասելով, թե նրա վարքն անընդունելի է քրիստոնեական կրոնի համար, և եթե միայն իրեն քրիստոնեության հետևորդ չի համարում, թող վարվի այնպես, ինչպես կկամենա: Թագավորը սկզբում խոստանում է ականջալուր լինել պատրիարքի հորդորին, բայց կարճ ժամանակ անց նրա մասին բողոքները կրկին հաճախահեպ են դառնում: Պատրիարքը ևս մեկ անգամ զգուշացնելուց հետո ստիպված է լինում բանադրել արքային: Նրանից երես են թեքում զինվորներն ու ենթակաները և անգամ կինը: Այս վիճակից նեղսրտած՝ արքան ցույց է տալիս, թե իբր զղջացել է և ցանկանում է հրապարակայնորեն ներողություն խնդրել և ազատվել կաթողիկոսի նզովքից: «Եվ խաբվեց կաթողիկոսն ու նրա մոտ գնալով՝ բազմության ներկայությամբ ազատեց նրան բանադրանքից: Սակայն երբ ժողովը ցրվեց, Լայունը բռնեց նրա ձեռքից և [միջնա]բերդը բարձրացավ, և դա վերջին անգամն էր, երբ նրան տեսան: Ապա նա բերել տվեց իր ազգականներից մի մարդու, ով կարծես նրա մորեղբոր որդին էր և կամ նման մեկը՝ արդեն իսկ կղերական, և բերդ (Հոռմկլա) ուղարկելով՝ կաթողիկոս դարձրեց, և մինչ այժմ էլ նա է: Ահա այսպես ընդհատվեց Դավթի գարմի (ՅԻ Դաւստ) կաթողիկոսությունը: Տեղյակ եմ, որ նրանցից այլևս ոչ ոք չի մնացել այդ կողմերում, որ նրա տեղը զբաղեցնի: Թերևս միայն հլաթի կողմերում է, որ նրանց գարմից մի խումբ մարդիկ դեռ կան: Այլահն ավելի լավ գիտի»⁹⁸:

Այսպիսով, մատենագիրն այս դեպքերը թվագրում է հիջրայի 610 թ.-ով (1213/1214 թթ.), բացի այդ «անհետացած» կրոնապետին համարում է «Դավթի սերնդի վերջին ներկայացուցիչ», որով նա ամենայն հավանականությամբ Պահլավունիների տոհմն է նկատի ունեցել: Հատկանշական է, որ նշված թվականին հայոց կաթողիկոս է եղել Հովհաննես Զ-ն, իսկ կաթողիկոսական գահին նստած վերջին Պահլավունի ներկայացուցիչը

⁹⁷ Տե՛ս Կաթողիկոս, Mu'ğam, ց. 4, ց. 391: Տե՛ս նաև Նալբանդյանի թարգմանությունը՝ Արաբական աղբյուրները, էջ 100-101:

⁹⁸ Տե՛ս Կաթողիկոս, Mu'ğam, ց. 4, ց. 391.

Գրիգոր Զ Ապիրատն է եղել: Բայց, ինչպես Հակոբ Նալբանդյանն է ցույց տվել, աշխարհագրի նկարագրությունը քիչ թե շատ աղերսվում է հենց Լևոնի և Քարավեժի վերոհիշյալ վեճի հետ⁹⁹: Վերջերս Ա.-Կ. Մուֆաֆյանը, քննարկելով Յակուտի այս վկայությունն ու առարկելով Նալբանդյանի ենթադրությանը, ակնարկված կաթողիկոսին նույնացրել է Մամեստիայի արքեպիսկոպոս Դավիթ Արքակաղնեցու հետ, ում Լևոնը Հովհաննես Զ-ի հետ գժտությունից հետո (1207 թ.) և մինչև վերջինիս հետ հաշտվելը (1211 թ.) կաթողիկոս էր ճանաչել՝ նստեցնելով Սում: Նա, ըստ այդմ, արաբ մատենագրի հաղորդման մեջ եղած «Դավթի սերնդի» մասին տեղեկությունը լրիվ արհեստականորեն կապում է հենց այս Դավթի անվան հետ¹⁰⁰: Ինչևէ, Մուֆաֆյանի եզրակացությունը հերքվում է արաբագիր այլ պատմիչների մոտ այս արտահայտության մեր գտած մյուս կիրառություններով: Խոսքն առաջին հերթին Յակուտի ժամանակակից հալեպցի պատմիչ Իբն Աբի Տայյի (մահ. 1229-1233 թթ. միջակայքում) մասին է: Ճիշտ է՝ վերջինիս երկը մեզ չի հասել, բայց նրանից բազմաթիվ հատվածներ իր պատմության մեջ պահպանել է Իբն ալ-Ֆուրաթը¹⁰¹: Մատենագիրը, խոսելով Վահրամ Պահլավունու մասին, գրում է. «Բահրամը վեզիրության անցավ ալ-Հաֆիզի մոտ: Բահրամը հայ էր՝ նրանցից, որ [այժմ] հաստատված են ստորին Ասորիքում (al-Šām al-asfal) գտնվող Հոմկլայում, որտեղ «հայոց փոխանորդն» (քնագրում գրչագրական սխալով՝ hilf al-arman՝ ḫalifat al-arman-ի փոխարեն) է նստում: Նա պնդում էր, որ ինքը սերում է Դավթի զարմից...: Հայկական մի տան (տոհմի) մարդիկ է, որ պնդում են դա: Նրանց [տարբերակիչ] նշանն այն է, որ, եթե այրն [ուղիղ] կանգնի և [ներքև] ձգի իր ձեռքերը, դրանք հասնեն իր ծնկներին, և եթե պտտի դրանք դեպի մեջքի հետևը, իրար միանան»¹⁰²:

⁹⁹ Տե՛ս Նալբանդյան, Արաբական աղբյուրները, էջ 192-193:

¹⁰⁰ Տե՛ս Mutafian, L'Arménie, p. 513.

¹⁰¹ Իբն ալ-Ֆուրաթից բացի Իբն Աբի ալ-Տայյի երկից արժեքավոր քաղվածքներ է պահպանել նաև Աբու Շաման: Պատմիչի և նրա երկի մասին տե՛ս Cahen Cl., Ibn Abi Tayyī' // EI2, vol. III, H-IRAM, E. J. Brill, Leiden, 1986, p. 693.

¹⁰² Իբն ալ-Ֆուրաթի երկի երկրորդ հատորը, որում գտնում ենք Իբն Աբի Տայյի

ինչևէ, սա հիշյալ արտահայտության կիրառության միակ պահպանված դեպքը չէ արաբական պատմագրության մեջ: Իբն Աբի Տայյի ժամանակակից Իբն ալ-Տուվայրի (մահ. 1220 թ.) *Nuzhat al-muqalatayn fi ahbār al-dawlatayn* («Աչքերի զբոսանքը երկու դինաստիաների մասին հաղորդումներում») երկում նույնպես կարդում ենք. «Հայերի՝ նրա (իմա՝ Բահրամի- Գ. Դ.) տոհմի մարդիկ (*ahl baytahi fi al-arman*) մի տարբերակիչ նշան ունեն, որ երբ իրենցից մի այր կանգնի և ցած ձգի ձեռքերը, դրանք ծածկեն ծնկները»¹⁰³: Դժվար է բացատրել, թե ինչու են «Պահլավունիները» մուսուլման մատենագիրների կողմից «Դավթի զարմ» անունով ընկալվել ու բնորոշվել և թե որտեղ պետք է փնտրել տոհմի ներկայացուցիչների «երկայնաբազկության» մասին նրանց պատկերացումների ակունքը: Նույնիմաստ անվանմամբ, ինչպես հայտնի է, միջնադարյան վրաց մատենագրության մեջ Զաքարյաններն են բնորոշվել (վրաց.՝ «մխարգրծելի»):

Որքան էլ որ Իբն Աբի Տայյի, ինչպես նաև Իբն ալ-Տուվայրի վկայությունները հաստատում են Նալբանդյանի տեսակետը, պետք է նկատի ունենալ, որ Յակուտի արձանագրած պատմությունն անհրաժեշտաբար մեկ իրադարձության կամ դիպվածի տպավորությունը չէ, այլ միահյուսված արձագանքն է Կիլիկիայի աշխարհիկ և հոգևոր իշխանությունների միջև ծավալված անդուլ պայքարի և ստեպ-ստեպ իսկական հակամարտության վերաճած փոխհարաբերությունների:

այս վկայությունը, դեռ անտիպ է, բայց և այնպես այն իր դոկտորական ատենախոսությամբ խմբագրել է Լ. ալ-Շայյալը: *St' u Ibn al-Furāt, al-Duwal, ց. 2, bi-tahqiq Muḥammad Farid al-Šayyāl* (A critical edition of Volume II of *Tāriḫ al-duwal wa'l mulūk* by Muḥammad B. 'Alī ibn al-Furāt, University of Edinburgh, 1986), ց. 153-154 [pp. 253-254]:

¹⁰³ *St' u Ibn al-Ṭuwayr, Nuzhat al-muqalatayn fi ahbār al-dawlatayn, bi-tahqiq Ayman Fu'ād Sayyid, Bayrūt, 1992, ց. 43*: «Դավթի զարմի» մասին հաղորդումը պահպանած վերջին հեղինակը ալ-Մակրիզին է (մահ. 1442 թ.): Վերջինս իր *Kitāb al-muqaffā* կենսագրական բառարանում նույն Բահրամի մասին գրում է. «Նա պնդում էր, թե [ինքը] Դավթի սերնդից է, խաղաղություն նրան: Նա այն հայերից էր, որ Դիյար Մուֆար (*Diyār Muḍar*, այն է՝ «Վերին Միջագետք») էին գալիս Հոռովկայից»: *St' u al-Maqrīzī, al-Muqaffā, ց. 2, ց. 512-513*.

Ի տարբերություն Լևոն Մեծագործի՝ Հերթում Ա-ի (կառ. 1226-1269 թթ.) երկարամյա թագավորության և Հովհաննես Զ-ից հետո «Լուսավորչի գահին» բազմած Կոստանդին Ա Բարձրաբերդցու կաթողիկոսության տարիներին Սսի և Հռոմկլայի հարաբերությունները շատ ավելի հարթ ու սահուն ընթացք են ունեցել: Միքայել Ասորի պատրիարքի ժամանակագրության հայերեն խմբագրություններից մեկում, օրինակ, Կոստանդնի ընտրության մասին այսպիսի ոգևորությամբ է խոսվում. «Եվ ապա միաբանութեամբ ամենայն իշխանացն, և եպիսկոպոսացն ընտրեցավ յամենեցունց տէր Կոստընդին. որ էր եպիսկոպոս Մլիճոյն: ... Եւ եղև ուրախութիւն ամենեցուն. յաղագս առաքինի և բարեբարոյ և խաղաղասէր մտացն. որով ամենեցուն հոչակաւոր լինէր»¹⁰⁴: Կիրակոս Գանձակեցին, թեև մատնանշում է, որ Բարձրաբերդցին հայոց եպիսկոպոսապետ է ընտրվել Կոստանդին պայլի ու հայոց արքայի հավանությամբ ու միջամտությամբ, բայց նույնպես բարի ու ջերմ խոսքերով է հիշում նրան՝ որպէս «այր առաքինի և հեզ, սուրբ վարուք կեցեալ, և անձին իրում բարուք առաջնորդեալ, որպէս յարդարեաց զկարգ եկեղեցւոյ ուղղափառութեամբ»¹⁰⁵: Նույն հեղինակը շարունակում է, թե Կոստանդինին հարգում էին ոչ միայն հայերն ու ընդհանրապես քրիստոնյանները, «այլ և ազգն Տաճկաց (իմա՝ մուսուլմանները կամ արաբները): Դէպ եղև երից Սուլտանացն գալ 'ի սահմանս Հռոմկլայն կոչեցեալ քաղաքի, ուր էր աթոռ կաթողիկոսութեանն 'ի վերայ եփրատ գետոյն: Գնաց կաթողիկոսն 'ի տես Սուլտանանցն»¹⁰⁶: Մուսուլման տիրակալներն իբր իմանալով նրա գալստյան մասին՝ իրենք են ընդառաջ գնում և մեծ շուքով դիմավորում: Նրա համար շքեղ վրան են խփում երեք սուլթանների վրանների մեջտեղում և մի քանի օր պատվի արժանացնելուց հետո միայն մեծամեծ պարզևներով և անգամ գյուղեր ու կալվածքներ նվիրելով փառքով ճանապարհում Հռոմկլա: Գան-

¹⁰⁴ Միքայել Ասորի, Ժամանակագրութիւն, 1870, էջ 523-524: Հմմտ. Եսայի՝ 1871, էջ 517:

¹⁰⁵ Կիրակոսի Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, էջ 190-191:

¹⁰⁶ Նույն տեղում:

ճակեցու այս պատմությունը, ակնհայտ չափազանցություններ ունենալով, առաջին իսկ հայացքից հորինվածքի տպավորություն է թողնում: Այնուհանդերձ, առաջ անցնելով նշենք, որ պատմիչն անգամ մասնավորեցնում է երեք սուլթանների ով լինելը՝ Մելիք Քեմլը («որ իշխեր կողմանցն Եգիպտոսի»), Մելիք Աշրափը («որ իշխեր մեծ մասին Հայոց աշխարհիս և Միջագետաց») և նրանց եղբորորդին («որ իշխեր կողմանցն Դամասկոսի»)՝¹⁰⁷: Նրանցից առաջինը Եգիպտոսի Այյուբյան սուլթան ալ-Մալիք ալ-Քամիլն է (կառ. 1218-1238 թթ.), երկրորդը՝ վերջինիս եղբայր ալ-Մալիք ալ-Աշրաֆ Մուսան, ով նախ Ջազիրայի ու Խլաթի կառավարիչն էր, իսկ հետագայում՝ 1229-1237 թթ., Դամասկոսի սուլթանը, իսկ այդ եղբորորդին, ըստ ամենայնի, նրանց երրորդ եղբոր՝ Դամասկոսի Այյուբյան սուլթան ալ-Մուազզամ Իսա Շարաֆ ալ-Դինի (կառ. 1218-1227 թթ.) որդին է՝ ալ-Նասիր Դավուդը, ով հոր մահից հետո միայն երկու տարի է մնացել Դամասկոսի սուլթանի գահին (1227-1229 թթ.)՝ հարկադրաբար զիջելով այն ալ-Աշրաֆ Մուսային: Հայ պատմագրի հաղորդումը անշուշտ հետաքրքիր է, բայց, հարկավ, որևէ արաբական կամ գոնե մեկ այլ հայալեզու սկզբնաղբյուրի տեղեկություններով չի հաստատվում:

Հռոմկլայի հայրապետանոցի մասին հերթական հիշատակությունը մուսուլմանական աղբյուրներում հայտնաբերվում է միայն չորս տասնամյակ անց տեղի ունեցած դեպքերի նկարագրություններում:

ԺԳ դարի կեսերին Մերձավոր Արևելքում տեղի ունեցան աշխարհաքաղաքական լուրջ անցուդարձեր, որոնք քաղաքական քարտեզի փոփոխության և ուժերի նոր հարաբերակցության հաստատման պատճառ դարձան: Այսպես, Այյուբյան բանակի վաղուց արդեն գերիշխող տարր դարձած և Սալախ ալ-Դինի հիմնադրած հարստության վերջին ազդեցիկ տիրակալի՝ ալ-Սալիհ Նաջմ ալ-Դին Այյուբի (կառ. 1240-1249 թթ.) օրոք էլ ավելի մեծ արտոնություններ ստացած մամլուքները (արաբ.՝ «ստրուկ», «ծառա»)՝ մեծամասամբ թյուրք-ղփչաղյան ծագման,

¹⁰⁷ Նույն տեղում:

նրա մահից հետո իրենք իսկ երկրի կառավարման հայտ ներկայացրին և բարեպատեհ հանգամանքների բերումով կարճ ժամանակում իրենց ազդեցիկ խմբավորումներից մեկի՝ «Բահրի-ների» (al-Bahriyya կամ al-Bahriyya al-Şalihiyya) գլխավորությամբ հայտնվեցին իշխանության ղեկին: Չնայած մամլուքներից ևս տասը տարի պահանջվեց իրենց իշխանությունը հաստատուն կռվանների վրա դնելու համար, այնուհանդերձ Եգիպտոսի Մամլուքյան սուլթանության (1250-1516 թթ.) ծննդյան թվական է ընդունված համարել 1250-ը:

Այս ընթացքում տարածաշրջանի քաղաքական թատերաբեմ ելավ ևս մեկ ազդեցիկ ուժ: Խոսքը, իհարկե, մոնղոլների մասին է, որոնց հաղթական շարժը Մերձավոր և Միջին Արևելք սկսվել էր դեռ ԺԳ դարի քսանական թվականներից՝ Մոնղոլական տերության հիմնադիր Չինգիս խանի (Թեմուչինի) գլխավորությամբ: Աշխարհակալի մահից հետո նրա որդիներն ու թոռները, թեև շարունակեցին մոնղոլահպատակ հողերի ընդարձակումը, այնուհանդերձ կայսրությունը տրոհեցին մի քանի ինքնավար պետությունների (ուլուսների): Այս ընթացքում մոնղոլների տիրապետությունը հաստատվեց Վրաստանի, Բուն Հայաստանի (Մեծ Հայք) և Ատրպատականի մեծ մասի վրա: 1243 թ. Քյոսեդաղի ճակատամարտում կրած ծանր պարտությունից հետո մոնղոլներին հնազանդվեցին Ռումի սելջուկները: 1248 թ. Սմբատ Գունդստաբլի և 1254 թ. Հեթում արքայի՝ համապատասխանաբար Գույուկ (կառ. 1246-1248 թթ.) և Մանգու (կառ. 1251-1259 թթ.) խաների արքունիքներ կատարած դեսպանագնացություններով Կիլիկիո Հայոց թագավորությունը նույնպես ստորակա դարձավ մոնղոլներին: Նույն Մանգու խանի օրոք նրա եղբայր Հուլաղուն ավարտի հասցրեց Իրանի նվաճումն ու հիմնադրեց Մոնղոլական իլ-խանությունը (1256-1335 թթ.): Չեզոքացնելով Ալամուտի իսմայիլականներին (1256 թ.) և գրավելով Բաղդադը (1258 թ.)՝ Հուլաղուն արդեն կազմ-պատրաստ էր ներխուժելու Ատրիք:

Հուլաղուի ասորիքյան արշավանքի մեկնարկը տրվեց հիջրայի 658 թ. (1259/1260 թ.): Նա, մոնղոլական զորքերի, ինչպես նաև հայկական, վրացական և Ռումի սելջուկյան օգնական

ուժերի գլուխ անցած, մոտեցավ Եփրատին¹⁰⁸: Հակոբիկ եկեղեցու արևելյան թեմերի մաֆրիան Բար Հերբոսի «Ժամանակագրության» արաբական խմբագրության մեջ (al-Muḥtaṣar fi [tārīḥ] al-duwal) այդ մասին կարդում ենք. «[Հիջրայի] 658 թ. Ասորիքի իլ-խան Հուլադուն՝ 400 հազարանոց զորքի ուղեկցությամբ պաշարեց Խառանն (Ḥarrān) ու գրավեց այն «անվտանգության երաշխիքով» (amān)¹⁰⁹...: Ապա նա առաջ ընթացավ և Եփրատի վրա՝ Մալաթիա քաղաքի մոտ, կամուրջ անցկացնել տվեց, մեկ ուրիշը՝ Հոռմկլայի մոտ, մյուսը՝ Կարկիսիայի (Օսրոյենեն), որոնց վրայով որ բանակներն անցան [գետն] ու մեծ սպանդ կազմակերպեցին Մանբիջում»¹¹⁰: Այս հաղորդումը կա նաև հեղինակի ասորերեն «Ժամանակագրության» մեջ, միայն թե նրանում հիշյալ բնակավայրերից բացի գետանց կամրջի անցկացման վայր է նշված նաև ալ-Բիրան¹¹¹: Մոնղոլական ներխուժման ականանատես բաղդադցի պատմիչ Իբն ալ-Ֆուվատիին (մահ. 1323 թ.) վերագրվող al-Ḥawādiḥ al-ḡāmi'a երկը հաստատում է ասորի մատենագրի վկայությունը. «Հետո սուլթանը (նկատի ունի Հուլադուն) հրաման արձակեց երեք կամուրջ անցկացնել Եփրատի վրայով. մեկը՝ Մալաթիայի մոտ, մյուսը՝ ալ-Բիրայի, մեկ ուրիշը՝ Հոռմկլայի, և իր անհաշվելի բանակով ուղղություն

¹⁰⁸ St'ū Amitai-Preiss R., *Mongols and Mamluks: The Mamluk-Īlkhānid war, 1260-1281*, Cambridge University Press, Cambridge, 1995, p. 26: Իբն Վասիլի մոտ կարդում ենք. «Այս տարվա սկզբին Հուլադուն՝ թաթարների արքան, կորեցանցավ Եփրատը անհամբելի զորախմբով՝ կազմված թաթարներից, պարսիկներից, վրացիներից և այլ ժողովուրդներից»: St'ū Ibn Wāsil, *Mufarriḡ*, ց. 6, ք. 10: «Այլ ժողովուրդներ» ասվածի տակ մատենագիրը, ըստ էության, նկատի ունի նաև հայերին:

¹⁰⁹ Amān-ը անվտանգության, հաշտության, խաղաղության, հովանավորության խոստումն է, ապահովագիրը կամ երաշխիքը հնազանդության դիմաց: Ինստիտուտի մասին տե՛ս Schacht J., *Amān* // *EI2*, vol. 1, pp. 429-430, ինչպես նաև Wansbrough J., *The Safe-Conduct in Muslim Chancery Practice* // *BSOAS*, vol. 34, № 1 (1971), pp. 20-35.

¹¹⁰ St'ū Ibn al-'Ibrī, *Tārīḥ muḥtaṣar [fi] al-duwal, al-ṭab 'a al-ṭāniya, bi-taḥiqq Anṭūn ṣāliḥāni al-Yasū'i, Dār al-Rā'id al-Lubnāni, Bayrūt, 1994, ք. 279.*

¹¹¹ *Bar Hebraeus, Chronography*, p. 435.

բունեց դեպի ալ-Ջազիրա և գրավեց այն երաշխիքով (*amān*)»¹¹²: Ավելի ուշ շրջանի արաբագիր պատմիչներից գետանց կամուրջների շինարարության մասին խոսում է նաև Իբն Քասիրը, թեև չի նշում, թե դրանք հատկապես որ բնակավայրերի մոտ են կառուցվել¹¹³: Ուշագրավ է, որ հայկական մի քանի աղբյուրների հավաստմամբ Կոստանդին կաթողիկոսը հանդիպել է Հուլադուին և օրհնել նրան: Վարդան Արևելցին, օրինակ, գրում է. «Յեօթն հարիւր և ութ թուին չոգաւ Հուլատուն յաշխարհն Միջագետաց...: Եկն առ նա պատրիարզն Հայոց, կաթողիկոսն, օրհնեաց զնա և սիրեցաւ 'ի նմանէ»¹¹⁴:

Երևում է՝ Հռոմկլայի մատուցներում Եփրատն անցնող մոնղոլական բանակը մեծ տպավորություն է թողել հռոմկլայեցիների վրա: Դրա մասին են վկայում 1260 թ. Հռոմկլայում Թորոս Ռոսլինի վրձնով ծաղկված մի Ավետարանում մոզերի երկրպագության տեսարանում մի քանի մոնղոլների պատկերները և կողքին արված «թաթարն երեկ այսար» գրառումը¹¹⁵: Այդ ձեռագրի հիշատակարանում ասվում է. «...աարտեցավ մատեանս... ի բոնակալութեան մեծի իշխանին Մանկու կոչեցելոյ եւ տիեզերակալին Հողայունին՝ եղբար նորա, ի թագաւորութեան աստուածասէր եւ բարեպաշտ արքային Հայոց Հեթմոյ, եւ ի ժամանակի յորում առաւ հոչակաւորն Հալպ, և ամենայն քաղաքք և ամուրք նորա»¹¹⁶:

Մոնղոլների 1260 թ. «ասորիքյան ռազմարշավի» մանրամասներին և մասնավորապես դրանում հայկական զորքերի և հայոց թագավորի ունեցած դերակատարության մասին մուսուլմանական մատենագրության մեջ պահպանված ուշագրավ տե-

¹¹² Տե՛ս *Ibn al-Fuwaṭī*, *al-Ḥawādīṭ al-ḡāmi'a*, §. 243-244: Երկի հեղինակության վիճելիության մասին տե՛ս *Rosenthal F.*, *Ibn al-Fuwaṭī* // *EI2*, vol. 3, p. 769.

¹¹³ *Ibn Kaṭīr*, *al-Bidāya*, §. 17, §. 395.

¹¹⁴ Տե՛ս *Վարդան*, Հաւաքումն, էջ 151: Հմմտ. *ՄԺ*, հտ. 2, էջ 143, 176: Տե՛ս նաև *Mutafian*, *L'Arménie*, p. 146; *Bayarsaikhan D.*, *The Mongols and the Armenians (1220-1335)*, Leiden-Boston, 2011, p. 137.

¹¹⁵ Տե՛ս Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի մատենադարան, *ձեռագիր № 251 (Ավետարան)*, թերթ 15^թ, ինչպես նաև *Mutafian*, *L'Arménie*, p. 147.

¹¹⁶ ՀԶԸ, ԺԳ դար, էջ 301:

ղեկություններին արդեն իսկ անդրադարձել ենք մեր հրապարակումներից մեկում¹¹⁷: Ընդամին, առաջ անցնելով պարզապես արձանագրենք մոնղոլների և մամլուքների այդ առաջին լուրջ ռազմական բախման արդյունքները: Չնայած արշավանքի սկզբում ունեցած համեմատական հաջողությանը՝ Հուլաղուփ ասորիքյան արշավանքը վերջնական հաշվով անփառունակ վախճան ունեցավ: Այսպես, նրա գլխավորած միացյալ ուժերը 1260 թ. գրավեցին Հալեպն ու հետո առանց դիմադրության նաև Դամասկոսը: Սակայն մոնղոլ Մեծ Խան Մանգուփի հանկարծահաս մահվան ու Կարակորումում նոր խանի գահակալման շուրջ ծագած վեճերի լուրը կասեցրեց մոնղոլական զորքերի հետագա առաջխաղացումը: Հուլաղուն, իր հետ վերցնելով մոնղոլական զորքերի մեծ մասը, հետ քաշվեց Իրան՝ Կարակորում մեկնելու մտադրությամբ: Իլ-խանը զորքերի մնացյալ մասն ու նորանվաճ տարածքների պահպանությունը վստահեց Քիթբուղա անունով իր զորավարին, ով շուտով որոշեց շարունակել արշավանքը դեպի Եգիպտոս: Մինչդեռ մոնղոլական բանակի նահանջը Եգիպտոսի սուլթան Սայֆ ալ-Դին Կուտուբին (կառ. 1259-1260 թթ.) հնարավորություն տվեց մամլուքներին դուրս հանել անակնկալության այն թմբիրից, որ անպարտելի համարվող մոնղոլների հաղթարշավն էր հարուցել, և շրջադարձ մտցնել իրադարձությունների ընթացքում: Նախահարձակ լինելով՝ Կուտուբը 1260 թ. Ռամադան ամսի 25-ին (1260 թ. սեպտեմբերի 3) Այն Ջալուտի («Գողիաթի աղբյուր») մոտ ջախջախիչ պարտության մատնեց մոնղոլներին և նրանց դաշնակցած ուժերին: Ինքը՝ Քիթբուղան, զոհվեց մարտում: Հուլաղուն ստիպված եղավ առժամանակ մոռանալ Ասորիքը գրավելու ձեռնարկների մասին, և ուշադրությունն ուղղել Ջոջիի ուլուսի (Ոսկե Հորդա) խան Բերքեի հետ պատերազմի եզրագծին հասած հարաբերություններին: Չնայած այս ամենին՝ Կուտուբը նույնպես չհասցրեց վայելել իր հաղթանակի պտուղները, քանզի նա դավադրության զոհ դարձավ, և

¹¹⁷ Տե՛ս Դանիելյան Գ., Մամլուքյան սուլթանության և Կիլիկյան Հայաստանի հակամարտության ակունքները (արաբական աղբյուրների քննություն) // ՎԷՄ համահայկական հանդես, № 1 (49), հունվար-մարտ, 2015, էջ 141-154:

նրա փոխարեն սուլթանության գահին բազմեց ալ-Չահիր Բայբարս ալ-Բունդուկտարին (կառ. 1260-1277 թթ.):

Դեպքերի այսօրինակ հանգուցալուծումը վտանգավոր իրավիճակ ստեղծեց Կիլիկյան Հայաստանի համար: Մոնղոլների հետ հաստատած դաշնակցությունը հնարավորություն տվեց հայոց արքային տարածքային ձեռքբերումներ ունենալ, և տիրանալ այն հողերին, որոնք մի ժամանակ Գող Վասիլին էին պատկանել¹¹⁸: Բայց Հուլաղուի նահանջից հետո նույն այդ դաշնակցությունը սեպ դարձավ հայ-մամլուքյան հարաբերություններում և վերահաս սպառնալիք հայոց թագավորության համար: Ըստ Հեթում արքայորդու «Ճաշոց»-ի (1286 թ.) հիշատակարանի՝ «... նա (Հեթումը- Գ.Դ.) ազնութեամբն Աստուծոյ եւ ձեռնտութեամբ Մուղալ զարուն էառ զմեծն Գերմանիկէ (Մարաշը- Գ.Դ.) եւ զՊեհեսնի»¹¹⁹: Այս նվաճումներով հայոց թագավորության սահմանները, փաստորեն, ընդարձակվեցին ընդհուպ մինչև Եփրատ գետը: Հայոց հայրապետական աթոռը՝ Հոռմկլան, ըստ այդմ առաջին անգամ աշխարհագրորեն միացավ Կիլի-

¹¹⁸ St' u Cahen Cl., *La Syrie*, p. 705; *Der Nersessian, The Kingdom*, p. 653; *Canard M., Le Royaume d'Armenie-Cilicie et de Mamelouks jusq'au traité de 1285* // *REA*, 1967, p. 222.

¹¹⁹ St' u Մատենադարանի ձեռ. № 979 («Ճաշոց»), թերթ 475ա, ինչպես նաև ՀԶՀ, ԺԳ դար, էջ 587: Հմմտ. Հեթում պատմիչ թաթարաց յեղեալ ի լատին օրինակէ ի հայ բարբառ ի ձեռն Հ. Մկրտիչ աթոռակալ վարդապետի Ազեբեան, Վենետիկ, 1842, էջ 46, ինչպես նաև վերջինիս հին ֆրանսերեն և լատիներեն քնագրերը *Hayton, La flor des estoires de la terre d'Orient* // *Recueil des Historiens des croisades, Documents Armeniens*, t. II, Paris, 1906, p. 171, 302: Հմմտ. Վահրամայ Բարունոյ Ոսանաւոր պատմութիւն Ռուբենեանց, ի լոյս ընծայեաց հանդերձ ծանօթութեամբք Կարապետ Վարդապետ Շահնազարեանց, Փարիզ, 1859, էջ 220: Այս մասին տե՛ս նաև *Cahen, La Syrie*, p. 705; *Boase, The Cilician Kingdom*, p. 26; *Микаелян, История*, с. 333; *Mutafian, L'Arménie*, p. 149; *Stewart, The Armenian Kingdom*, pp. 46-47, n. 10: Հուլաղուի արշավանքի արդյունքում հայոց թագավորության հսկողության տակ անցած քերդերի մասին տե՛ս նաև *al-Ğazarī, Hawadit*, ց. 1, ք. 149; Հմմտ. *al-Dahabī, al-Muhtār*, ք. 358; *Mufađđal, al-Nahğ* (14), ք. 558 [394]; *al-Nuwayrī, Nihāya*, ց. 31, ք. 157; *Ibn al-Dawādārī, Kanz*, ց. 8, ք. 341; *Ibn al-Furāt, al-Duwal*, ց. 8, ք. 155-156.

կիայի հայոց թագավորությանը¹²⁰: Այս իրավիճակը, սակայն, երկար չտևեց: Մամլուքների հակազդեցության առիթը դարձան 1262-1264 թվականների ընթացքում հավանաբար Հուլաղուի հորդորներով հայոց արքայի ձեռնարկած սադրիչ գործողությունները, որպիսիք էին Ասորիքի բնակավայրերի (Մասարթ Միսրին, Սարմին, ալ-Ֆուա, Այնթաբ և այլն) վրա նրա կատարած անհաջող ռազմարշավները¹²¹:

Արդեն 1264 թ. Ռամադան մասին լուր է հասնում սուլթանին ալ-Բիրայից, որ «Սարիմ ալ-Դին Բեքթաշ ալ-Չահիդին իր զորախմբով գրոհել է Հոռմկլայի դարպասները՝ մի քանի անգամ հարձակում գործելով նրա վրա»¹²²: Այս միջադեպը Իլ-խանությանը ենթակա տարածք ներխուժելու մամլուքների աղաջին փորձն էր, և ուշագրավ է, որ նրա թիրախը հենց երկու տերությունների սահմանագլխին գտնվող հայոց հայրապետական նստոցն էր: Մյուս կողմից սա ընդամենը նախերգանքն էր այն պատժիչ գործողությունների ու փորձության, որ նախապատրաստել էր սուլթան Բայբարսը հայոց արքայի համար՝ հարմար ժամանակի սպասելով: Մամլուք սուլթանի համբերությունը հավանաբար հատեց այն ժամանակ, երբ նույն 1264 թ. դեկտեմբեր - 1265 թ. փետրվար ամիսներին մոնղոլները (1 թուման, այն է՝ 10,000 հոգի) Դուրբայ (Durbāy) զորավարի գլխավորությամբ փորձեցին գրավել ռազմավարական խոշոր նշանակություն ունեցող ալ-Բիրա (Պիր) բերդամրոցը¹²³: Սմբատ Սպարապետի հաղորդմամբ՝ մոնղոլ իրամանատարը բերդի պաշարմանը մաս-

¹²⁰ Raphael, Muslim fortresses, p. 186.

¹²¹ Հեթումի այս արշավանքների մասին մանրամասն տե՛ս Canard M., Le Royaume, p. 224-227, ինչպես նաև Amitai, In the aftermath of 'Ayn Jalūt: The beginnings of the Mamlūk-Ilkhānid cold war // Al-Masāq: Journal of the Medieval Mediterranean, vol. 3.1, 1990, pp. 10-12 և Sawkat Ramaḍān ḥuḡḡa, al-'Ālaqāt bayna dawlat al-mamālik al-ūlā wa-dawlat ilḥāniyya fāris fi 'ahd al-sultān al-zāhir Baybars, 648-736 h. / 1250-1335 m., 'Amān, 2011, §. 195-196.

¹²² Ibn 'Abd al-zāhir, al-Rawḍ, §. 201; al-Maqrizī, al-Sulūk, ց. 1.1, §. 513.

¹²³ Տե՛ս Ibn 'Abd al-zāhir, al-Rawḍ, §. 221-225; Baybars al-Manṣūrī, Zubda, §. 95; al-Maqrizī, al-Sulūk, ց. 1.2, §. 523-525: Տե՛ս նաև Amitai, Mongols, pp. 112-113.

նակցելու կոչ արեց նաև հայոց արքային, ով այդ ժամանակ Հայտնության տոնն (հունվարի 6) էր տոնում Թեյ Համդուն բերդում: Վերջինս ընդառաջ գնաց նրա կոչին և հսկայական զորաբանակի գլուխ անցած՝ շարժվեց մոնղոլներին աջակցելու: «Եւ յայնժամ եհաս առ թագաւորն համբաւ դառնալոյն Տուրպային ի Պրէն, վասն պատճառի գալստեան սուլտանին Եգիպտոսի ի վերայ նորա, եւ թագաւորն լուեալ զայս դարձաւ ի տուն իւր»¹²⁴: Բացի սուլթանական զորքերի առաջխաղացումից՝ մոնղոլների այս անակնկալ նահանջի պատճառներից մեկն էլ հավանաբար եղել է Հուլաղուի մահվան (1265 թ. փետրվարի 8) մասին վրա հասած լուրը: Իլ-խանության գահին բազմեց վերջինիս որդին՝ Աբաղան (1265-1282 թթ.), ով Ոսկե Հորդայի հետ պատերազմով զբաղված լինելով՝ ստիպված եղավ նորից առժամանակ սառեցնել մոնղոլ-մամլուքյան հարաբերությունները: Եգիպտոսի սուլթանը սա պատեհ միջոց համարեց հայոց թագավորի հետ հարաբերությունները պարզելու համար: Մի քանի դեսպանագնացություններից հետո կողմերն այդպես էլ ընդհանուր հայտարարի չեկան. Հեթումը հրաժարվեց կատարել սուլթանի առաջադրած պահանջները՝ վախենալով մոնղոլների հակազդեցությունից: 1266 թ. մայիսին, երբ Բայբարսը պաշարման օղակի մեջ էր առել Սաֆաղը, նրան են ներկայանում «Սսի տիրոջ» դեսպանները նվերներով, որոնք նա մերժում է և հրաժարվում անգամ նրանց բերած նամակն ընդունելի¹²⁵: Ակնհայտ էր, որ հաջորդ անխուսափելի քայլով Եգիպտոսի տիրակալը

¹²⁴ **Սմբատ**, Տարեգիրք, 1956, էջ 243-244:

¹²⁵ **St'ū Al-Yūnīnī**, *Ḍayl Mirāt al-zamān, al-tab'a al-ūlā*, ց. 2, *Maṭba'at Dā'irat al-Ma'ārif al-'Uṭmāniyya, Ḥaydarābad*, 1955, ց. 343, ինչպես նաև **Ibn Taḡrī Birdī**, *al-Nuḡūm al-zāhira fi mulūk Miṣr wa-l-Qāhira*, ց. ց. 7, *bi-taḥqīq Muḥammad Ḥusayn Šams al-Dīn, Dār al-Kutub al-ilmīyya, Bayrūt*, 1992, ց. 125: Այս անհաջող դիվանագիտական առաքելություններից մեկի մասին հետաքրքրական վկայություն ունի Շաֆի իբն Ալին: Ըստ նրա՝ սուլթանին թանկագին նվերներով և հաշտության խնդրանքով ներկայացած երկու դեսպանների միջև վեճ է ծագել, և նրանցից մեկը դանակահարել է մյուսին, իսկ Բայբարսն էլ հրամայել է կախաղան բարձրացնել առաջինին: **St'ū Šāfi' ibn 'Alī**, *Ḥusn al-manāqib al-sirriyya al-muntaz'a min al-sira al-zāhiriyya, bi-taḥqīq 'Abd al-'Azīz ibn 'Abd Allāh al-Ḥawayṭir, al-Riyād*, 1989, ց. 157.

հարվածելու էր հայոց թագավորությանը: Եվ իսկապես, 1266 թ. օգոստոսին սուլթանը խոշոր արշավանք կազմակերպեց դեպի Կիլիկիա, որ դժնի հետևանքներ ունեցավ հայերի համար: Հակառակորդների միջև տեղի ունեցած Մառիի վճռական ճակատամարտում հայկական բանակը սուկայի պարտություն կրեց: Բայբարսի կենսագիր Իբն Աբդ ալ-Չահիրի վկայությամբ՝ «զորքերը մագցեցին լեռների գագաթները, և երբ կողմերը ճակատ ճակատի (բնագրում՝ waqa'at al-'ayn fi al-'ayn) ելան, գերի ընկավ արքան՝ պարոն Լևոնը, սպանվեց նրա եղբայրը (Թորոսը), ինչպես նաև հորեղբայրը: Գունդստաբլը (al-Kundāstabl)՝ մյուս հորեղբայրը, պարտություն կրեց ու նահանջեց»¹²⁶: Մամլուքյան բանակները իսկական ասպատակ սփռեցին երկրով մեկ՝ ավարառության ենթարկելով Մսիսը, Ադանան, Այասն ու այլ մեծ ու փոքր բնակավայրեր: Թագավորության համար այս բարդ ու օրհասական պահին մահկանացուն կնքեց Հռոմկլայի հայոց կաթողիկոս Կոստանդինը: Վարդան Արևելցին նրա վախճանի մասին այսպես է արտահայտվում. «Անցաք մեք ընդ հուր և ընդ ջուր զանազան փորձանաց, այրիչ և խեղդիչ որոգայթից, որ և ճաշակեաց իսկ և 'ի թանձրացեալ և զմոսեալ վերջնոյ լեղոյս, մերձ 'ի կատար կենացն տեսոնաբար, զդղրդումն թագաւորութեան մերոյ, զսուր և գերութիւն իւրական ծննդեան սննդեան աշխարհին, մտեալ 'ի փորձ հնցի գեհենահոտ հեղոյ բորբոքման, ձեռասուն արքայորդեացն կորստեան, որք մանաւանդ մերձ բերին զօրհաս նորա»¹²⁷: Այնուամենայնիվ, որդուն գերությունից ազատելու համար հայոց արքան բանակցություններ սկսեց սուլթանի հետ: Տևական դիվանագիտական խուսանավումներից հետո Հեթումն ի վերջո ընդունեց Բայբարսի պահանջները: 1268 թ. նորանվաճ Անտիոքում կնքվեց հաշտության հայ-մամլուքյան պայմանագիրը: Որդու ազատության դիմաց Հեթումը ոչ միայն մոնղոլական գերությունից ազատեց սուլթանի՝

¹²⁶ St' u Ibn 'Abd al-Zāhir, al-Rawḍ, §. 260: Հմմտ. 'Izz al-Dīn ibn Šaddād, al-'Aḥq, ց. 1.2, §. 343; Baybars al-Manšūrī, Zubda, §. 105; Սմբատ, Տարեգիրք, 1956, էջ 247:

¹²⁷ Վարդան, Հաւաքումն, էջ 164:

Սունկուր ալ-Աշկար անունով մի մտերիմ մամլուքի, այլ նաև պարտադրվեց զգալի տարածքային զիջումների գնալ և սուլթանությանը վերադարձնել մի շարք կարևոր սահմանային բերդեր (Բեհեսնա, Դարպասակ, Մարզ[ու]բան, Ռաբան, ալ-Ջարբ և Շիհ ալ-Հադիդ), որ գրավել էր 1260 թ. մոնղոլական արշավանքի ժամանակ¹²⁸: Չնայած հաջորդած երկու տասնամյակներում այս բերդերը քանիցս հայերի ու մամլուքների կողմից ձեռքից ձեռք անցան, այս տարածքային կորուստները, փաստորեն, վերստին կտրեցին Հոռմկլայի հաստատուն տարածքային կապը թագավորության տարածքներից¹²⁹: Ահա այսպիսի արդյունք ունեցավ հայ-մոնղոլական դաշնակցությունն ու Հուլաղուի ասորիքյան արշավանքներին Հայոց արքայի բերած մասնակցությունը: Հենց սա է ակնարկում մամլուք պատմիչ Իբն Բասիրը, երբ գրում է, թե այդ արշավանքով մամլուքները «նրանցից (հայերից) հանեցին իսլամի և մուսուլմանների վրեժը: Եվ որովհետև նրանք ամենավնասակարն էին մուսուլմանների համար մոնղոլների ժամանակներում: Երբ նրանք գրավել էին Հալեպն ու այլ քաղաքներ, մեծաթիվ ու մեծաքանակ մուսուլման կանանց և երեխաների էին գերեվարել, իսկ դրանից հետո էլ Հուլաղուի օրոք [պարբերաբար] ասպատակում էին մուսուլմանների երկրները»¹³⁰:

1268 թ. սկզբներին Մսիսում հայոց նոր կաթողիկոս ընտրվեց Հակոբ Կլայեցին՝ «այր սուրբ և առաքինի և յոյժ գիտնական»¹³¹: Նույն տարվա հունիսին Լևոն արքայորդու ազատ արձակումից հետո Հեթում արքան վճռեց հրաժարվել գահից և, ինչպես Բար Հեբրեոսն է վկայում, Աբաղա իլ-խանի համաձայնությամբ երկրի փաստական կառավարումը զիջեց որդուն¹³²: Ընդունելով կրոնավորական Մակար անունը՝ նա վանք քաշվեց, որտեղ և ըստ հայկական աղբյուրների՝ մահացավ 1270 թ.

¹²⁸ Տե՛ս *al-Yūnīnī*, *Ḍayl*, ց. 2, §. 385; *Abū al-Fidā'*, *al-Muhtaṣar*, ց. 4, §. 5; *'Izz al-Dīn ibn Ṣaddād*, *al-A'lāq*, ց. 1, §. 119: Տե՛ս նաև *Cahen*, *La Syrie*, p. 718.

¹²⁹ *Raphael*, *Muslim Fortresses*, p. 186.

¹³⁰ Տե՛ս *Ibn Kaṭīr*, *al-Bidāya*, ց. 17, §. 466.

¹³¹ **Սամուէլ Անեցի**, ժամանակագրութիւն, էջ 253:

¹³² Տե՛ս *Bar Hebraeus*, *Chronography*, p. 448.

հոկտեմբերի 28-ին¹³³: Սրան հակառակ՝ մամլուքյան պատմիչները հայոց արքայի մահվան այլ ամսաթիվ են տալիս՝ նոյեմբերի 7-ը: Նրանցից ալ-Նուվայրիի մոտ կարդում ենք. «Այս (հիջրայի 669) թվականին մահացավ Կոստանդինի որդի Հեթումը՝ Սսի տերը, և Ռաբի առաջին ամսի 27-ին (նոյեմբերի 13) ստացվեց այդ մասին նրա որդի Լևոնի տեղեկացումը, որ Թիշրին ալ-ավվալ ամսի 25-ին (հոկտեմբերի 25) իր հայրը կրոնավոր էր դարձել և վանք քաշվել թողնելով աշխարհիկ գործերը: Նա մահացել էր Ռաբի առաջին ամսի 21-ին (նոյեմբերի 7)՝ մայրամուտին: [Նամակի] բովանդակության մեջ նա սուլթանական ցավակցությունն էր հայցում նրա համար: Նա (սուլթանը) գրեց նրան՝ ցավակցելով հոր [մահվան] համար, ինչպես նաև շնորհավորելով արքա դառնալու կապակցությամբ և քաջառողջություն մաղթելով (iṭābat qalbīhi)¹³⁴:

1271 թ. հունվարի 6-ին Տարսնի Սուրբ Սոֆիա տաճարում Հակոբ կաթողիկոսը Լևոնին օժեց Կիլիկյան Հայաստանի թագավոր՝ Լևոն Բ (1271-1289 թթ.)¹³⁵: Լինելով Կոստանդին Բարձրաբերդցու համախոհն ու օգնականը՝ Հակոբ Ա-ն հաջողությամբ շարունակել է վերջինիս գործը՝ որպես հայ եկեղեցու ինքնանկախության, նրա ավանդույթների անձնվեր պաշտպան: Անպատասխան թողնելով 1271 թ. Լուզդոնի (Լիոն) երկրորդ տիեզերական ժողովին մասնակցելու Հռոմի Գրիգոր Ժ պապի հրա-

¹³³ Տե՛ս ՄԺ, հտ. Բ, էջ 167 (արաբագիր հեղինակներից բերված ամսաթվերը սխալ են փոխարկված); ՀԶԸ, ԺԳ դար, էջ 409: Հմմտ. Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 252; Սամուէլի Անեցոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, յառաջաբանով, համեմատութեամբ, յաւելումներով եւ ծանօթութիւններով Արշակ Տէր-Միքէլյանի, Ս. Էջմիածնի տպարան, Վաղարշապատ, 1892, էջ 222 («Համառոտ պատմութիւն Ռուբինեան իշխանաց» քնազիրը); Bar Hebraeus, Chronography, p. 449: Տե՛ս նաև Տէր-Պետրոսյան, Խաչակիրները, հտ. Բ, էջ 296 և Mutafian, L'Armenie, p. 160, n. 7:

¹³⁴ Տե՛ս al-Nuwayrī, Nihāya, ց. 30, ֆ. 111: Հմմտ. Ibn 'Abd al-zāhir, al-Rawḍ, ֆ. 374; Baybars al-Manṣūrī, Zubda, ֆ. 132, ինչպես նաև նոյնի՝ al-Tuhfa, ֆ. 72; Abū al-Fidā', al-Muḥtaṣar, ց. 4, ֆ. 6-7; al-Maqrizī, al-Sulūk, ց. 1.2, ֆ. 590; al-'Aynī, 'Iqd, ց. 2, ֆ. 88.

¹³⁵ Բաբունի, Ուտանաւոր պատմութիւն, էջ 228:

վերը՝ նա «խուսափած է եկեղեցական միութեան վտանգէն, և ազատ և անխառն պահած է հայադաւանութեան սկզբունքը»¹³⁶:

Լևոնի թագավորությունը չպարպեց հայ-մամլութեան հարաբերություններում առկա լարվածությունը: Մոնղոլների հետ շարունակվող գործակցությունը և Արևմուտքի հետ չդադարող բանակցությունները, Մերձավոր Արևելքի առևտրատնտեսական հարաբերություններում հայոց Այաս նավահանգստի դերակատարության շեշտակի աճը, Բայբարսին կանգնեցրին դեպի Կիլիկիա նոր արշավանք կազմակերպելու մտքի առջև: Այս ընթացքում վտանգավոր տեղաշարժեր նկատվեցին նաև երկրի ներքաղաքական իրավիճակում, երբ մի շարք լատինամոլ իշխաններ դավեցին Լևոն Բ-ի դեմ և փորձեցին զավթել իշխանությունը¹³⁷:

Ըստ Սմբատ Սպարապետի՝ Բայբարսը փորձեց Կիլիկիա ներխուժել արդեն 1271 թ., բայց սուլթանին ընդառաջ ուղարկված դեսպանները կարողացան համոզել նրան հետ վերադառնալ¹³⁸: Մինչդեռ Լևոնի և Բայբարսի առաջին բախումն արաբական աղբյուրները թվագրում են 1273 թվականով, երբ մամլուքները Հալեպի էմիր Հուսամ ալ-Դին ալ-Այնթաբիի գլխավորությամբ գրավեցին Ասորիքի սահմանագլխին գտնվող Քայնուկ (Kaynūk կամ al-Hadaṭ al-Ḥamrā') բերդամրոցը¹³⁹: Բայց սա ընդամենը միջադեպ էր՝ համեմատած այն հզոր հարվածի հետ,

¹³⁶ Օրմանեան, Ազգապատում, հր. 2, սյուն 1683-1684: Հմմտ. Զինո Արիզգի, Հակոբ Կլայեցին Լուկկայում // ՊԲՀ, 1963, հ. 1, էջ 107-114:

¹³⁷ Bar Hebraeus, Chronography, p. 449.

¹³⁸ Սմբատ, Տարեգիրք, 1956, էջ 253: Հմմտ. Amitai-Preiss, Mongols, pp. 133-134.

¹³⁹ Ըստ Իբն Արդ ալ-Չահիրի՝ սրա պատճառն այն էր, որ բերդի բնակիչները պարբերաբար հարձակում էին գործում այդ կողմերով անցնող վաճառականների և դեսպանների (quṣṣāḍ) վրա: Սուլթանն այս առիթով գրեց Սսի տիրոջը, բայց նամակագրությունն օգուտ չտվեց: Հայերն ըստ նրա մոնղոլական գլխարկներ՝ sarāqūḡ էին հազնում մոնղոլների նմանվելու համար և հարձակվում քարավանների վրա: Տե՛ս Ibn 'Abd al-zāhir, al-Rawḍ, s. 417: Հմմտ. Amitai-Preiss, Mongols, pp. 131-132; Canard, Le Royaume, p. 237-238.

որ պիտի հասցնէր Բայբարը հայոց թագավորությանը¹⁴⁰: Մամ-
լուքյան զորքերը Կիլիկիա ներխուժեցին 1275 թ. գարնանը՝ հրի
ու սրի մատնելով երկիրը: Սուկալի ավարառության ենթարկ-
վեցին Մսիսը, մայրաքաղաք Սիսը, Տարսունը, Այասը և այլ մեծ
ու փոքր բնակավայրեր: Նույն թվականի ապրիլին մամլուքյան
զորքը հետ քաշվեց Կիլիկիայից և ճամբար խփեց Հարիմի մոտ՝

¹⁴⁰ Բար Հեբրեոսի պնդմամբ՝ նոր պատերազմի բռնկման պատճառը եղել է Տարսուն եկած մի խումբ սուֆի դերվիշների (faqir) ձերբակալությունը, ովքեր ուխտի էին եկել խալիֆա Մամունի գերեզմանին: Ըստ ասորի մատենագրի՝ կասկածներ կային, թե նրանց մեջ կարող է լինել ծպտված Բայբարը: Տե՛ս **Bar Hebraeus**, *Chronography*, p. 452: Մամլուքյան մատենագիրները մի քանի տարբեր պատճառներ են նշում այս արշավանքի մեկնարկի համար: Ըստ Իբն Աբդ ալ-Չահիրի՝ «Սսի տերը դադարել էր ուղարկել իր վրա դրված հարկերը, և բացի այդ խախտել էր հաշտության այն պայմանները, ըստ որոնց՝ նա չպետք է վերակառուցեր և ամրացներ ոչ մի ամրոց: Նա նաև սկսել էր հավաստի տեղեկություններ չտրամադրել, ինչը որ [նույնպես] պարտավորվել էր անել իր տված երդմամբ: Նա [նաև] sarāqūց էր հագնել տալիս հայերին, և դրանցով ահաբեկում քարավաններին՝ պնդելով, թե նրանք խանի զորքերից են»: Տե՛ս **Ibn 'Abd al-ḏāhir**, *al-Rawḏ*, §. 432: Հմմտ. **al-Nuwayrī**, *Nihāya*, ց. 30, §. 216: Առավել հիմնավոր մի պատճառ էլ նշում է Իբն Շադդադը: Ըստ նրա՝ եգիպտոսի սուլթանին Սիս արշավելու միտքը տվել է Իկոնիայի սուլթանության վեզիր Մուլին ալ-Դին Փարվանան: Վերջինս մոնղոլներից գաղտնի նամակագրության մեջ էր Բայբարսի հետ՝ խոստանալով նրան Ռումի սուլթանության տեր դարձնել, եթե միայն վերջինս արշավի Իկոնիա: Նա, սակայն, շուտով մտափոխվում է և խնդրում սուլթանին մեկ տարով հետաձգել արշավանքը՝ սպասելով քիչ ավելի պատեծ պահի: Նա ըստ այդմ կրկին ծածուկ նամակ ուղարկեց Բայբարսին՝ ասելով. «Այս տարի արշավիր Սսի վրա, և հաջորդ տարի ես քեզ համար կնվաճեմ [Ռումի] երկիրը, եթե Աստված կամենա»: Տե՛ս **'Izz al-Din ibn Ṣaddād**, *Tārīḥ al-Malik al-ḏāhir*, (*Die Geschichte des Sultans Baibars von 'Izz ad-din Muḥammad b. 'Alī b. Ibrāhīm b. Ṣaddād* (st. 684/1285), Herausgegeben von Ahmad Hutait, Franz Steiner Verlag, Wiesbaden, 1983), §. 107: Հմմտ. **Ibn al-Dawādārī**, *Kanz*, ց. 8, §. 177-178: Փարվանայի մասին մանրամասն տե՛ս **Cahen** Cl., *La Turquie pré-ottomane* (*Varia Turcica VII*), Institut Français d'Études Anatoliennes, Istanbul, 1988, pp. 256-270, ինչպես նաև **Hillenbrand** C., *Mu'in al-Din Parwāna: The Servant of Two Masters? // Miscellanea Arabica et Islamica: Dissertationes in Academia Ultrajectina prolatae anno MCMXC*, ed. by F. De Jong, Peeters Press, Louvain, 1993, pp. 267-274.

ծեռք բերված հարուստ ավարը բաժանելու¹⁴¹: Հաջորդ տարում՝ 1276 թ., մամլուքները (թուրքմենների հետ դաշնակցած) ևս մի հարձակման են ենթարկում Կիլիկիան այս անգամ արդեն Մարաշի կողմից, որը հետ մղելու համար Լևոն արքայի ուժերն այս անգամ բավականացնում են, չնայած որ Սարվանդիքարի մոտ տեղի ունեցած վճռական ճակատամարտում զոհվում են Սմբատ Գունդստաբլն ու այլ ազնվականներ¹⁴²:

1277 թ. կասկածելի հանգամանքներում Բայբարս ալ-Բունդուկտարին կնքեց իր մահկանացուն, և նրա փոխարեն սուլթանության գահին նստեց տակավին երիտասարդ որդին՝ ալ-Սաիդ Բարաքա Խանը (կառ. 1277-1279 թթ.): 1279 թ. սուլթանը եգիպտական զորքերը շարժեց դեպի Դամասկոս: Պալատական երկու ազդեցիկ էմիրներից՝ Սայֆ ալ-Դին Կալավուն ալ-Ալֆիհի (ապագա սուլթանը) և Բադր ալ-Դին ալ-Բայսարիի հնարավոր խարդավանքից զգուշանալով՝ նա նույն թվականի գարնանը նրանց ուղարկեց Կիլիկիայի դեմ արշավանքի, որպեսզի գոնե առժամանակ հեռու պահի քաղաքական հարթակից և այդ ընթացքում իր անձնական մամլուքների (al-hāṣṣakiyya) օգնությամբ ամրացնի իր դիրքերն ու վերադառնալուն պես զրկի նրանց իգթā-ներից (կալվածքներից) ու ձերբակալի: Նրանցից յուրաքանչյուրին սուլթանը եգիպտական և ասորիքյան զորքերից տրամադրեց 10 հազարական զինվոր¹⁴³: Կալավունին հանձնարարվեց ասպատակել Սիսը, իսկ մյուսին՝ ալ-Բայսարիին, գրավել Հոռմկլայի հայոց կաթողիկոսարանը¹⁴⁴: «Նրանք շարժվեցին

¹⁴¹ St' u Canard, Le Royaume, p. 238-241.

¹⁴² St' u Bar Hebraeus, Chronography, p. 454: Հմմտ. ՀԶԸ, ԺԳ դար, էջ 463; Սամուէլ Անեցի, Հավաքմունք, էջ 223 («Համառոտ պատմութիւն Ռուբինեան իշխանաց» քննադիրը):

¹⁴³ Al-Nuwayrī, Nihāya, ^{հոգ.} 30, §. 247; Ibn al-Dawādārī, Kanz, §. 8, §. 225.

¹⁴⁴ St' u 'Izz al-Dīn ibn Sāddād, al-A'lāq, §. 1.2, §. 348-349; Baybars al-Manṣūrī, Zubda, §. 166-167, ինչպես նաև նույնի՝ al-Tuḥfa, §. 88 և Muḥtār al-aḥbār, §. 66; St' u նաև al-Yūnīnī, Dayl, §. 3, §. 297; Ibn al-Furāt, al-Duwal, §. 7, §. 140-141; Amitai-Preiss, Mongols, p. 180.

Սսի ուղղությամբ՝ դժկամությամբ լցված» (wa-fi nufūsihim min zalika ihn),-այս առիթով գրում է ալ-Մակրիզին¹⁴⁵:

Այսպիսով, պայմանավորված լինելով սուլթանության վերնախավում տիրող քաղաքական մթնոլորտով՝ այս արշավանքն իրականում նվաճողական նպատակներ չէր հետապնդում¹⁴⁶: Սուլթանը, էմիրներին երկու տարբեր ուղղություններով ուղարկելով, մտադիր էր միայն ժամանակ շահել իր մտադրությունները կենսագործելու համար¹⁴⁷:

Ըստ Իբն Շադդադի՝ նախ ալ-Բայսարին օղակեց Հռոմկլան: Մի քանի օր անց մամլուք էմիրը նամակ հղեց սուլթանին՝ հաղորդելով, որ «Սսի տերը» դեսպաններ է ուղարկել իր մոտ և իր երկիրը չասպատակելու դիմաց 200 հզ. դիրհամ է առաջարկել: Այս բանից հետո սուլթանի կարգադրությամբ ալ-Բայսարին թողնեց Հռոմկլան և միացավ Կալավունի տրամադրության տակ եղած զորքերին: Էմիրները ավարառության ենթարկեցին հայոց թագավորությունը: Նրանք Կիլիկիայում մնացին մոտ 13 օր՝ հիջրայի 678 թվականի Մուհարրամ ամսի 22-ին (1279 թ. հունիսի 4) հասնելով մինչև Տարսոն, որից հետո հսկայական ավարով վերադարձան Դամասկոս¹⁴⁸:

Հռոմկլայի պաշարման մասին ամենամանրամասն տեղեկությունները հաղորդում է Բար Հեբրեոսը: Ասորի մաֆրիանի վկայությամբ՝ եգիպտացիները՝ ընդհանուր հաշվով 9 հազար հեծյալ և 4 հազար հետևակ, Հռոմկլան գրոհեցին 1279 թ. մայիսի 19-ին: Մամլուք զորապետը 2 դեսպան (մեկը՝ արաբ, մյուսը

¹⁴⁵ St' u al-Maqrīzī, ց. 1.2, ց. 650.

¹⁴⁶ Ալ-Բիրզալին շատ հակիրճ է խոսում այս արշավանքի մասին՝ գրելով միայն, թե այն «ավարառության և ասպատակության» նպատակ էր հետապնդում: St' u al-Birzālī, al-Muqtafi, ց. 1, ց. 445: Կալավունին նվիրված իր կենսագրության մեջ Շաֆի իբն Ալին գրում է, թե եգիպտական և ասորիքյան զորքերը նպատակ ունեին «գրավել Հռոմկլան և ասպատակել Սսի երկիրը»: St' u Šāfi' ibn 'Alī, al-Faḍl al-ma'īūr fi sirat al-sultān al-Malik al-Manšūr, bi-tahqīq 'Umar 'Abd al-Salām al-Tadmuri, al-Maktaba al-'Ašriyya, Bayrūt, 1998, ց. 40.

¹⁴⁷ Մամլուքյան պատմիչներից միայն Շաֆի իբն Ալին է, որ հաղորդում է, թե իբր հայկական տարածքների վրա հարձակվելու գաղափարը ալ-Բարաքա Խանին առաջարկել է Կալավունը: St' u Šāfi' ibn 'Alī, al-Faḍl, ց. 40.

¹⁴⁸ 'Izz al-Dīn ibn Šaddād, al-A' lāq, ց. 1.2, ց. 348-349.

հայ) ուղարկեց կաթողիկոսի մոտ՝ ասելով, որ սուլթանը պահանջում է խաղաղությամբ հանձնել բերդը: Բայսարին խոստացավ, որ կաթողիկոսին և նրա բոլոր հոգևորականներին դրա դիմաց թույլ կտրվի Երուսաղեմ գնալ, որտեղ նրանց համապատասխան կալվածք (գյուղ) կհատկացվի: Ալ-Բայսարին որպես երկընտրանք առաջարկում էր նաև Կիլիկիա գնալ, և այդ դեպքում նույնպես նրան մեծ պատվով կճանապարհեն: Հայոց եպիսկոպոսապետի պատասխանը շատ հակիրճ էր. «Ես կպայքարեմ մինչև մահ, քանզի չեմ կարող միաժամանակ հավատարիմ լինել թե՛ Աստծուն, և թե՛ արքային»¹⁴⁹: Երկխոսության եզրեր չգտնելով՝ էմիր ալ-Բայսարին հրամայեց գրոհել Հռոմկլան և այն ուժով վերցնել: Համառ պայքարից հետո ալ-Բայսարիին ի վերջո հաջողվեց գրավել քաղաքը, բայց նա անկարող եղավ վերցնել Հռոմկլայի միջնաբերդը, որտեղ որ ամրացել էր ամբողջ բնակչությունը: Մամլուք հրոսակները հինգ օր շարունակ ավարառության ենթարկեցին քաղաքն ու նրա արվարձանները և հրոճարակ դարձրին, ոչնչացրին այգիները և անգամ քաղաքի բաղնիքները քանդեցին և տեղափոխեցին Հալեպ¹⁵⁰:

¹⁴⁹ Տե՛ս **Bar Hebraeus**, *Chronography*, p. 461.

¹⁵⁰ Նույն տեղում: Այստեղ «Հալեպ» թարգմանվածը բնագրի *Birā* է (Բերիա), որ Անգուս Սոյուարտը նույնացրել է ալ-Բիրայի (Պիր) հետ (**Stewart**, *The Armenian Kingdom*, p. 53), որ այս ժամանակագրության մեջ թերևս միշտ *al-Birā* ձևով է տրված: Բար Հեբրեոսի երկի իր արաբերեն թարգմանության մեջ Իսհակ Արմալան *Birā*-ն նույնպես Հալեպ է թարգմանել: Տե՛ս **Ibn al-ʿIbrī**, *Tarih al-zamān, tarḡamat Ishāq Armala, Dār al-Maʿrif, Bayrūt*, 1991, §. 339: Ասորի մատենագրի վկայությամբ՝ այն ժամանակ, երբ էմիր ալ-Բայսարին պաշարել էր Հռոմկլան, սուլթան ալ-Մալիք ալ-Սաիդը նամակ է ստացել Ռումի սուլթանության թուրքմեն կարամաններից (*bar Karaman*) այն մասին, թե իրենք ուզում են զորք ուղարկել մամլուք սուլթանին, բայց չեն համարձակվում անցնել հայոց թագավորության տարածքով, որովհետև վախենում են մոնղոլներից և հայոց թագավորից: Սուլթանի կարգադրությամբ ալ-Բայսարին դիմեց *Առնին* և վերջինիս համաձայնությամբ կարամաններին ուղեկցեց մինչև Ասորիք՝ ճանապարհին 15 օր շարունակ թալանի ենթարկելով այժմ արդեն Կիլիկիայի հայկական բնակավայրերը՝ մասնավորապես Անավարզան: Տե՛ս **Bar Hebraeus**, *Chronography*, pp. 461-462: Տե՛ս նաև **Stewart**, *The Armenian Kingdom*, p. 53.

Հատկանշական է, որ Կալավունի և ալ-Բայսարիի արշավանքի նկարագրություններում չկան վկայություններ հայ-մամլուքյան ռազմական բախման վերաբերյալ: Ակնհայտ է, որ Հայոց արքան, ինչպես 1275-1276 թթ. արշավանքի ժամանակ, այնպես էլ այս դեպքում, չունենալով թշնամուն դիմագրավելու բավարար ուժեր և ոչ էլ թիկունքում ունենալով մոնղոլների աջակցությունը՝ պարզապես նախընտրել էր ամրանալ իր բերդերից մեկում՝ սպասելով մամլուքների հեռանալուն:

Իրենց «առաքելությունը» ավարտին հասցրած՝ մամլուք էմիրները հետդարձի ճանապարհ վերցրին դեպի Դամասկոս՝ առժամանակ իջևանելով Մարջում¹⁵¹: Այստեղ նրանք տեղեկացան ալ-Բարաքա Խանի իրական մտադրությունների և նրա ինքնապաշտպանության կողմից իրենց դեմ կազմակերպվելիք դավի մասին: Միավորելով իրենց ուժերը՝ էմիրները գահընկեց արեցին ալ-Բարաքային՝ նրա փոխարեն Կալավունի խնամակալությամբ գահ բարձրացնելով Բայբարսի մյուս որդուն՝ մանկահասակ ալ-Ադիլ Սուլամիշին: Մոտ երեք ամիս անց վերջինս նույնպես հեռացվեց իշխանությունից, և սուլթանության միահեծան տիրակալ հռչակվեց Կալավունը՝ ալ-Մալիք ալ-Մանսուր գահակալական անունով (կառ. 1279-1290 թթ.):

Կահիրեում տեղի ունեցած հեղաշրջումն ու Կալավունի գահակալությունը միանշանակորեն չընդունվեց սուլթանության ողջ տարածքում: Դամասկոսի էմիր Սունկուր ալ-Աշկարը, ով հայոց արքայազն Լևոնի հետ փոխանակվելուց ի վեր մեծ ազդեցություն էր ձեռք բերել մամլուքյան վերնախավում, հրաժարվեց ճանաչել Կալավունի իշխանությունը և իրեն ինքնիշխան տիրակալ հռչակեց: Ճիշտ է՝ Կալավունին հաջողվեց սանձել ապստամբ էմիրին և փախուստի մատնել, բայց այս դեպքերը անկայուն իրավիճակ ստեղծեցին Ասորիքում՝ նախապայմաններ ստեղծելով մոնղոլների նոր ասորիքյան արշավանքի համար: Անկարող լինելով հետ բերել կորցրածը՝ Սունկուր ալ-Աշկարն ինքը նամակագրություն հաստատեց Աբաղայի հետ՝ հրավիրելով Ասո-

¹⁵¹ Տե՛ս al-Maqrizī, al-Sulūk, ց. 1.2, ք. 652.

րիքը նվաճելու¹⁵²: Այդ մասին ծրագրերն, անշուշտ, Իլ-խանության քաղաքական օրակարգում Սունկուր ալ-Աշկարի դիմումից դեռ շատ առաջ է, ինչ խմորվում էին՝ հարմար ժամանակի ակնկալիքով: Մոնղոլական վերահաս վտանգին ընդառաջ՝ խուսափելով երկրի վիճակի հետագա ապակայունացումից՝ սուլթանն այնուամենայնիվ շուտով նախընտրեց հաշտության եզրեր գտնել Սունկուրի (և այլ անհնազանդ էմիրների) հետ և նրան տվեց մի քանի քաղաքներ ու ամրոցներ:

Ինչպես 1260 թ. Հուլիոսի օրոք, այս անգամ ևս Կիլիկիայի հայկական իշխանությունները գործուն մասնակցություն ունեցան Աբաղայի ձեռնարկած մոնղոլական արշավանքին: Արդեն 679 թ. Ջումադա ալ-ախիր ամսին (1280 թ. հոկտեմբերին) մոնղոլները ներխուժեցին Հյուսիսային Ասորիք և գրավեցին Այնթափը, Բաղրասն ու Դարպսակը: Բայբարս ալ-Մանսուրիի վկայությամբ՝ «Սսի տերը» նրանց միացավ հենց Դարպսակի ճանապարհով¹⁵³: Նույն ամսի կեսերին մոնղոլական զորքն արդեն Հալեպի մատուցներում էր: Վերջինիս բնակչության մեծ մասը, լսելով թշնամական զորքերի առաջխաղացման մասին, լքել էր քաղաքը: 1260 թվականի անցքերից քսան տարի անց մոնղոլները վերստին ավերածության ու թալանի ենթարկեցին քաղաքը, որոնց կազմակերպման մեջ մեղադրվողների թվում մամուլք մատենագիրները կրկին առանձնացնում են Հայոց արքային¹⁵⁴: Հալեպի գրավումից հետո մոնղոլները թողեցին քաղաքն ու վերադարձան իրենց երկիրը՝ ձմեռելու: Մոնղոլները վերադարձան մեկ տարի անց. արշավանքի ընդհանուր ղեկավարությունը ստանձնեց Աբաղայի եղբայրը՝ Մանգու-Թեմուրը: Բացի Լևոն արքայի զորաջոկատներից, մոնղոլական զորքերը համալրվեցին նաև Վրաց թագավոր Դեմետրեի, Ռումի Սելջուկյան սուլթանության, ինչպես նաև ֆրանկների ուժերով: Հակառակորդների վճռական բախումը տեղի ունեցավ 1281 թ. հոկտեմբերին Հոմսի մերձակայքում: Չնայած կռվի սկզբում հաջողությունը դաշնա-

¹⁵² Տե՛ս Bar Hebraeus, Chronography, p. 463.

¹⁵³ Baybars al-Manşūrī, Zubda, §. 185.

¹⁵⁴ Տե՛ս, օրինակ, Ibn Haldūn, al-'Ibar, §. 5, §. 397.

կիցների կողմն էր, այնուամենայնիվ ճակատամարտի վերջնական ելքը վճռվեց հօգուտ մամլուքների¹⁵⁵: Այս ծանր պարտությունից հետո Աբաղա խանն այլևս չկարողացավ համախմբել իր ուժերը: Չաղաթայի ուլուսից եկող վտանգները վերջնականապես ի չիք դարձրին նոր արշավանք կազմակերպելու և «ոևանջի» հասնելու նրա հույսերը: 1282 թ. Աբաղան մահացավ, և նրա փոխարեն Իլ-խանության գահին նստեց Թաքուդարը (1282-1284 թթ.), ով իսլամ ընդունելով՝ ընդունեց Ահմադ անունը և փորձեց հարթել հարաբերությունները մամլուքների հետ:

Մոնղոլների հերթական անհաջողությունը, իլ-խանի կրոնափոխությունը, Արևմուտքից օգնություն ստանալու անհեռանկարայնությունը՝ Կիլիկյան Հայաստանին վերստին կանգնեցրին մամլուքյան «դամոկլյան սրի» առջև: Սուլթանի պատժիչ գործողությունները երկար սպասել չտվեցին. Հոմսի ճակատամարտից երկու տարի անց Կալավունը որոշեց հաշվեհարդար տեսնել հայոց արքայի հետ մոնղոլներին ցույց տված նրա աջակցության համար: Իբն Աբդ ալ-Չահիրը այդ մասին գրում է. «Մեր տեր սուլթանը Հալեպի փոխարքային կարգադրել էր արշավանք ուղղել Սսի երկրի դեմ՝ նրա տեր Լայֆունին ըստ արժանվույն պատժելու այն բանի համար, ինչը որ նա Հալեպում էր գործել, երբ հրոսել էր [Հալեպի] մզկիթի վրա ու հրկիզել այն և այլն»¹⁵⁶: Մամլուքյան արշավանքի թիրախում հայտնվեց հատկապես ծովափնյա Այասը, որը ենթարկվեց սուկալի ավարառության և ավերածությունների¹⁵⁷: Մի հիշատակարանում ասվում է. «Եւ հասեալ ի քաղաքն Եգիոյ, որ է Այաս, և եղև յանգարծակի շրջաբնակաց ոմանց Իսմաէլացոց, որ յայսմ ժամանակի զգուէին գերկիրն, արշաւեցին ի քաղաքն Այաս և որ շուրջ զնովաւ գեաղք և աւանք, զբազումս գերեցին, և զայլս սրախոխող արարին»¹⁵⁸: Հայերը պարտություն են կրում նաև Իս-

¹⁵⁵ Ճակատամարտի ամենահանգամանալից նկարագրությունը տվել է Ռ. Ամիտայը: *Sb'u Amitai-Preiss, Mongols*, pp. 187-201.

¹⁵⁶ *Ibn 'Abd al-zāhir, Tašrif al-ayyām wa al-'uṣūr fi sirat al-Malik al-Manṣūr, bi-tahqiq Murād Kāmil, al-Qāhira, 1961, ք. 31.*

¹⁵⁷ *Sb'u Անդ, ք. 67; Հմմտ. Baybars al-Manṣūrī, Zubda, ք. 240.*

¹⁵⁸ ՀԶԸ, ԺԳ դար, էջ 529:

կանդարունի մոտ (Bab al-Iskandarun, որ պատմական Ալեքսանդրետտան է) և Թել Համդունում: Մամլուք պատմիչների, ինչպես նաև Բար Հեբրեոսի վկայությամբ մեկ տարի անց՝ 1284 թ., սուլթան Կալավունի հրամանով Հալեպի փոխարքան մեկ այլ հարձակում էլ ձեռնարկում է ալ-Թինի (al-Tinī կամ al-Tināt) հայաբնակ ամրոցի վրա¹⁵⁹:

Նույն 1284 թ. Ահմադ Թաքուդերի փոխարեն Իլ-խանության գահին է բազմում Աբաղայի որդի Արղունը (1284-1291 թթ.): Սա թեկուզև համակրանք էր տաժում քրիստոնյանների նկատմամբ և ակտիվ բանակցություններ էր վարում եվրոպական երկրների հետ նոր հակամամլուքյան դաշինք կազմավորելու համար, այնուհանդերձ չհաջողեց որևէ էական արդյունքի հասնել: Այս պայմաններում անկարող լինելով միայնակ հակադարձել իսլամական զորքերի հյուժիչ ներխուժումներին՝ 1285 թ. Լևոն Բ-ն սկսեց հաշտության եզրեր փնտրել Կալավունի հետ: Ինչպես Իբն Աբդ ալ-Չահիրն է հաղորդում, հայոց արքան մի քանի անգամ դեսպաններ էր ուղարկել Կալավունի մոտ, բայց նրանք ձերբակալվել էին: Նույն պատմիչի վկայությամբ՝ այդ բանից հետո «Սսի տերը» հնարամտորեն որպես իր և սուլթանի բանակցությունների միջնորդ էր ներգրավել Կիլիկյան Հայաստանի Տաճարականների հրամանատարին (kamandūr al-daywiyya bi-balad al-Arman), և միայն այս դեպքում է, որ Կալա-

¹⁵⁹ St' u Ibn 'Abd al-zāhir, Tašrif al-ayyām, §. 67; Baybars al-Manšūrī, Zubda, §. 240; al-'Aynī, 'Iqd, §. 2, §. 209: Հմմտ. Bar Hebraeus, Chronography, p. 471: Կանարը (Le Royaume, p. 247) և նրան հետևելով նաև Ստյոպարոնը (The Armenian Kingdom, p. 55) դժվարացել են այս բերդի ու նրա տեղագրության մասին այլ տեղեկություններ գտնել արաբական մատենագրության մեջ: Վերջերս նույն բարդության առաջ է կանգնել նաև Շաուրաթ Ռամադան Հուջա (Šawkat Ramaḍān ḥuǧǧa, al-'Ālāqāt, §. 263): Մինչդեռ արաբ պատմիչների կողմից Qal' at al-Tinī, al-Tināt կամ al-Tināt անուններով կոչվող բերդը հավանաբար տաճարականներին պատկանած Կանամելլան (Canamella) է, որ գրավվել ու ավիրվել էր նաև Բայբարսի 1266 թ. արշավանքի ժամանակ: St' u Ibn 'Abd al-zāhir, al-Rawḍ, §. 270-271: Հմմտ. al-Maqrizī, al-Sulūk, §. 1.2, §. 552: Ալ-Թինին Կանամելլայի հետ նույնացնելու մասին տե՛ս Molin K., Unknown Crusader castles, Cambridge University Press, 2001, p. 180, 186, ինչպես նաև Amitai-Preiss, Mongols, p. 118, n. 50: Հմմտ. Ալիշան, Սիսուան, էջ 396:

վունը համաձայնել էր ընթացք տալ երկխոսությանը և ականջալուր լինել հաշտություն կնքելու հայոց արքայի խնդրանքներին¹⁶⁰: Բանակցությունները արդյունք են տալիս. թեև հայոց թագավորության համար ծանր պայմաններով, այնուամենայնիվ հայ-մամլուքյան զինադադարի պայմանագիրն իրականություն է դառնում (10 տարի, 10 ամիս, 10 օր և 10 ժամ խորհրդանշական տևողությամբ): Իբն Աբդ ալ-Չահիրը սուլթան Կալավունի կենսագրության մեջ՝ Tašrif al-ayyām երկում, պահպանել է հայ-մամլուքյան պայմանագրի ամբողջական տեքստը: Տվյալ դեպքում մեզ համար առավել կարևոր է պայմանագրի այն կետը, որ վերաբերում է Հռոմկլայի հայոց կաթողիկոսությանը: «Հռոմկլան (Qal'at al-Rūm) և հայոց խալիֆան՝ կաթողիկոսը (al-kitāğikū), որ այնտեղ է նստում, ինչպես նաև նրա հոգևորականները և այս կողմերում նրա հետ առնչություն ունեցող և նրան պատկանող կալվածքներում եղած մարդիկ՝ լինեն քաղաքացիներ թե գյուղացիներ, նույնպես ներառվում են այս հաշտության պահանջների մեջ, ինչպես որ եղել է ալ-Չահիրի հետ կնքված պայմանագրում»¹⁶¹: Պայմանագրի այս կետը հիմք է տալիս երկու փաստ արձանագրել: Նախ, Հռոմկլան, հայոց թագավորությունից անջատ լինելով, այնուամենայնիվ նրա անբաժանելի մասն էր գիտակցվում մամլուքյան իշխանությունների կողմից: Եվ երկրորդ, այն, որ Հռոմկլայի մասին առանձին կետ է ներառված է եղել նաև 1268 թ. հայ-մամլուքյան առաջին պայմանագրում, որը, արաբական մատենագրությունը, ցավոք, չի պահպանել:

Թեև մամլուքների «չհարձակման» դիմաց վճարելիք տարեկան հարկը ծանր բեռ էր Կիլիկիո հայոց պետության համար, այնուամենայնիվ հայ-մամլուքյան հարաբերություններում հաստատված ժամանակավոր անդորրը կարծես թե լավ հնարավորություն էր՝ սպիացնելու մամլուքների վերջին տարիների

¹⁶⁰ Ibn 'Abd al-zāhir, Tašrif al-ayyām, §. 92-93.

¹⁶¹ Տես Անդ, §. 101: Տե՛ս նաև Holt P. M., Early Mamluk diplomacy (1260-1290): Treaties of Baybars and Qalāwūn with Christian rulers, E. J. Brill, Leiden, 1995, pp. 93-94; Chevalier M.-A., Les ordres religieux-militaires en Arménie cilicienne (Templiers, hospitaliers, teutoniques & Arméniens à l'époque des croisades), Geuthner, Paris, 2009, p. 425-426.

չդադարող արշավանքներից ստացած վերքերը: Խաղաղությունը, սակայն, նախատեսվածից կարճ եղավ, և զինադադարի պայմանագրով նախատեսված 10 տարվա փոխարեն տևեց հազիվ 7 տարի՝ ճակատագրական լինելով առաջին հերթին հենց Հռոմկլայի հայոց կաթողիկոսարանի համար:

1286 թ. վախճանվեց Հակոբ Կլայեցին, և նոր կաթողիկոս ընտրվեց Կոնստանդին Բ Կատուկեցի Պրոնագործը: «Յետ սրբասէր կաթողիկոսին Հայոց Տեառն Յակոբայ,- գրում է Ստեփանոս Օրբելյանը,- մեծաւ հանդիսիվ և աշխարհաժողով ամբոխի նստուցանեն կաթողիկոս Հայոց ի Սիս յաւագ եկեղեցին սուրբ Սովի զԿոստանդին վարդապետ, որ էր առաջնորդ սուրբ և գերահոչակ մենաստանին Խորին կոչեցելոյ»¹⁶²: Կոստանդին աթոռակալության վերջին տարում՝ 1289 թ., իր մահկանացուն կնքեց նաև Լևոն արքան, և «Հայոց գահը ավատատիրական օրենքի համաձայն, ժառանգեց նրա ավագագոյն որդին՝ Հեթում Բ-ը»¹⁶³ (կառ. 1289-1307 թթ.՝ ընդհատումներով): Լատինադավանության մոլի ջատագով լինելով՝ Հեթումն իր կառավարման հենց սկզբից սուր հակասության մեջ մտավ Ամենայն հայոց կաթողիկոսի հետ: Նրանց հարաբերությունները շիկացան հատկապես այն ժամանակ, երբ 1289 թ. Հռոմի Նիկողայոս Զ պապը նամակ հղեց հայոց արքային հայ ժողովրդին լատինադավան դարձնելու և երկու եկեղեցիները միավորելու առաջարկով: Հանդիպելով կաթողիկոսի հակաճառությանը՝ Հեթումը իր գաղափարակից նույնպես լատինամոլ Գրիգոր Անավարզեցի եպիսկոպոսի (ապագա կաթողիկոսի) հետ ժողով գումարեց Սսում և Կատուկեցուն զանազան մեղադրանքներ ուղղելով՝ գահընկեց արեց ու բանտարկեց¹⁶⁴: Կատուկեցու բանտարկությունից հետո կաթողիկոսական աթոռը զբաղեցրեց Ստեփանոս Դ-ը, ում վիճակվեց դառնալ Հռոմկլայում նստած վերջին կաթո-

¹⁶² Տե՛ս Ստեփաննոս Օրբելեան, Պատմութիւն, հտ. 2, էջ 184: Հմմտ. Սմբատի (Տարեգիրք, 1859, էջ 125) և Սամուէլ Անեցու (Հաւաքմունք, էջ 152, ինչպես նաև ժամանակագրութիւն, էջ 428, ծնթգր. 535) շարունակողների հետ:

¹⁶³ Տեր-Պետրոսյան, Խաչակիրները, հտ. Բ, էջ 337:

¹⁶⁴ Տե՛ս Ստեփաննոս Օրբելեան, Պատմութիւն, հտ. 2, էջ 186: Հմմտ. Սմբատ, Տարեգիրք, 1859, էջ 125:

դիկոսը: Ստեփանոս Հոռնկայեցին նույնպես անկարող եղավ դիմադրել Հեթում Բ-ի և Անավարզեցու գլխավորած լատինամետ հոսանքին: Նրա աթոռակալության օրոք ևս «բոլոր գործեր Սիսի մեջ կը կարգադրուէին Անաարզեցիի և՛ Հեթումի ձեռքով»¹⁶⁵:

Այն ժամանակ, երբ իլ-խան Արղունը (կառ. 1284-1291 թթ.) շարունակում էր անպտուղ դեսպանագնացություններ հղել եվրոպական երկրներ հակամամլուքյան դաշինք կազմելու համար, մամլուքները զբաղված էին Ասորիքի և Պաղեստինի վերջնական հպատակեցմամբ: Արղեն 1289 թ. Տրիպոլիի կործանումից հետո¹⁶⁶ մամլուքները նպատակադրվեցին հաջորդ քայլով գրավել Աքրան, թեև սուլթան ալ-Մանսուր Կալավունի հանկարծահաս մահը (1290 թ.) փոքր-ինչ հետաձգեց այդ ձեռնարկումը: Ասորիքն ու Պաղեստինը խաչակիրներից մաքրելու նրա գործը, չնայած իր կարճատև գահակալությանը, ավարտին հասցրեց որդին՝ ալ-Աշրաֆ Խալիլը (կառ. 1290-1293 թթ.): Խաչակիրների վերջին կարևոր հենակետը՝ Աքրան, 80 օր տևած պաշարումից հետո ընկավ 1291 թ. մայիսի 18-ին: Հաջորդած մի քանի շաբաթների ընթացքում գրավվեցին Միջերկրածովյան արևելքի խաչակրաց մյուս բոլոր քաղաքներն ու ամրոցները (Տյուրոս կամ Սուր, Սիդոն, Տարտուս, Բեյրութ, Հայֆա)¹⁶⁷:

Ընդգծված լատինամետ կողմնորոշում ունեցող Հայոց արքա Հեթումը Բ-ը քաջ գիտակցում էր, որ վաղ թե ուշ մամլուքների կործանիչ հարվածների տակ անխուսափելիորեն նաև իր թագավորությունն էր հայտնվելու: Ալ-Մակրիզին գրում է, որ դեռ 1289 թ., երբ Կալավունը պաշարման մեջ էր առել Տրիպո-

¹⁶⁵ Օրմանեան, Ազգապատում, հտ. 2, սյուն 1724:

¹⁶⁶ St' u Runciman, A history, vol. III, pp. 406-408; Northrup, From slave to sultan, pp. 151-155.

¹⁶⁷ Irwin R., The Middle East in the Middle Ages: The Early Mamluk sultanate 1250-1382, Southern Illinois University Press, Carbondale and Edwardsville, 1986, pp. 76-78; Runciman S., A history of the Crusades: Vol. III (The Kingdom of Acre and the Later Crusades), Cambridge University Press, Cambridge, 1951, pp. 412-423; Sa'id 'Abd al-Fattāh, 'Āšūr, al-'Ašr al-Mamālīki fi Mišr wa-l-Sām, Dār al-Nahḍa al-'arabiyya, al-Qāhira, 1976, §. 74-76.

լին, նրան են ներկայանում «Սսի դեսպանները՝ նրա գթասրտությունը խնդրելու: Սուլթանը նրանցից պահանջում է հանձնել Մարաշը, Բեհնան (գրչագրական սխալ է. պետք է լինի Բեհեսնան- Գ.Դ.) և սովորականի պես վճարել հարկերը (al-qaṭ'a): Նա դեսպաններին ընծաների (բնագրում՝ ḥala'a, այսինքն՝ «հարզանքի հագուստ») ḥilā', հագցրեց) արժանացնելով հետ ուղարկեց»¹⁶⁸: Ալ-Մակրիզին, սակայն, հայոց արքայի պատասխանի մասին չի խոսում: Փոխարենը, այդ մասին վկայություն ենք գտնում ալ-Նուվայրիի, ղպտի Մուֆադդայի և Իբն ալ-Ֆուրաթի մոտ: Իբն ալ-Ֆուրաթը, որ հենց երևի ալ-Մակրիզիի աղբյուրն է, գրում է. «Վերադարձան Սսի դեսպանները բազմաթիվ նվերներով և ներողություն խնդրեցին, որ չեն կարող հանձնել Մարաշն ու Բեհեսնին, բայց [փոխարենը] կարող են մեծ գումարներ վճարել ամեն տարի»¹⁶⁹: Այս մերժումն ամրապնդեց Կիլիկյան Հայաստանին հարվածելու մամլուքյան իշխանությունների վճռակալությունը:

Սա ակնհայտ դարձավ 2 տարի անց, երբ հոր նվաճումների գերազանցելու անհագ ցանկություն ունեցող ալ-Աշրաֆ Խալիլը Աքրայի առումից հետո նամակ հղեց հայոց արքային՝ տեղեկացնելով քաղաքի առման մասին, ինչպես նաև ահաբեկելով հայոց թագավորությունը Աքրայի բախտին արժանացնել՝ որպես Մամլուքյան սուլթանության սահմանակից մնացած վերջին քրիստոնյա պետության: Մամլուք պատմիչներից ԺԴ դարի մամլուք Անանունը և Իբն ալ-Դավադարին պահպանել են Հեթում Բ-ին նրա գրած նամակը: Անանուն մամլուք հեղինակի մոտ, օրինակ, կարդում ենք. «Բե՛ր առաջին և երկրորդ հարկերը (նկատի ունի երկու տարվա հարկը միանգամից- Գ.Դ.) և ինքդ անձամբ ներկայացի՛ր մեզ (բնագրում՝ ilā abwābina al-'āliya, այն՝ «մեր բարձր դուռ»- Գ.Դ.),- ասվում է այդ նամակում,- ու թե հնազանդվեցիր սատանայի հետ դաշնակցությանը, ապա սուգդ

¹⁶⁸ St'ū al-Maqrīzī, al-Sulūk, ց. 1.3, ք. 748: Հմմտ. al-Nuwayrī, Nihāya, ց. 31, ք. 106; Ibn al-Furāt, al-Duwal, ց. 8, ք. 81 և Mufaḍḍal, al-Nahğ, ք. 367 [531]: Հմմտ. Stewart, Kingdom, pp. 72-73.

¹⁶⁹ St'ū Ibn al-Furāt, al-Duwal, ց. 8, ք. 81.

կտարածվի Սսի երկրի վրա»¹⁷⁰: 1292 թ. գրված մի հիշատակարան վկայում է. «Իսկ անուն սուլդանին որ զայս գործեաց աղէտ և սուգ քրիստոնէից՝ Մելիք Աշրաֆ, որդին Ալճե (պետք է լինի Ալֆէ- Գ.Դ.), եւ առաւել գոռայր, իբրեւ զամպ կարկտածին լցեալ բարկութեամբ կայծակամբ, եւ ահաբեկեալ դողացուցանէր երկիրս Հայոց, և նեղէր բազում հարկապահանջութեամբ զթագավորն Հայոց Հեթում, խնդրելով երկիր եւ գավառ եւ բերդորայսն»¹⁷¹:

1292 թ., երբ Կիլիկիայում սպասում էին սուլթանի մոտալուտ հարձակմանը, ալ-Աշրաֆը վճռեց անակնկալ թիրախել Հռոմկլան և մեկընդմիջտ լուծել սուլթանության սահմանագլխին ընկած հայկական տիրույթի նվաճման օրահարցը: Մի հիշատակագիր հաստատում է. «Յայսմանէ սարսեալ յերկինս Կիլիկեցոց՝ գաղթեցան ի լերինս և յամրոցս բերդիցն. իսկ նա դիմեալ գնաց ի վերայ հայրապետական աթոռոյն Հայոց՝ ի Հռոմկլայն»¹⁷²: Ներսես Պալիենցի «Ժամանակագրության» համաձայն՝ մինչև սուլթանի Հռոմկլա հասնելը Հեթումն Բ-ը, այնուամենայնիվ, հասցրել էր իր մորեղբայր Ռայմունդին մի շարք այլ իշխանների հետ ուղարկել կաթողիկոսանիստ դոյակի պաշտպանությանը մասնակցելու¹⁷³:

Բերդի պաշարմանը մասնակցած մամուլք պատմիչ Բայբարս ալ-Մանսուրին Հռոմկլան գրավելու սուլթանի մտահոգման պատճառների մասին գրում է. «Նա (սուլթանը) դուրս եկավ՝ ուղղություն վերցնելով դեպի Հռոմկլա՝ նրա ցանկալի գրավումը իրագործելու, քանզի բացի դրանից նրա թագավորության եզրերում այլևս չէր մնացել որևէ այլ բան, որ դուրս էր նրա ձեռքից: [Բացի այդ] այն հարձակվում էր իր հարևան

¹⁷⁰ *St'u al-Mu'allif al-maghūl*, §. 8; *Ibn al-Dawādārī*, Kanz, §. 8, §. 230-321: Հմմտ. *Scott R. J.*, *Mamlūk-Armenian relations during the Bahrī period to the fall of Sis (1250-1375)*, McGill University, Montreal, 1981 (unpublished MA thesis), p. 132, 161, n. 5; *Stewart*, Kingdom, p. 74, n. 33.

¹⁷¹ ՀԶԸ, ԺԳ դար, էջ 702, ինչպես նաև էջ 746 (Հեթում Բ-ի ձեռքով գրված մի հիշատակարան):

¹⁷² Անդ, էջ 711:

¹⁷³ *St'u ՄԺ*, հտ. Բ, էջ 181:

մուսուլմանների և իր [պարիսպների] տակով անցնող ճամփորդների վրա»¹⁷⁴: Արշավանքի դրդապատճառները հանգունորեն է բացատրում նաև ալ-Այնին, ով իր 'Iqd al-ğumān երկում գրում է. «Սրա պատճառն այն էր, որ (...)»¹⁷⁵ այս բերդի տերը (...) սուլթան ալ-Մալիք ալ-Մանսուր Սալիհին (...), և նրանք ավելի ու ավելի արատավոր դարձան, և երբ թաթարների միջև պատերազմ սկսվեց նրանց արքայի մահվանից հետո, նրանցից շատերը Հռոմկլա եկան, և նրա բնակչության հետ պայմանավորվեցին կտրել մուսուլմանների ճանապարհը: [Այդպես] նրանք մուսուլմաններից շատ գերիներ վերցրեցին՝ ճանապարհներ կտրելով: Հալեպի տերն այս մասին հայտնեց սուլթանին, ինչպես նաև այն մասին, որ բացի այս բերդից՝ Dār al-Islām-ում (բառացի՝ «Իսլամի տուն») անհավատներին պատկանող ոչ մի այլ չգրավված բերդ չի մնացել»¹⁷⁶: Անսալով Հալեպի էմիրի առաջարկին և խորհրդակցելով իր էմիրների հետ՝ սուլթանն ի վերջո մտադրվել է գրավել հայոց կաթողիկոսի նստոցը: Ճիշտ է՝ 1285 թ. զինադադարով մուսուլման վաճառականների վրա հարձակումն արդեն իսկ պայմանագրի դրույթների խախտում էր համարվում և ինքնըստինքյան կարող էր պատերազմական գործողությունների վերսկսման պատճառ դառնալ, բայց ակնհայտ է, որ ավելի խորքային՝ ռազմավարական նկատառումներն է, որ սուլթանին ուղղորդել էին վճռական հարված հասցնելու Հռոմկլային, ինչի մասին մամլուքյան իշխանությունները վաղուց էին մտմտում:

Հռոմկլայի պաշարմանը մասնակցած մամլուք Անանուն ժամանակագրի վկայությամբ՝ սուլթան ալ-Մալիք ալ-Աշրաֆը Կահիրեից դուրս եկավ 691 թ. Ռաբի երկրորդ ամսի 8-ին (1292 թ. մարտի 29) և վեզիր Շամս ալ-Դին իբն Սալուսի ուղեկցությամբ Դամասկոս հասավ Ջումադա առաջին ամսի 1-ին (ապրիլի 20): Սուլթանին այնտեղ դիմավորելու գնաց նաև Հա-

¹⁷⁴ Տե՛ս Baybars al-Manṣūrī, al-Tuḥfa, ֆ. 130, ինչպես նաև Խոյնի՝ Zubda, ֆ. 288.

¹⁷⁵ Ձեռագրում տեքստի ջնջված լինելու պատճառով հրատարակիչը դժվարացել է վերականգնել:

¹⁷⁶ Al-'Aynī, 'Iqd, ց. 3, ֆ. 111.

մայի տեր ալ-Մալիք ալ-Մուլաֆֆարը և հրավիրեց մի քանի օրով հյուրընկալվել Համայում¹⁷⁷: Շարունակելով իր ճանապարհը՝ եգիպտական և ասորիքյան միավորված բանակը Հալեպ հասավ նույն ամսի 28-ին (մայիսի 17): Մամլուքյան զորքերը Հալեպը լքեցին Ջումադա ալ-ախիր ամսի 4-ին (մայիսի 23) և արդեն չորս օր անց՝ չորեքշաբթի օրը (մայիսի 27), պաշարեցին կաթողիկոսանիստ բերդաքաղաքը¹⁷⁸:

Բերդի անառիկությունը հաշվի առնելով և անձամբ ղեկավարելով նրա պաշարումը՝ սուլթանն ամենայն լրջությամբ էր պատրաստվել: Այդ մասին է վկայում թեկուզ այն, որ նա մեծաքանակ մարդկային ուժերից բացի՝ Հոմսկլայի գրավման մեջ ներգրավել էր նույնքան մեծաքանակ պաշարողական տեխնիկա: Մի հայ հիշատակագիր գրում է. «...և պատեալ պաշարեաց զնայ բազմածեռն պատերազմողօք, բարձրածիք բարանօք ծանր քարանց, քարահատ արուեստականօք և նաղմափոր դարանամտօք»¹⁷⁹: Իրադարձությունների ժամանակակից Բարսեղ անունով մի գրիչ իր հիշատակարանում գրում է. «և պաշարեաց զնա բազում պատնիշաւք և բազում հեծելաւք և հետևակաւք, և ըղըմբաքար կանկնեաց ի նմա թուով երեսուն և հինգ ընդ մեծ և ընդ փոքր»¹⁸⁰: Մամլուք մատենագիրները որոշ տարբերություններով, այնուամենայնիվ, շատ ավելի մանրամասն են խոսում բերդի առման համար օգտագործված քարանետ մեքենաների (manşarıq) և նրանց տեսակների մասին: Ալ-Նուվայրիի, Իբն ալ-Ֆուրաթի և ալ-Մակրիզիի վկայությամբ՝

¹⁷⁷ Abū al-Fidā', al-Muḥtaṣar, ց. 4, ք. 26, ինչպես նաև Նալբանդյան, Արաբական աղբյուրները, էջ 238-239:

¹⁷⁸ Sīb' al-Mu'allif al-mağhūl, ք. 9-10: Հմմտ. Ibn al-Dawādārī, Kanz, ց. 8, ք. 323; al-Ġazarī, Ḥawādīt, ց. 1, ք. 101; al-Nuwayrī, Nihāya, ց. 31, ք. 143; Ibn al-Furāt, al-Duwal, ց. 8, ք. 136; al-Maqrīzī, al-Sulūk, ց. 1.3, ք. 778: Բերդի նվաճմանը մասնակից եղած Բայբարս ալ-Մանսուրին և Աբու ալ-Ֆիդան՝ Համայի ապագա սուլթանն ու պատմիչը, գրում են, որ Հոմսկլան պաշարվել է Ջումադա ալ-ախիր ամսի առաջին տասնօրյակում: Sīb' al-Baybars al-Manşūrī, Zubda, ք. 288; Abū al-Fidā', al-Muḥtaṣar, ց. 4, ք. 27.

¹⁷⁹ Sīb' al-Qāṣ, ԺԳ դար, էջ 711: Հմմտ. նույնի՝ էջ 702, 719:

¹⁸⁰ ՄԺ, հուն. Բ, էջ 93:

բերդի պաշարման ժամանակ օգտագործվել է 20 քարանետ մեքենա¹⁸¹: Մուֆադդալ իբն Ֆադաիլի և Իբն ալ-Դավադարիի հաղորդմամբ՝ բաբանների ընդհանուր թիվը 19 է եղել¹⁸²: Իբն Քասիրը գրում է, որ *manḡaniq*-ների թիվը գերազանցել է երեսունը¹⁸³, իսկ ալ-Այնին և Իբն Իյասը նշում են 23 թիվը¹⁸⁴: Ինչպես երևում է, Հռոմկլայի շուրջ տեղակայված պաշարողական «իրեստանու» մասին տեղեկության բացառիկ աղբյուր պետք է համարել ալ-Ջազարիին, ով իր հերթին որպես աղբյուր է նշում բերդի պաշարմանը մասնակցած էմիրներից Իբն Միհաֆֆադարին և վերջինիս որդի Սայֆ ալ-Դինին: Նա մասնավորապես գրում է. «Նրա վրա ուղղվեցին հինգ ֆրանկյան (*afraṅḡiyya*) և [հինգ] *qarābuḡā* (բառացի՝ «սև ուղտ»), ինչպես նաև 15 *ṣayḡāniyya* (բառացի՝ «սատանայական») տեսակի քարանետ մեքենաներ»¹⁸⁵ (այսինքն՝ 25): Սակայն, այս նախադասությունը մատ-

¹⁸¹ *St'ū al-Nuwayrī, Nihāya*, ց. 31, ք. 143-144; *Ibn al-Furāt, al-Duwal*, ց. 7, ք. 136; *al-Maqrīzī, al-Sulūk*, ց. 1.2, ք. 778: Վերջերս Բ. Ռաֆայելը, հենվելով ալ-Մակրիզիի և ալ-Նուվայրիի տեղեկությունների վրա, մամլուքյան զորքի տրամադրության տակ եղած բաբանների թիվը նույնպես 20 է նշել: *St'ū Raphael, Muslim Fortresses*, p. 187: Աբու ալ-Ֆիդան բաբանների ընդհանուր թվի մասին լուր է: Նա միայն գրում է, որ համացիները տեղ էին զբաղեցրել բերդի արևելյան կողմում գտնվող լեռան վրա, որտեղից որ նրանք ականատես եղան բերդի ներսում տեղի ունեցող անցողաբժին՝ բնակչության շարժին, նրանց գործողություններին և փախտատիներ: *St'ū Abū al-Fida', al-Muḥtaṣar*, ց. 4, ք. 27, ինչպես նաև *Նալբանդյան*, Արաբական աղբյուրները, էջ 239:

¹⁸² *Mufaḍḍal, al-Nahḡ*, ք. 389 [553]: Ինչ վերաբերում է Իբն ալ-Դավադարիին, ապա վերջինս 19 թիվը նշելուց բացի Իբն ալ-Միհաֆֆադարի փոխարեն իր տեղեկության աղբյուր է նշել հորը (*qāla wālidī*): *St'ū Ibn al-Dawādārī, Kanz*, ց. 8, ք. 333: Վերևում՝ Իբն ալ-Դավադարիին նվիրված հատվածում, արդեն նշել ենք, որ իր երկին բացառիկություն հաղորդելու նպատակով Իբն ալ-Դավադարին երբեմն դիմել է այսպիսի հեղինակային «անբարեխղճության» թաքցնելով իր իրական աղբյուրը:

¹⁸³ *Ibn Kaṭīr, al-Bidāya*, ց. 17, ք. 637.

¹⁸⁴ *Al-'Aynī, 'Iqd*, ց. 3, ք. 113; *Ibn Iyās, Badā'ī al-zuhūr fī waqā'ī al-duhūr*, ց. 1.1, *bi-taḥqīq Muḥammad Muṣṭafā, Dār ihyā' al-kutub al-'arabiyya, al-Qāhira*, 1975, ք. 370.

¹⁸⁵ *St'ū al-Ġazarī, Ḥawādiṭ*, ց. 1, ք. 109: Ալ-Ջազարիի տեքստի վերծանմանը օգնում է մամլուք Անանունի բերած տարբերակի զուգահեռ քննությունը: *St'ū*

նագիրը ձևակերպել է շարադասական և քերականական մի քանի սխալներով, ինչն էլ նրա հաղորդումը անմիջականորեն կամ միջնորդաբար փոխառած հեղինակներին գցել է շփոթության մեջ: Արաբագիր պատմիչների մատնանշած հակասական թվերում մոլորվել է նաև Ա. Սոյուարտը: Նա օգտվել է ալ-Ջազարիի երկի Ժ. Սովածեի հատվածական թարգմանությունից՝ կրկնելով վերջինիս թույլ տված թարգմանական սխալը (հինգ faranǧī, մեկ qarābusǧā և 15 šayṭānī քարանետ մեքենաներ)¹⁸⁶: Ավելի հեռուն գնալով՝ Սոյուարտը եզրակացրել է, որ Հռոմկլան պաշարած մամլուքյան զորքի գործի դրած բաբաններն ալ-Մակրիզիի նշած թվից կրկնակի անգամ շատ են եղել, այսինքն՝ 40-ը¹⁸⁷: Դամասկոսցի պատմիչի այս խնդրահարույց հաղորդումից մամլուքյան բանակում օգտագործվող պաշարողական մեքենաների մասին իր հողվածում կարծես թե «գլուխ է հանել» Փ. Շեվեդդենը՝ բացատրելով պատմիչների հաղորդումներում տեղ գտած շփոթության պատճառը¹⁸⁸: Արաբագիր պատմիչների մեծամասնությունը համակարծիք է, որ բերդի պաշարումը տևել է 33 օր¹⁸⁹:

al-Mu'allif al-maǧhūl, §. 16: Քարանետ մեքենաների տեսակների մասին տե՛ս Chevedden P., *The Artillery of King James I the Conqueror // Iberia & the Mediterranean World of the Middle Ages*, vol. 2, ed. by P. Chevedden, D. Kagay & P. Padilla, E. J. Brill, 1996, pp. 47-94, 58-63.

¹⁸⁶ St'u Sauvaǧet J., *La chronique de Damas d'al-Jazari (années 689-698 H.)*, Paris, 1949, p. 16 և Stewart, Kingdom, p. 76.

¹⁸⁷ St'u Նույն տեղում: Ուսումնասիրողը մի քանի տարի անց Հռոմկլային եվիրված մի հողվածում չի ուղղել իր սխալը՝ նորից պնդելով, թե դրանք «ավելի քան քառասունն են եղել»: St'u Նույնի՝ Qal'at al-Rūm/Hromgla/Rumkale and the Mamluk Siege of 691AH/1292CE // *Muslim Military Architecture in Greater Syria: From the Coming of Islam to the Ottoman Period*, ed. by H. Kennedy, Brill, 2006, p. 276.

¹⁸⁸ Chevedden P., *Black Camels and Blazing Bolts: The Bolt-Projecting Trebuchet in the Mamluk Army // Mamluk Studies Review*, vol. 8.1, pp. 245-246, n. 36.

¹⁸⁹ Al-Maqrizī, al-Sulūk, ǧ. 1.3, §. 778; al-Nuwayrī, Nihāya, ǧ. 31, §. 143-144; Ibn al-Furāt, al-Duwal, ǧ. 7, §. 136: Հմտ. al-Birzālī, al-Muqtafi, ǧ. 2, §. 278; al-Dahabī, Tārīḥ al-Islām, ǧ. 52, §. 12; Qirṭāy al-ḥjazindārī, Maǧmū', §. 216: Իրն ալ-Ֆուվաստիին վերագրվող al-ḥawādīt al-ǧāmi'a-ում, բացի այն, որ բերդի նվաճման մասին սխալմամբ խոսվում է 692 թվականի տակ, բերդի պաշարման տևողությունը նշված է 2 ամիս: St'u Ibn al-Fuwaṭī, al-Ḥawādīt, §. 323: ԺԴ դարի

Ինչ վերաբերում է հայկական աղբյուրներին, ապա ըստ մի ժամանակակից հիշատակագրի՝ Հռոմկլայի պաշարումը տևել է 35 օր, ըստ Սմբատ Սպարապետի շարունակողի՝ «շատ օրեր», ըստ Անեցու շարունակողի՝ «բազում ատուրս»¹⁹⁰: Ըստ Հեթում Կոռիկոսցու «Խրոնիկոնի»՝ սուլթանը հայրապետասնիստ դղյակը գրավեց 40 օրվա ընթացքում, ըստ Ստեփանոս Օրբելյանի՝ «ամսօրեայ ժամանակա», ըստ Բար Հեբրեոսի «Ժամանակագրության» շարունակողի՝ 20 օրվա ընթացքում¹⁹¹:

Ահա այսպես, մեկ ամսից ավելի մամլուքյան զորքը քարկոծեց բերդաքաղաքը: Բարսեղ գրիչը այս մասին պատմում է. «Եւ ծեծեին զպարիսպ բերդին քարիւ և ի ներքս ի բերդն ձգէին քարինս մեծամեծս և ի փոքրունս. և ձգէին նետս ի նոսա և սպանանէին զմարդ և զանասուն»¹⁹²: Բաբաններից բացի բերդի գրավման ժամանակ օգտագործվել են նաև այլ պաշարողական գործիքներ՝ մասնավորապես բերդերի պարիսպների հիմքերում գետնափոր խրամներ բացելու համար նախատեսված հորատիչ սակրավորական գործիքներ: Բերդի պատերի տակ խռոչներ բացելու և դրանցով ներս թափանցելու մամլուքների գործադրած ջանքերի մասին են վկայում, օրինակ, վերը հիշված հիշատակագիրը («նաղմափոր դարանամտօք»), Հեթում պատմիչը («սղարեալ բաբանօք ի վերուստ և քարափոր ծակամտօք՝ նաղ-

մեկ այլ հեղինակ՝ ալ-Ցաֆիին (մահ. 1366 թ.), գրում է, թե բերդը «գրավվեց 25 օր հետո: Նրա բնակիչները քրիստոնյաներ էին, որ թաթարների հպատակության տակ էին»: *St'ū al-Yāfi'ī, Mirāt al-ġinān wa-'ibrat al-yaqzān fi ma'rifat mā yu'tabar min ḥawādiṯ al-zamān, bi-tahqīq Ḥalil Maṣūṛ, ց. 4, Dār al-kutub al-'ilmīyya, Bayrūt, 1997, ց. 164*: Իբն Խալդունի մոտ «երեսուն օր» է: *St'ū Ibn Ḥaldūn, al-'Ibar, ց. 5, ց. 464*: Ուշագրավ է, որ Բայբարս ալ-Մանսուրիին վերագրվող *Muḥṭār* երկում նույնպես 20 օր է նշված (*Muḥṭār al-aḥbār, ց. 92*):

¹⁹⁰ *St'ū al-Ḥalī, ԺԳ դար, էջ 702*; **Սմբատ (շարունակող)**, Տարեգիրք, Փարիզ, 1859, էջ 126; **Սամուէլ Անեցի (շարունակող)**, Ժամանակագրություն, էջ 267:

¹⁹¹ *St'ū Mṣ, հտ. Բ, էջ 80*; **Ստեփանոս Օրբելյան**, Պատմություն, հտ. Բ, էջ 190; **Bar Hebraeus**, Chronography, p. 493: Բար Հեբրեոսը մահացել է 1286 թ., և նրա պատմությունը հավանաբար շարունակվել և ավարտին է հասցվել մեկ ուրիշ գրիչի ձեռքով. ով ամենայն հավանականությամբ նրա եղբայր Բար Սաումա ալ-Սաֆին է եղել:

¹⁹² *Mṣ, հտ. Բ, էջ 93*:

մելով նեղեալ ի ներքուստ») և Ներսես Պալիանենցը («այլ բաբանովն փլուցին զամենայն պարիսպն և նաղմեցին և եկին ի մեջ բերդին ծակն և յատակէ շրջել ուզէին»)¹⁹³: Մամլուքյան պատմիչները նույնպես շեշտում են բերդը գրոհողների կողմից նրա պարիսպների տակ խրամներ (ուզմբ) փորելու հանգամանքը¹⁹⁴:

Բարսեղ գրիչի վկայությամբ՝ «հագարացիների» (արաբների) պաշարումից քաղաքը հայտնվել էր մեծ վտանգի, նեղության և տարակուսանքի մեջ: Նա շարունակում է. «Եւ ոչ ոք մտանէր և ելաներ առ նոսա, զի ամենայն կողմանց պաշարեալ էին զքաղաքն զայն, և ոչ ուստեք հասանէր աւզնական նոցա, այլ միայն առ բարձրեալն Աստուած աղաղակէին, զոչէին, արտասուէին արք և կանայք, ծերք և տղայք, երիտասարդք և կուսանք, թերևս ողորմեացի մարդասէր Աստուած, և փրկեսցէ ի ձեռաց անարիւնաց»¹⁹⁵: Այնուամենայնիվ, մամլուք հեղինակների վկայություններից պարզ է դառնում, որ բերդի բնակիչներին պաշարման մահաբեր օղակից փրկելու համար հայերի կամ մոնղոլների կողմից որոշ հուսահատ քայլեր են ձեռնարկվել: Ալ-Նուվայրին, Իբն ալ-Ֆուրաթը և ալ-Մակրիզին այդ մասին լուր մտնելուց բայց այդ մասին մի պատմություն է պատմում ալ-Այնին: Ըստ նրա՝ պաշարման մեջ ընկած հռոմկալեցիները դիմել են Սսի տիրոջը օգնություն ստանալու խնդրանքով: Հայոց արքան, տեսնելով, որ ոչինչ չի կարող անել, որոշել է հնարամտության դիմել: Նա հինգ հազարանոց հեծելազոր տրամադրելով երեք հայ իշխանների (umarā') նրանց բոլորին ծպտել է մոնղոլական գլխարկներով և հագուստներով՝ մոնղոլական զորքի տպավորություն ստեղծելու համար և ուղարկել Եփրատի կողմը՝ իրենց տեսքով մամլուքներին վախեցնելու և նրանց բերդի պաշարումից շեղելու համար: Պատմիչը շարունակում է, որ որոշ բեդվիներ (ba'ad al-'arab) իմանում են այս մասին և հայտնում սուլթանին: Ալ-Աշրաֆը էմիրներ Սունկուր ալ-Աշկարի և Բեքթաշ ալ-

¹⁹³ ՀԶԸ, ԺԳ դար, էջ 719: Հմմտ. նույնի՝ էջ 702: Տե՛ս նաև ՄԺ, հտ. Բ, էջ 181:

¹⁹⁴ Տե՛ս al-Maqrizī, al-Sulūk, ց. 1.3, ֆ. 778, ինչպես նաև Baybars al-Manṣūrī, Zubda, ֆ. 288; al-Ġazarī, Ḥawādīt, ց. 1, ֆ. 110; Ibn al-Furāt, al-Duwal, ց. 8, ֆ. 136.

¹⁹⁵ ՀԶԸ, ԺԳ դար, էջ 730-731:

Ֆախրիի առաջնորդությամբ մամլուքյան մի զորագունդ է ուղարկում «մոնղոլների» դեմ: Այս մասին իմանալով՝ հայերը ստիպված են լինում հուսախաբ ու պարտված (al-hā'ibin al-hāsirin) հետ վերադառնալ: Սա մուսուլմաններին ոգևորում է՝ շուտափույթ ավարտի հասցնելու բերդի գրավումը¹⁹⁶:

Ալ-Այնիի այս պատմությունը գուցե և արձագանքն է Հռոմկլյան սուլթանի պաշարումից ազատելու մոնղոլների մի չհաջողված փորձի, որի մասին գրույցի նախնական տարբերակը գտնում ենք Բայբարս ալ-Մանսուրիի մոտ, ով սեփական հիշողություններն է ներկայացնում (qāla al-rāwī, այն է՝ «պատմիչն ասաց»)՝¹⁹⁷. «Երբ պաշարման, պայքարի, ճնշելու բովում էինք, արևելյան ափի կողմից՝ լեռների արանքից, մեզ երևաց թաթարների մի խումբ: Սուլթանը կարգադրեց մի շարք մեծամեծ էմիրների առաջնորդությամբ մի զորաբանակ ուղարկել այդ լուրը ստուգելու և [նրանց] հետքը փնտրելու»¹⁹⁸: Սուլթանի կարգադրությամբ նրանց դեմ են ելնում մամլուքյան բանակի չորս էմիրներ (նրանց հետ նաև պատմիչը): Ալ-Այնիի պատմածի պես էմիրների գլխավորած զորախմբերն անցնում են Եփրատն ու սկսում փնտրել մոնղոլներին: Ոչինչ չհայտնաբերելով՝ նրանք ստիպված են լինում հետ դառնալ և կրկին միանալ բերդի պաշարմանը: Պատմիչը շարունակում է, որ այս դեպքերից հետո մոնղոլ դասալիք էմիր Սայֆ ալ-Դին Ջանքալի իրն ալ-Բաբան իրեն պատմել է, որ նման արշավ իսկապես տեղի է ունեցել, և որ ինքն էլ անձամբ մասնակցել է դրան: Մոնղոլական զորքը բաղկացած է եղել 10 հզ. հեծյալից՝ Նայթամիշ անունով մոնղոլ զորապետի հրամանատարությամբ, և նպատակ է ունեցել պատեհ հնարավորության դեպքում անակնկալի բերել մամլուքներին: Սակայն տեսնելով սուլթանության բանակի մեծաթիվությունը և զորեղությունը՝ մոնղոլական զորախմբերը վճռել են հետ դառնալ¹⁹⁹:

¹⁹⁶ Al-'Aynī, 'Iqd, ց. 3, ք. 115: Տե՛ս նաև Stewart, Kingdom, p. 77.

¹⁹⁷ Բայբարս ալ-Մանսուրիի երկում հանդիպող այս արտահայտության մասին տե՛ս Northrup, From slave to sultan, pp. 39-40.

¹⁹⁸ Տե՛ս Baybars al-Manşūrī, Zubda, ք. 289 և հմմտ. նոյնի՝ al-Tuhfa, ք. 131.

¹⁹⁹ Տե՛ս նախորդ ծանոթագրությունը:

Բայբարս ալ-Մանսուրիի այս հաղորդմանն անտեղյակ²⁰⁰ Ա. Ստյուարտը նույնպես եզրակացրել է, որ հնարավոր է, որ հայկական «դիվերսիոն փորձի» մասին ալ-Այնիի բերած պատմությունը շփոթմունքի պատճառ եղած լինի, և իրականում մոնղոլական զորքեր մոտեցած լինեն Հռոմկլային: Նա հղում է Ռ. Իրվինին, ում պնդմամբ «մոնղոլական ուժեր են ուղարկվել հայերին աջակցելու, բայց նրանք ուշացել են և ստիպված եղել վերադառնալ»²⁰¹: Իրվինն իր տեղեկության աղբյուրը չի նշել, իսկ Ստյուարտն էլ դժվարացել է պարզել: Մինչդեռ այն մասին, որ մամլուքյան զորքերի պաշարումից Հռոմկլայն ազատելու համար իրոք մոնղոլական զնդեր են ուղարկվել ալ-Աշրաֆ Խալիլի դեմ, վկայում է իլ-խանների պաշտոնական պատմիչը՝ Ռաշիդ ալ-Դինը: Վերջինս հաղորդում է. «Այդ ժամանակ լուր ստացվեց որ Ասորիքից թշնամական զորք է եկել, և որ Մալիք Աշրաֆը պաշարել է Հռոմկլայն: Ռաջաբ ամսին (հունիս) Թայջու-օղուլը՝ Մանգու-Թիմուրի որդին, Թողաչարը, Բուղդայ-աղթաջին և Թամաջի-ինակը զգալի զորքով ուղղություն վերցրին այդ կողմեր՝ թշնամու դեմն առնելու: Իսկ Շաաբան ամսին (հուլիս) Ախաթով և Արճեշով Հռոմկլայի մոտ ուղղվեցին նաև արքայազն Սուկայը, էմիր Թիմուր-Բուղան և Կարաջան: [Սակայն արդեն] Ռաջաբ ամսին Մալիք Աշրաֆը գրավեց Հռոմկլայն և նրա բնակչության մի մասին սրի մատնեց, մյուս մասին՝ քջեց գերության: Հետո նա բերդը վստահեց իր ենթականերին (kutwāl, այն է՝ «բերդակալ», «պարետ») և ինքը հետ դարձավ»²⁰²: Ռաշիդ ալ-Դինի այս վկայությունից եզրակացնում ենք, որ մոնղոլները երկու անգամ են ուղղություն վերցրել դեպի պաշարված Հռոմկլա: Առաջին դեպքը հավանաբար Բայբարս ալ-Մանսուրիի նկարագրած նույն արշա-

²⁰⁰ Իր մենագրության մեջ Ստյուարտն օգտագործել է Բայբարսի Zubda-ի (ինչպես նաև ալ-Նուվայրիի Nihāya-ի) Շահ Մորադ Էլիամի կատարած մասնակի խմբագրությունն ու հատվածական թարգմանությունները, որի պատճառով այս պատմիչի բազմաթիվ արժեքավոր վկայություններ նրան անհայտ են մնացել:

²⁰¹ St'u Irwin, Middle East, p. 78.

²⁰² St'u Rašid al-Dīn, Šāmi' al-tawāriḥ, ց. 2, ք. 833-834, ինչպես նաև Рашид-ад-Дин, Сборник летописей, том III, с. 133-134: Հմմտ. Banākati, Rawḍa, ք. 448.

վանքն է, որը մոնղոլները ստիպված են եղել դադարեցնել՝ իրենց ուժերին վստահ չլինելու պատճառով: Երկրորդ փորձը մոնղոլները հավանաբար կատարել են էականորեն համալրված ուժերով, բայց այս անգամ էլ ուշացել են և չեն կարողացել բաղձալի օգնությունը հասցնել հռոմկլայեցիներին²⁰³:

Նույնիսկ առանց դրսից օգնություն ստանալու՝ հռոմկլայեցիները հերոսական դիմադրություն կազմակերպեցին՝ մինչև վերջին ճիգը դիմադրելով թշնամուն: Ըստ Ստեփանոս մետրոպոլիտի՝ բերդի գրավումից հետո սուլթանը կաթողիկոսի հետ գրույցում խոստովանել է, որ ինքը երեք անգամ մտածել է բերդի պաշարումը թողնելու մասին²⁰⁴: Իզուր չէ, որ բերդի առումից հետո Դամասկոսի գերագույն զձժի-ին գրած իր ավետիս-նամակում սուլթանը պատմում է, թե ինչ դժվարությամբ է իրեն տրվել այդ հաղթանակը: Նրան անգամ թվացել է, թե անմատչելի ապառաժների վրա վեր խոյացող Հռոմկլան ավելի ամուր է եղել, քան Աքրան (in k̄ānat aḥṣan min 'Akkā)²⁰⁵:

Դամասկոսցի պատմիչ ալ-Ջազարին, նորից իր տեղեկատու էմիր Իբն ալ-Միհաֆֆադարին հղելով, պատմում է Հռոմկլայի պաշարման ընթացքում տեղի ունեցած մի զարմանալի դեպքի (min al-'aḡā'ib) մասին: «Քանի դեռ մենք շարունակում էինք պաշարման մեջ պահել այն, սաստիկ ու ահավոր ուժգնության քամիներ բարձրացան և վեր հանեցին բոլոր վրանները, ու մարդիկ ստիպված եղան բաց երկնքի տակ գիշերել: Իսկ դրա հաջորդ օրը երկինքը սկսեց այն աստիճան ուժեղ ամպրոպել, որ անգամ կարելի էր կարծել, թե այն շուտով երկրի վրա կընկնի: Այդ միջոցին մի կայծակ խփեց, որ հրկիզեց երեք հոգու, որոնցից մեկը մահացավ, մյուսի մարմնի ուղիղ կեսն այրվեց, երրորդի սիրտը վախից կանգ առավ, և նա նույնպես մահացավ: Նրանք [այդ պահին] էմիր Բադր ալ-Դին Բայդարայի վրանում էին, ով այդ ժամանակ Եգիպտոսի փոխարքան էր»²⁰⁶:

²⁰³ Հմմտ. Irwin, Middle East, p. 78 և Stewart, Kingdom, p. 79, n. 54.

²⁰⁴ Տե՛ս Ստեփաննոս Օրբելեան, Պատմութիւն, հտ. Բ, էջ 191:

²⁰⁵ Al-Mu'allif al-maḡhūl, §. 11.

²⁰⁶ Տե՛ս al-Ğazārī, Hawadit, ց. 1, §. 109.

Սակայն ոչ բնության տարերքը և ոչ էլ հռոմկլայեցիների ցույց տված 33-օրյա համառ դիմադրությունն ի զորու չեղան կոտորելու ալ-Մալիք ալ-Աշրաֆի վճռականությունը: Մամլուքյան աղբյուրները հաղորդում են բերդի գրավման հստակ օրը՝ 691 թ. Ռաջաբ ամսի 11 (1292 թ. հունիսի 28): Դամասկոսի կադիին հղած իր նամակում այդ մասին գրել է նաև սուլթանը. «Այս բերդը գրավվեց Ալլահի ուժով և նրա հաղթանակով Ռաջաբ ալ-Ֆարդ ամսի 11-ին՝ շաբաթ օրը, և փառք նրան, ով հեշտագրեց նրա [առման] դժվարությունը, և արագացրեց նրա ծեռքերումը»²⁰⁷: Մամլուքյան աղբյուրների տված ամսաթիվն է նշում նաև Բար Հեբրեոսի շարունակողը²⁰⁸: Հայ մատենագիրներից արաբական աղբյուրներում առկա ամսաթիվն է տալիս Հեթում պատմիչը (ի թուին Չես Ա յունիս ԻԸ), իսկ Սարգիս Պիծակին վերագրված կարճառոտ ժամանակագրությունը սխալմամբ Հռոմկլայի գրավումը դնում է մեկ ամիս ուշ՝ 1292 թ. հուլիսի 28-ին²⁰⁹:

Բերդի գրավման գործում արաբագիր պատմիչները առանձնահատուկ շեշտում են Դամասկոսի փոխարքա (ռա՛ib al-saltana) Սանջար ալ-Շուջջաֆի ունեցած ներդրումը: Նրանցից Իբն ալ-Ֆուրաթի մոտ, օրինակ, կարդում ենք. «Էմիր Ալամ ալ-Դին ալ-Շուջջաֆին՝ Դամասկոսի կառավարիչը, Հռոմկլայի գրավման գործում ամենամեծ բաժինն ունեցավ, քանզի նա հնարամտություն ունեցավ [երկաթյա] շղթա գցել բերդի աշտարակների վրա և հակառակ ծայրը հողի մեջ ամրացնել: Բռնվելով դրանից՝ զորքը բարձրացավ ամրոցը: Բարձրացողների թվում էր Սայֆ ալ-Դին Ալջուբան, ով էմիր Բադր ալ-Դին Բեքթաշ ալ-Ֆախրի էմիր սիլահի (amir silah)²¹⁰ մամլուքներից էր: Նա նրա հայտնի մամլուքներից չէր, այլ ծառայության մեջ էր նրա որդի Սալահ ալ-Դին Խալիլի մոտ: Նա հնարամտության դիմեց, մազլցեց բերդի պարսպի վրա և մեծ սպանդ կազմակերպեց, հետո վիրավորվեց

²⁰⁷ Al-Mu'allif al-mağhūl, §. 12.

²⁰⁸ Տե՛ս Bar Hebraeus, Chronography p. 493.

²⁰⁹ Տե՛ս ՀԶԸ, ԺԳ դար, էջ 719: Հմմտ. ՄԺ, հտ. Ա, էջ 106:

²¹⁰ Բառացի՝ «սպառազինության էմիր», ով սուլթանի «զինակիրն» էր՝ «վահանակիրը»: Պաշտոնի մասին տե՛ս Ayalon D., Studies on the structure of the Mamluk army-II // BSOAS, vol. 15, 1953, p. 468.

և հետ դարձավ»²¹¹: Բայբարս ալ-Մանսուրին շարունակում է. «Զինվորներն իրար հետևելով այդ շղթայով բարձրացան, և [փաստորեն այդ] հնարքով նպատակն իրագործվեց: Նրանք տիրացան բերդին և փոխով դրոշներ բարձրացվեցին նրա վրա: Սպանվեցին այնտեղ եղած բոլոր մարտիկները: Գերվեցին կանայք և ընտանիքները: Այնտեղ հայտնաբերվեց նաև հայոց պատրիարքը (baṭrik al-arman), ով [նույնպես] գերեվարվեց»²¹²:

Բարսեղ գրիչն այսպես է ներկայացնում բերդ խուժած թշնամու գործած սարսափելի արարքները. «Եվ ով ոք բավականից է պատմել զեկեղեցեաց աներումն, զսուրբ սեղանոց կործանումն, և զանաթոց և զսպասուց սրբութեանց տաճարաց Աստուծոյ զափշտակություն, զսպանումն քահանայից, զգերութիւն սարկաւազաց, զխայտառականս կուսանաց, զանարգանս ամուննացելոցն, զի ոչ ակն առնուին յալեաց ծերոց, և ոչ խնաէին ի մանկութիւն երիտասարդաց, և ոչ ողորմեցաւ արդար տղաց, այլ ի սուր, ի մահ, և ի գերութիւն մատնեցան»²¹³:

Սյունիքի մետրոպոլիտ Ստեփանոս Օրբելյանը վկայում է. «Որ եւ ամսօրեայ ժամանակաւ պատերազմեալ էառ նախ զքաղաքն, և ապա զներքին բերդն. և ապա բարձրագոյն կլայն յորում կայր շինեալ գեղապաճոյճ եկեղեցին ի Գրիգորէ կաթողիկոսէ. և տուն դարապասի հայրապետին»²¹⁴: Համացիների զորքում եղած Աբու ալ-Ֆիդան նույնպես հավաստում է, որ բերդաքաղաքի գրավումից հետո «կաթողիկոսը (տեքստում՝ kinaḡī-līs)՝ այնտեղ նստող «հայոց խալիֆան» (ḫalifat al-arman), ապաստան գտավ միջնաբերդում (qulla): Նրա հետ այնտեղ հավաքվե-

²¹¹ Ibn al-Furāt, al-Duwal, ց. 8, ք. 136: Պատմիչը շարունակում է, որ Ալջուրայի այս խիզախումը չվրիպեց սուլթանի աչքից, և նա մեծ պատվի ու ընծաների արժանացրեց մամլուք զինվորին: Հետագայում այս Ալջուրան հայտնի էմիր դարձավ՝ ստանալով ṭablīḡāna-ի էմիրության աստիճան: Տե՛ս Անդ., ք. 136-137: Սանջար ալ-Շուջջախի ծեռնարկման և Ալջուրայի մասին տե՛ս նաև al-Maqrīzī, al-Sulūk, ց. 1.3, ք. 778: Հմմտ. Baybars al-Manṣūrī, Zubda, ք. 288-289.

²¹² Տե՛ս Անդ., ք. 289.

²¹³ ՀԶԸ, ԺԳ դար, էջ 731: Քաղաքի ավարառության և բնակիչների կոտորածի ու գերեվարման մասին տե՛ս նաև Bar Hebraeus, Chronography, p. 493.

²¹⁴ Տե՛ս Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն, հտ. Բ, էջ 190:

ցին նաև քաղաքում կազմակերպված սպանդից ճողոպրածները: Համացիների բաբանները տեղակայված էին հենց դեպի միջնաբերդը ձգվող լեռան գագաթին: Ուստի Համայի տերը սուլթանից կարգադրություն ստացավ՝ քարանետ մեքենաներից հարվածել նրանց: Եվ երբ լարեցինք, որպեսզի քարկոծենք, նրանք amān («անվտանգանգության երաշխիք») խնդրեցին սուլթանից: Վերջինս նրանց կյանքը խնայելու համար երաշխիք էր տալիս միայն գերության հանձնվելու պայմանով: Նրանք համաձայնեցին դրան. գերի վերցվեց կաթողիկոսը, ինչպես նաև նրանք, ովքեր [նրա հետ] բերդի միջնաբերդում էին՝ մինչև վերջին մարդը»²¹⁵:

Աբու ալ-Ֆիդայի հաղորդման շարունակության հետ փոքրիշատե աղերսվում է Ներսես Պալիեցիի նկարագրությունը. «...ուզեցին ամանաթ, այսինքն է վստահութիւն, գնալ յոտս նոցա: Սակայն սուլտանն ոչ ընկալավ զհայցվածս նոցա, վասն զի նախ ինքն բազում անգամ ասացեալ էր, եթե «Տուք գբերդս և ես թողում զձեզ զամենեսեսան ընչիւք գնալ»: Այլ հնար չգտնելով կաթողիկոսն ու բերդի մյուս հոգևորականները հազնում են իրենց սքեմներն ու գնում հանձնվելու սուլթանին»²¹⁶:

Պետք է նշել, որ Հռոմկլայի գրավման ժամանակ զգալի կորուստներ կրեցին նաև մամլուքները: Հռոմկլայի պարիսպների ներքո մղված դժվարին կռիվների ժամանակ, ինչպես արաբագիր հեղինակներն են գրում, «մարտիրոսվեցին» (istašhada) էմիրներ Շարաֆ ալ-Դին իբն ալ-Խատիրը, Շիհաբ ալ-Դին Ահմադ իբն ալ-Ռուքնը, իսկ կայծակից (բնագրում՝ al-bard է, այն է՝ «ցուրտ», մինչդեռ պետք է լինի al-barq, այն է՝ «կայծակ») Դարյա Իզզ ալ-Միսրին և Խալիլ իբն ալ-Շաման»²¹⁷:

Ստեփանոս Օրբելյանի վկայությամբ՝ հայոց կաթողիկոսի հետ միասին գերի ընկան 20 եպիսկոպոսներ, բազմաթիվ քա-

²¹⁵ Sb'u Abū al-Fidā', al-Muḥtaṣar, ց. 4, ք. 27: Տե՛ս նաև Նալբանդյան, Արաբական աղբյուրները, էջ 239:

²¹⁶ ՄԺ, հտ. Բ, էջ 181:

²¹⁷ Sb'u al-Mu'allif al-mağhūl, ք. 17: Հմմտ. նաև al-Ġazārī, Ḥawādīṭ, ց. 1, ք. 109; Ibn al-Furāt, al-Duwal, ց. 8, ք. 137.

հանաներ և սարկավազներ²¹⁸: Գերեվարվածների ընդհանուր թվի մասին նա, սակայն, լուում է: Ըստ Ներսես Պալիանենցի գերության քվեց ավելի քան 30 հազար մարդ²¹⁹, որը, սակայն, ակնբախ չափազանցություն պիտի համարենք: Մամլուքյան պատմիչները, ինչպես օրինակ ալ-Ջազարին, ալ-Նուվայրին, Իբն ալ-Ֆուրաթը և ալ-Մակրիզին, գերեվարվածների շատ ավելի փոքր թիվ են նշում՝ 1200-ը²²⁰, որն ավելի մոտ է տրամաբանությանը:

Բացի մեծաթիվ մարդկային զոհերից և գերեվարվածներից, հայոց եկեղեցին այլ կորուստներ ևս կրեց: Թալանվեցին ու թշնամու ձեռքն ընկան կաթողիկոսարանի հարստությունները, ավետարանները, ծիսական սպասքը, եկեղեցական նշխարները, համազգային նշանակության առաքելական մատուցներն ու սրբությունները, ինչպիսին որ «Լուսավորչի աջն» էր: Ժամանա-

²¹⁸ **Ստեփաննոս Օրբէկեան**, Պատմութիւն, հտ. Բ, էջ 190: Պարզվում է՝ Հոռուկլայի գրավման ժամանակ բերդում եղել են և հայ վանականների հետ գերեվարվել են նաև որոշ ասորի հոգևորականներ: Այդ մասին է վկայում Բրիտանական թանգարանի թիվ 295 ասորերեն ձեռագրի հիշատակարանը: Տե՛ս Wright W., Catalogue of Syriac manuscripts in the British Museum, part 1, London, 1870, p. 231: Ոչ պակաս հետաքրքիր վկայություն է տալիս ալ-Այնիին. «Այն գտնվում էր թաթարների իշխանության տակ, որ [տույնիսկ] այնտեղ ձախոնա («վերատեսուց») ունեին, ով գերեվարվեց ի շարս մյուս գերիների: Դա մուսուլմանների մեծագույն հաղթանակն էր»: Տե՛ս al-Aynī, 'Iqd, ց. 3, ք. 121: Հոռուկլայում մոնղոլների կողմից ձախոնա նշանակված լինելու մասին ոչ մի ուրիշ արաբագիր հեղինակի մոտ տեղեկություն չենք գտնում, ինչը կասկածի տակ է դնում այս հաղորդման հավաստիությունը:

²¹⁹ **ՄԺ**, հտ. Բ, էջ 181.

²²⁰ Տե՛ս al-Ġazārī, Ĥawādīṭ, ց. 1, ք. 109, al-Nuwayrī, Nihāya, ց. 31, ք. 144; Ibn al-Furāt, al-Duwal, ց. 8, ք. 137; al-Maqrīzī, al-Sulūk, ց. 1.3, ք. 778: Հ. Նալբանդյանն իր ծանոթագրություններում մեջբերում է ալ-Մակրիզին, բայց 1200-ի փոխարեն սխալմամբ 12.000 է թարգմանում գերեվարվածների թիվը, իսկ Ա. Հովհաննիսյանը կրկնում է նրա սխալը: Տե՛ս **Նալբանդյան Ա.**, Կիլիկիայի հայկական թագավորության և Եգիպտոսի սուլթանության հարաբերությունները 1250-1375 թթ., Երևան, 2008, էջ 114: Հմմտ. Histoire des Sultans Mamlouks, de l'Égypte écrite en Arabe par Taki-Eddin-Ahmed-Makrizi, traduite en Français par M. Quatremère, t. 2.3, Paris, 1845, p. 141.

կակից հիշատակագիրներից մեկը հաղորդում է. «Զի քահանայք և արք փառաւորք անկան ի սուր, և կանայք պատուականաց՝ անարգեցան, աստուածային կտակարանք յանօրինաց ծեռաց յափշտակեցան, առաքելական և մարտիրոսական նշխարք սրբոց խորտակեցան, զարդն ոսկոյ և մարգարտեաց և ականց պատուականաց, որ ի վերա սրբութեանց՝ կողոպտեցան, աջն առաքելապատիւ Սուրբ Լուսաւորչին մերոյ՝ յերկիրն այլազգեաց գերեցաւ, որ ողորմելի էր քան զգերութիւն տապանակին ի հնումն: Եւ եղև այս ամենայն Հայաստանեայց ողբս և յարտասուս, ի հեծումն և ի հառաչումն»²²¹: Սակայն, բարեբախտաբար, ինչպես որ Սմբատի շարունակողն է հաղորդում, Հեթումին հաջողվել է գնել «զաջն Լուսավորչին և զամենայն մասունս ի յանօրինաց» և բերել Սիս²²²:

1293 թ. բանտարկությունից ազատված և Սկևռա վանքի առաջնորդ նշանակված Կոստանդին Կատուկեցի Պրոնագործը «Սկևռայի Սրբարան» կոչվող արծաթյա մասնատուփի վրա մի արծանագրություն-հիշատակարան է թողել Հռոմկլայի առման վերաբերյալ: Նրանում ասվում է.

«Ամաւք յառաջ քան զթուական
Առեալ եղեւ Հռոմկլայն:
Նստեալքն երբեմն անդ բնական
Եղեն վարեալք ի գերութեան:
Եկեղեցիքն երկնանման
Յանհաատիցն կոխեցան:

²²¹ ՀԶՀ, ԺԳ դար, էջ 711: Հմմտ. **Ստեփաննոս Օրբէլեան**, Պատմութիւն, հտ. Բ, էջ 190; **Սմբատ (շարունակող)**, Տարեգիրք, Փարիզ, էջ 126; **Գիրք Թղթոց** (Մատենագրութիւն նախնեաց), տպարան Տ. Ռօտինեանց եւ Մ. Շարածէ, Թիֆլիս, 1901, էջ 537:

²²² **Սմբատ**, Տարեգիրք, Փարիզ, էջ 126: Հմմտ. **Ստեփաննոս Օրբէլեան**, Պատմութիւն, հտ. Բ, էջ 192 («Եւ ամենայն սրբութիւնքն որ գերեցան, կորեան անհետ եւ անգիտ...»): «Լուսավորչի աջի» ճակատագրի մասին այս երկու աղբյուրների հայտնած տեղեկությունների հակասականության մասին տե՛ս Պատմութիւն Կաթողիկոսաց Կիլիկիոյ (1441-էն մինչեւ մեր օրերը), գրեց **Բաբգէն Ա աթոռակից Կաթողիկոս**, Տպարան դպրեվանոց Կաթողիկոսութեան Կիլիկիո, Անթիլիաս, 1939, սյուն 1282-1290:

Եւ սրբութիւնն սծական
Ձեռաւք պղծոց շաւշափեցան:

Եւ սք մատեանքն սծաբան
Ի նախատինս ցրուեցան:

Սք հայրապետքն եւ որք նորայն
Գերեալք յաշխարհն Տաճկաստան»²²³:

Բերդի գրավումից 6 տարի անց ընդօրինակված «Գիրք թղթոցի» հիշատակագիրը խորը ցավով է հիշում կաթողիկոսարանի երեք եկեղեցիների մասին. «Նաև աստուածաբնակ և երկնանման շքեղաշուք և գերապայծառ սուրբ տաճարս, զսրբոյն Գրիգորի ասեմ և Տիրամարն սրբուհոյ Աստուածածնին, և յանուն Որդոյ նոր սուրբ Փրկչին, կոխան եղև՝ և օթարան անհաւատիցն»²²⁴: Ուշագրավ է նաև Հեթում պատմիչի այն հաղորդումը, թե «բնակեցոյց ի հայրապետանոցին և ի գեղեցկապաճոյճ տաճարին զուրացողսն Քրիստոսի»²²⁵: Վ. Հակոբյանի կարծիքով այս խոսքերը հավանաբար վերաբերում են այն հայերին, որոնք կոտորածից փրկվելու համար ընդունել էին իսլամ²²⁶: «Եվ առեալ յաարի գբերդն՝ կապտեցին,- գրում է Ստեփանոս Օրբելյանը,- կողոպտեցին զամենայն սպաս եկեղեցոյն և զանկշռելի զանձն աստուածային և զամենայն ստացուածսն, բայց գեկեղե-

²²³ Տե՛ս Ալիշան, Սիսուան, էջ 108: Մասնատուփի պատվիրատուի և հիշատակարանի հեղինակի նույնականացման հարցը տևական ժամանակ գիտական քուռն քննարկումների առարկա է եղել: Տե՛ս Անդ, էջ 107-113; Carrière A., Inscriptions d'un reliquaire arménien de la collection Basilewski // Mélanges orientaux, Paris, 1883, p. 169-213; Der Nersessian S., Le Reliquaire de Skevra et l'orfèvrerie cilicienne aux XIIIe et XIVe siècles // Revue des Études Arméniennes, N° 1, 1964, p. 121-134, 143-147; Каковкин А. Я., Еще раз к вопросу о заказчике реликвария 1293 г. // Լրաբեր հասարակական գիտությունների, 1972, N° 6, стр. 77-84; Մնացականյան Ա., Ո՛վ է Սկեվոյի 1293 թ. մասնատուփի պատվիրատու Կոստանդին եպիսկոպոսը // Էջմիածին, 1972 (սեպտեմբեր), էջ 57-65:

²²⁴ Գիրք Թղթոց, էջ 537: Տե՛ս նաև ՀԶՀ, ԺԳ դար, էջ 839:

²²⁵ Տե՛ս Անդ, էջ 719:

²²⁶ Հակոբյան Վ., Հեթում Պատմիչի նորահայտ հիշատակարանը և նրա պատմական նշանակությունը // Տեղեկագիր ՀՍՍՌ գիտությունների ակադեմիայի: Հասարակական գիտություններ, 1948, N° 10, էջ 69:

ցին ոչ քակեցին»²²⁷: Ի տարբերություն Ստեփանոսի՝ պարսիկ մատենագիր Վասսաֆի հաղորդմամբ՝ Հռոմկլայի գրավումից հետո այդ կողմերում բնակություն հաստատեցին մուսուլմանները և նրանց տաճարները մուսուլմանական մզկիթների վերածեցին²²⁸:

Ի նշանավորումն իր տարած հաղթանակի՝ ալ-Մալիք ալ-Աշրաֆը հրամայեց անվանափոխել բերդը²²⁹: Բայբարս ալ-Մանսուրին այդ մասին գրում է. «Սուլթանը հրամայեց, որ բերդից մաքրվի «հռոմական» («Հռոմների բերդ») անունը, և ոչ ոք այդուհետ այդ անվանումով չկոչի այն, այլ անվանի «Մուսուլմանների [աշրաֆյան] բերդ» (Qal'at al-Muslimin al-Ašrafīyya)²³⁰: Պետք է նշել, սակայն, որ, ինչպես Ք. Ռաֆայելն է նկատում, նոր բերդանունը այդպես էլ հաստատուն կերպով չամրագրվեց մուսուլմանների շրջանում: Թեև զուգահեռ սկսեց օգտագործվել նաև «Մուսուլմանների բերդ» անվանումը, այնուամենայնիվ, մուսուլման մատենագիրները շարունակեցին նախկինի պես ամրոցը նույնքան հաճախ Qal'at al-Rūm կոչել²³¹:

Բերդի գրավումից անմիջապես հետո, ինչպես վերևում ենք ակնարկել, նամակներ են ուղարկվում Դամասկոս, Կահիրե և սուլթանության մյուս քաղաքներ՝ ավետելու առման լուրը: Մամլուք Անանուն ժամանակագրի մոտ այդ մասին կարդում ենք. «Սուրհանդակը Դամասկոս հասավ Ռաջաբ ամսի 15-ին (հուլիսի 2)՝ չորեքշաբթի օրը, ձեռքին՝ գրավման մասին նամակներ՝ ուղղված էմիր Շամս ալ-Դին Սունկուր ալ-Ասարին, [Դամասկոսի] գերագույն զօժի Շիհաբ ալ-Դին իբն ալ-Խուվայյիին,

²²⁷ Ստեփաննոս Օրբելեան, Պատմութիւն, հտ. Բ, էջ 190-191:

